# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1–2 (71–72). 2012

## «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

## «АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»

## «ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»



**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ՝ 20 ՏԱՐԵԿԱՆ**

**ВООРУЖЕННЫМ СИЛАМ РА–20 ЛЕТ**

**THE 20th ANNIVERSARY OF THE RA ARMED FORCES**

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ




ՀՀ Նախագահի Սերժ Սարգսյանի
և ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի հանդիպումը.

Բրյուսել, 2012 թ. մարտի 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

**1–2** (71–72). **2012**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Քոթանջյան Հ. Ս.**
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակաահաբեկչության գծով փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

**Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխավոր խմբագիր)

**Այդինյան Ռ. Ա.**

**Այվազյան Լ. Գ.**

**Ապրիամով Է. Ա.**

**Ավետիսյան Վ. Պ.**
(գլխ. խմբ. տեղակալ)

**Բաբայան Ն. Մ.**

**Գասպարյան Տ. Շ.**

**Դավթյան Ա. Մ.**

**Թունյան Վ. Վ.**

**Իսախանյան Մ. Ռ.**

**Խաչատուրով Յու. Գ.**

**Կարապետյան Մ. Ն.**

**Մաքևոսյան Ի. Ժ.**

**Մարգարյան Վ. Հ.**
(գլխ. խմբ. տեղակալ)

**Մարտիրոսյան Ս. Ս.**

**Մարտիրոսով Լ. Ա.**

**Միրզաբեկյան Ա. Ռ.**

**Նազարյան Ա. Ս.**

**Շիրինյան Մ. Ա.**

**Սեդրակյան Ս. Գ.**

**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**

**Տոնոյան Դ. Է.**

**Փարսադանյան Ա. Մ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ՝ 20 ՏԱՐԵԿԱՆ

*ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի* ելույթը ՀՀ ԶՈՒ-ի երիտասարդ սպաների համաբանակային առաջին համաժողովում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 9

*Ս. Մ. Օհանյան,* Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի անցած ուղին, ներկան և ապագան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 15

### ՇՈՒՇԻ–20

*Ա. Մ. Դավթյան, Ս. Ա. Ավանեսյան,* Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 26

### «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

*ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի* դիմումը հանդեսի առաջին համարի (1995) լույսընծայման առթիվ . . . . . . . . . . . . . . . . . 45

*Ս. Մ. Օհանյան,* ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր . . 46

*Վ. Հ. Մարգարյան,* Մարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հարաբերակցության հարցի շուրջ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 55

*Զ. Սյունկան,* Կառավարման և ղեկավարման դերը բարդ տուրբուլենտ կազմակերպական միջավայրներում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 62

*Յու. Գ. Խաչատուրով,* Պաշտպանությանը պետության և նրա Զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 83

*Հ. Ս. Քոթանջյան,* Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո . . . . . . . . . . . . . . . . . 96

*Վ. Պ. Ավետիսյան, Ա. Ա. Մինասյան, Դ. Ս. Չիլինգարյան, Հ. Ս. Քոթանջյան,* «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք . . . . . . . . . . 134
*Դ. Է. Տոնոյան,* Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում . . . . . . . . . . 147
*Ա. Բ. Գարին,* Մշակութային գործոնը ազգային անվտանգության ռազմավարությունում . . . . . . . . . . 157
*Զ. Թ. Կիրակոսյան,* Հայաստանի պաշտպանության ուժային բազմապատկության տեխնոլոգիաներ . . . . . . . . . . 189

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՀԱՆԴԵՍԻ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ» ՀԱՎԵԼՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

*Վ, Լ. Շեյնիս,* Պրոբլեմային տարածաշրջան. տարբերակներ Լեռնային Ղարաբաղի համար . . . . . . . . . . 223
*Հ. Ս. Խառատյան,* Ադրբեջանական պատմաշինության առանձնահատկությունները. Աղվանքը ադրբեջանական պատմագրության և քաղաքականության մեջ . . . . . . . . . . 234
*Ա. Գ. Ավագյան, Վ. Պ. Ավետիսյան, Պ. Ա. Չոբանյան, Բ. Պ. Պողոսյան, Վ. Հ. Տեր-Մաթևոսյան,* Հայաստանի պատմության ժենգափոխման ադրբեջանական ռազմավարությունը և դրան հակազդեցության ուղենիշները . . . . . . . . . . 240
*Ն. Հ. Հովհաննիսյան,* Հայաստան–Սփյուռք ինտեգրման ռազմավարական ուղենիշները. հայեցակարգային մոտեցումներ . . . . . . . . . . 249

**ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ռ. Վ. Աղուզումցյան,* հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
*Ն. Հ. Առաքելյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Ռ. Գ. Գևորգյան,* երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Վ. Մ. Հարությունյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Մ. Մ. Միրիջանյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Կ. Ս. Մոսոյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Յու. Ս. Չիլինգարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Վ. Ս. Սարգսյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Հ. Ս. Սիսակյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**№ 1–2** (71–72)**. 2012**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Котанджян Г. С.*, доктор политических наук (РФ), Действительный член Российской Академии военных наук, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. П.* (зам. гл. редактора), *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*, *Бабаян Н. М.*, *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Карапетян М. Н.*, *Маргарян В. Г.* (зам. гл. редактора), *Мартиросов Л. А.*, *Мартиросян С. С.*, *Матевосян И. Ж.*, *Мирзабекян А. Р.*, *Назарян А. С.*, *Парсаданян А. М.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Тунян В. В.*, *Хачатуров Ю. Г.*, *Ширинян М. А.*

## СОДЕРЖАНИЕ

### ВООРУЖЕННЫМ СИЛАМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ – 20 ЛЕТ

Выступление *Президента РА Сержа Саргсяна* на первом общеармейском съезде молодых офицеров ВС РА . . . . . . . . . . . . . . . . . . . 9 (11)*

*С. М. Оганян.* Вооруженные силы Республики Армения: пройденный путь, настоящее и будущее . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 15 (22)

### ШУШИ – 20

*А. М. Давтян. С. А. Аванесян.* Освобождение Шуши и его историческое значение . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 26 (40)

### ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ «АЙКАКАН БАНАК» ИЗБРАННЫЕ ПУБЛИКАЦИИ

Обращение *Министра обороны РА Сержа Саргсяна* в связи с выходом в свет первого номера (1995) журнала . . . . . . . . . . . . . . . . . 45

*С. М. Оганян.* Развитие системы военной промышленности РА как приоритетная задача оборонных реформ . . . . . . . . . . . . . . . . . 46 (52)

*В. Г. Маргарян.* К вопросу соотношения психологических факторов, определяющих эффективность боевой деятельности . . . . . . . 55 (60)

*Дж. Сюкан.* Роль управления и руководства в сложных турбулентных организационных средах . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 62 (82)

*Ю. Г. Хачатуров.* Некоторые вопросы подготовки государства и его вооруженных сил к обороне . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 83 (93)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

*Г. С. Котанджян.* Об опыте формирования боевого духа воина в Армии обороны Израиля в свете оборонных реформ РА . . . . . . . 96 (118)

*В. П. Аветисян, А. А. Минасян, Д. С. Чилингарян, Г. С. Котанджян.* Понятие «Оборонная политика» как теоретико-методологический инструмент осуществления оборонных реформ в Армении . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 134 (140)

*Д. Э. Тоноян.* Осуществление оборонных реформ в рамках военного сотрудничества . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 147 (155)

*А. Б. Гарин.* Культурный фактор в Стратегии национальной безопасности . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 157 (173)

*З. Т. Киракосян.* Технологии силового умножения для обороны Армении . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 189 (219)

**«РАБОЧИЕ ТЕТРАДИ» – ПРИЛОЖЕНИЕ К ЖУРНАЛУ «АЙКАКАН БАНАК» ПО СТРАТЕГИЧЕСКИМ ИССЛЕДОВАНИЯМ**

**ИЗБРАННЫЕ ПУБЛИКАЦИИ**

*В. Л. Шейнис.* Проблемный регион: варианты для Нагорного Карабаха . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 223

*Г. С. Харатян.* Особенности фальсификации Азербайджанской истории: Агванк в азербайджанской летописи и политике . . . 234

*А. Г. Авакян, В. П. Аветисян, П. А. Чобанян, Б. П. Погосян, В. А. Тер-Матевосян.* Азербайджанская стратегия фальсификации истории Армении и ориентиры их противодействия . . . . . . . . . . . . 240

*Н. О. Оганесян.* Стратегические ориентиры интегрирования Армения – Диаспора: концептуальные подходы . . . . . . . . . . . . . . . . . 249

**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*Р. В. Агузумцян*, кандидат психологических наук, доцент;
*Н. У. Аракелян*, академик НАН РА;
*В. М. Арутюнян*, академик НАН РА;
*Г. Е. Багдасарян*, академик НАН РА;
*Г. А. Геворкян*, академик НАН РА;
*Р. Г. Геворкян*, доктор геологических наук, профессор;
*А. А. Манташян*, академик НАН РА;
*Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор;
*М. М. Мириджанян*, доктор медицинских наук, профессор;
*К. С. Мосоян*, доктор технических наук, профессор;
*В. С. Саркисян*, академик НАН РА;
*А. С. Сисакян*, доктор медицинских наук, профессор;
*Ю. С. Чилингарян*, академик НАН РА

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA
**№ 1–2** (71–72)**. 2012**
Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**
*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apreamov E. A.*,
*Avetisyan V. P.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G.*, *Babayan N. M.*, *Davtyan A. M.*,
*Gasparyan T. Sh.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*, *Karapetyan M. N.*,
*Khachatourov Yu. G.*, *Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirossyan S. S.*,
*Martirossov L. A.*, *Matevossyan I. Zh.*, *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*,
*Parsadanyan A. M.*, *Sedrakyan S. G.*, *Shirinyan M. A.*,
*Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Tounyan V. V.*

# CONTENTS

**THE 20th ANNIVERSARY OF THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA**

Statement by *RA President Serzh Sargsyan* at the first army conference of young officers . . . . . 9 (13)*

*S. M. Ohanyan*. The path taken by the Armed Forces of the Republic of Armenia, their present and future . . . . . 15 (24)

**SHUSHI–20**

*A. M. Davtyan, S. A. Avanesyan.* The liberation of Shushi and its historical significance . . . . . 26 (41)

**«HAIKAKAN BANAK» DEFENSE-ACADEMIC JOURNAL SELECTED PUBLICATIONS**

The address of the RA Minister of Defense Serzh Sargsyan in connection first issue of the journal (1995) . . . . . 45

*S. M. Ohanyan*. The development of the RA military industry system as a foreground task of the defense reforms . . . . . 46 (53)

*V. H. Margaryan*. To the issue of the correlation of psychological factors determining the efficiency of combat activities . . . . . 55 (61)

*J. Suchan*. The role of management and leadership in complex, turbulent organizational environments . . . . . 62 (73)

*Yu. G. Khachatourov*. Some issues of the state's and its Armed Forces' preparation for defense . . . . . 83 (94)

* Numbers in brackets mean the page of the text in English.

*H. S. Kotanjian.* On the experience of shaping the fighting spirit of a soldier in Israel's Defense army in the light of the RA defense reforms . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 96 (132)

*V. P. Avetisyan, A. A. Minasyan, D. S. Chilingaryan, H. S. Kotanjian.* The «Defense policy» concept as a theoretical-methodological tool of implementing the defense reforms in Armenia . . . . . . . . . . . . . . . . . 134 (145)

*D. E. Tonoyan.* The implementation of defense reforms within the framework of military cooperation . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 147 (156)

*A. B. Garin.* The cultural factor in the National security strategy . . 157 (187)

*Z. G. T. Guiragossian.* The technologies of force multipliers for the defense of Armenia . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 189 (220)

**«WORKING NOTEBOOKS» – SUPPLEMENT ON STRATEGIC STUDIES TO THE DEFENSE-ACADEMIC JOURNAL «HAIKAKAN BANAK» SELECTED PUBLICATIONS**

*V. L. Sheynis.* Problematic region: options for Nagorno Karabakh . . . . 223

*H. S. Kharatyan.* The peculiarities of the Azerbaijani History falsifications: Aghvank in the Azerbaijani annals and politics. . . . . . . . . . . 234

*A. G. Avagyan, V. P. Avetisyan, P. A. Chobanyan, B. P. Poghosyan, V. H. Ter-Matevosyan.* The Azerbaijani strategy of the Armenian History's falsifications and the guidelines of their resistance . . . . . . . . 240

*N. H. Hovhannisyan.* Strategic guidelines of Armenia – Diaspora integration: conceptual approaches . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 249

**SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:**

*R. V. Aghouzoumtsian*, Candidate of Psychological Sciences, Docent;
*N. H. Arakelian*, Full Member, NAS RA;
*G. Y. Baghdassarian*, Full Member, NAS RA;
*Y. S. Chilingarian*, Full Member, NAS RA;
*H. A. Gevorkian*, Full Member, NAS RA;
*R. G. Gevorkian*, Doctor of Geological Sciences, Professor;
*V. M. Haroutyounian*, Full Member, NAS RA;
*A. H. Mantashian*, Full Member, NAS RA;
*E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor;
*M. M. Miridjanian*, Doctor of Medical Sciences, Professor;
*K. S. Mossoyan*, Doctor of Technical Sciences, Professor;
*V. S. Sargsian*, Full Member, NAS RA;
*H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ՝
# 20 ՏԱՐԵԿԱՆ

# ВООРУЖЕННЫМ СИЛАМ
# РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ –
# 20 ЛЕТ

# THE 20th ANNIVERSARY
# OF THE ARMED FORCES
# OF THE REPUBLIC OF ARMENIA

# ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀ ԶՈՒ-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՊԱՆԵՐԻ ՀԱՄԱԲԱՆԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ*

(Երևան, 2011 թ. հուլիսի 9)



*Հարգելի՛ սպաներ,*

*ՈՒրախ եմ մասնակցելու Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի երիտասարդ սպաների համաբանակային 1-ին համաժողովին: Ողջունում եմ բոլորիդ: Խիստ կարևորում եմ համաժողովի կազմակերպման փաստը և մաղթում, որ այն իսկապես լինի արդյունավետ ու դառնա ավանդական:*

*Այսօր ուզում եմ ձեզ մի քանի պատգամ հղել, որ կարևոր եմ համարում հատկապես իրենց առաջին քայլերն անող երիտասարդ սպաների համար:*

Առաջին. *ժամանակակից բանակների սպաների նախատիպերը միջնադարյան Եվրոպայում ասպետներն էին, Հայաստանում՝ նախարարական և իշխանական տների ներկայացուցիչները: Ազգի զինվորականության կորիզը տվյալ ազգի ազնվականությունն էր: Չկա այդ կազմակերպված ուժը՝ չկա պետություն: Թվում է, թե 21-րդ դարում պատմական այս զուգահեռները հնացած են: Բայց սա մակերեսային տպավորություն է: Կարդացեք միջնադարում հայերի տված ճակատամարտերի ցանկացած նկարագրություն և կտեսնեք, որ ամենապատասխանատու կետերում ազնվական տների զավակներ էին, որոնք պաշտպանում էին բառի ուղղակի իմաստով իրենց հոր տան պատիվը, բայց մեծ հաշվով՝ հայրենիքը: Իմ առաջին պատգամն է ձեզ՝ հիշել, որ ձեր՝ երիտասարդ սպաներիդ ուսերին այսօր նույն պատասխանատվությունն է և նույն առաքելությունը՝ պաշտպանել հայրական տան պատիվը, այսինքն՝ հայրենիքը: Այո՛, փոխվում են դարաշրջաններն ու իրողությունները, բայց ազնվականության առաքելության այսօրվա կրողները, ռազմական ավանդույթների ժառանգորդը դուք եք: Եթե չեք, պետք է դառնաք:*

Երկրորդ. *այդ ժառանգությունը ենթադրում է համապատասխան վարք ու կեցվածք: Մեր հասարակությունը գրեթե մոռացել է, որ սպայությունը բարձրագույն կրթություն ստացած մտավորականություն է: Այո՛, ձեր գործը խիստ առանձնահատուկ է, բայց, միևնույն է, դուք ազգի մտավորականության կարևոր թևն եք: Մեր հասարակության ընկալումներից, առաջին հերթին ձեր շնորհիվ, պիտի արմատախիլ արվի բռի և անտակտ զինվորականի կերպարը, մանավանդ որ կառավարչական գործառույթ եք նաև իրականացնում: Դուք մտավորականներ եք: Եթե չեք, պետք է դառնաք:*

Երրորդ. *սպայակազմը պետության ողնաշարն է: Այն ամուր է և ուղիղ այնքան, որքան նրա սպայակազմը: Որևէ երկրի ողնաշարը ջարդելու մի ճանապարհ կա՝ ոչնչացնել սպայակազմը: Սա նշանակում է, որ դուք մտավորականության այն թևն եք,*

---

* Տպագրվել է 2011 թ. «Զորային կառույցի կատարելագործում» թեմայով հմ. 1 – 2-ում:

*որը թշնամու առաջին թիրախն է: Այսպիսով՝ դուք եք հայրենիքի առաջին պատվարը, և մենք՝ իշխանություն ու ժողովուրդ, գիտենք դա: Գիտենք և ձեզ համար պատրաստ ենք անելու հնարավորն ու անհնարինը: Առաքելություն իրականացնելու առումով դուք մեր հասարակության ամենապատրաստված շերտն եք թե՛ հոգեբանորեն, թե՛ գիտելիքներով, թե՛ ֆիզիկապես: Եթե չեք, պետք է դառնաք:*

Չորրորդ. *կարգապահություն, խիզախություն, մարզվածություն, կրթվածություն. սրանք պարտադիր, բայց ոչ բավարար պայմաններ են հայ սպայի նկարագիրն ամբողջացնելու համար: Կա հինգերորդը՝ հայրոդի հոգեբանությունը: Ձեր շուրջն ապրում և հաճախ ձեր կողքին ծառայում են Արցախյան ազատամարտի փառավոր հաղթանակները կռած մարտիկներ: Նրանք գիտեն, թե դա ինչ է: Ձեր արբազան պարտականությունն է ավագ սերնդից ընդունել նաև այդ հերթափոխը: Հիշե՛ք՝ թշնամին ձեզնից վախենում է, որովհետև աչքի առաջ ունի ձեր հայրերի և ավագ եղբայրների օրինակը: Այսօրվա ու վաղվա օրինակը դուք եք: Եթե չեք, պետք է դառնաք:*

*Հարգելի՛ սպաներ,*

*Վերջին պատերազմում հայ ռազմիկի հարվածներից խորտակվել են բոլոր ամրությունները: Այդ հարվածների թափը թշնամու շարքերում սերմանել է խուճապ և հուսահատություն: Արդյունքում նույնիսկ շարքեր չեն մնացել: Մենք պարբերաբար տեսել ենք անկանոն փախուստի մատնված թշնամու թիկունքը: Մեր կրակահերթերն ու համազարկերը մարդու և ազգի ազատության, մարդու և ազգի արժանապատվության փառաբանումներ էին: Մեր ռազմիկների հաղթերթությունները՝ հրամանատարներից մինչև զինվորներ, ընկերասիրության, փոխօգնության ու զենքի եղբայրության դասագրքային օրինակներ էին:*

*Մենք չենք ընկրկել ո՛չ անփորձ նորակոչիկների, ո՛չ փորձված վարձկանների և ո՛չ էլ հակառակորդի բազմապատիկ ավելի զինաբանակի առաջ: Դրանք մեզ համար զգոնության լրացուցիչ ազդակներ էին:*

*Այո՛, մենք հաղթեցինք տևական, ծանրագույն և անհավասար պատերազմում: Ոմանք «անհավասար պատերազմ» ասելով նկատի ունեին այն իրողությունը, որ Ադրբեջանն ուներ ավելի շատ փող, ավելի շատ տեխնիկա և կենդանի ուժ: Դա ճիշտ է, բայց ինչ համար պատերազմն անհավասար էր, որովհետև ուժեղը կռվում էր թույլի դեմ, և ուժեղը մենք էինք: Ազատասերը կռվում էր զավթիչի դեմ, և ազատասերը մենք էինք: Արդարը կռվում էր անարդարի դեմ, և արդարության մարմնավորումը մենք էինք:*

*Այսօր էլ մենք խաղաղության կողմնակիցն ենք, բայց եթե զավթիչների ու անարդարների մտքով նոր արկածախնդիր մտադրություն անցնի, վայրկյան անգամ չեմ կասկածում՝ նորից անհավասարություն կլինի, ու մենք էլի կլինենք ուժեղը, որովհետև հայրական տունն ու հայրենիքը պաշտպանողը անպարտ է ու անկասելի:*

*Հարգելի՛ սպաներ,*

*Այդ «մենք»-ի մեջ առաջին հերթին հիմա դուք եք: Հավաստացնում եմ ձեզ՝ դա ինկապես մեծ պատիվ ու բախտավորություն է ձեզնից յուրաքանչյուրի համար:*

*Մաղթում եմ ձեզ հաջողություն և անփորձանք ծառայություն:*

*Հավատում եմ ձեզ, հպարտ եմ ձեզնով, և Աստված ձեզ պահապան:*

*Շնորհակալություն:*

# ВЫСТУПЛЕНИЕ ПРЕЗИДЕНТА РА СЕРЖА САРГСЯНА НА ПЕРВОМ ОБЩЕАРМЕЙСКОМ СЪЕЗДЕ МОЛОДЫХ ОФИЦЕРОВ ВС РА*

(Ереван, 9 июля 2011 г.)

*Уважаемые офицеры!*

*Я рад участвовать в Первом общеармейском съезде молодых офицеров Вооруженных сил Республики Армения. Приветствую всех вас. Считаю факт организации съезда чрезвычайно важным и желаю, чтобы он был действительно плодотворным и стал традиционным.*

*Сегодня хочу вам адресовать несколько наказов, которые считаю важными, особенно для молодых офицеров, делающих свои первые шаги.*

Во-первых: *Прообразом офицеров современных армий в средневековой Европе были рыцари, в Армении – представители нахарарских и княжеских домов. Ядром национального воинства было дворянство данной нации. Нет этой организованной силы – нет и государства. Казалось бы, в 21-ом веке эти исторические параллели устарели. Но это поверхностное впечатление. Прочитайте любое описание средневековых армянских битв и увидите, что на самых ответственных рубежах были наследники дворянских домов, которые обороняли, в буквальном смысле слова, честь своего отчего дома, но по большому счету – свое Отечество. Мой первый наказ вам: помнить, что на ваших, молодых офицеров, плечах сегодня лежит та же ответственность и та же миссия – оборонять честь отчего дома, то есть – Отечество. Да, меняются эпохи и реалии, но сегодняшними носителями миссии дворянства, наследниками воинских традиций являетесь вы. Если еще не являетесь, должны стать таковыми.*

Во-вторых: *Это наследие предполагает соответствующее поведение и облик. Наша общественность почти забыла, что офицерство – это интеллигенция, получившая высшее образование. Да, ваше дело чрезвычайно специфично, но все равно, вы – важное крыло национальной интеллигенции. Из восприятий нашей общественности, в первую очередь – вашими усилиями, должен быть выкорчеван образ грубого и бестактного военного, тем более что вы также выполняете управленческую функцию. Вы – интеллигенты. Если не являетесь – должны стать.*

В-третьих: *Офицерство – хребет государства. Он столь же прочен и прям, сколь его офицерство. Сломать хребет любой страны можно лишь одним способом – уничтожить офицерство. Это означает, что вы – то крыло интеллигенции, которое является первой целью врага. Таким образом, вы – первый оплот Отечества, и мы, власти и народ, знаем это. Знаем и готовы для вас сделать всё возможное и невозможное. В плане*

* Русский текст взят с сайта www/president.am/events/visits/rus/?visits=2&search= երիտասարդ+սպաներ&id=288:

*осуществления миссии вы являетесь самым подготовленным слоем общественности – и психологически, и по уровню знаний, и физически. Если не являетесь – должны стать.*

В-четвертых: *Дисциплина, храбрость, подготовленность, образованность – вот необходимые, но не достаточные условия, формирующие образ армянского офицера. Есть еще пятое – психология победителя. Вокруг вас живут и часто рядом с вами служат воины, которые выковали славные победы Арцахской освободительной борьбы. Они знают, что это такое. Ваша святая обязанность принять от старшего поколения также эту эстафету. Помните, враг боится вас, потому что у него перед глазами пример ваших отцов и старших братьев. Сегодняшним и завтрашним примером являетесь вы. Если не являетесь – должны стать.*

*Уважаемые офицеры,*

*В последней войне под ударами армянских воинов пали все вражеские укрепления. Мощь этих ударов в рядах врага сеяла панику и уныние. В результате у них не осталось даже рядов. Мы периодически видели спину врага, обратившегося в беспорядочное бегство. Наши стрельба и залпы восславляли свободу человека и народа, достоинство человека и народа. Отношения наших воинов – от командиров до рядовых солдат – были хрестоматийным примером дружелюбия, взаимовыручки и братства по оружию.*

*Мы не отступили ни перед неопытными новобранцами, ни перед опытными наемниками, ни перед многократно большей численностью противника. Все это были сигналы, укрепляющие нашу бдительность.*

*Да, мы победили в длительной, тяжелейшей и неравной войне. Некоторые, говоря «неравная война», имеют в виду ту действительность, что Азербайджан имел больше денег, больше техники и живой силы. Это правда, но для меня война была неравной, потому что сильный сражался против слабого, и сильными были мы. Свободолюбивый сражался с захватчиком, и свободолюбивыми были мы. Справедливый сражался с бесчестным, и воплощением справедливости были мы.*

*Мы и сегодня на стороне мира, но если в умах захватчиков и бесчестных зародятся новые авантюры, я даже ни секунды не сомневаюсь – снова будет неравенство, и сила вновь будет за нами, потому что защитник отчего дома и отечества непобедим и нерушим.*

*Уважаемые офицеры,*
*Все, что говорю про «нас» в первую очередь относится к вам. Заверяю, это действительно большая честь и счастье каждого из вас.*

*Желаю вам успехов и безопасной службы*

*Верю в вас, горжусь вами и да храни вас Бог!*

*Спасибо.*

# STATEMENT BY RA PRESIDENT SERZH SARGSYAN AT THE FIRST ARMY CONFERENCE OF YOUNG OFFICERS*

(Yerevan, July 9, 2011)

*Officers,*

*I am glad to have this opportunity to participate at the First Conference of Young Officers of the Armenian Armed Forces, and I salute you all. I attach the utmost importance to the fact that such a conference is being organized. I hope the conference will be truly efficient and will become a traditional event.*

*Today, I would like to give you some precepts which, I believe, are important particularly for young officers, who are just starting their career:*

First, *The medieval European knights, and in Armenia those were the representatives of military clans and princely dynasties, are the prototypes of the contemporary army officers. The nobility made the core of national armies. There can be no state unless there is such organized force. One might think that in the 21st century such historical parallels are outdated, but it would be a superficial impression. Go through the descriptions of any battle fought by the Armenians in the Middle Ages and you will see that at crucial points it were the sons of nobility who had been defending in the explicit meaning of the word the honor of their family, and ultimately – their motherland. My first precept is: remember that you, young officers, carry the same responsibility on your shoulders and have the same mission – to defend the honor of your paternal home, i.e. of your fatherland. Yes, times and situations change, but you are the carriers of the nobility's mission, the heirs of military traditions; if you are not yet, you must become soon.*

Second, *That legacy implies certain line of conduct and posture. Our society has almost forgotten that officers are a part of intelligentsia, people with higher education. Yes, your job is very special, nevertheless you are an important segment of the national intelligentsia. It is predominantly you that ought to rid our society of the stereotype of a rude and boorish military, particularly now when you are also engaged in administrative processes. You are a part of intelligentsia; if you are not yet, you must become soon.*

Third, *Officers are the backbone of the state. The state is as strong and upright as its officers corps. There is only one way to break any country's backbone – to crush its officers. It means that you are a part of the intelligentsia which is target number one for the enemy. Thus, you are the fatherland's first line of defense, and we – the people and the authorities – know that. We know that and are ready to do for you all thinkable and unthinkable. In sense of readiness to carry out the mission – psychologically, physically, and knowledge wise – you are the most capable segment of our society; if you are not yet, you must become soon.*

* The English text is taken from the website www/president.am/events/visits/eng/?visits=2&search=երիտասարդ+սպաներ&id=288:

Fourth, *Discipline, courage, excellent physical shape, erudition – these are essential but not yet all qualities which make the character of the Armenian officer complete. And there is also the fifth point – the winner's mentality. You live among and often serve along with the troops who have won glorious victories in the struggle for Artsakh's freedom. They know what the winner's mentality is. Your sacred duty is to take over that mission from the senior generation. And remember that the enemy is afraid of you because it has the example of your fathers and older brothers before their eyes. Today and tomorrow you are the ones who set example; if you are not yet, you must become soon.*

*Officers,*

*In the last war, the Armenian troops dealt blows that crushed each and every stronghold. The might of that blows has implanted seeds of panic and despair. As a result, there are not even lines standing. We have seen on many occasions the backs of the enemy retreating in disorder. Our rounds of fire and volleys glorified freedom of the man and the nation, human and national dignity. Relations in our army – from commanders to soldiers, were classical examples of friendship, mutual assistance and brotherhood-in-arms. We did not succumb either to inexperienced recruits, or to skilled mercenaries, or to the exceeding numbers of the enemy. For us, those were just additional warning signs to be more vigilant.*

*Yes, we have won in a lengthy, excruciating and disproportionate war. Some, by saying "disproportionate war" mean the fact that Azerbaijan had more money, more military equipment and more troops. It is true; but for me it was a "disproportionate war" because the strong was fighting against the weak, and we were the strong. Freedom fighters were fighting against the invaders, and we were the freedom fighters. The just was fighting against the unjust, and we were the epitome of the just.*

*Today, we support peace but if the invaders and the unjust for a moment consider another reckless scheme, I know without a shade of doubt that there will be disproportion again, and once again we will be the strong because the defender of the paternal home and fatherland is invincible and unbeatable.*

*Officers,*

*Now, you are the ones who signify the notion of "We", and I assure you, it is a great honor and privilege indeed, for all of you.*

*I wish you all great success and safe service.*

*I believe in you, I am proud of you, and let God protect you.*

*Thank you.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

*Ս. Մ. ՕՀԱՆՅԱՆ, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար*



Յուրաքանչյուր հոբելյանական տարեթիվ ակամայից անցյալը վերաարժեքավորելու, ներկան գնահատելու և ապագայի տեսլականը ուրվագծելու առիթ է, քանզի անցած ուղու և ներկայի օբյեկտիվ վերլուծությունն է միայն, որ հնարավորություն է տալիս վստահաբար նայելու դեպի ապագա:

2012 թ. հունվարի 28-ին Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը տոնեցին իրենց կազմավորման 20-ամյակը: Սույն հոդվածի նպատակն է Զինված ուժերի անցած քսանամյա ուղուն և ապագայի ուղենիշներին ևս մեկ ընդհանրական հայացք գցել՝ ոչ որպես այդ ուղին հետազոտող տեսաբան, այլ որպես դրա անմիջական մասնակից և պատասխանատու:

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը՝ Հայոց բանակը, ունի կարճ, բայց հարուստ պատմություն, քանզի իր կազմավորման օրվանից անցել է բազմազան փորձություններով, հաղթահարել դժվարություններ և ճաշակել հաղթանակների բերկրանքը:

1990-ականների սկզբին Հայոց նորաստեղծ պետությունը նման էր լարված միջավայրում հայտնված այն պատանուն, որն այսուհետև պետք է ինքնուրույն կայացներ բոլոր կենսական որոշումները, ապահովեր իր բարեկեցությունը և, ամենակարևորը, պաշտպաներ ինքն իրեն: Եվ քանզի պատմությունը բազմիցս ապացուցել է, որ նման ճակատագրական պահերին ուժն է շահերը պաշտպանելու միակ գրավականը, իսկ «ճշմարտությունը սրի ծայրին է», ապա առաջացավ այդ սուրն ունենալու օրհասական անհրաժեշտություն:

Միևնույն ժամանակ, Հայոց բանակն իր մեջ ներառեց հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի ձևավորած մարտական ոգին և ռազմարվեստի ավանդույթները, որոնք բխում են Հայոց պետականության տարբեր ժամանակաշրջաններից և մեկընդմիշտ ամրագրված են համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ: Մասնավորապես.

– ուրարտական և Արտաշեսյան ժամանակաշրջաններում իրականացվում էին մեծ թվակազմով և հեռավորությամբ լայնածավալ հեռարշավային ռազմական գործողություններ,

– Արշակունիների դարաշրջանում Հայոց այրուձին ուներ երկու գերտերությունների միջև ուժերի նժարը փոխելու ունակ լավագույն հեծելազորի համբավ,

– Բագրատունյաց ժամանակաշրջանում հայկական հետևազորն աչքի էր ընկնում պարտիզանական և անհամաչափ ռազմագործողություններ վարելու մեծ վարպետությամբ,

–Կիլիկյան Հայաստանի զինված ուժերը համարվում էին տարածաշրջանում ամենամարտունակը Արևմուտքի և Արևելքի փորձի համատեղման՝ Եվրոպայի ասպետների պաշտպանվածության և Արևելքի ռազմիկների շարժունակության միաձուլման շնորհիվ,

–Սարդարապատում Հայոց ռազմական ներուժն իրավամբ վերածվեց համաժողովրդականի՝ Ազգային բանակի և խայտառակ պարտության մատնեց 1-ին աշխարհամարտի ռազմադաշտերում մեծ համբավ վաստակած զորամիավորումներից մեկին՝ 36-րդ Դարդանելյան դիվիզիային:

Կարճ ժամանակահատվածում մարտունակ Զինված ուժերի ստեղծումը իրագործելի չէր դառնա, եթե չլինեին Հայոց զինուժի վերոնշյալ փառավոր էջերը և օտար երկրների բանակներում հայազգի զինծառայողների ձեռք բերած փորձը: Սակայն Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կայացման ամենից կարևոր հիմքը, անկասկած, 1988–1991 թթ. ընթացքում Արցախյան ինքնապաշտպանական մարտերի բովով անցած ազատամարտիկների ջոկատներն էին: Ջոկատներ, որոնք, չունենալով պատշաճ սպառազինություն և թվով զգալիորեն զիջելով հակառակորդին, վեր խոյացան՝ պաշտպանելու արցախահայության գոյության իրավունքը և Հայաստանի սահմանների անվտանգությունը:

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի անցած քսանամյա ուղին, ելնելով նրանց առջև դրված մարտական խնդիրների բնույթից, կայացման և զարգացման առաջնահերթություններից, կարող ենք բաժանել չորս ժամանակային փուլերի:

**1992–1994 թվականներ**

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը ծնվեցին պատերազմի դաշտում: Արցախին ու Հայաստանին պարտադրված պատերազմը հայ մարտիկները սկսեցին որսորդական հրացաններով, նախկին խորհրդային բանակից ժառանգաբար փոխանցված և հակառակորդից խլված սպառազինությամբ: Բանակի կայացման գլխավոր հաջողությունը բոլոր կամավորական ջոկատների համախմբումն էր միասնական ղեկավարման համակարգում, քանզի բոլոր՝ նույնիսկ ամենախիզախ, գործողությունները, որոնք իրականացվում են տարանջատ, չեն կարող բերել վերջնական հաջողության: Բանակը կազմավորվեց ազգային միասնության գաղափարի շուրջ բոլոր հայրենանվեր ուժերի համախմբմամբ: Այս առումով Հայոց բանակը լիարժեքորեն կարող է որակվել որպես Ազգային բանակ, իսկ Արցախյան հերոսամարտը՝ Հայրենական պատերազմ:

Պատերազմում հաղթանակի նժարը հայության կողմը թեքվեց առաջին հերթին հակառակորդի նկատմամբ հայ ռազմիկի մարտական ոգու և բարոյահոգեբանական հատկանիշների գերազանցության շնորհիվ. նա կռվում էր «Մահ իմացյալ անմահություն է» գաղափարի խոր գիտակցությամբ և ոչ թե զոհվելու, այլ հաղթելու հաստատակամությամբ: Սակայն սոսկ մարտական ոգին բավարար չէր լինի պատերազմում վճռական բեկում մտցնելու համար, եթե Հայոց բանակը ռազմագործողությունների ժամանակ չցուցաբերեր այնպիսի որակներ, ինչպիսիք են արագաշարժությունը և տարաշարժ կատարելու մեծ վարպետությունը: Դեռ 1992 թ. վարած մարտերում հայկական ստորաբաժանումներն աչքի էին ընկնում որոշումների կայացման և դրանց իրականացման արագությամբ՝

երկու առումով էլ գերազանցելով հակառակորդին: Դրա շնորհիվ էր, որ արագ վերախմբավորման միջոցով փոքր ուժերով հայկական կազմավորումները կարողանում էին կատարել շատ ավելի մեծ մասշտաբի խնդիրներ: Հաղթանակի կարևոր գրավականներից էին նաև ղեկավարման և օպերացիաների պլանավորման կուռ, բայց, միևնույն ժամանակ, ճկուն համակարգերը, որոնք հնարավորություն էին տալիս արագ արձագանքելու անսպասելի հանգամանքներին և ձեռքից բաց չթողնելու ռազմագործողությունների վարման թելը: Ժամանակի գործոնը թերևս ուներ հանգուցային նշանակություն, և առավել քան արդիական էր Սուվորովի հայտնի խոսքը. «Մեկ րոպեն կարող է վճռել ճակատամարտի, մեկ ժամը՝ ռազմարշավի ելքը, իսկ մեկ օրը՝ պետության ճակատագիրը»: Սրանք որակներ էին, որոնք Հայոց բանակում հիմնավորվել էին ի սկզբանե, նախնիների՝ դարերի խորքից ժառանգված իմաստնության, այլ բանակներում ծառայության ընթացքում հայ սպաների ու զինվորների ստացած գիտելիքների, ինչպես նաև տեղում հանպատրաստից ստեղծագործական լուծումների համաձուլմամբ:

Բոլոր այս հատկությունները էին, որ Հայոց բանակին հնարավորություն տվեցին հաղթանակով ավարտելու թվապես և տեխնիկապես զգալիորեն գերազանցող հակառակորդի հետ առաջին հայացքից անհուսալի թվացող գոտեմարտը՝ նրան պարտադրելով ընդունել զինադադարը, որն անսասան է մինչ օրս:

1992 թ. հունվարի 28-ին՝ ռազմական գործողություններին զուգահեռաբար, ստեղծվեցին ՀՀ Զինված ուժերը՝ կանոնավոր բանակը, որը դարձավ վերջնական հաղթանակի հասնելու գրավականը: Նույն թվականի մայիսի 15-ին Տաշքենդում Հայաստանի Հանրապետությունն ստորագրեց Հավաքական անվտանգության պայմանագիրը՝ որպես հիմնաղիր անդամ, հիմք դրվեց հայ-ռուսական ռազմավարական համագործակցությանը, որը Հայաստանի Հանրապետության միջազգային անվտանգության ապահովման կարևոր գործոններից է:

**1994–2000 թվականներ**

Հետպատերազմյան առաջին տարիներին բանակն ապրեց կայուն և սրընթաց զարգացում՝ հետզհետե ձեռք բերելով ինքնաբավ ապահովման այն կարողությունները, որոնք անհրաժեշտ էին լինելու երկարաժամկետ խաղաղության պահպանման համար: Այս փուլում հիմնական ուշադրությունը բևեռվեց հաղթանակի ձեռքբերումները զարգացնելու վրա: Դրանք էին՝ բարձր մակարդակի մարտական պատրաստության պահպանումը, բանակի զորային կառույցի կուռ համակարգի ստեղծումը, նյութատեխնիկական և ֆինանսական անխափան ապահովման համակարգի ներդրումը, Զինված ուժերի գործունեության օրենսդրական ապահովումը, միջազգային ներգրավման ապահովումը:

Ի սկզբանե հասկանալի էր, որ զինադադարի կնքումից հետո էլ բանակը պետք է մնա մշտական բարձր մարտական պատրաստության վիճակում՝ պատերազմի արդյունքների վերանայման ուղղությամբ հակառակորդի նկրտումները զսպելու և չեզոքացնելու համար: Դա ենթադրում էր հակառակորդի հետ շփման ամբողջ գծով ամրաշինական լավ զարգացած շարակարգված համակարգի՝ խրամատների, խրամուղիների, հակատանկային փոսերի, գետնատնակների և կրակակետերի ստեղծում: Այդ գծի երկայնքով առ այսօր մարտական հերթապահություն են իրականացնում ՀՀ Զինված ուժերի ստորաբաժանումները: Կարևոր նշանակություն ունեցող գործունեություն էր նաև Զինված

ուժերի ապաքացազատումը և մշտական տեղակայման վայրերում ստորաբաժանումների ու զորամիավորումների տեղաբաշխումը: Այս աշխատանքները պահանջեցին ահռելի ֆինանսական և այլ նյութական ներդրումներ, քանի որ երբեմն զորամասային ենթակառույցներն ստեղծվում էին բոլորովին անմարդաբնակ վայրերում, և պետք էր լինում ամեն ինչ սկսել զրոյից:

Այս ժամանակահատվածում էր, որ Զինված ուժերի գործունեությունը դրվեց օրենսդրական հիմքերի վրա, մշակվեցին ռազմական ոլորտը կանոնակարգող մի շարք օրենսդրական ակտեր, այդ թվում՝ «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Բանակի լիարժեք կայացման ժամանակաշրջանում ներդրվեցին կենսականորեն կարևոր այնպիսի կարողություններ, ինչպիսիք են անձնակազմի կառավարման, ուսումնակրթական, թիկունքային, ռազմաբժշկական, ֆինանսական ապահովման համակարգերը, սկսվեց ռազմաարդյունաբերական համալիրի վերականգնումը: Վերջնական տեսքի բերվեց պաշտպանության նախարարության ու Զինված ուժերի Գլխավոր շտաբի կենտրոնական մարմինների և ենթակա ստորաբաժանումների կազմակերպակառուցվածքային համակարգը, գործողության մեջ դրվեցին Զինված ուժերի կանոնադրությունները: Հայաստանը զարգացրեց ռազմավարական դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ՝ 1997 թ. օգոստոսի 29-ին կնքելով «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը, իսկ 1994 թ. միացավ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին՝ սկիզբ դնելով Հայաստան–ՆԱՏՕ համագործակցությանը:

**2000–2008 թվականներ**

Այս ժամանակահատվածում արձանագրվեցին նշանակալի հաջողություններ թե՛ Բանակի մարտունակության բարձրացման, թե՛ ապահովման կարողությունների կատարելագործման տեսանկյունից: Բանակը հագեցվեց հայրենական արտադրության և արտերկրից ներկրված ժամանակակից սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով: Մարտական պատրաստման և զորքերի ծառայության կատարելագործման շնորհիվ ավելի անվտանգ դարձավ մարտական հերթապահությունը շփման գծի երկայնքով: Ուսումնակրթական գործընթացի կատարելագործման շնորհիվ բանակի սպայակազմը դարձավ ավելի արհեստավարժ ու բանիմաց՝ սկսելով անձնական օրինակով ղեկավարել ու առաջնորդել ենթականերին: Զգալիորեն բարելավվեցին զինծառայողների ծառայության, կենցաղի, հանգստի ու ժամանցի պայմանները, կատարվեցին աննախադեպ ծավալի կապիտալ և վերանորոգման շինարարական աշխատանքներ: Ռազմաքաղաքական հարթությունում Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերությունները դարձան ավելի բազմավեկտոր և հավասարակշռված: Ակտիվ համագործակցություն ծավալվեց ՀԱՊԿ-ի և ՀԱՊԿ-ի անդամ պետությունների հետ մեկտեղ նաև ԱՄՆ-ի և Եվրոպական պետությունների հետ, մեկնարկեցին Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը» (ԱԳԳԾ) ու «Պլանավորման և վերանայման գործընթացը», որոնք, բացի մեր միջազգային պարտավորությունների իրականացումից, կոչված էին ծառայելու ՀՀ պաշտպանական բարեփոխումների խթանմանը: Հայաստանն սկսեց նաև իր ներդրումը կատարել միջազգային խա-

ղաղության և կայունության ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններում՝ մասնակցելով Կոսովոյում և Իրաքում իրականացվող առաքելություններին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումներն իրականացման ակտիվ փուլ մտան 2005 թվականին և սկզբնապես բևեռված էին Ռուսաստանի Դաշնության հետ ու ՀԱՊԿ-ի շրջանակներում ընդհանուր չափորոշիչներով պաշտպանական համակարգի զարգացման ուղղությամբ ստանձնած պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև ՀՀ–ՆԱՏՕ ԱԳԳԾ նպատակների իրականացման վրա:

Պաշտպանական բարեփոխումների իրագործման համար շրջադարձային նշանակություն ունեցան երկու ռազմավարական փաստաթղթերի գործարկումը: Առաջին հերթին դա «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն» է, որի ընդունումը 2007 թ. հնարավորություն տվեց պետության ընդհանուր անվտանգության տիրույթում հստակ կերպով մատնանշելու պաշտպանության ոլորտի դերն ու առաքելությունը: Այնուհետև, նույն թվականի վերջին «ՀՀ ռազմական դոկտրինի» ընդունումը հնարավոր դարձրեց սահմանել պաշտպանական բարեփոխումների նպատակները, խնդիրները և ցանկալի վերջնական արդյունքները: Այս երկու փաստաթղթերի մշակումը թույլ տվեց ձեռնամուխ լինել ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2007–2015 թթ. ծրագրի մշակմանը, որում ներառված էին պաշտպանության նախարարության և Զինված ուժերի բոլոր ստորաբաժանումների զարգացման խնդիրները:

**2008–2015 թվականներ**

Մինչև 2008 թ. Զինված ուժերում գոյություն ունեին յուրաքանչյուր ուղղությամբ ուժերի և միջոցների, այլ կերպ ասած՝ կարողությունների զարգացման առանձին պլաններ կամ խնդիրներ, սակայն դրանք փոխկապված չէին և չէին հատվում ռազմավարական նպատակների մեկ միասնական կիզակետում: Մարտավարական խնդիրների և ռազմավարական նպատակների միջև առկա այս բացը լրացնելու համար 2008–2011 թթ. ժամանակահատվածում իրականացվեց ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայում, որը միտված էր առկա սպառնալիքների բացահայտումը, դրանց դիմագրավման համար քաղաքականության և ռազմավարության մշակումը, պահանջվող ռազմական կարողությունների ի հայտ բերումը և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովումը կապակցելու միջոցով Հայաստանի Հանրապետության պաշտպանության համակարգը երկրի շուրջ ձևավորված անվտանգային միջավայրին համապատասխանեցնելուն: Կարելի է փաստել, որ Պաշտպանության ռազմավարական վերանայմամբ պաշտպանական բարեփոխումների ուղղությամբ նախորդ տարիների ընթացքում ձեռնարկվող, հաճախ տարանջատ գործողությունները միատեղվեցին մեկ ընդհանուր հանգույցում, այն է՝ ՀՀ Զինված ուժերի զարգացման հնգամյա պլանում, որը կոչված է հուսալի պաշտպանական կարողության, վերակառուցման, արդիականացման և ռազմական ներգրավման միջոցով ապահովելու պաշտպանության ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացումը:

Ներկայումս ՀՀ Զինված ուժերի օրակարգում առաջնայինը դրանց զարգացման պլանի իրականացումն է: Զարգացման պլանի նպատակն է ժամանակակից սպառազինությամբ համալրված, մարտական բարձր պատրաստությամբ, բարձր բարոյահոգեբանական հատկանիշներով օժտված Զինված ուժեր

ունենալը, ինչը հնարավորություն կտա համարձակորեն նայելու Հայաստանի ու Արցախի ներկա և ապագա սպառնալիքներին ու մարտահրավերներին: Վերաբերելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի գրեթե բոլոր ոլորտներին՝ զարգացման պլանը միտված է ներքոհիշյալ ուղենիշներին, կամ այլ կերպ ասած՝ ցանկալի վերջնական արդյունքներին.

1. Զինված ուժերի բարձր մակարդակի մարտական պատրաստության պահպանում, մարտունակության և մարտական հերթապահության կատարելագործում՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով,

2. ԶՈՒ-ի կազմի, կառուցվածքի և ղեկավարման համակարգի հետագա կատարելագործում՝ առավել ճկուն զորային կառույց և որոշումների կայացման համակարգ ունենալու նպատակով, ինչը հնարավորություն կտա գերազանցելու հակառակորդին որոշումների կայացման և դրանց իրականացման գործում՝ նրան ստիպելով ոչ թե նախաձեռնողաբար գործել, այլ ընդամենը՝ արձագանքել,

3. սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում՝ ՀՀ սպառազինության զարգացման պետական ծրագրի իրականացման միջոցով: ՀՀ ԶՈՒ-ի սպառազինությունը պետք է լինի այնպիսին, որ դրա շնորհիվ ոչ միայն պահպանվի հակառակորդի հետ որակական հավասարակշռությունը, այլև դրա պահպանման տեսանկյունից տանելի լինի Հայաստանի տնտեսության համար: Նախապատվությունը տրվելու է առավել բարձր օգտակար գործողության գործակցով զինատեսակներին, կատարվելու է յուրաքանչյուր արտադրատեսակի արժեքային արդյունավետության վերլուծություն՝ ամբողջ կենսաշրջանի ընթացքում նախատեսվող ծախսերի հաշվառմամբ,

4. Զինված ուժերի ռազմարվեստի, օպերատիվ և ռազմավարական պլանավորման ընթացակարգերի, մարտական պատրաստման կատարելագործում՝ հայկական պատմական ռազմարվեստի բոլոր արժեքավոր տարրերի և աշխարհի առաջատար բանակներում կիրառվող ռազմագիտական արդիական լուծումների ներառմամբ, ընդսմին մեծ տեղ է տրվելու ֆիզիկական ու մտավոր արագաշարժությանը, տարբեր օղակներում աշխատանքների ճշգրիտ համակարգմանը և գործողությունների առավել մեծ ազատությանը,

5. պաշտպանական պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգի կատարելագործում, յուրաքանչյուր ուղղությամբ պլանավորվող աշխատանքները ՀՀ ԶՈՒ-ի միջնաժամկետ ծախսային ծրագրի հետ բաղդատման միջոցով հասնելով ծախսերի ավելի նպատակային ուղղման՝ որպես չափանիշ ընդունելով առանձին ծրագրերով արձանագրված առաջընթացի և արդյունքների գնահատումը,

6. ՀՀ ռազմաարդյունաբերական համակարգի կատարելագործում՝ հասնելով հայրենական արտադրության սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ՀՀ ԶՈՒ-ի ինքնաբավ ապահովման ցուցանիշների բարձրացման, ռազմաարդյունաբերության մեջ ներդրումների ապահովման,

7. նյութատեխնիկական ապահովման համակարգի կատարելագործում՝ անհրաժեշտ տեղում, պահին և ճիշտ քանակով զորքերի ապահովմանն ունակ լինելու նպատակով,

8. տեղեկատվական հակազդեցության համակարգի կատարելագործում՝

տեղեկատվական դաշտում հակառակորդի նկատմամբ գերակայելու միջոցով: Լինելով ժամանակակից ռազմագործողությունների անբաժանելի մաս՝ տեղեկատվական պայքարն ավելի կարևոր նշանակություն է ստացել նոր տեխնոլոգիաների երևան գալու հետ մեկտեղ:

9. արհեստավարժ սերժանտական կազմի զարգացում՝ նրա համար ապահովելով պաշտոնուղու և ուսումնակրթական հնարավորություններ, ինչն արվում է երկու հիմնական նպատակով. առաջինը՝ կարգապահության ամրապնդում, երկրորդը՝ ստորաբաժանումների մարտունակության բարձրացում՝ սերժանտների փորձի և սպաների գիտելիքների համադրմամբ,

10. ռազմական կրթության համակարգի կատարելագործում՝ ապահովելով ՀՀ ռազմակրթական հայեցակարգի դրույթների իրականացումը և փակ փուլաշրջանով բոլոր մակարդակների սպաների ու սերժանտների կրթության կազմակերպումը Հայաստանում, ինչը ոչ միայն կնվազեցնի ռազմական կրթության ոլորտում արտերկրից կախվածությունը, այլև կապահովի անձնակազմի՝ Հայաստանի պայմանների համար յուրահատուկ ռազմական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերումը,

11. կադրային ռեսուրսի կառավարման ոլորտի կատարելագործում, ինչը ենթադրում է սպայակազմի ու սերժանտների համար հստակ պաշտոնուղու մշակում, որակավորման և ծառայողական առաջխաղացման արդյունավետ համակարգի ներդրում: Նոր համակարգը պետք է հստակ կերպով զանազանի բարդ պայմաններում ծառայություն իրականացնող, ինչպես նաև կատարողական բարձր վարպետությամբ աչքի ընկնող անձնակազմին՝ նրանց համար ապահովելով հավելավճարներ և այլ արտոնություններ,

12. կարգապահության ամրապնդում և բարոյահոգեբանական որակների բարելավում՝ առաջնային նշանակություն տալով այն զինծառայողի կերպարին, որը առաջնորդվում է էթիկական նորմերով, ի նպաստ գործի լիարժեք կերպով օգտագործում է իրեն տրված իրավունքները և հստակորեն կատարում իր պարտականությունները,

13. ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության պայմաններում Զինված ուժերի թափանցիկության ապահովում և բանակ–հասարակություն կապերի ամրապնդում, քանի որ բանակը հզոր է ժողովրդով,

14. զինծառայողների սոցիալական, այդ թվում՝ բժշկական, ապահովման, կենսամակարդակի բարելավում. ենթակաների առողջական և կենցաղային խնդիրներին համապատասխան ուշադիր վերաբերմունքը պետք է լինի բոլոր կարգի հրամանատարների ու պետերի գործելաոճը,

15. միջազգային ներգրավում՝ ՀՀ ԶՈՒ-ի առաքելության կատարման համար ունեցած կարողությունների պակասը դաշնակցային և գործընկերային համագործակցության միջոցով լրացնելու, ինչպես նաև միջազգային հանրության՝ ժամանակակից մարտահրավերներին դիմագրավմանն ուղղված ջանքերին մասնակցելու նպատակով, ինչը կնպաստի նաև ՀՀ ԶՈՒ-ի միջազգային վարկի բարձրացմանը: Անշուշտ, միջազգային առաջավոր փորձի ներբերմամբ միջազգային ներգրավումը նպատակաուղղվում է նաև համակողմանի բարեփոխումների միջոցով ՀՀ պաշտպանության համակարգի արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Սրանք են ՀՀ Զինված ուժերի զարգացման հիմնական ուղենիշները, որոնք առաջին հայացքից կարող են թվալ բավականին հավակնոտ: Սակայն Բանակի անցած քսանամյա ուղին վկայում է, որ նրա համար չկան անհաղթահարելի խոչընդոտներ: Չնիրհելով ձեռքբերումների դափնիների վրա և հրապարակավ քննարկելով առկա խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը որդեգրել են իրենց գործունեությունը քննադատաբար գնահատելու, անցյալից դասեր քաղելու և շարունակաբար կատարելագործվելու ուղի՝ հանդես գալով որպես մշտապես «սովորող կազմակերպություն»:

Բանակը վստահությամբ է նայում ապագային՝ իր առաքելությունը ցանկացած պայմաններում կատարելու հաստատակամությամբ:

## ВООРУЖЕННЫЕ СИЛЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПРОЙДЕННЫЙ ПУТЬ, НАСТОЯЩЕЕ И БУДУЩЕЕ

*С. М. ОГАНЯН, Министр обороны РА*

### РЕЗЮМЕ

Юбилей обычно является поводом для осмысления прошлого, оценки настоящего и планирования будущего, ибо без объективного анализа пройденного пути и существующих на данный момент реалий не возможно рациональное планирование будущего.

28 января 2012 года ВС РА отпраздновали свое 20-летие. Исходя из сути ставящихся перед ВС РА боевых задач, приоритетов в их становлении и развитии можем выделить следующие этапы.

**1992–1994 гг.** Одним из основных факторов успешности становления Армянской армии является объединение всех добровольческих отрядов в системе единого управления, а также консолидация патриотических сил вокруг идеи национального единства. С этой точки зрения Армянская армия может быть всецело квалифицирована как *национальная*, а героические бои в Арцахе–как *отечественная* война.

Успехи армянства в военных действиях были обусловлены, в первую очередь, превосходством над противником боевого духа армянского воина, его высокими морально-психологическими качествами, а также быстротой перегруппировки сил и средств и искусством маневра. Залогом победы являлись также надежная и в то же время гибкая система управления и планирования операций. Параллельно с боевыми оборонительными действиями Армения предпринимала эффективные шаги по обеспечению своей военной безопасности и в сфере военной политики. Так, 15 мая 1992 г. она в качестве члена-учредителя подписала в Ташкенте Договор о коллективной безопасности, заложив основы армяно-русского стратегического партнерства.

**1994–2000 гг.** На этом этапе основное внимание было уделено сохранению и наращиванию успехов, достигнутых в процессе боевых действий,– поддержанию, высокого уровня боевой готовности, созданию целостной

войсковой структуры Армии, внедрению систем безотказного материально-технического и финансового обеспечения, законодательному обеспечению деятельности ВС, расширению международного сотрудничества и вовлеченности в систему международной безопасности.

Началось восстановление военно-промышленного комплекса, была откорректирована организационно-структурная система Центральных органов военного управления МО и ГШ и подчиненных им подразделений, введены в действие уставы ВС. В 1997 г. был заключен договор «О дружбе, сотрудничестве и взаимной помощи между РА и РФ», что позволило Армении углубить стратегические союзнические отношения с РФ, а присоединение в 1994 г. к программе НАТО «Партнерство ради мира» заложило основы сотрудничества между Арменией и НАТО.

**2000–2008 гг.** На этом этапе Армия была укомплектована современными ВВТ как отечественного, так и зарубежного производства. Путем усовершенствования системы боевой подготовки и службы войск более безопасным стало боевое дежурство по всей линии соприкосновения с противником. Реорганизация учебно-образовательного процесса позволила повысить профессиональный уровень офицерского корпуса. Существенно улучшились условия службы, быта, отдыха и досуга военнослужащих. В военно-политической сфере международные отношения РА стали более сбалансированными и многовекторными.

В 2005 г. оборонные реформы вошли в свою активную фазу и были нацелены на выполнение взятых обязательств в рамках ОДКБ, а также на реализацию «Плана действий индивидуального партнерства РА–НАТО». Следует отметить, что на этом этапе важную роль как при планировании оборонных реформ, так и их осуществлении сыграли принятые в 2007 г. «Стратегия национальной безопасности РА» и «Военная доктрина РА».

**2008–2015 гг.** В 2008–2011 гг. в РА был завершен процесс «стратегического пересмотра обороны», который дает возможность осуществить точное и обоснованное планирование целенаправленных и эффективных действий по выявлению угроз, разработке политики и стратегии противодействия вызовам. Эти мероприятия нашли свое отражение в «Пятилетнем плане развития ВС РА», целями которого являются: поддержание высокой боеспособности и боевой готовности ВС РА; дальнейшее совершенствование состава, структуры и системы управления ВС; модернизация ВВТ; усовершенствование систем оперативной и боевой подготовки, стратегического планирования; развитие оборонно-промышленного комплекса; усовершенствование системы информационного противодействия; формирование высокопрофессионального офицерского корпуса и сержантского состава; дальнейшее развитие системы военного образования и управления кадровым ресурсом; укрепление дисциплины и повышение морально-психологических качеств военнослужащих; обеспечение транспарентности

ВС в условиях гражданского демократического контроля, укрепление связей армия–общество; улучшение социального, в том числе–медицинского, обеспечения; развитие международного сотрудничества как в интерасах ликвидации разрыва между нуждами ВС и экономическими возможностями государства, так и расширения участия в усилиях мирового сообщества по поддержанию глобальной безопасности.

## THE PATH TAKEN BY THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA, THEIR PRESENT AND FUTURE

*S. M. OHANYAN, RA Minister of Defense*

SUMMARY

An anniversary is the occasion for reflecting on the past, assessing the present and planning the future, because without an objective analysis of the path taken and the realities existing at the moment the reasonable planning of the future is impossible.

On January 28, 2012 the RA Armed Forces celebrated its 20th anniversary. Taking into account the essence of the missions set before the RA Armed Forces, priorities in their formation and development we can identify the following phases.

**1992–1994:** One of the key success factors of the formation of the Armenian Army is the unification of all the volunteer units in the system of integrated control, as well as the consolidation of patriotic forces around the idea of national unity. From this viewpoint the Armenian army can be fully qualified as national, and the heroic battles in Artsakh, as patriotic war.

The Armenians's achievements in the hostilities were due, first and foremost, to the superiority the Armenian soldier's morale over the enemy, to his high moral and psychological merits, as well as to the rapidity of regrouping forces and means, and to the art of maneuvers. The key to the victory were also the reliable and, at the same time, flexible system of management and operations planning. Along with the combat and defense operations Armenia took effective steps to ensure its military security also in the defense policy field. Thus, on May 15, 1992, it as a founding member signed Collective Security Treaty in Tashkent, laying the corner-stone of the Armenian-Russian strategic partnership.

**1994–2000:** During this phase, the main attention was paid to the preservation and enhancement of the successes achieved in the course of fighting – the maintenance of the high level of combat readiness, the establishment of an integrated military structure of the Army, the introduction of failproof logistical and financial support systems, the legislative support of the Armed Forces' activity, the expansion of international cooperation and involvement in the international security system.

The restoration of the military-industrial complex started and the organizational and structural system of the Central bodies of the military administration of the Ministry of Defense and the Main Staff and their subordinate subdivisions were updated and the Armed Forces' regulations were put into practice. In 1997 «the Treaty of Friendship, Cooperation and Mutual Assistance between the RA and the RF» was signed, which enabled Armenia to deepen its strategic allied relations with the RF, and the accession in 1994 to the NATO «Partnership for Peace program laid the foundation for the Armenia-NATO cooperation.

**2000–2008:** At this phase the army was equipped with modern weapons and military equipment of both domestic and foreign production. By upgrading the system of combat training and troops' service the combat alert became more secure all along the contact line with the enemy. The reorganization of educational process made it possible to increase the professional level of the officer corps. The conditions of service, life, leisure and recreation of the military significantly improved. In the military-political sphere the international relations of the RA became more balanced and multifaceted.

In 2005 the defense reforms entered their active phase and were designed to perform the obligations under the CSTO, as well as to implement the NATO-RA Individual Partnership Action Plan. It should be noted that at this phase the National Security Strategy of the RA and Military Doctrine of the RA adopted in 2007 played an important role both in the planning of defense reforms and their implementation.

**2008–2015:** In 2008–2011, the process of «strategic defense review» was accomplished in the RA that allows making accurate and substantiated planning of targeted and effective actions to identify threats, develop policies and strategies to address the challenges. These activities are reflected in the Five Year Development Plan of the RA Armed Forces, the goals of which are: the maintenance of high combat capability and combat readiness of the RA Armed Forces, the further improvement of the personnel, structure and control system of the Armed Forces; the modernization of the weapons and military equipment, the enhancement of operational and combat training systems, strategic planning, the development of defense industry, the improvement of the information countermeasures system, the formation of highly professional officer corps and sergeants, the further development of the military education system and human resources management, the reinforcement of the discipline and the rise of the moral and psychological qualities of the military, the provision of transparency of the Armed Forces in terms of civil democratic control, the strengthening of ties between army and society, the improvement of social including medical security, the development of international cooperation in the interest of both bridging the gap between the needs of the Armed Forces and the economic potential of the state and increasing the participation in the efforts of the international community to maintain the global security.

# ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

*Ա. Մ. ԴԱՎԹՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ Օպերատիվ վարչության պետ, գեներալ-մայոր, Ս. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ Օպերատիվ վարչության պետի տեղակալ, գնդապետ*



Ամբողջ խորհրդային շրջանում՝ դեռ մինչև Արցախյան շարժման ձևավորումը, ադրբեջանական իշխանությունների վարած՝ «էթնիկական զտման» ու հայության պատմական տարածքների հայաթափման քաղաքականությունը 1988 թվականին ընդունեց ավելի բացահայտ և սուր բնույթ: Առաջինը բռնությունների ենթարկվեց Հյուսիսային Արցախի հայ բնակչությունը: 1987 թ. վերջերին՝ Նախքան Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի, Մարաղայի ջարդերը, Ադրբեջանական ԽՍՀ ՆԳՆ ստորաբաժանումներն ու ադրբեջանական հրոսակախմբերը, ձեռնարկելով խաղաղ հայ բնակչության վրա ավազակային հարձակումներ, հայաթափեցին ԽՍՀՄ մարշալներ Հովհաննես Բաղրամյանի և Համազասպ Բաբաջանյանի ծննդավայր Չարդախլու գյուղը:

ԼՂ Ինքնավար Մարզի և շրջակա տարածքների հայ բնակչության տեղահանմանը նպատակաուղղված՝ ադրբեջանական բանդկազմավորումների, միլիցիայի հատուկ նախանշանակման ջոկատների և ԽՍՀՄ Զինված ուժերի ու ներքին զորքերի ստորաբաժանումների համատեղ պատժիչ գործողությունները իրենց գագաթնակետին հասան 1991 թ. ապրիլ–մայիս ամիսներին, երբ իրականացվեց այսպես կոչված «Օղակ» («Կոլցո») օպերացիան: Անձնագրային ռեժիմի պահպանման քողի տակ շարունակվող ձերբակալությունները, հաճախակի դարձած սպանությունները, մարդագողության ու պատանդառության դեպքերը արցախահայությանը, ի վերջո, կանգնեցրին զինված ինքնապաշտպանության դիմելու միակ ճիշտ ուղու վրա: Ադրբեջանական ԽՍՀ-ն նաև շրջափակման ենթարկեց ԼՂ Ինքնավար Մարզը, և այն հայտնվեց բացարձակ մեկուսացման մեջ: Ժողովրդագրական հաշվեկշիռը փոխելու նպատակով Ադրբեջանի Գերագույն խորհուրդը անօրինական որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը լուծարելու մասին (1991 թ. նոյեմբեր), ըստ որի՝ հայաբնակ

* Հոդվածում մեծապես օգտագործված են ինչպես հեղինակների, այնպես էլ Շուշիի ազատագրման այլ մասնակիցների հուշերը:

շրջանները միացվեցին Լեռնային Ղարաբաղի տարածքային սահմաններից դուրս գտնվող և խառը (գերազանցապես՝ ադրբեջանական) բնակչություն ունեցող ավելի մեծ շրջաններին:

Այս բոլոր անօրինականություններին ի պատասխան՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը որդեգրեց օրինապաշտ ինքնորոշման ուղին[1]: Այսպես. ԼՂՀ կազմավորումն իրականացվեց ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ 1990 թ. օրենքի[2] իրավակիրառության շրջանակներում, ընդսմին՝ այն բանից հետո, երբ Ադրբեջանի ԳԽ-ն 1991 թ. հոկտեմբերին ընդունեց պետական անկախության մասին սահմանադրական ակտը՝ առանց հաշվի առնելու հանրապետության մեջ մտնող ինքնավար կազմավորումների (Նախիջևանի ԻՀ և ԼՂԻՄ) բնակչության և հոծ բնակվող ազգային փոքրամասնությունների կարծիքը, ինչը ն շված օրենքի պահանջների կոպիտ խախտում էր: Մինչդեռ Ղարաբաղի իշխանությունները մարզի ազգային փոքրամասնություն կազմող ադրբեջանական բնակչությանը հրավիրեցին մասնակցելու ԼՂՀ կազմավորման ու ԼՂՀ օրինական իշխանությունների ձևավորման հարցով հանրաքվեին, ինչը Բաքվի թելադրանքով նրա կողմից մերժվեց: Հանրաքվեն անցկացվեց նախքան 1991 թ. դեկտեմբերի կեսերին Ալմա Աթայում ԽՍՀՄ լուծարման մասին հռչակագրի ստորագրումը[3] և տեղի ունեցավ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բազմաթիվ միջազգային դիտորդների հսկողությամբ: Այսպիսով՝ 1991 թ. դեկտեմբերին նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարածքում կազմավորվեցին երկու անկախ պետություն՝ օրինական ճանապարհով ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և օրենքի խախտմամբ ստեղծված Ադրբեջանի Հանրապետությունը:

Թեև նորաստեղծ Ադրբեջանի Հանրապետությունն իրեն հռչակեց 1918–1920 թթ. գոյություն ունեցած, սակայն վիճելի տարածքների նկատմամբ հավակնություններ ներկայացրած և այդ պատճառով Ազգերի լիգայի կողմից չճանաչված Ադրբեջանական Ժողովրդավարական Հանրապետության իրավահաջորդը, մի պետության, որի կազմում Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել[4], սակայն Լեռնային Ղարաբաղի օրինական գործողություններին հետևեցին Ադրբեջանի Հանրապետության լայնամասշտաբ ռազմական ձեռնարկումները: Ադրբեջանական հարձակմանը դիմագրավելու նպատակով կամավորական-աշխարհազո-

[1] Այդ մասին հանգամանորեն տես *Հ. Քոչարյան,* Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան: Ե., 2009, էջ 187 – 189:

[2] Տես «Закона о порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР», принятого в 1990 г. (см. «Ведомости Съезда народных депутатов Верховного Совета СССР». М., изд. Верховного Совета СССР, 1990, N 15)»:

[3] Տես «Алма-Атинская декларация» (О прекращении существования Союза Советских Социалистических Республик и образовании Содружества Независимых Государств). Алма-Ата, 21 декабря 1991 г. «Университет Миннесоты. Библиотека По Правам Человека» (http://hrlibrary.ngo.ru/russian/cis/Ralmatydecl.html):

[4] Տես *Ա. Մանասյան,* Ղարաբաղյան հակամարտությունը պատմաքաղաքական և իրավական տեսանկյուններից: «Ղարաբաղ. հակամարտություն – համաձայնություն» պատմաքաղաքական ժողովածու: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 1997, էջ 12–21:

րային ջոկատներից ստեղծվեցին զինվորական ստորաբաժանումներ[5]: Լարվածության գագաթնակետին հասած ռազմաքաղաքական իրադրությունը կարող էր հանգեցնել արցախահայության համար կործանարար հետևանքների, եթե ժամանակին չազատագրվեր ադրբեջանցիների ամենամեծ ու վտանգավոր ռազմահենակետի վերածված Շուշի բերդաքաղաքը և չվնասազերծվեին Ստեփանակերտի հարակից գյուղերի կրակակետերը[6]:

**Շուշիի ազատագրման անհրաժեշտությունը. օպերացիայի նախապատրաստում**

Դեռ 1991 թվականին ադրբեջանական կողմը գրավել էր գրեթե ամբողջ Շուշիի շրջանը (բացառությամբ՝ Քարինտակ գյուղի) և այն օգտագործում էր որպես ռազմական հենակետ՝ ինտենսիվորեն հրակոծելով հայկական բնակավայրեր Ստեփանակերտը, Շոշը, Մխիթարիշենը և Քարինտակը: Շուշին Արցախյան պատերազմի ժամանակ վերածվել էր մի հզոր ու լավ ամրացված հենակետի: Այդտեղ հանգրվանած ադրբեջանցի զինյալները ցանկացած պահի կարող էին թիկունքից հարձակվել հայ ինքնապաշտպանների վրա: Միայն 1992 թվականի սկզբին Շուշիի կողմից Ստեփանակերտը հրետակոծության ենթարկվեց 170, իսկ ցամաքային հարձակման՝ 11 անգամ: 1992 թվականի փետրվարի 14-ին ադրբեջանցիները Շուշիից առաջին անգամ Ստեփանակերտը հրետակոծեցին «Գրադ» հրթիռահրետանային կայանքից, որը միջազգային համաձայնագրերով արգելված է կիրառել խաղաղ բնակչության դեմ[7]: Շուշիից կատարվող անընդմեջ հրետակոծությունների, ցամաքային և օդային ճանապարհների շրջափակման, էլեկտրաէներգիայի, գազի, խմելու ջրի պակասի պատճառով Ստեփանակերտում և հարակից հայկական բնակավայրերում կյանքը խիստ դժվարացավ, տնտեսությունը կաթվածահար եղավ, ինչն ուղեկցվեց մեծաթիվ մարդկային զոհերով, ուստի Շուշիի ազատագրումը ռազմավարական, տնտեսական անհրաժեշտություն էր:

Ե՛վ ներկայումս իր ունեցած ռազմաքաղաքական նշանակությամբ, և՛ պատմական առումով, և՛ իր նուրբ ռազմավարական մտահղացմամբ ու իրագործմամբ Արցախյան ազատամարտում առանձնանում է Շուշիի ազատագրման օպերացիան:

Պատմական ու հոգեբանական առումով Շուշիի ազատագրումը անհրաժեշտ էր նաև հետևյալ նկատառումներով: Շուշին միշտ եղել է Ղարաբաղի քաղաքական ու մշակութային կենտրոնը, կարելի է ասել՝ Ադրբեջանում բնակվող ամբողջ հայության կենտրոնը: Եվ պատահական չէ, որ ազերիների կողմից Ղարաբաղի նվաճումն սկսվել էր 18-րդ դարի վերջին հենց Շուշի բերդում վաչկատուն ջիվանշիրյան ցեղի սարդջալը ճյուղի ցեղապետ Փանահ-Ալի բեկի հաստատմամբ[8]: Ուստի ազերիներից Շուշիի ազատագրումը պետք է արցախահայութ-

---

[5] ԼՂՀ Պաշտպանության բանակի ստեղծման մասին ավելի հանգամանորեն տես *Ս. Մ. Օհանյան*, Տասնամյա հերոսական ուղի: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

[6] Տես *Ս. Մ. Օհանյան*, XXI դարի բանակը: Ե., 2007, էջ 234–235:

[7] Տես *Մ. Հարությունյան*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը: Ե., 2000, էջ 61:

[8] Տես *Րաֆֆի*, Խամսայի մելիքությունները (1600–1827). նյութեր հայոց նոր պատմության

յանը հոգեբանորեն նոր լիցք հաղորդեր ադրբեջանցի զավթիչների դեմ մղվող պայքարում:

Բացի այդ, ինքնապաշտպանության ուժերի՝ 1991 թվականի վերջերի և 1992 թվականի սկզբների հաջող գործողությունները, մի շարք կրակակետերի ճնշումը, Խոջալուի (այժմ՝ Իվանյան) ազատագրումը (1992 թ. փետրվարի 25-26) և օդանավակայանի բացումը ստեղծեցին տնտեսական, ռազմական ու բարոյահոգեբանական բոլոր նախադրյալները՝ Շուշիի ազատագրումը նախապատրաստելու համար[9]:

Շուշիի ազատագրման հաջողությունն ապահովելու համար անհրաժեշտ էր վնասազերծել մի շարք կարևոր կրակակետեր, որոնցից էին Ստեփանակերտը անընդհատ հրակոծության տակ պահող Մալիբեյլին (այժմ՝ Աջափնյակ) Կրկժանը, Ջամիլլուն:

1991 թվականի դեկտեմբերի 15-ին ազատագրվեց Ջամիլլու գյուղը, իսկ 1992 թվականի հունվարի 20-ին՝ Կրկժանը: Այնուհետև ինքնապաշտպանական ուժերը ձեռնամուխ եղան ռազմական հենակետի վերածված Մալիբեյլիի ազատագրմանը, որն սկսվեց փետրվարի 9-ին, ժամը 21-ն անց 00-ին: Ադրբեջանական բնակչությանը հեռանալու հնարավորություն տրվեց: Խաղաղ բնակչությունը գիշերվա ընթացքում լքեց գյուղը: Մալիբեյլիի ազատագրմամբ Ստեփանակերտն ազատվեց շրջափակման շղթայի ևս մեկ օղակից:

Շուշիի ազատագրման օպերացիայի նախապատրաստմանը զուգահեռաբար հայկական կողմը ձեռնարկեց նաև դիվանագիտական քայլեր: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, ԵԱՀԽ-ին և մի շարք պետությունների ղեկավարներին հասցեագրված՝ փետրվարի 19-ի դիմումով ԼՂՀ ԳԽ-ն նրանց ուշադրությունը հրավիրեց Ադրբեջանի կողմից կատարվող ցեղասպանական գործողությունների վրա՝ հիշատակելով, մասնավորապես, Մարաղայի եղեռնագործությունը, որը տեղի է ունեցել 1991 թ. ապրիլի 10-ին: Մայիսի 1-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը կրկին դիմեց միջազգային հանրությանը՝ հայտարարելով, որ Ղարաբաղի ժողովուրդը սովահար վիճակում է, զրկված խմելու ջրից, էլեկտրաէներգիայից, դեղորայքից, ուստի Շուշիի ազատագրումը Ստեփանակերտի և ամբողջ Լեռնային Ղարաբաղի շահերից բխող պարտադրված անհրաժեշտություն է: Արձագանքելով այդ դիմումին՝ մի շարք երկրների ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ս. Վենսը և ԵԱՀԽ լիազոր պատասխանատու Յ. Կուբիչը, Իրանի ԱԳ փոխնախարար Մ. Վայեզին, ՌԴ ԱԳ նախարար Ա. Կոզիրևը 1992 թ. մարտ-ապրիլին այցելեցին տարածաշրջան: Սկսվեց նաև բանակցային գործընթաց. Իրանի մայրաքաղաք Թեհրանում մայիսի 6-ին հանդիպեցին ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ԻԻՀ Նախագահ Հ. Ռաֆսանջանին և Ադրբեջանի նախագահի պաշտոնակա-

համար: «Երկերի ժողովածու», հ. 10: Ե., 1959, *И. П. Петрушевский.* Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI–начале XIX вв. Л., 1949; *Բ. Պ. Բալայան,* Ռազմաքաղաքական իրադրությունը Անդրկովկասում XVIII դարի վերջում. Երևանի և Ղարաբաղի ազատագրման զուբովյան նախագիծը: «Ղարաբաղ. հակամարտություն–համաձայնություն» պատմաքաղաքական ժողովածու: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 1997, էջ 32–40:

[9] Տես *Մ. Ա. Հարությունյան,* Ոգու և զենքի փառավոր հաղթանակը: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

տար Յ. Մամեդովը[10]: Հենց այդ բանակցությունների ընթացքում էլ սկսվեց Շուշիի ազատագրման օպերացիան՝ ընդհատելով բանակցությունները և փաստորեն ցույց տալով, որ ամեն մի բանակցություն առանց ԼՂՀ լիազորված ներկայացուցիչների դատապարտված է անհաջողության:

Շուշիի ազատագրման ռազմական օպերացիայի նախապատրաստման նպատակով ԼՂՀ ռազմաճակատներից ուժեր ուղղվեցին դեպի Շուշի: Ապրիլմայիսին ավելի հաճախակի և արդյունավետ դարձան հետախուզական աշխատանքները: Սղնախ գյուղի մոտակա բարձունքից վերահսկվում էր Լաչին–Շուշի ճանապարհով կատարվող երթևեկությունը: Օդանավակայանի ազատագրումից հետո հնարավոր դարձավ Յակ-40 ինքնաթիռներով ու Մի-8 ուղղաթիռներով Ստեփանակերտ հասցնել բեռների այն նվազագույն քանակությունը, որն անհրաժեշտ էր Շուշին ազատագրելու համար:



Շուշիի ազատագրման օպերացիայի հրամանատար, Արցախի հերոս, գնդապետ (ներկայումս՝ գեներալ-մայոր) Արկադի Տեր-Թադևոսյանը փոխգնդապետ (ներկայումս՝ գեներալ-մայոր) Ռաֆայել (Ֆելիքս) Գզողյանի հետ. 1992 թ. մայիս

Այդ ժամանակ հակառակորդի ուժերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. մոտ 1200 զինվոր պաշտպանական դիրքեր էր զբաղեցրել Շուշի քաղաքի շրջակա բարձունքներում՝ մոտավոր տվյալներով 100 զինվոր Ջանհասան գյուղում, 300-350՝ Լիսագորսկում, 300՝ Քյոսալարի ուղղությամբ: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի առջև խնդիր էր դրված ջախջախել հակառակորդին Լիսագորսկ, Ջանհասան, Ջանհասան, Կարագյավ բնակավայրերում, Շուշի քաղաքի մատույցներում և տիրել Շուշիին՝ այն ազատագրելով ադրբեջանական զինված կազմավորումներից, այնուհետև հարձակումը շարունակել Բերդաձորի ենթաշրջանի ուղղությամբ:

Նախատեսված էր հարձակումն սկսել մայիսի 8-ին՝ ժամը 2-ն անց 30-ին: Հրամանը ստորագրել էին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատար գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը և նրա տեղակալ փոխգնդապետ Ռաֆայել (Ֆելիքս) Գզողյանը:

[10] Տես նույն տեղում:

Պլանավորված էր հարձակումն սկսել միաժամանակ չորս ուղղություններով.

1. «26-ի» (հյուսիսային) ուղղություն, հրամանատար՝ Վ. Չիքչյան,
2. Շոշի (արևելյան) ուղղություն, հրամանատար՝ Ա. Կարապետյան,
3. Լաչինի (հարավային) ուղղություն, հրամանատար՝ Ս. Բաբայան,
4. Քյոսալարի (հյուսիսարևմտյան) ուղղություն, հրամանատար՝ Ս. Օհանյան[11]:

Շուշիի ազատագրման օպերացիայի պլանը մշակվել էր ինքնապաշտպանության ուժերի շտաբի կողմից: Այն ղեկավարել է գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը:

Հարկ է նշել, որ Շուշիի ազատագրման գործում առանձնահատուկ դերակատարություն ունեցավ նաև Հայ առաքելական եկեղեցին: Մինչև ռազմական օպերացիայի սկսվելը ազատամարտիկները օրհնություն ստացան: Հարձակման գնացող բոլոր զինվորները խաչ էին կրում: Խաչի նշաններ դրվեցին նաև տանկերի ու զրահամեքենաների վրա[12]:

## Շուշիի ազատագրման օպերացիայի սկիզբն ու ընթացքը

Մայիսի 8-ին ժամը 2-ն անց 30-ին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի 1200 մարտիկներից կազմված չորս հարձակողական խմբերը ձեռնամուխ եղան Շուշիի անառիկ ամրոցի և շրջակա բնակավայրերի հենակետերում ուժերով ու միջոցներով գերազանցող հակառակորդի ջախջախմանը:

Շուշիի ազատագրման ռազմական օպերացիայի հարձակման ճակատի լայնությունը 40 կմ էր, իսկ խորությունը՝ 10-12 կմ:

*Աղյուսակ 1*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒԺԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՇՈՒՇԻԻ ՕՊԵՐԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ
(1992 թ. մայիսի 7-ի դրությամբ)

| Հ/հ | Ուժեր և միջոցներ | Քանակական բնութագրեր | | |
|---|---|---|---|---|
| | | Հայկական | Ադրբեջանական | Հարաբերակցություն |
| 1. | Հվ* | 17 | 24 | 1:1,4 |
| 2. | Տանկեր | 4 | 8 | 1:2 |
| 3. | ՀՄՄ/ ԶՓԴ | 16 | 28 | 1:1,7 |
| 4. | Հրետանի | 4 | 10 | 1:2,5 |
| 5. | ՀԿՀՀ | 2 | 5 | 1:2,5 |
| 6. | Ականանետ | 6 | 36 | 1:6 |
| 7. | ՀՏՄ | – | 8 | բաց. |

* Զոկատները վերահաշվարկված են որպես հրաձգային վաշտեր (Հվ)՝ մինչև 90 մարդ:

---

[11] Տես «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994» հանրագիտարան: Ե., 2004, էջ 531–532:

[12] Տես *Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Մ. Ա. Հարությունյան,* Արցախի թեմը և Ադրբեջան–Ղարաբաղ հակամարտությունը: «ՀԲ», 2001, հմ. 1–2:

*Աղյուսակ 2*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒԺԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻԱՅՆ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ
(1992 թ. մայիսի 7-ի դրությամբ)

| Հ/հ | Ուժեր և միջոցներ | Քանակական բնութագրեր | | |
|---|---|---|---|---|
| | | Հայկական | Ադրբեջանական | Հարաբերակցություն |
| 1. | Հվ | 8 | 14 | 1:1,7 |
| 2. | Տանկեր | 4 | 4 | 1:1 |
| 3. | ՀՄՄ / ԶՓԴ | 8 | 16 | 1:2 |
| 4. | Հրետանի | 4 | 6 | 1:1,5 |
| 5. | ՀԿՀՀ | 2 | 3 | 1:1,5 |
| 6. | Ականանետ | 4 | 20 | 1:5 |
| 7. | ՀՏՄ | – | 6 | բաց. |

### *1. «26-ի» ուղղություն*

Շուշիի ազատագրման ռազմական օպերացիայի հիմնական ուղղություններից էր հյուսիսայինը: Վ. Չիթչյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող ստորաբաժանումների առջև խնդիր էր դրված գրավել համապատասխան բարձունքները, ամրանալ այնտեղ, ապա ներգրավելով պահուցը՝ հսկողության տակ վերցնել Շուշի քաղաքի ծայրամասը:

Մարտական գործողությունները սկսվեցին մայիսի 8-ի վաղ առավոտյան: Կենտրոնում՝ Ստեփանակերտ–Շուշի մայրուղով, հարձակման անցավ 4-րդ վաշտը (հրամանատար՝ Գ. Սարգսյան), որի կազմում գործում էին շուրջ 85 հետևակային՝ մեկ տանկի և երկու ՀՄՄ-1-ի աջակցությամբ: Միաժամանակ ՀՄՄ-2-ը կրակային դիրք էր զբաղեցրել Կրկժան գյուղի բարձունքում և կրակի տակ վերցրել Երեք աշտարակների բարձունքը: Ժամը 2-ն անց 50-ին սկսվեց օպերացիայի հրետանային նախապատրաստումը՝ Հասանաբադի կողմից գործող երկու ՄՄ-21-ով, որից հետո Երեք աշտարակների բարձունքը 20 րոպեում գրավվեց[13]: Ոչնչացվեցին հակառակորդի մեկական ԶՓԴ և ՀՄՄ-1: Այդ բնագծին տիրելը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ օպերացիայի հաջող ելքի համար: Այնուհետև 4-րդ վաշտը, միանալով գրոհող այլ ստորաբաժանումների, շարունակեց առաջխաղացումը: Սակայն դրան խոչընդոտում էին հակառակորդի ուղղաթիռները և երկու տանկ: Տանկային մենամարտում հայկական տանկը վնասվեց, ինչը մի պահ թուլացրեց հարձակման թափը: Սակայն մինչ այդ գրավված ռազմավարական այլ բնագծերում ամրանալը, ինչպես նաև այլ ուղղություններում գործող հայ մարտիկների շշափելի հաջողությունները, հատկապես՝ Լաչին–Շուշի ճանապարհի փակման անմիջական սպառնալիքը և թողնված «միջանցքով» հակառակորդի փախուստը, կանխորոշեցին մարտի ելքը: Մայիսի 9-ին հայ մարտիկները հաղթանակով մտան Շուշի:

[13] Տես *Ս. Կարապետյան,* Շուշին Պաշտպանության բանակի ծնունդն էր: «Մարտիկ», 1996, թիվ 18–19:

Այս ուղղությունում ձեռք բերված հաղթանակն զգալի չափով պայմանավորված էր նաև 6-րդ (հրամանատար՝ Կ. Ներսիսյան) ու հետախուզական (հրամանատար՝ Ս. Աբրահամյան) վաշտերի հաջող գործողություններով:

### *2. Շոշի ուղղություն*

Ավելի դժվար էր լուծել բերդաքաղաքի արևելյան հատվածում հակառակորդի դիմադրությունը կոտրելու և բնականից անառիկ բնագծերում նրա պաշտպանությունը ճեղքելու խնդիրը:



Հրետանու հրամանատար գնդապետ (ներկայումս՝ գեներալ-լեյտենանտ) Լեոնիդ Մարտիրոսովը հրամանատարական կետում

Հարձակվող ուժերի առաջխաղացումն սկսվեց մայիսի 8-ի գիշերը՝ երեք հիմնական ենթաուղղություններով: Ձախ թևում Շոշ գյուղի ինքնապաշտպանական ջոկատն էր (հրամանատար՝ Ա. Հարությունյան), որի առջև խնդիր էր դրվել ցանկացած գնով այդ գիշեր մտնել Շուշի: Կենտրոնում՝ բանտի ուղղությամբ, 1-ին վաշտն էր (հրամանատար՝ Ա. Ղուլյան), իսկ աջ թևում գործում էր հատուկ հետախուզական խումբը (հրամանատար՝ Ռ. Իսրայելյան)՝ կազմված Քռասնու (հրամանատար՝ Վ. Բաղրյան) և Քարաշենի (հրամանատար՝ Վ. Սաֆարյան) ինքնապաշտպանական ջոկատներից ընտրված 15-ական մարտիկներից: ՀՀԴ վաշտից մի դասակ և «Մոստ» խումբը գտնվում էին պահուցում:

Շոշի կամրջից ոչ հեռու հակառակորդը ականանետային կրակ բացեց: Լ. Մնացականյանի հրամանատարությամբ գործող ականանետային հաշվարկը պատասխան կրակով փախուստի մատնեց հակառակորդին: Քանի որ տեղանքը ականապատված չէր, հակառակորդն էլ խուճապի էր մատնված, ուստի առաջին բարձունքները հեշտությամբ գրավվեցին: Ձախ թևում հակառակորդը չէր սպասում, որ այդ դժվարանցանելի ժայռերով հնարավոր է քաղաք մտնել, սակայն շփոթությունը երկար չտևեց, և նա սկսեց կատաղի դիմադրություն ցույց տալ: Հայերի դիրքը խիստ աննպաստ էր, 12 ազատամարտիկներից 8-ը վիրավորվեցին, նրանց դժվարությամբ հաջողվեց մարտի դաշտից դուրս բերել:

Աջ թևի ստորաբաժանումների առջև խնդիր էր դրված անցնել ձորը, հասնել Երեք աշտարակների բարձունքին, հաջողության դեպքում այնտեղ միանալ 4-րդ վաշտին, ապա միասին մտնել Շուշի:

Կատաղի մարտեր մղելով՝ հայ ռազմիկները հաղթահարեցին բնական արգելքները և, միանալով պահուցին, շարժվեցին ավտոբազայի ուղղությամբ: Երբ նրանք դուրս եկան խճուղի, հակառակորդը Երեք աշտարակների բարձունքից փախուստի դիմեց, ինչից հետո 4-րդ վաշտը հեշտությամբ գրավեց նշված բարձունքը, իսկ մեր զրահատեխնիկան անարգել կերպով բարձրացավ խճուղով: Այդ մարտում զոհվեցին Գ. Օսիպովը, Օ. Փիրումյանը, Քռասնու ջոկատից՝ Կ. Մարտիրոսյանը, 2 մարտիկ վիրավորվեցին:

Այնուհետև, վերախմբավորելով ուժերը և ներգրավելով պահուցը, ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը ձեռնարկեց երկրորդ գրոհը, որը պսակվեց փայլուն հաջողությամբ: Հրետանային նախապատրաստությունից հետո, ձախից՝ բանտի կողմով առաջ շարժվեց 1-ին վաշտը (հրամանատար՝ Ա. Ղուլյան), բանտի դիմացի բլրալանջով՝ ԼՂՀ ԳԽ-ին կից հատուկ վաշտը (հրամանատար՝ Վ. Դանիելյան), իսկ աջ կողմից՝ հատուկ նախանշանակման ստորաբաժանումը: Բանտը գրավելուց հետո հայ մարտիկները բարձրացան Շուշի և, «սանրելով» տարածքը, հասան Ղազանչեցոց եկեղեցուն:

### *3. Լաչինի ուղղություն*

Հարավային ուղղությամբ ինքնապաշտպանության ուժերը հարձակման անցան Փոքր Քիրս լեռան, Նաբիլար – Ջառիստ և Լիսագորսկ ենթաուղղություններով:

Փոքր Քիրս լեռան ուղղությամբ գործում էին 2-րդ վաշտից 40 մարտիկ (հրամանատար՝ Հ. Ծատրյան), 3-րդ վաշտից՝ 45 (հրամանատար՝ Ա. Խաչատրյան), Ավետարանոց գյուղի ջոկատից՝ 38 (հրամանատար՝ Հ. Ստեփանյան), ՀՀԴ էջմիածնի դասակից՝ 30 մարտիկ (հրամանատար՝ Հ. Կարապետյան): Շուրջ 110 հոգուց կազմված խմբավորման երթուղին Ավետարանոցից ձգվում էր մինչև Քիրս լեռը՝ անցնելով Սղնախի մարտական դիրքերով (որտեղ կար հակառակորդի 2 պահակակետ): Խնդիրը Քիրսում գտնվող աղբբեջանական հենակետի վնասազերծումն էր, քանի որ այնտեղից հակառակորդը «Գրադով» հրետակոծում էր Ստեփանակերտն ու շրջակա հայկական բնակավայրերը: Քանի որ Քիրսից Շուշին լրիվ տեսանելի էր, անհրաժեշտ էր հակառակորդին զրկել այնտեղից կրակը ուղղորդելու, մեր ստորաբաժանումների տեղաշարժին հետևելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով Քիրսի գրավումից հետո միայն պետք է սկսվեր Շուշիի վրա բուն գրոհը:

Աջ թևով շարժվեցին 2-րդ, իսկ ձախ թևով՝ 3-րդ վաշտի մարտիկները: 2-րդ վաշտի կողմից հակառակորդի թիկունքին հասցված հանկարծակի հարվածից, գնդացրային ու նռնականետային հոծ կրակից թշնամին խուճապի մատնվեց և դիմեց փախուստի: Լուսաբացին սկսված գրոհը 1,5 ժամ հետո պսակվեց հաջողությամբ. բարձունքը գրավվեց:

3-րդ վաշտի մարտիկները, հարված հասցնելով Փոքր Քիրսի ստորոտում տեղակայված թշնամու զորակայանին, պետք է դուրս գային Լիսագորսկի ուղղությամբ: Հարձակումն սկսեցին 15 հոգով, կրակային նախապատրաստությունից հետո նրանց միացան հիմնական ուժերը: 2-րդ վաշտը նույնպես օգնության հասավ նրանց՝ հակառակորդին հարվածելով թիկունքից, ինչը խուճապի մատնեց նրան: Մինչև մութն ընկնելը տևած մարտերից հետո հակառակորդի ուժերը նահանջեցին Լիսագորսկ, իսկ այնտեղից էլ՝ Լաչին: 3-րդ վաշտից զոհվեց 3, վիրավորվեց 6 մարտիկ, իսկ Ավետարանոցի ջոկատն ունեցավ մեկ զոհ: Հակառակորդի կորուստներն անհամեմատ մեծ էին՝ ավելի քան 30 սպանված, առգրավվեցին 1 «Գրադ» կայանք, 1 տանկ, 4 ՀՄՄ-1 և մեծ քանակությամբ զինամթերք:

Մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը հայ մարտիկները դիրքեր զբաղեցրին Փոքր Քիրսի շրջակայքում:

Քարինտակը հարավային ուղղության կարևոր ճակատներից մեկն էր: Այստեղի ստորաբաժանումները խնդիր ունեին դուրս գալու Շուշի–Լաչին մայրուղի՝ ոչ միայն ադրբեջանական կայազորի թիկունքում անմիջական սպառնալիք ստեղծելու, այլև Լիսագորսկից (կամ Լաչինից) օգնությունը բացառելու նպատակով: Հարձակման հիմնական ուղղությունը Կարմիր քար կոչվող բլուրն էր: 2-րդ վաշտի զրահաջոկատի կրակային աջակցությամբ գրոհող երկու խմբերը միացան Կարմիր քարի մոտ և գրավեցին Շուշի–Լաչին ճանապարհի վերին հատվածը՝ փակելով այն: Մայիսի 9-ի առավոտյան Տիզկանց քերծը ազատագրված էր:

Ազնեքի ջոկատը՝ թվով 15 մարտիկ (հրամանատար՝ Ս. Ավանեսյան), շրջանցումով Քարինտակից հասավ Կարմիր քար, այնտեղից իջավ Նաբիլար, որտեղ միացավ Վ. Իշխանյանի՝ մյուս կողմից հարձակվող խմբի հետ: Առավոտյան երկու ջոկատներն էլ շարժվեցին դեպի Շուշի:

Դեռ մայիսի 6-ին՝ Աղնախ գյուղում հրավիրված վերջին խորհրդակցությունում, գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը Ջառիստ գյուղն ազատագրելու հրաման տվեց: Ակնաղբյուրի ու Սարուշենի միացյալ վաշտը (հրամանատար՝ Ա. Ղարամյան), «աֆղանցիների» դասակը (հրամանատար՝ Գ. Հարությունյան), Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի դասակը (հրամանատար՝ Ա. Հարությունյան) և «Բյուրեղավանի» դասակը (հրամանատար՝ Վ. Ղարսոյան), ընդամենը 130 մարտիկ, Ն. Չախոյանի հրամանատարությամբ առավոտյան ժամը 4-ն անց 00-ի սահմաններում մեծ դժվարությամբ հասան նշանակված վայր և դիրքավորվեցին Ջառիստ գյուղից 400-500 մ հեռավորության վրա գտնվող բարձունքում: Շուշիից նահանջող մեծաթիվ ադրբեջանցիները, հանդիպելով մեր մարտիկների կրակին, կատաղի մարտի բռնվեցին: Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարից նահանջելու հրաման ստացվեց, քանի որ իմաստ չուներ ավելորդ զոհեր տալ, գլխավոր խնդիրը Շուշիի ազատագրումն էր, և անհրաժեշտ էր ադրբեջանցիներին նահանջելու համար միջանցք ապահովել:

Այսպիսով՝ հարավային ուղղությունում գործող խմբավորումները նույնպես հաջողությամբ կատարեցին իրենց առջև դրված խնդիրը:

### *4. Քյոսալարի ուղղություն*

Շուշիի ազատագրման ռազմական օպերացիայի ուշագրավ մտահղացումներից մեկը Ջանհասան–Քյոսալար ուղղությունում հակառակորդին մոլորեցնելն էր: Արցախի ինքնապաշտպանական ուժերը հարկադրված էին վճռական հարձակման անցնել այդ ուղղությամբ ինչպես Շուշիի ազատագրմանն աջակցելու, այնպես էլ Ստեփանակերտը մշտապես հրակոծող ռազմական հենակետերի վերածված ադրբեջանական գյուղերը գրավելու նպատակով:

Բնական բարդ պայմանները, հակառակորդի մեծաքանակ սպառազինության ու կենդանի ուժի առկայությունը նրան տալիս էին դիրքային ու ռազմական առավելություն: Այս ամենը հաշվի առնելով՝ ինքնապաշտպանության ուժերի շտաբը հյուսիսարևմտյան ուղղությունում կենտրոնացրեց մարտունակ և շարժունակ ստորաբաժանումներ, քանի որ սրընթաց գրոհից, հակառակորդի ուժերը տեղում գամելուց հետո հարկ էր լինելու արագ հետ քաշվել. Շուշին գրավելուց

հետո այս ուղղությունում գործողություններ վարելու անհրաժեշտություն այլևս չէր լինի:

Հարձակումը պետք է կատարվեր երկու ենթաուղղություններով: Այս խնդրի լուծումը հանձնարարվեց Բաղարա, Այգեստան գյուղերի ինքնապաշտպանական ստորաբաժանումներին, «Կումայրի», «Հրանտ», «Վաչո» ջոկատներին և դիվերսիոն-հետախուզական խմբերին՝ Ս. Օհանյանի ընդհանուր հրամանատարությամբ:




Շուշիի օպերացիայի ռազմական գործողությունների քարտեզ

(բերվում է ըստ՝ *Մ. Ա. Հարությունյան,* Ոգու և զենքի փառավոր հաղթանակը: «ՀԲ», 2002, հմ. 1 – 2)

Այս ուղղությամբ մարտական գործողությունների ընթացքը կարելի է բաժանել երկու փուլի.

– հայ մարտիկների սրընթաց ու հանկարծակի գրոհ՝ ռազմավարական նշանակություն ունեցող բնագծերի գրավմամբ,

– հակառակորդի հակահարձակման կասեցում և կազմակերպված նահանջ:

Մարտական գործողությունները սկսվեցին նախատեսվածից 1,5 ժամ շուտ, քանի որ մոտավորապես ժամը 5-ն անց 30-ի սահմաններում Բալուջայի վաշտի 2-րդ դասակի և 1-ին դասակի ջոկերից մեկի զինվորները, անսպասելիորեն բախվեցին հակառակորդին և դիմահար կրակով ոչնչացրին նրա հինգ զինվորի, այդ թվում նաև հրամանատարին: Դիպվածի մասին զեկուցվեց ուղղության հրամանատարին, որն էլ որոշում ընդունեց խկույնևեթ սկսել հարձակումը: Հայ մարտիկների գրոհի հանկարծակիությունը խուճապի մատնեց հակառակորդին, և ժամը 10-ն անց 00-ի դրությամբ թշնամու բոլոր կրակակետերը ավարված էին, առգրավվել էր երեք թնդանոթ: Դրանից հետո մեր մարտիկները մտան Ջանհասան և դուրս եկան «Կումայրի» ջոկատի պաշտպանության գոտի՝ օգնության հասնելով անհավասար մարտի բռնված հայ կամավորականներին: Այսպիսով՝ մարտական գործողությունների առաջին փուլը, չնայած կորուստներին, հաջողությամբ ավարտվեց:

Հակառակորդը, վերախմբավորելով ուժերը և Շուշիից նոր համալրում ստանալով, մեծ ուժերով անցավ Ջանհասանի ուղղությամբ հակահարձակման: Անհրաժեշտ էր խուսափել նոր զոհերից, ուստի, Ս. Օհանյանը հրաման տվեց նահանջելու: Շրջանաձև պաշտպանություն կազմակերպելով՝ մեր ազատամարտիկները շուրջ երկու ժամ դիմադրեցին: Երկու զոհի ու մեկ վիրավորի գնով նրանց հաջողվեց ճեղքել հակառակորդի շղթան:

Այսպիսով՝ մարտական գործողությունների երկրորդ փուլը ևս հաջողությամբ ավարտվեց: Հուսալիորեն փակված էր նաև այս ուղղությունում գտնվող հակառակորդի ուժերի՝ դեպի Շուշի հետ քաշվելու ճանապարհը:

Մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը, ապահովելով մշտական կապը հյուսիսարևմտյան ուղղության հրամանատարի հետ, «Բաղարա» ջոկատի հրամանատար Կ. Արզումանյանն անձամբ հանդիպեց ջոկատների հրամանատարների հետ և հայտնեց Շուշիի ազատագրման հաջող ընթացքի մասին: Մայիսի 9-ի առավոտյան, այլևս ի վիճակի չլինելով լուրջ դիմադրություն ցույց տալ հարձակվող հայ մարտիկներին, հակառակորդը հարկադրված լքեց Կարագյավը:

Մայիսի 9-ի առավոտյան, հայ ազատամարտիկները մտան Քյոսալար: Դիմադրության առանձին կետերն արագ ճնշվեցին, հակառակորդը, այրելով իր իսկ Տ-72 տանկը, ինչպես նաև թողնելով մեկ ԿՍ-19 թնդանոթ, նահանջեց:

Հյուսիսարևմտյան ուղղությունում գործող հայկական ստորաբաժանումները կատարեցին իրենց առջև դրված խնդիրը. նախ հմուտ կերպով կազմակերպված հարձակողական գործողություններով հակառակորդին ստիպեցին հանել գլխավոր ուղղությունից՝ Շուշիից, ուժեր տեղափոխել Ջանհասան, ապա նաև համառ պաշտպանությամբ ու կազմակերպված նահանջով կարողացան այդ ուժերը տեղում գամված պահել մինչև Շուշի քաղաքի ազատագրումը: Միևնույն ժամանակ, Ստեփանակերտը փրկվեց մոտակա կրակակետերից կատարվող հրակոծությունից[14]:

[14] Տես *Մ. Հարությունյան,* Հյուսիս-արևմտյան ճակատի դերը Շուշիի ազատագրման ռազմագործողություններում: «Մարտիկ», 2000, թիվ 18:

**Ամփոփում**

Այսպիսով՝ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի կատարած աշխատանքի ու հմուտ ղեկավարման, բոլոր աստիճանների հրամանատարների լավ կազմակերպված համագործակցության, ազատամարտիկների անձնվիրության ու վճռական գործողությունների շնորհիվ հաջողվեց երկու օրում կոտրել սպառազինությամբ և կենդանի ուժով էապես գերազանցող հակառակորդի դիմադրությունը և ազատագրել ռազմական տեսանկյունից կարևոր Շուշի քաղաք-ամրոցը: Այդ ռազմական օպերացիայի ժամանակ հատկապես ակտիվ կերպով գործեցին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի 1-ին, 4-րդ, 6-րդ, Այգեստանի վաշտերը և հետախուզական ստորաբաժանումները[15]:

Շուշիի ազատագրման փայլուն ռազմական օպերացիայի շնորհիվ ոչնչացվեցին Ստեփանակերտին մշտապես սպառնացող կրակակետերը և ռազմական հենակետերը, հակառակորդը կրեց կենդանի ուժի (ավելի քան 200 մարդ) ու տեխնիկայի մեծ կորուստներ, այդ թվում՝ որպես ռազմավար վերցված կամ ոչնչացված 10 միավոր զրահատեխնիկա, տասնյակ փոխադրամիջոցներ, մեծ քանակությամբ հրթիռներ և արկեր, մի քանի միավոր հրետանի և այլ զենք ու զինամթերք, գերվեց 13 ադրբեջանցի: Հայկական կողմը ևս կորուստներ կրեց՝ 47 զոհ, ավելի քան 68 վիրավոր:

Շուշիի ազատագրման համար 1994–2011 թթ. պարգևատրվել են 1682 մարտիկներ, որոնցից 211-ը՝ հետմահու:

**Շուշիի ազատագրման ռազմական օպերացիայի առանձնահատկություններից են.**

– հանկարծակիությունը՝ գիշերվա քողի տակ ամբողջ ճակատով հարձակումը, որին հակառակորդը չէր սպասում,

– հարձակման ճակատի բավական մեծ լայնությունը՝ մոտավորապես 40 կմ,

– գրեթե անանցանելի, հատկապես՝ Շոշի (արևելյան), ուղղությամբ հայ ազատամարտիկների հաջող հարձակումը, ինչն անսպասելի էր հակառակորդի համար:

## Շուշիի ազատագրման պատմական նշանակությունը

ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը գրում է, որ Շուշիի և Ջանհասան-Քյոսալար ենթաշրջանի ադրբեջանական կրակակետերի ոչնչացման ռազմական օպերացիայի նախապատրաստումը, մշակումն ու իրագործումը դարձան մեր հրամանատարների ու զինվորների ռազմական առանձնահատուկ, փայլուն մտքի դրսևորում, միևնույն ժամանակ, դա ինքնապաշտպանության ուժերի համար առաջին լուրջ, լայնածավալ ու բազմաքայլ ռազմական փորձությունն էր: Համեմատաբար փոքր կորուստների գնով հաղթանակի հասնելու հայ զինվորի վճռականությունը բարոյահոգեբանական առումով ծանր ու մահացու հարված հասցրեց հակառակորդին[16]:

Հայկական հինավուրց քաղաքի ազատագրումը ռազմաքաղաքական ու բարոյահոգեբանական մեծ նշանակություն ունեցավ ազգային ազատագրական

[15] Տես «Շուշիի ազատագրման ռազմաքաղաքական արդյունքները»: «Մարտիկ», 1993, թիվ 7:

[16] *Ս. Օհանյան,* «XXI դարի բանակը», էջ 234:

շարժման նոր փուլում և իր արժանի տեղը գտավ հայ ազգային-ազատագրական շարժման պատմության տարեգրությունում: Այն նպաստեց Լաչինի միջանցքի բացմանն ու Լեռնային Ղարաբաղի շրջափակման օղակի ճեղքմանը և արհեստականորեն մասնատված ժողովրդի երկու հատվածների միավորմանը: Այս առիթով Ս. Օհանյանը նշում է, որ Շուշիի ազատագրումը և Լաչինի միջանցքով Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնումը արցախյան պատերազմի ամենամեծ նվաճումներից էին, որոնք հռչակված անկախությունը դարձրին իրական[17]:



Ազատագրված Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցու մոտ. 1992 թ. մայիսի 9

Շուշիի կորուստը խորտակիչ բարոյահոգեբանական հարված էր հակառակորդին, որը, թեև հետագա մարտական գործողությունների ընթացքում ունեցավ մարտավարական և նույնիսկ ռազմավարական բնույթի ժամանակավոր հաջողություններ, սակայն այդպես էլ չկարողացավ հաղթահարել պարտվածի բարդույթը:

Շուշիի ազատագրումը նպաստեց մեր ժողովրդի մարտական ոգու ամրապնդմանը, վերջնականապես «հողմացրիվ արեց» թվաքանակով ու սպառազինությամբ գերակշռություն ունեցող հակառակորդի դեմ իր ուժերով հաղթանակ տանելու անհնարինության մասին առասպելը:

Շուշիի ազատագրմանը իրենց մասնակցությունն ունեցան նաև սփյուռքահայեր Ժ. Սեֆիլյանը, Վ. Զաքարյանը (զոհվեց Զառիստ գյուղի ազատագրման ժամանակ), Մ. Կույումջյանը, Հ. Մինասյանը, Գ. Սարգսյանը, Գ. Սողոմոնյանը, Հ. Քուրեկյանը, Ն. Ափանյանը[*]: Այս հաղթանակը մեծ ոգևորություն

[17] *Ս. Մ. Օհանյան,* Տասնամյա հերոսական ուղի: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

[*] Ցուցակը ճշտված է ՀՀԴ Գերագույն մարմնի ազատամարտիկների հանձնախմբից:

առաջ բերեց աշխարհասփյուռ հայության շրջանում, առիթ դարձավ խորհելու ազգային շահերի միասնության ու ընդհանրության մասին: Ինչպես և 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը, Շուշիի ազատագրումը ևս ապացուցեց, որ կյանքը զենքով պաշտպանելու պատրաստ, այդ գաղափարի շուրջ միաբանված ժողովուրդը անպարտելի է: Այդ գաղափարի տրամաբանական շարունակությունն է «Դատաստանի օրվա պատերազմի» գաղափարը, որը պատերազմ վերսկսելու Ադրբեջանի ձկրտումների ռազմաքաղաքական զսպման կարևոր գործիքներից է:

Պատմական նշանակություն ունեցող Շուշի քաղաքի ազատագրումը արցախահայությանը տվեց ոգու այնպիսի լիցք, առանց որի հնարավոր չէին լինի հետագա հաղթանակները: Պատահական չէ, որ Շուշին կրկին դարձավ Արցախի հոգևոր կենտրոնը: Ներկա ու գալիք սերունդները պարտավորված են այլևս չկորցնել այն, պահել անառիկ:

**ШУШИ–20**

# ОСВОБОЖДЕНИЕ ШУШИ И ЕГО ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ

*А. М. ДАВТЯН, генерал-майор, начальник Оперативного управления ГШ ВС РА,*
*С. А. АВАНЕСЯН, полковник, заместитель начальника Оперативного управления ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

Шуши исторически был одним из важных политических и культурно-образовательных центров восточного армянства, однако его армянское население было практически вырезано в 1918 г., во время походов турецкой армии, а армянские кварталы города были преданы огню. В то же время город, благодаря своему географическому положению, господствует над всей территорией Нагорного Карабаха, вследствие чего контроль над Шуши означает военно-стратегическое доминирование в Арцахе.

Политика обезармянивания Арцаха, и в первую очередь Шуши, продолжалась в советский период и осуществлялась властями Советского Азербайджана путем манипулирования идеями «пролетарского интернационализма» и братства всех народов в СССР.

В ответ на мирное законосообразное создание Нагорно-Карабахской Республики в конце 1991 г. власти Азербайджана предприняли широкомасштабную агрессию против этой республики, в ходе которой азербайджанские поселения на территории НКР активно использовались в качестве опорных пунктов и военных плацдармов. В мощный опорный пункт был превращен и Шуши, откуда Степанакерт подвергался интенсивному обстрелу, в том числе и из запрещенных РСЗО «Град». Кроме того, засевший в Шуши азербайджанский гарнизон постоянно угрожал с тыла силам

самообороны (ССО) НКР. Таким образом, освобождение Шуши стало для НКР вопросом жизни и смерти.

9 мая 1992 года была осуществлена одна из самых блестящих операций за всю историю армянского военного искусства–освобождение Шуши, что оказало большое военно-стратегическое и морально-психологическое воздействие как на дальнейший ход вооруженной борьбы, так и на военно-политическую обстановку на Южном Кавказе после окончания развязанной Азербайджаном войны, завершившейся его разгромным поражением.

В ходе Шушинской операции отрядам ССО, благодаря тщательной спланированности операции, непрерывному и гибкому управлению войсками, обеспечению внезапности, широкого фронта наступления, высокому искусству сокрытия основного направления удара с применением отвлекающих действий, маневренности и высокой самоотверженности бойцов, удалось разгромить численно и по вооружению в несколько раз превосходящие силы противника, базировавшегося в естественной и инженерно оборудованной неприступной крепости.

Весомый вклад в успешное осуществление Шушинской операции внесли представители Армянской деаспоры. Тем самым победа в Шуши еще раз продемонстрировала необходимость общенациональной консолидации в критические для всего армянского народа моменты, логическим продолжением которой является идея «общенациональной войны» («войны Судного дня») в случае развязывания Азербайджаном новой войны. Эта идея стала одним из основных военно-политических инструментов сдерживания агрессивных устремлений Азербайджана.

**SHUSHI–20**

## THE LIBERATION OF SHUSHI AND ITS HISTORICAL SIGNIFICANCE

*A. M. DAVTYAN, Major General, Chief of Operative Department of the RA Armed Forces' Main Staff, S. A. AVANESYAN, Colonel, Deputy Chief of Operative Department of the RA Armed Forces' Main Staff*

SUMMARY

Shushi has historically been one of the important political, cultural and educational centers of the Eastern Armenians, but its Armenian population was virtually cut in 1918 during the campaigns of the Turkish army, and the Armenian blocks of the town were set on fire. At the same time the town due to its geographical position prevails over the whole territory of Nagorno Karabakh, as a result the control of Shushi means military-strategic dominance in Artsakh.

The policy of depriving Artsakh of the Armenians, and especially Shushi, went on in the Soviet period and was conducted by the Soviet Azerbaijani authorities through the manipulation of ideas of «proletarian internationalism» and brotherhood of all the peoples in the USSR.

In response to a peaceful and law-governed establishment of the Nagorno Karabakh Republic in late 1991 the Azerbaijani authorities undertook a large-scale aggression against this republic, where the Azerbaijani settlements in the territory of Nagorno Karabakh were actively used as footholds and bridgeheads. Shushi was also transformed into a strong foothold from where Stepanakert was heavily being fired at, including by the banned MRL «Grad». In addition, the Azerbaijani garrison consolidated in Shushi constantly threatened from the rear the self-defense forces (SDF) of the NKR. Thus, the liberation of Shushi became a matter of life and death for the NKR.

On May 9, 1992 one of the most brilliant operations in the history of the Armenian military art - the liberation of Shushi - was carried out which had a major military-strategic and moral-psychological impact on both the future course of the armed struggle and the military-political situation in the South Caucasus after the war unleashed by Azerbaijan ended with its devastating defeat.

During the Shushi operation the SDF detachments, owing to carefully planned operation, uninterrupted and flexible troops control, ensuring of surprise, wide-front offensive, high art of concealing the main line of attack using diversionary activities, maneuverability and true selflessness of fighters, managed to defeat the vastly outnumbering and superior enemy forces based in the natural and engineeringly equipped impregnable fortress.

A significant contribution to the accomplishment of the Shushi operation was made by the representatives of the Armenian Diaspora. Thus, the victory in Shushi once again demonstrated the need for a nationwide consolidation at moments critical for all the Armenian people, the logical continuation of which is the idea of a «national war» («Yom Kippur War») in the event of a new war waged by Azerbaijan. This idea has become one of the major politico-military tools of containing Azerbaijan's aggressive aspirations.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ»
ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
«АЙКАКАН БАНАК»

ИЗБРАННЫЕ ПУБЛИКАЦИИ

«HAIKAKAN BANAK»
DEFENSE-ACADEMIC JOURNAL

SELECTED PUBLICATIONS



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
**Դ Ի Մ Ո Ւ Մ Ը**
«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՀԱՆԴԵՍԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԻ
ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԹԻՎ

*Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հարգելի զորականնե՛ր:*

*Պետական անկախության ձևավորման դժվարին ու պատասխանատու ժամանակաշրջանում մեզ վիճակվել է նրա կարևորագույն տարրերից մեկի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծման պատիվը:*

*Այսօր ես հնարավորություն ունեմ պաշտպանության նախարարության և անձամբ իմ անունից շնորհավորելու ձեզ «***Հայկական բանակ***» ռազմագիտական հանդեսի առաջին համարի լույսընծայման առթիվ:*

*Մեր զինված ուժերի պատմության մեջ առաջին անգամ հրատարակվում է մի հանդես, որը պետք է կարևոր դեր խաղա ազգային բանակի գիտականորեն հիմնավորված և արդյունավետ կառուցման գործում: Հանդեսը կոչված է անգնահատելի օգնություն ցույց տալու ձեզ՝ զինված ուժերի անձնակազմը դաստիարակելու հայրենիքին նվիրվածության, Հայաստանի ճակատագրի համար պատասխանատվության ոգով, ծառայողական գործունեության տարբեր ուղղություններում ռազմական գիտելիքների յուրացման մակարդակի բարձրացման ոգով:*

*Ցանկանում եմ ձեզ ստեղծագործական հաջողություններ և հուսով եմ, որ «***Հայկական բանակ***» հանդեսն արժանի տեղ կգրավի զինված ուժերի կենսագործունեության մեջ և կնպաստի անձնակազմի մարտական ու բարոյական դաստիարակությանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության կատարելագործման բնագավառում գիտելիքների հարստացմանը:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
**Ս. ՍԱՐԳՍՅԱՆ**

Առաջին համարի (1995 թ. հունվար, հմ. 1) 3-րդ էջի նմանահանություն

# ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ*

*Ս. Մ. ՕՀԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար*



Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության գերակա խնդիրներից է: Այդ գործում կարևոր դեր ու նշանակություն ունի ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգը (ՌԱՀ): Դրա զարգացումը և կառավարումը պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից են և ենթադրում են ռազմական արդյունաբերության վերածումը տնտեսության առաջատար ոլորտի: Պետության կողմից համակարգվող, առաջադիմական ծրագրեր իրականացնող և հեռամետ նպատակներ հետապնդող ՌԱՀ-ի զարգացումն զգալի չափով կնպաստի՝

– միջազգային և տարածաշրջանային գործընթացներում պետության կողմից իրականացվող քաղաքականության կշռի և ազդեցության մեծացմանը,

– ժամանակակից գիտելիքահենք արտադրական տեխնոլոգիաների մշակմանը,

– միջազգային և տարածաշրջանային տնտեսական գործընթացներին ինտեգրմանը:

Վերջին երկու տասնամյակում ի հայտ են եկել ռազմական պայքարի նոր միջոցներ, որոնցից են, մասնավորապես, գերճշգրիտ զենքերը: Դրանց և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական բազայի վրա ստեղծված կառավարման, հետախուզման և նշանառման համակարգերի համատեղ օգտագործումը կտրուկ կերպով փոխում է ռազմական գործողությունների վարման ձևերն ու մեթոդները: Նման պատերազմում չկա դասական իմաստով ռազմաճակատ, կողմերի հպման անընդհատ գիծ: Փաստորեն, մարտական գործողությունները մղվում են հակամարտող կողմերի տարածքի խորքում, և ըստ էության վերաիմաստավորվում է թիկունքի ավանդական դերը:

Այդպիսի պատերազմներում հաղթանակի երաշխիք են հակառակորդի կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ առավելություն ունեցող կառավարման բազմաֆունկցիոնալ համակարգերը և գերճշգրիտ զենքերը, որոնք ապահովում են հակառակորդի զորքերի խոցելի տարրերի արագ հայտնաբերումն ու դրանց նկատմամբ խոցող միջոցների անհապաղ կիրառումը: Այլ կերպ ասած՝ մոտ ապագայում պետությունների սպառազինությունների համա-

* Տպագրվել է 2011 թ. «Ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման մասին» թեմայով հմ. 3-ում:

կարգերի հզորությունը բնութագրվելու է հիմնականում ոչ թե դրանց քանակով, այլ որակական հատկանիշներով:

Մյուս կողմից՝ տեղեկատվական տեխնոլոգիաների այսպիսի արագ տեմպերով զարգացումը յուրօրինակ ազդեցություն է ունենում հանրության վրա: Ապագան «հարձակվում» է նրա վրա շատ արագ, քանի որ տեղի են ունենում արագընթաց փոփոխություններ քաղաքականության, տնտեսության, մշակույթի, սոցիալական բնագավառներում, անհատական և հասարակական հարաբերություններում, ինչպես նաև կացութաձևի մոդելներում և կյանքի ստանդարտների համակարգում: Նման իրավիճակում մարդը ամեն վայրկյան առնչվում է երբեմն անհասկանալի ապագային և իր համար աննկատ կերպով հայտնվում է անհարմար հոգեբանական միջավայրում, ինչը կարող է հոգեկան ցնցումների պատճառ դառնալ:

Այսպիսով՝ համաշխարհային հասարակայնությունը կարող է դառնալ ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության ինչպես կրողը, այնպես էլ զոհը, եթե չկատարվի համապատասխան նախապատրաստում և ընտելացում նոր հետինդուստրիալ միջավայրին: Անգամ հպանցիկ հայացք նետելով աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին՝ կարող ենք նկատել, որ էապես աճել է ինքնասպանությունների, հոգեկան խանգարումների հողի վրա կատարվող սպանությունների, ալկոհոլ և թմրամիջոցներ օգտագործողների, աղանդավորների թիվը և այլն, ինչը հիմնականում իրականությունը չընկալելու և դրան չհարմարվելու արդյունք է:

Արդի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է դրանք ավելի ընկալելի դարձնել կրթության ու դաստիարակության միասնական համակարգի բարեփոխման միջոցով. դպրոցական, բուհական կրթությունը պետք է ճկուն ձևով հարմարեցվի ներկայիս մարտահրավերներին, իսկ պետական կառավարման մարմիններում աշխատելու իրավունքը պետք է վերապահվի լիարժեք բարձրագույն կրթությամբ և հաջողությամբ հատուկ դասընթացներ ավարտած անձանց, հակառակ դեպքում հասարակությունը կդառնա թերի զարգացած մարդկանց հավաքածու և անգամ ունակ չի լինի պայքարելու իր գոյության համար: Այդպիսի կրթական համալիրներ են գործում աշխարհի շատ երկրներում: Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում է ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանը, որի կազմում են այլ քոլեջների և հետազոտական կենտրոնների հետ մեկտեղ ԱՄՆ-ի ԶՈՒ-ի արդյունաբերական, տեղեկատվական ռեսուրսների մենեջմենտի (կառավարման) քոլեջները, ինչպես նաև Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, որը պաշտպանական համակարգի գլխամասային գիտահետազոտական կենտրոնն է և գիտական մշակումներ է կատարում միջազգային հարաբերությունների, ռազմական քաղաքականության ու ռազմավարության (տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության) բնագավառներում: Այսպիսի օրինակները բազմազան են, կարելի է նշել, որ ԽՍՀՄ-ում էլ կար պետության գերակա շահերն սպասարկող նմանատիպ կրթական համալիր:

Հաշվի առնելով ՀՀ ռազմաարդյունաբերության ներկա հնարավորությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ ընկերությունների ներգրավվածության բազմազանությունը, մակարդակը և հաջողությունները, ինչպես նաև ՀՀ պաշտպանական վերանայման արդյունքներով մշակված ՀՀ ԶՈՒ-ի 2011–2015 թթ. զարգացման ծրագրի գերակա խնդիրը՝ մարտական առաջադրանքի կատարման ամբողջ ընթացքում զինվորի անհատական պաշտպանվածության և հակառակորդի նկատմամբ ռազմական գերազանցության ապահովումը, ՀՀ-ն իր ռազմական արդյունաբերության զարգացումը տեսնում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը անվտանգության լուրջ երաշխիք է խաղաղությանը ձգտող ՀՀ-ի համար՝ որպես հավանական հակառակորդի ռազմավարական զսպման կարևոր միջոց: Ոլորտի համակարգի զարգացումը պետք է դառնա ազգային անվտանգության ապահովման գերակայություն:

Սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և ռազմատեխնիկական ունեցվածքով Զինված ուժերի ինքնապահովման աղբյուրը տվյալ պետության ռազմական արդյունաբերությունն է:

ՀՀ ՌԱՀ-ի արագընթաց տեխնոլոգիական զարգացումը անհրաժեշտ նախապայման է պաշտպանական անվտանգության երկարաժամկետ խնդիրների լուծման համար:

Դրա հետ մեկտեղ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՌԱՀ-ը պետք է սպառազինության, ռազմական ու հատուկ տեխնիկայի մշակման և արտադրության հետ միաժամանակ լուծի քաղաքացիական նախանշանակման մրցունակ, գիտատար ու բարձր տեխնոլոգիական ապրանքների ստեղծման և արտադրության ընդլայնման խնդիրը: Այս խնդրի լուծումը տնտեսության տվյալ ոլորտի տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ կատարվող ևս մեկ առաջընթաց քայլ է:

ՌԱՀ-ի՝ որպես ռազմական և քաղաքացիական արդյունաբերության բազմամասնագիտական, բարձր տեխնոլոգիական, բազմազանեցված (դիվերսիֆիկացված), տնտեսապես կայուն, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ ոլորտի զարգացումը պայմաններ է ստեղծում գիտատեխնիկական առաջընթացի առանցքային ոլորտում միջոցների շարժունակության համար:

Քաղաքացիական ոլորտում ՌԱՀ-ի խնդիրներ պետք է լինեն՝

1. դիմակայումը սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական զարգացման ոլորտում գալիք տասնամյակի ռազմավարական մարտահրավերներին, այդ թվում՝ գլոբալ մրցակցության ուժեղացմանը, որն ընդգրկում է ապրանքների, կապիտալի, տեխնոլոգիաների, աշխատուժի շուկաները և նոր պահանջներ է ներկայացնում մրցունակությանը, նորարարությանը և ներդրումների ներգրավման ունակությանը,

2. արհեստավարժ կադրերի հաշվին (որով էլ որոշվում է մարդկային կապիտալի որակը և նրա հնարավորությունը՝ վերածվելու միջին խավի գերիշխող ուժի) համաշխարհային տնտեսությունում մրցակցային դիրքերի պահպանումը, ինչի համար պահանջվում է աշխատանքի արտադրողականության կայուն աճ, ոլորտի արդիականացում և արագացված զարգացում,

3. գերակայող ուղղություններով բարձր տեխնոլոգիական շուկաներում համընդհանուր մասնագիտացում ապահովող գիտատեխնոլոգիական համալիրի ձևավորումը,

4. տնտեսության կառուցվածքային բազմազանության ապահովումը՝ վերամշակող արդյունաբերության մրցունակության մեծացման հիմքի վրա,

5. առաջնային ռեսուրսների՝ աշխատանքի, էներգակիրների, նյութերի օգտագործման արդյունավետության մեծացումը,

6. բնակչության կյանքի որակի բարձրացումը:



Մի դրվագ ՀՀ-ում գործող տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ձեռնարկությունների և ՀՀ պաշտպանության նախարարության միջև համագործակցության հեռանկարներին նվիրված քննարկումից.

*ձախից աջ*՝ ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դ. Տոնոյան, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան, ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ – ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյան, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյան, ԵրՄՄԳՀԻ-ի գլխավոր տնօրեն Ա. Թառոյան

Երևան, ՀՀ պաշտպանության նախարարություն, 2011 թ. ապրիլի 1

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման գերակա ուղղությունների ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալը.

1. ռազմական և քաղաքացիական ոլորտներում Հայաստանի կենսական շահերի ապահովման խնդիրները,

2. առկա և կանխատեսվող սպառնալիքների համակարգում պաշտպանունակության ապահովման անհրաժեշտությունը,

3. էներգետիկ խնդրի լուծման ուղիների որոնումը Հայաստանի բնակլիմայական պայմանների հաշվառմամբ,

4. կապի միջոցների և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կատարելագործումը՝ որպես ժամանակակից բարձր տեխնոլոգիական արտադրութ-

յան զարգացման և բնակչության կյանքի որակի ապահովման անհրաժեշտ նախապայմանի,

5. միջավայրի բնապահպանական մաքրության ապահովումը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման օպտիմալ տարբերակի հաջող իրականացման հիմնական ցուցանիշներ պետք է լինեն.

1. ՀՀ ԶՈՒ-ի «Սպառազինման ծրագրի» անվերապահ կատարումն ըստ ժամկետների,

2. քաղաքացիական նախանշանակման գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրանքի ծավալների էական աճը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման տարբերակը, որը բնութագրվում է նշված ցուցանիշներով, կլինի օպտիմալ, եթե այն առավելագույնս է համապատասխանում գիտական և տեխնոլոգիական զարգացման ազգային առաջնահերթություններին, պաշտպանական անվտանգության ապահովման ոլորտում երկարաժամկետ նպատակներին և պետության իրական ներուժին:

Ոլորտի տեխնոլոգիական զարգացման այս տարբերակի իրականացմանը կարող են էապես խոչընդոտել այնպիսի չլուծված համակարգային խնդիրներ, ինչպիսիք են՝

1. ՌԱՀ-ի չափի և կառուցվածքի անհամապատասխանությունը, ինչպես նաև իր կազմի մեջ մտնող ընկերությունների անբավարար տեխնոլոգիական զարգացածությունը,

2. ՌԱՀ-ի ներուժի օգտագործման անբավարարությունը քաղաքացիական նախանշանակման գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկման համար,

3. ՌԱՀ-ի ոլորտի համապատասխան կադրերի (միջին մասնագիտական, ինժեներատեխնիկական և գիտական՝ ասպիրանտական) պատրաստման համակարգի թերզարգացածությունը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման օպտիմալ տարբերակի իրականացման անհրաժեշտ ընդհանուր պայման է տնտեսության անցումը նորամուծական (ինովացիոն) համակարգի, ինչպես նաև ռազմական արդյունաբերության խորը վերակառուցումը, հայրենական կրթության և գիտության, խառը ոլորտների զարգացման բարձր տեմպերի ապահովումը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման վերջնական նպատակներին հասնելու և այդ ոլորտում գոյություն ունեցող համակարգային խնդիրները հաղթահարելու համար պետք է լուծել հետևյալ պրոբլեմները.

1. ինտեգրված կառույցների ձևավորում, ՌԱՀ-ի գիտական և տեխնոլոգիական զարգացման առանցքային ոլորտներում տեխնիկատեխնոլոգիական կենտրոնների ստեղծում,

2. ՌԱՀ-ում և հարակից ոլորտներում ինտեգրված կառույցների կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում,

3. ՌԱՀ-ի արտադրական հզորությունների օպտիմալացում,

4. ՌԱՀ-ի ընկերությունների արդիականացում, ամբողջական վերակառուցում և տեխնիկական վերազինում,

5. ռազմական և քաղաքացիական նախանշանակման մրցունակ արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ սարքավորումների մշակման ու ներմուծման կազմակերպում,

6. ՌԱՀ-ի ընկերությունների բեռնվածության մակարդակի ապահովում,

7. թողարկվող արտադրանքի որակի բարձրացման և ինքնարժեքի նվազեցման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում,

8. ոլորտի ապահովում ներդրումներով, որոնք անհրաժեշտ են ՍՌՏ հեռանկարային նմուշների արտադրության ամբողջ փուլաշրջանի տեխնոլոգիական արդիականացման, ինչպես նաև քաղաքացիական նախանշանակման մրցունակ գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրության համար,

9. առավել կարևոր (կրիտիկական) տեխնոլոգիաների ներդրման ապահովում, ինչն անհրաժեշտ է աշխարհում մրցունակ ռազմական և քաղաքացիական նախանշանակման արտադրության ստեղծման համար,

10. ՍՌՏ և քաղաքացիական նախանշանակման նոր մրցունակ ապրանքների տեսականու ստեղծման հեռանկարային ծրագրերի մշակում և իրականացում,

11. ՌԱՀ-ի զարգացման նորմատիվ-իրավական ապահովում,

12. ՌԱՀ-ի և հարակից ոլորտների համար կադրերի ուսուցման և վերապատրաստման համակարգի զարգացում:

Ըստ այդմ՝ ՀՀ ՌԱՀ-ի 2011–2015 թթ. զարգացման ուղղությունները կողմնորոշված են դեպի հետևյալ տեսակների սպառազինության և ռազմական տեխնիկայի մշակում և արտադրություն՝

– խելացի (բանական) զենքեր,

– հեռակառավարման միջոցներ,

– կապի բանականացման (ինտելեկտուալացման) միջոցներ, այդ թվում՝ տեղեկատվահաղորդակցման միջոցների միավորում և ըստ օգտագործման պայմանների դրանց ավտոմատացված ընտրություն,

– տարբեր բնույթի ակտիվ և պասիվ ռադարային միջոցներ,

– տարբեր բնույթի էլեկտրոնային պաշտպանական ու հակապաշտպանական միջոցներ,

– անօդաչու, հեռակառավարմամբ կամ տրված ծրագրով թռչող սարքեր՝ տարբեր կշռով, չափերով և նախանշանակմամբ,

– կրակային միջոցների հզորությունների, պաշտպանվածության, ճկունության, ճշգրտության մեծացման համակարգեր,

– բազմաբնույթ ինժեներական միջոցներ,

– հրամանատարական կազմի վերապատրաստման համար տեսանմանարկումային մոդելավորման ու փորձագիտական համակարգեր:

Անհրաժեշտ է Զինված ուժերի համար ՍՌՏ ռազմական պատվերների բյուջետային հայտերի կազմման նոր մեթոդիկայի մշակում և ներդրում, ընդ որում պետք է հաշվառված լինեն ռազմական գիտության և տնտեսագիտության տեսական հիմունքներն ու գործնական արդյունքները: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորված միասնական ռազմաֆինանսական քա-

ղաքականության արդյունավետ մոդելի մշակում, մի մոդելի, որում ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում օբյեկտիվորեն արտացոլված լինեն Զինված ուժերի գերակա պահանջմունքները:

Պետության մասշտաբով ռազմական արդյունաբերության զարգացումը կարող է շահագրգռող հանգամանք լինել նաև մասնավոր սեկտորի համար՝ ոլորտը գործարարության օբյեկտ դարձնելու և այնտեղ ծավալուն ներդրումներ կատարելու առումով:

Այսպիսով՝ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը դիտում է որպես ոչ միայն ԶՈՒ-ի կարիքների բավարարման գերակա միջոց, այլև պետության ընդհանուր տնտեսական զարգացման արդյունավետ խթանիչ:

## РАЗВИТИЕ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА КАК ПРИОРИТЕТНАЯ ЗАДАЧА ОБОРОННЫХ РЕФОРМ

*С. М. ОГАНЯН, Министр Обороны РА*

РЕЗЮМЕ

Система военной промышленности (СВП) РА является одной из важнейших составляющих обеспечения военной безопасности государства. В связи с этим ее развитие и превращение в одну из ведущих сфер экономики РА являются приоритетной задачей государственной политики. Это позволит:

–повысить роль и влияние политики государства в международных и региональных процессах;

–разрабатывать производственные технологии на основе современных достижений науки;

–интегрироваться в международные и региональные экономические процессы.

При планировании направлений и механизмов развития СВП в РА необходимо учитывать мировые тенденции развития средств вооруженной борьбы и связанные с этим кардинальные изменения в способах ведения боевых действий, в частности–доминирование высокоточного оружия и многофункциональных координирующих информационных средств управления войсками, разведки и наведения и, как следствие, исчезновение таких традиционных понятий, как непрерывная линия соприкосновения с противником (фронт), тыл, суммарное преимущество над противником определяется не как простая сумма преимуществ отдельных единиц боевой техники, а в их интегральной взаимосвязи каждого бойца в ходе боевых действий.

В то же время следует учитывать, что всеускоряющийся технологический прогресс создает определенный психологический дискомфорт для индивидов, оказавшихся в непрерывно изменяющейся среде постиндуст-

риального общества. А это означает, что соответствующим образом должна трансформироваться и система образования и воспитания подрастающих поколений.

Важным условием развития СВП в РА является продуманное совмещение производства товаров военного назначения с товарами гражданского потребления. При этом критериями должны служить:

– неуклонное выполнение в указанные сроки «Программы вооружения» ВС РА;

– существенный рост объемов наукоемкого и высокотехнологического производства продукции гражданского назначения.

Для достижения конечных целей технологической модернизации СВП и решения проблем в данной сфере необходимо:

– сформировать взаимно интегрированные структуры, в ключевых сферах научно-технологического развития СВП создать технико-технологические центры;

– создать эффективную систему корпоративного управления интегрированных структур в СВП и смежных областях;

– оптимизировать производственные мощности СВП;

– модернизировать, полностью перестроить и перевооружить компании, осуществляющие деятельность в СВП;

– организовать разработку и внедрение оборудования, необходимого для производства конкурентоспособной продукции военного и гражданского назначения;

– обеспечить СВП инвестициями, а также необходимый уровень загруженности предприятий;

– обеспечить внедрение критических технологий;

– усовершенствовать систему подготовки кадров для СВП и т.д.

## THE DEVELOPMENT OF THE RA MILITARY INDUSTRY SYSTEM AS A FOREGROUND TASK OF THE DEFENSE REFORMS

*S. M. OHANYAN, Minister of Defense of the RA*

SUMMARY

The Military Industry System (MIS) of the RA is an essential part of ensuring the military security of the state. In these terms its development and transformation into one of the leading spheres of the RA economy is a foreground task of the public policy. It will help to:

– strengthen the role and influence of the public policy in the international and regional processes;

– develop production technologies based on modern scientific achievements;

– integrate into the international and regional economic processes.

When planning the directions and mechanisms of the MIS in the RA the global trends in the means of warfare and the dramatic changes associated with in the methods of warfare, in particular, the dominance of precision guided weapons and multifunctional coordinating media for troops control, intelligence and guidance must be taken into account, and as a consequence the disappearance of such traditional concepts as a continuous contact line with the enemy (front), rear, total advantage over the enemy is defined not as a simple sum of the benefits of individual pieces of equipment but in their integral correlation of every soldier in combat.

At the same time it must be borne in mind that the accelerating technological progress creates certain psychological discomfort for individuals who find themselves in the constantly changing environment of post-industrial society. This means that the education system and education of future generations should be transformed properly.

An important condition for developing the MIS in the RA is the planned combination of the production of military goods with the goods of civilian consumption. At the same time the criteria should be:

– the sustained performance within a specified time of the «Armament program» of the RA Armed Forces;

– the substantial growth in the high technology production for civilian use.

To achieve the ultimate goals of the technological upgrading of the MIS and to solve the problems in this field it is necessary to:

– form mutually integrated structures in the key spheres of the scientific and technological development of the MIS, create technical and technological centers;

– establish an effective system of corporate governance of the integrated structures in the MIS and related fields;

– optimize the production capacity of the MIS;

– upgrade, completely redesign and re-equip the companies operating in the MIS;

– organize the development and implementation of equipment needed to produce competitive products for military and civil use;

– ensure that the MIS gets investments as well as the required level of enterprises' utilization;

– ensure the introduction of critical technologies;

– improve the system of training a personnel for the MIS, etc.

# ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

*Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ*



Ցանկացած պետության ԶՈՒ-ի գերակա խնդիրների շարքն է դասվում անձնակազմի մասնագիտական և հոգեբանական պատրաստումը զինվորական գործունեությանը, ակտիվ մարտական գործողություններին: Մասնագիտական գրականության, ինչպես նաև մեր հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձնակազմի մասնագիտական պատրաստման արդյունավետությունը գոհացուցիչ չէ, քանի որ պատրաստման մեթոդների և մասնագետի հոգեբանական հատկություններին ներկայացվող պահանջների միջև կա որոշակի անհամաչափություն: Այդ անհամաչափությունը առաջին հերթին պայմանավորված է բարդ ռազմական համակարգերի տեխնիկական պատրաստության բաղադրատարրերի շարքում այսպես կոչված «անձնային գործոնի» թերագնահատմամբ[1]:

Արտակարգ իրադրություններում զինծառայողի կողմից արդյունավետ մասնագիտական գործողությունների կատարման կարևոր նախադրյալներն են այդ իրադրությունը արագ ու ճիշտ գնահատելու կարողությունը և գործողությունների կատարմանը հոգեբանական պատրաստությունը, որոնք իրենց հերթին պայմանավորված են մի շարք կոնկրետ հոգեբանական գործոնների** համախմբով: Այդ գործոնները պարզելու, դրանց միջև հարաբերակցական-ռեգրեսիոն կապը որոշելու նպատակով մենք մոդելավորել ենք տեղային պատերազմի մի դրվագ, այն է՝ լեռնային գոտում շարժվող ռազմական ավտոտեխնիկայի շարասյան վրա դարանակալած հակառակորդի գրոհը, հետազոտել ենք ՀՀ ԶՈՒ-ի մարդատեխնիկական չդետերմինացված համակարգում ներառված զինծառայողների գործառման հուսալիությունը, նրանց բարդ հոգեշարժողական հակազդման փուլերը, մասնագիտական աշխատունակության նվազման պատճառները, ինչպես նաև զինծառայողի մարտական վիճակը***: Մեր կողմից մշակված մեթո-

---

* Տպագրվել է 2010 թ. հմ. 4-ում:

[1] Տես *Վ. Հ. Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 85:

** Հոգեբանական գործոններ ասելով՝ նկատի ունենք զինծառայողի անհատական հատկությունները, նրա ընդունակություններն ու հմտությունները, դիրքորոշումները, բնավորությունն ու խառնվածքը, բարդ հոգեշարժողական հակազդումը:

*** Մարտական վիճակ ասելով՝ նկատի ունենք հոգեկանի այն ժամանակավոր վիճակը, որը

դիկան ենթադրում է միջավայրի պարտադիր համապատասխանեցում հետևյալ պահանջներին՝

ա) վտանգավոր իրադրությունը առաջանում է հանկարծակիորեն,

բ) վտանգավոր իրադրությունը կարծրատիպային չէ,

գ) վտանգավոր իրադրությունը խոչընդոտում է առաջ շարժվելուն:

Այսինքն՝ մարտական իրադրության մոդելավորման համար անհրաժեշտ ու բավարար պահանջներից է այնպիսի միջավայրի ստեղծումը, որի դեպքում առկա կլինեն մարտական իրադրությանը համապատասխանող բոլոր անհրաժեշտ գործոնները ու պայմանները, մասնավորապես՝

– հակառակորդի կողմից ձեռնարկված հարձակողական գործողությունները, նրա ակտիվ դիմակայությունը պատասխան գործողություններին (ինտերակտիվ գործողություններ),

– հանկարծակիորեն առաջացող ու արագ զարգացող արտակարգ իրավիճակը՝ բնորոշ հոգեծին գործոններով հանդերձ,

– մարտական տեխնիկայի և սպառազինության կիրառումը,

– հետազոտվողների հոգեկանի գործառության ծայրահեղ ինտենսիվությունը, ուժերի անսովոր լարվածությունը[2]:

Մոդելավորվող մարտական իրադրությունում զինծառայողի հոգեկանի գործառման ընթացքում դրսևորվող մի շարք օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն է տալիս կանխատեսելու ֆիզիկական, բարոյական և հոգեբանական փորձությունների արդյունավետ կերպով դիմակայելու նրա հոգեկան ներուժը, ռեալ կերպով օգտագործելու «մարդկային գործոնը»: Խոսքը վերաբերում է այն հոգեբանական գործոնների համախմբին, որոնց ինտեգրալային դրսևորմամբ պայմանավորված է զինծառայողի՝ իրադրությանը համարժեք հակազդումների կայունությունը և հուսալիությունը:

ՀՀ ԶՈՒ-ում կատարված գիտափորձերի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մոդելավորված միևնույն մարտական իրադրության պայմաններում զինծառայողների վարքագծային դրսևորումները միանգամայն տարբեր են: Վարքը պայմանավորված է հիմնականում հետևյալ երկու փոխազդող գործոններով՝

ա) թույլ մասնագիտական պատրաստականություն,

բ) նյարդային համակարգի բնածին թուլություն կամ չմարզվածություն:

Մեր գիտափորձերի մասնակիցների մի մասի շրջանում գրանցվել է բարձր մակարդակի ակտիվություն, որը դրսևորվել է գործողությունների արագության, ակտիվ վարքի, լուծումներ գտնելու, իրադրությունը ցանկալի ուղղությամբ փոխելու և բարդ իրավիճակը հաղթահարելու ցանկության ձևով, իսկ մյուս մասի շրջանում գրանցվել է գործողությունների ինտենսիվության և տեմպի անկում, որոշ դեպքերում նաև՝ արգելակում:

Մարտական իրադրության բարդ պայմաններում խոչընդոտների հաղթահարման համար պահանջվում են կամային ճիգեր՝ նյարդահոգեկան լարվա-

---

մարտական գործունեության ընթացքում ազդում է զինծառայողի հոգեկան պրոցեսների վրա և պայմանավորում տվյալ մարտական իրադրությունում նրա վարքի կոնկրետ ձևերը:

[2] Տես *Վ. Հ. Մարգարյան*, Մարտի հոգեբանություն: Ե., 2009, էջ 94:

ծության մի առանձնահատուկ վիճակ, որը մոբիլիզացնում է զինծառայողի ֆիզիկական, մտածողական և բարոյական ուժերը: Կամքը դրսևորվում է որպես իր ուժերի նկատմամբ վստահություն, տվյալ իրադրությունում նպատակահարմար և անհրաժեշտ գործողություններ կատարելու վճռականություն:

Հետազոտելով արտակարգ իրավիճակներում վարքի կախումը անձնավորության հատկություններից՝ Լ. Դ. Բիտեխտինան եկել է այն եզրակացության, որ ստրեսի նկատմամբ անհատի դիմադրողականությունը (տանելիությունը) խիստ տարբերակված է, ինչը հնարավորություն չի տալիս հստակ կերպով որոշելու լարվածությունների այն առավելագույն սահմանները, որոնք ընդհանուր լինեն բոլորի համար: Ուստի հասկանալի է դառնում, թե ինչու է կարևոր որոշել բարդ պայմաններում մարդու վարքի արդյունավետության կախումը կոնկրետ հոգեբանական գործոններից: Ներկայումս չկա մի բանաձև, որով հնարավոր լիներ որոշել արտակարգ պայմաններում մարդու վարքի ինտեգրալային ձևը: Սակայն կան տվյալներ, որ հոգեբանական գործոնները բարդ իրադրությունում ոչ թե թվաբանորեն գումարվում են, այլ կազմում են մի համալիր, որն ի վերջո արտահայտվում է կա՛մ ճիշտ, կա՛մ սխալ գործողությունների ձևով[3]:

Բարդ իրադրությունում վարքը որոշվում է ոչ միայն տվյալ պահին մարդու հոգեբանական բնութագրիչների հաստատունությամբ, այլև արտաքին միջավայրի այն գիտակցված և չգիտակցված գործոնների արտացոլմամբ, որոնք ներգործում են նրա հոգեկանի վրա: Բարդ իրադրությունը հոգեծին զգռիչ է: Հետևաբար, այդ իրավիճակին հակազդման ուժը և տևողությունը պայմանավորված են զինծառայողի հոգեվիճակով, նրա հոգեբանական առանձնահատկություններով, պատրաստության մակարդակով: Այլ կերպ ասած՝ բարդ իրադրությունը կարող է իր բովանդակությամբ նույնը լինել, սակայն անձնավորության հոգեկանում դրա արտացոլման ձևերը կլինեն տարբեր: Այդ պատճառով էլ առաջանում են մի շարք մեթոդաբանական դժվարություններ՝ կապված բարդ իրադրությունների ոչ միայն քանակական, այլև որակական աստիճանակարգման, առավել ևս՝ դրանց հաղթահարմանն ուղղված վարքի կանխատեսման հետ: Նշենք, որ արտակարգ իրավիճակներում հավանական վարքագծի կանխատեսման առումով մենք ունենք նոր՝ փորձարարական ճանապարհով ստացված ու գիտականորեն հիմնավորված տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս լուծելու վերը ներկայացված պրոբլեմը:

Ժամանակի ռեալ մասշտաբում զինծառայողների վրա մարտական ստրեսորների ազդեցության պայմաններում մեր կողմից գրանցված փորձարարական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հետազոտվող զինծառայողների 12 %-ի շրջանում հայադում է հոգեկան և ֆիզիկական ռեսուրսների մոբիլիզացումը, ինչը, անշուշտ, ռեալ մարտական իրադրությունում կարող է ճակատագրական լինել: Ավելին. գրանցվել են դեպքեր, երբ այդ ռեսուրսների մոբիլիզացումը պայմանավորող հոգեկան ֆունկցիաների անկայունությունը հանգեցնում է իրադրությանը ոչ համարժեք հակազդմանը, ակտիվ գործողություններից հրաժարմանը: Հետազոտվող զինծառայողների մի մասը հակազդում է իրադրութ-

[3] Տես *М. И. Дьяченко, А. А. Кондыбович, В. А. Пономаренко.* Готовность к деятельности в напряженных ситуациях. Минск, 1985, с. 7:

յանը պատեհաժամորեն, սակայն գործողությունների ռացիոնալ տարրը հետին պլան է մղված, այսինքն՝ գերակշռում է հուզական հակազդումը, որը դրսևորվում է իմպուլսիվ գործողությունների ձևով, և հիմնականում պայմանավորված է ինքնապահպանման բնազդը, ինչը թույլ մասնագիտական և հոգեբանական պատրաստման հետևանք է: Մինչդեռ մարտական իրադրության արտակարգ իրավիճակներում հուզական հակազդումը պետք է մղվի հետին պլան, ինչը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ հոգեբանական պատրաստումը նպատակաուղղված է զինծառայողի բնական հակազդումը արհեստական, այսինքն՝ վարժեցնովի հակազդմամբ փոխարինելուն:

Զինծառայող մասնագետների մարտական պատրաստումը արդյունավետ կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրանց գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Ա. Ի. Բերգն իր «Կիբեռնետիկա և հուսալիություն»[4] աշխատության մեջ նշում է, որ տեխնիկական առաջընթացը մարդուն ազատում է ծանր ֆիզիկական աշխատանքից, սակայն շատ ավելի խիստ պահանջներ է ներկայացնում մտավոր աշխատանքին և նոր պայմաններում մարդու գործունեության հուսալիությանը: Ըստ Ե. Ա. Միլերյանի՝ հուսալիությունը անձնավորության այն հուզական, կամային, մտածողական և այլ հատկությունների ու շարժառիթների համախումբն է, որոնց փոխգործությամբ ապահովվում է գործողությունների ճշգրիտ, տվյալ իրավիճակին համարժեք, պատեհաժամ կատարման մեծ հավանականությունը[5]:

Արտակարգ պայմաններում մարդու վարքային հակազդումները, դրանց ժամանակային բնութագրիչները և ընդհանրապես մարդկանց հոգեֆիզիոլոգիական հնարավորությունները փոփոխական մեծություններ են, որոնք պայմանավորված են նյարդային համակարգի առանձնահատկություններով, կենսափորձով, մասնագիտական գիտելիքներով, հմտություններով, շարժառիթավորմամբ, գործունեության ոճով[6]:

Մարտական իրադրության մոդելավորման պայմաններում ռազմական ավտոտեխնիկայի վարորդների չկշռադատված իմպուլսիվ գործողությունները իրավիճակի ներգործության հետևանքն են և հանգեցնում են իրավիճակի ոչ ճիշտ ընկալմանն ու գնահատմանը, ինչպես նաև սխալ շարժողական գործողությունների կատարմանը:

Բարդ իրավիճակում կատարողական գործողությունները պայմանավորված են այդ գործողությունների շարժառիթավորմամբ և կամային ճիգերով: Կամային ճիգը այն պահեստային էներգիական գործոնն է, որը զինծառայողի բարձր մակարդակի մասնագիտական վարպետության դեպքում նրան հնարավորություն է տալիս մեծ արդյունավետությամբ հաղթահարելու ստեղծված բարդ իրավիճակը: Ինչ վերաբերում է մոդելավորվող մարտական իրադրությունում կատարվող իմպուլսիվ գործողություններին, ապա դրանք առաջին հերթին այդ

[4] Տես *А. И. Берг.* Кибернетика и надежность. М., 1964:

[5] Տես *Е. А. Милерян.* Эмоционально-волевые компоненты надежности оператора: Очерки психологии труда оператора. М., 1974:

[6] Տես *С. И. Мазуров.* О психической устойчивости человека в экстремальных ситуациях. М., 1983, сс. 44–45:

իրավիճակը ոչ ճիշտ գնահատելու և չկշռադատված որոշումներ ընդունելու հետևանք են: Նշենք, որ մարտական ստրեսորների ազդեցության նկատմամբ զինծառայողի դիմադրողականության նշանակությունը ավելի է մեծանում այն դեպքում, երբ արտակարգ իրավիճակի հաղթահարման համար պահանջվում է ոչ թե մեկ, այլ մի քանի գործողություն: Մեր փորձերում գործողությունների անհրաժեշտ հաջորդականության պահպանումը որոշ հետազոտվողների ուժերից վեր էր:

Հետազոտության ժամանակ գրանցված հուզական վիճակի, հոգեկան պրոցեսների ինտենսիվության, բարդ հոգեշարժողական հակազդման փուլերի, լարվածության աստիճանի, վիճակի կայունության և տևականության, վիճակի բնեռայնության վերաբերյալ տվյալների և թեստավորման արդյունքների վերլուծությամբ ստացված տվյալների հարաբերակցության աստիճանը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու արտակարգ իրավիճակներում ցայտուն որեն արտահայտվող հոգեբանական գործոնների համախումբը: Այսինքն՝ պարզվել է, որ արտակարգ իրավիճակներում նրանց վարքը և մասնագիտական գործողությունների արդյունավետությունը առավելապես պայմանավորված են խառնվածքի գերակշռող տիպով (ԽՏ), առարկայական էրգայնությամբ (ԱԷ), վարքի վերահսկողությամբ (ՎՎ), նյարդահոգեկան կայունությամբ (ՆՀԿ), տագնապախռովությամբ (ՏԽ), ռիսկի գնալու պատրաստակամությամբ (ՌՊ), որոնց ինտեգրալային դրսևորումը կարելի է հաշվարկել ըստ մասնագիտական գործողությունների կատարմանը պատրաստության վիճակի կայունությունը պայմանավորող հակվածության աստիճանի (ներուժի) ինտեգրալային արժեքի՝ $ՄԳՀՊՎԿՀ_{հ.ի.ա.}$: Այդ գործոնների հաշվարկման հարաբերակցական-ռեգրեսիոն բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$ՄԳՀՊՎԿՀ_{հ.ի.ա.} = e^{-1,503} \times \frac{ԱԷ^{0,085} \times ՎՎ^{0,01} \times ՆՀԿ^{0,92} \times ԽՏ^{0,461}}{ՏԽ^{0,071} \times ՌՊ^{0,151}} \geq [x_1 \dots x_2]:$$

Տվյալ մաթեմատիկական մոդելում ներկայացված գործոնների ինտեգրալային դրսևորումը բնորոշում է արտակարգ իրավիճակներում մասնագիտական գործունեությանը զինծառայողի հոգեբանական պատրաստության վիճակի կայունությունը, որն էլ մասնագիտական գործունեության արդյունավետության գրավականն է:

Փորձարարական ճանապարհով ստացված արդյունքները մեզ հնարավորություն են տալիս կոնկրետացնելու հատկապես այն գործոնների համախումբը, որոնցով պայմանավորված է արտակարգ իրավիճակներում մարդու գործունեության հուսալիությունն ու արդյունավետությունը: Վերը ներկայացված բաղադրիչների միասնական ամբողջականության ցայտուն արտահայտվածությունը մասնագետի ոչ միայն բարձր մակարդակի պատրաստության ցուցանիշն է, այլև բարդ իրադրություններում կայուն վարքագծային դրսևորումների երաշխիքը:

Այսպիսով՝ գործունեության արդյունավետության վրա բարդ իրավիճակի ազդեցությունը պայմանավորված է ոչ միայն առաջադրված խնդիրների բնույթով, իրադրությամբ, այլև զինծառայողի հոգեբանական առանձնահատկություններով, նրա վարքի շարժառիթներով, փորձով, գիտելիքների մակարդակով,

հմտություններով, նյարդային համակարգի հիմնական հատկություններով, ֆիզիոլոգիական ու հոգեկան կայունությամբ, ինչպես նաև հոգեբանական պատրաստությամբ*: Ավելին. մարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է վերը ներկայացված գործոնների ինտեգրալային դրսևորմամբ: Դրանցից որևէ մեկի պակասը (չլինելը կամ չափից ցածր կամ բարձր մակարդակի արտահայտվածությունը) հանգեցնում է գործունեության արդյունավետության մակարդակի նվազմանը: Այս համատեքստում մեր հետազոտական տվյալների վերլուծությունը հաստատում է, որ արտակարգ իրավիճակներում զինծառայողի մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է այն հոգեբանական գործոնների համախմբով, որոնց ինտեգրալային դրսևորմամբ ապահովվում են իրադրությանը համարժեք հոգեկան ու ֆիզիկական ռեսուրսների մոբիլիզացման պատեհաժամությունը, զինծառայողի ակտուալացված հոգեկան ֆունկցիաների կայունությունը, ակտիվ վարքագծային դրսևորումների ռացիոնալությունը:

* Ֆիզիոլոգիական կայունությունը պայմանավորված է օրգանիզմի ֆիզիկական և ֆիզիոլոգիական հատկություններով (կազմվածքային առանձնահատկություններ, նյարդային համակարգի տիպ, վեգետատիվ պլաստիկություն), հոգեկան կայունությունը պայմանավորված է զինծառայողի պատրաստմամբ և նրա հատկությունների համախմբով (արտակարգ իրավիճակներում համարժեք գործողությունների կատարման համար անհրաժեշտ առանձնահատուկ հմտություններ, դրական շարժառիթավորում և այլն), հոգեբանական պատրաստությունը ենթադրում է ակտիվ-գործունեական վիճակ, ներուժային հնարավորությունների մոբիլիզացում:

## К ВОПРОСУ СООТНОШЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ, ОПРЕДЕЛЯЮЩИХ ЭФФЕКТИВНОСТЬ БОЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

*В. Г. МАРГАРЯН, полковник, кандидат психологических наук, доцент, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

Для определения комплекса психологических факторов, обусловливающих эффективность деятельности военнослужащих в экстремальных условиях боевой обстановки, разработана методика моделирования конкретной боевой ситуации, в частности, нападения из засады противника на движущуюся по горной местности колонну военной автотехники.

Рассчитаны и в ходе эксперимента уточнены необходимые и достаточные требования к моделируемой среде.

Экспериментально выявлены эти психологические факторы: преобладающий тип темперамента, предметная эргичность, готовность к риску, тревожность, нервно-психологическая устойчивость, контроль поведения. Впервые получено корреляционно-регрессионное выражение, позволяющее определять степень предрасположенности военнослужащего к сохранению психологической устойчивости при воздействии психогенных факторов боевой обстановки.

# TO THE ISSUE OF THE CORRELATION OF PSYCHOLOGICAL FACTORS DETERMINING THE EFFICIENCY OF COMBAT ACTIVITIES

*V. H. MARGARYAN, Colonel, PhD in Psychology, Associate Professor, DeputyEditor-in-Chief of the «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA*

SUMMARY

To determine a complex of psychological factors providing the efficiency of servicemen's activities in extreme conditions of tactical situation a technique is elaborated. It simulates a specific combat situation, particularly, the enemy's ambush at a column of military auto equipment marching on a mountain terrain.

The necessary and sufficient requirements to the simulated environment are estimated and specified in the course of the experiment.

The following psychological factors are revealed experimentally: predominating type of temperament, objective ergic trait, risk readiness, anxiety, neuropsychological stability, behavior control. The correlation and regression expression has been obtained for the first time. This makes it possible to determine the degree of servicemen's predisposition to keeping psychological stability under the effect of psychogenic factors of combat situation.

# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԴԵՐԸ ԲԱՐԴ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՆԵՐՈՒՄ[*]

*Ջ. ՍՅՈՒԿԱՆ, պրոֆեսոր, ԱՄՆ-ի ՌԾՈՒ-ի մագիստրոսական դպրոց*[**]



Անգամ ռեսուրսների առատության պայմաններում դժվար է արդյունավետ և արգասաբեր կերպով կառավարել պետական և ռազմական վարչարարական ապարատները, քանի որ դրանք բաղկացած են բարդ փոխկապված համակարգերից: Զարմանալի չէ, որ այս բարդ (ֆինանսական, ապահովման, ձեռքբերման, կադրերի պատրաստման և կրթական) համակարգերի կառավարումը գտնվում է ղեկավարների ու բարձրաստիճան պաշտոնյաների ուշադրության կենտրոնում: Կառավարման *(management)* վրա նման մեծ կենտրոնացման ևս մեկ, թեև հաճախ անտեսվող պատճառն այն է, որ խրախուսման կազմակերպական համակարգերը՝ առաջխաղացում, պաշտոնի նշանակում և նույնիսկ վարձատրում, կարևոր են դարձնում մանրուքների նկատմամբ մեծ ուշադրությունը, հավատարմությունը վարվող քաղաքականությանը և հետևողականորեն, վերլուծաբար մտածելու կարողությունը, որոնցով պայմանավորվում են արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մտածելակերպն ու գործունեությունը: Ինչպես «Մեկի վրա հույս դնելով՝ մեկ ուրիշին պարգևատրելու անմտության մասին» դասական հոդվածում նշում է Ստիվ Քեռը, կազմակերպությունները «ներմուծել են խրախուսման այնպիսի համակարգեր, որոնցով պարգևատրվում են ոչ այն հատկությունները, որոնց իրենք ձգտում են»[8][***]:

Խրախուսման կազմակերպման համակարգերի և համակարգային բարդության պատճառով խորապես արմատացել է մի շարք կազմակերպությունների, հատկապես՝ պետական հատվածի մտածելակերպում գերակայող այն տեսակետը, որ գործուն կառավարումը պայմանավորված է կազմակերպական արդյունավետությամբ: Այս կազմակերպական «խելքի կերտվածքի» պատճառով ղեկավարումը *(leadership)* հաճախ շփոթում են կառավարման հետ, այն դիտում զուտ որպես վերջինիս ենթամաս կամ որպես անորոշ, անձև հասկացություն, որի արդյունավետությունը դժվար է գնահատել: Հետևաբար, պետա-

[*] Տպագրվել է 2009 թ. հմ. 4-ում:

[**] Ջեյմս (Ջիմ) Սյուկանը փիլիսոփայության դոկտոր է (Իլինոյսի համալսարան), Ռազմածովային ուժերի մագիստրոսական դպրոցի բիզնեսի և վարչական քաղաքականության մագիստրոսական դպրոցում (ԲՎՔՄԴ) կառավարման ոլորտի պրոֆեսոր: Նա տարբեր գիտական ու մասնագիտական հանդեսներում հրապարակված ավելի քան 40 հոդվածների և միջազգային ու ներքին խորհրդաժողովներում արված 50 զեկուցումների հեղինակ է: Ներկայումս նրա գիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը հաղորդակցային փոփոխություններն են, հաղորդակցման և ղեկավարման փոխհարաբերությունը, միջմշակութային կապերը: Նա ԲՎՔՄԴ-ի կառավարման ամբիոնի վարիչ է և նոր գիտական վենչուրային ձեռնարկումների գծով դեկանի տեղակալ:

[***] Հղումները տես էջ 81:

կան և ռազմական վարչարարական ապարատների մեծ մասը *գերկառավարվող են, սակայն՝ թերի ղեկավարվող*:

Կառավարման վրա նման կիզակետումը կարող է հանգեցնել հաջող կազմակերպական գործունության և լավ արդյունավետության այն դեպքում, երբ կազմակերպության միջավայրը հարաբերականորեն կայուն է: Այդուհանդերձ, ղեկավարման մասին տվյալ թյուրիմաց կամ չափազանց պարզունակ պատկերացումը կարող է կործանարար լինել ռազմական և պետական վարչարարական ապարատների համար, երբ դրանցից պահանջվում է իրենց մտածելակերպի ու գործելակերպի զգալի փոփոխություն կամ անգամ կերպափոխում: Օրինակ՝ Հարավկովկասյան տարածաշրջանում ժողովրդավարական հաստատություններ ստեղծելու, պատշաճ պետական կարգավորում ապահովելու, սոցիալական ու տնտեսական զարգացումն սկզբնավորելու և պահպանելու համար կարող է պահանջվել պետական կազմակերպությունների արմատական կերպափոխում: Ավելի կոնկրետ՝ պաշտպանության նախարարությունները կարող են համարել, որ ավանդական պաշտպանական գործառույթները՝ պատերազմի կանխումը, իսկ դրա ձախողման դեպքում՝ վարումը և հաղթանակը, այլևս չեն բնութագրում իրենց վերապահված առաքելությունները: Ժողովրդին ծառայելու և պաշտպանելու համար պաշտպանության նախարարություններից կարող են պահանջվել նոր՝ հիմնովին տարբերվող, առաքելություններ, ինչպիսիք են կայունության ապահովման և համատեղ խաղաղապահական օպերացիաները, իրավապահ մարմինների գործունեությունը, արժեքավոր ռեսուրսների (օրինակ՝ նավթի, պահպանությունը):

Այս նոր գործողություններին աջակցելու համար տվյալ կերպափոխումները պահանջում են այլ կազմակերպական ուղղորդում, փոփոխություններ մարդկանց մտածելակերպում ու գործելակերպում և էական ձևափոխություններ ու վերադասավորումներ կազմակերպական համակարգերում: Ընդհանուր առմամբ ղեկավարումն անհրաժեշտ է, որպեսզի օգնի մարդկանց հասկանալու փոփոխությունների ծայրահեղ կարևորությունն ու հրատապությունը, զարգացնի այդ փոփոխության համար պահանջվող նոր հմտություններ: Միայն ուժեղ կառավարումը ի վիճակի չէ բավարարելու այդ նոր պահանջները:

Ղեկավարման դերն ու պատասխանատվությունը, կառավարման ու ղեկավարման փոխհարաբերությունները ռազմական և պետական կազմակերպություններում հաճախ սխալ են ընկալվում: Ուստի սույն հոդվածը հետապնդում է երեք նպատակ. 1) նկարագրել կառավարման և ղեկավարման միջև հիմնարար տարբերությունները, 2) պարզաբանել, թե ինչպես պետք է կառավարման և ղեկավարման մտածելակերպերը լրացնեն միմյանց, 3) դիտարկել մի քանի հիմնական ունակություններ, որոնք պետք է զարգացնեն ղեկավարները:

### Կառավարման և ղեկավարման միջև եղած հիմնարար տարբերությունները

Հետազոտողները նշում են, որ կառավարման և ղեկավարման գործառույթների, պատասխանատվությունների և մտածելակերպերի միջև կան էական տարբերություններ [10, 12, 18]: Կառավարումը գործ ունի ծավալուն, հաճախ՝ վարչարարական, կազմակերպությունների գործընթացների, ընթացակարգերի

և գործունեության հետևանքով ստեղծվող բարդությունների հետ [9]: Այս կազմակերպությունները զարգացրել են բարդ համակարգեր, օրինակ՝ ֆինանսական, ապահովման, տեխնոլոգիական, կադրերի պատրաստման և կրթական, որոնք պետք է կարգավորվեն այնպես, որ աշխատանքային գործունեությունը համապատասխանի կազմակերպական նպատակներին և ներքին ու արտաքին շահագրգիռ կողմերի կարիքներին: Ավելին. լավ կառավարումը կարևոր է յուրաքանչյուր համակարգ արդյունավետ դարձնելու համար՝ ճիշտ մարդիկ, ռեսուրսներ, գործընթացներ և պատրաստում ըստ խնդիրների: Կառավարումը կոչված է ապահովելու գործող համակարգերի արդյունավետությունը և նվազեցնելու ռիսկերը: Պլանավորումն ու բյուջեավորումը, կազմակերպումն ու անձնակազմի համալրումը, ինչպես նաև վերահսկումն ու խնդիրների լուծումը այն գործընթացներն են, որոնք կառավարիչները սովորաբար կիրառում են այս համակարգերի բարդության հետ գործ ունենալիս:

Լավ կառավարումը միշտ էլ կարևոր է: Առանց լավ կառավարման բարդ կազմակերպությունները դառնում են քաոսային, անարգասաբեր և ի վերջո՝ անաշխատունակ, քանի որ համակարգային խեղումը կհանգեցնի կարևոր նպատակների ձախողման: Այդուհանդերձ, կազմակերպությանը ներկայացվող նոր պահանջներից ծագած կազմակերպական տուրբուլենտության պայմաններում միայն կառավարումը բավարար չէ, օրինակ՝ անդամակցություն ՆԱՏՕ-ին, Արևմուտքի հետ ավելի սերտ հարաբերություններ, պատերազմականից տարբերվող ոչ ավանդական ռազմական օպերացիաներ: Այս տուրբուլենտությանը արդյունավետ արձագանքելու համար կազմակերպությանը կարող են անհրաժեշտ լինել նոր ուղղորդում, այլ տեսլական, արմատապես փոփոխված կազմակերպական համակարգեր և մարդկանց առօրյա մտածելակերպի ու գործելակերպի վերափոխում: Ղեկավարումն անհրաժեշտ է այս տուրբուլենտության պայմաններում կազմակերպությունն ուղեվարելու համար:

Ղեկավարումը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպես կանխատեսել փոփոխությունը, արձագանքել դրան և հաղթահարել այն [11, 9]: Ղեկավարումն անհրաժեշտ է նոր կազմակերպական ուղղություն ընտրելու և, որպես արդյունք, մարդկանց ու կազմակերպությունը նոր անծանոթ ոլորտներ փոխադրելու համար [2, 6]: Այս ճանապարհին հաճախ կարելի է հանդիպել դիմադրության, քանի որ մարդկանցից կպահանջվի իրենց առաջադրանքները կատարելու համար զարգացնել նոր հմտություններ, վերափոխել իրենց աշխատանքի վերաբերյալ ձևավորված կարծրատիպային մտածելակերպը, գործակցել տարբեր մարդկանց հետ և իրենց աշխատանքի համար խրախուսվել տարբեր ձևերով: Ավելին. այս նոր ուղղորդման ձեռնարկումը և փոփոխության իրականացումը պահանջում են կազմակերպության ներսի և դրսի մարդկանց համագործակցություն: Հետևաբար, փոփոխության պատճառը, փոփոխության կարևորությունը և փոփոխությունն իսկ պարզորոշ կերպով ու ռազմավարորեն հաղորդելու (մատուցելու) կարողությունը ղեկավարման կարևոր տարրն է [11]:

Ղեկավարման հրամայականն է փոփոխության անհրաժեշտության գիտակցումը՝ երկարաժամկետ հեռանկարում կազմակերպության և նրա առաքելության համար զգալի հետևանքների հանգեցնող տնտեսական, քաղաքական, ֆինանսական կամ տեխնոլոգիական իրադարձությունների ի հայտ բերմամբ ու

գնահատմամբ: Այդ գնահատումը ճշգրիտ կատարելու համար ձեռնհաս ղեկավարները պետք է կարողանան դինամիկ իրավիճակները դիտել «պարզ, թարմ աչքով»: Եթե ֆուտբոլի հետ զուգահեռներ անցկացնենք, ապա կարող ենք ասել, որ բարձրակարգ ֆուտբոլիստը կարողանում է կանխատեսել և հայտնվել այն տեղում, որտեղ շուտով կհայտնվի նաև գնդակը, բայց ոչ պարզապես այն տեղում, որտեղ գնդակն արդեն գտնվում է: Նա ունակ է տեսնելու և՛ խաղացողների, և՛ գնդակի շարժման միասնական պատկերը, ինչը նրան հնարավորություն է տալիս կանխատեսելու, թե որտեղ պետք է գտնվի ինքը նախքան գնդակի այդ վայրում հայտնվելը: Նույնը ճշմարիտ է նաև ղեկավարի դեպքում. նա ունակ է տեսնելու կազմակերպության համար արտաքին իրավիճակների ընդհանուր պատկերը, ինչը նրան օգնում է կանխատեսելու, թե կազմակերպությունը որտեղ պետք է լինի ապագայում, և ընտրելու այնտեղ հասնելու ուղղությունը:

ԱՄՆ-ի Ռազմածովային հետևակի նախկին հրամանատար (1995-1999 թթ.) գեներալ Կրուլակը «թարմ աչքով» դիտեց հետզհետե բարդացող համաշխարհային իրադարձությունները: Հասկանալով, որ 1991 թ. Առևտրի համաշխարհային կենտրոնի պայթեցումը, Աֆրիկայում ԱՄՆ-ի դեսպանատների վրա հարձակումները և Հյուսիսային Աֆրիկայում, Ինդոնեզիայում ու Միջին Արևելքում մուսուլմանական արմատականության աճումը մի յուրահատուկ սպառնալիքի վկայությունն են, որին հնարավոր չէ դիմակայել ավանդական ռազմածովային օպերացիաներով, գեներալ Կրուլակը անհրաժեշտ համարեց այնպիսի ռազմական օպերացիաները, որոնցում մարտական գործողությունները մեկտեղվեցին խաղաղապահական օպերացիաների ու մարդասիրական օգնության հետ: Որպեսզի օգնի ծովային հետևակայիններին հասկանալ դրա անհրաժեշտությունը, նա 1990-ական թվականների կեսերին ձևակերպեց «եռաբլոկ պատերազմ» փոխաբերությունը: Այն ցույց էր տալիս, որ զինվորներից կարող է պահանջվել քաղաքի երեք հարևան թաղամասերում մեծամասշտաբ ռազմական օպերացիաների, խաղաղապահական գործողությունների ու մարդասիրական օգնության միաժամանակյա իրականացում:

Այս «եռաբլոկ պատերազմ» հասկացությունը ծովային հետևակայինների համար ազդակ էր, որ 21-րդ դարի արմատապես փոխված ռազմադաշտում հաջողության հասնելու համար նրանք պետք է տիրապետեն մտածելու ու գործելու սկզբունքորեն այլ եղանակների: Օրինակ՝ մարտական գործողությունների, խաղաղապահության և մարդասիրական օգնության այս բարդ դինամիկ համապատկերում ղեկավարումն ու որոշումների ընդունումը պետք է կատարվեն կազմակերպության ստորին մակարդակներում (կապրալ)՝ որոշումների ընդունման գործում անհրաժեշտ տեղեկույթը ռեալ ժամանակի մասշտաբում օգտագործելու համար: Գեներալ Կրուլակն այդ նոր դերը փաստելու համար ստեղծեց «ռազմավարական կապրալ» տերմինը և փոփոխություն կատարեց պատրաստման ու կազմակերպման կառուցվածքում, որպեսզի այս եռաբլոկ պատերազմի միջավայրում ապահովվի կապրալների հմտությունների, իրավունքի և հեղինակության արդյունավետությունը:

Կրուլակի «եռաբլոկ պատերազմ» և «ռազմավարական կապրալ» հասկացությունները արմատապես շեղվում էին ռազմածովային հետևակին բնորոշ մտածելակերպից: Այդ ժամանակ ծովային հետևակայիններն իրենց ընկալում

էին որպես «ռազմիկներ», որոնք ունեն մի պարզ խնդիր՝ գերազանց պատրաստման, տարաշարժունության, համախմբվածության և անհատական կամքի ուժի դրսևորման շնորհիվ հաղթել թշնամուն: Փաստորեն իշխող փոխաբերությունն էր՝ «յուրաքանչյուր ծովային հետևակային հրաձիգ է»: Այս կարծրացած պատկերացումները, թե ինչպես պետք է պատրաստվեն ծովային հետևակայիններ, գեներալ Կրուլակի «եռաբլոկ պատերազմ» և «ռազմավարական կապրալ» հասկացություններին զգալի դիմադրության պատճառ դարձան: Այնուամենայնիվ, Կրուլակին հաջողվեց անհրաժեշտության գիտակցում ձևավորելով հաղթահարել այդ դիմադրությունը, ինչը ծովային հետևակայիններին օգնեց «եռաբլոկ պատերազմ», «ռազմավարական կապրալ» և այլ հեշտ հիշվող փոխաբերությունների ձևով այս նոր հասկացությունների մշտական հաղորդման և ուսուցման ու վարժանքի միջոցով նոր մոտեցումը հաստատութենացնելու շնորհիվ ըմբռնել այս նոր հասկացություններն ընդունելու կարևորությունը: Այսինքն՝ գեներալ Կրուլակը ոչ թե կառավարում էր այս գործընթացը, այլ՝ ղեկավարում:

### Կառավարման, ղեկավարման և կազմակերպական արդյունավետության փոխհարաբերությունը

Մի շարք հետազոտողներ պնդում են, որ կառավարումն ու ղեկավարումը երկու միանգամայն տարբեր դերեր են, որոնք մարդկանցից պահանջում են տարբեր հմտությունների համալիր [2, 3, 6]: Ինչպես արդեն նշվել է, տաղանդավոր կառավարիչները արժեքավորում են ճշգրիտ պլանավորումը, վերահսկումը, կայունությունը և արգասաբեր գործընթացները, ինչին կարելի է հասնել վերլուծական, ռացիոնալ մտածողության ու ռիսկից խուսափելու շնորհիվ: Հակառակ դրան՝ ձեռնհաս ղեկավարները գնահատում են նորարարությունը, ռիսկայնությունը և ճկունությունը, որոնք հաճախ ստեղծագործման արդյունք են, ինչպես նաև ամբողջական, ոչ գծային մտածողությունը և համարձակ քայլերը: Այս հետազոտողները կարծում են, որ տվյալ դերերն ու դրանց հաջող կատարման համար անհրաժեշտ հմտություններն այնքան տարբեր են, որ այդ դերերը կարող են կատարել միայն տարբեր մարդիկ:

Հակառակ տեսակետն այն է, որ թեև կառավարումն ու ղեկավարումը հստակ կերպով տարբերակվում են, այդուհանդերձ, դրանք փոխլրացնում են միմյանց և պետք է իրականացվեն միևնույն մարդու կամ խմբի կողմից [16]: Թեև ոչ բոլորն են ունակ և՛ կառավարելու, և՛ ղեկավարելու, սակայն Քոտերը կարծում է, որ բարձրաստիճան պաշտոնյաների համար կարևոր է երկու դերերը հաջող կատարելու ունակությունը [10]: Այն կազմակերպությունները, որոնք հաջողությամբ են կարգավորում փոփոխությունը, երկու դերերը հմտորեն իրականացնող ղեկավար-կառավարիչներ դաստիարակելու համար կատարում են մեծ աշխատանք՝ նրանց ուսուցանելու, պաշտոնեական առաջընթացը հոգատարությամբ կարգավորելու, ինչպես նաև հայեցակարգային հմտությունների (օրինակ՝ փոփոխությունների կառավարման ռազմավարությունների ըմբռնում և կազմակերպությունների՝ որպես բաց համակարգերի ընկալում) զարգացման նպատակով անհրաժեշտ հետբուհական կրթություն ու վերապատրաստում ապահովելու միջոցով:

Եթե կառավարումն ու ղեկավարումը տարբեր են, թեև՝ փոխլրացնող, ինչ-

պես կարող են այս երկու դերերը միավորված, հաշվեկշռված կամ փոխկապված լինել, որպեսզի կազմակերպությունները տարբեր միջավայրներում գործեն արդյունավետ կերպով: Այլ կերպ ասած՝ տվյալ իրավիճակում որքանով պետք է շեշտված լինեն կառավարումը և ղեկավարումը: Յակլը և Լեպսինջերը պնդում են, որ կան կազմակերպման արդյունավետ իրականացումը պայմանավորող երեք որոշակի, թեև փոխկապված գործոններ.

1. գործունեություն և գործընթացների հուսալիություն՝ կառավարում,

2. հարմարեցում և նորամուծություն՝ ղեկավարում,

3. մարդկային ռեսուրսներ և հարաբերություններ՝ ղեկավարում և կառավարում [17]:

Արդյունավետության յուրաքանչյուր բնութագրիչի հարաբերական կարևորությունը և, հետևաբար, կառավարման ու ղեկավարման միջև հաշվեկշիռը կախված է կազմակերպության կոնկրետ վիճակից: Հարաբերական կայունության դեպքում (օրինակ՝ զինծառայողների համար՝ խաղաղ ժամանակ կամ պետական գերատեսչությունների համար՝ հստակ լիազորությունների ու դրանց իրականացման համար բավարար ռեսուրսների առկայության պայմաններում) գործունությունն ու գործընթացային հուսալիությունը, որոնք կառավարման տարրերն են, ավելի կարևոր են, քան հարմարեցումը և նորամուծությունը, որոնք ղեկավարման տարրեր են: Դա, իհարկե, չի նշանակում, թե նորամուծությունն անտեսվում է. համեմատական գնահատման միջոցով պետք է ապահովվեն կազմակերպական գործընթացների կատարելագործումը՝ այլ կազմակերպությունների լավագույն փորձը ներմուծելու նպատակով, ներքին գիտելիքների կառավարման համակարգերի ստեղծումն ու կիրառումը՝ կազմակերպության սահմաններից դուրս տեղեկույթի և օգտակար գաղափարների փոխանակման նպատակով, և նորամուծությունների խրախուսման միջոցները: Այնուամենայնիվ, նորամուծական գործողությունների մասշտաբը, դրանց հետևանքով առաջացած փոփոխությունների աստիճանը և պահանջվող նոր գիտելիքների ծավալը այնքան էլ մեծ չեն: Տվյալ փոփոխությունները հիմնականում արձագանք են գործառութային ոլորտի խիստ կիզակետված կոնկրետ պրոբլեմներին:

Այդուհանդերձ, եթե կազմակերպության արտաքին միջավայրն արագ փոփոխվում է, ապա կազմակերպության գերիշխող մտահոգության առարկա պետք է դառնան ղեկավարման այն հատկանիշները, որոնք կազմակերպությանն օգնում են հարմարվելու և նորամուծություն կատարելու, ինչպիսիք են՝ նոր տեսլականի մշակումը, նոր ուղղության սահմանումը, փոփոխության անհրաժեշտության հստակեցումը և նորամուծությունը խթանող համակարգերի ստեղծումը: Թեև ուղղության փոփոխությունները պահանջում են նոր գիտելիք և գործընթացների նոր կարգավորումներ, որոնք հաճախ հանգեցնում են կազմակերպական արդյունավետության կարճաժամկետ նվազմանը, սակայն կառավարումը պետք է կանխի կազմակերպական գործընթացների էական վատթարացումը [16]: Օրինակ՝ լավ նախագծված, մանրակրկիտ կերպով վարվող ներքին ձեռնարկատիրական ծրագիրը (կառավարման գործառույթ), որն օգնում է ընտրելու, գնահատելու և իրականացնելու նորամուծական գաղափարները (ղեկավարման գործառույթ), կարևոր է, եթե իրենք՝ աշխատողները, հավատում են, որ դրանք ուսումնասիրված, հիմնավորված և դրված են գործառության մեջ: Եթե նորա-

մուծական գաղափարների ծագման ու գնահատման գործընթացը վատ է կառավարվում, աշխատողները կարող են արագ կասկածի տակ դնել նորամուծության կարևորությունը, և կարճ ժամանակ անց նոր գաղափարները կվերանան:

Այսինքն՝ կառավարումը ոչ պակաս կարևոր է, քան ղեկավարումը: Թեև ղեկավարմանը և կառավարմանը բնորոշ են մտածողության և գործողության յուրահատուկ եղանակներ, այս տարբեր կազմակերպական դերերը պետք է լրացնեն միմյանց: Թե որքանով շեշտված պետք է լինեն ղեկավարումը կամ կառավարումը, կախված է կազմակերպության միջավայրից: Ռազմական և պետական գործակալությունները դառնում են ավելի ու ավելի բարդ և պետք է գործեն աճող անկայունությամբ միջավայրերում. համապատասխանաբար, ավագ պաշտոնյաները պետք է մանրակրկիտ կերպով սահմանեն ղեկավարման և կառավարման ճիշտ համակցումը, որպեսզի փոփոխությանը արձագանքելիս արդյունավետ կերպով ուղեվարեն իրենց կազմակերպական համակարգերը և գործընթացները:

**Ղեկավարներին անհրաժեշտ ունակությունները**

Պրակտիկ գործունեությամբ զբաղվողները հաճախ պնդում են, որ մարդիկ կարող են վարժման, կրթության և փորձի միջոցով զարգացնել իրենց կառավարչական ունակությունները, մինչդեռ ղեկավարելու ունակությունը բնատուր է. ղեկավար ոչ թե դառնում են, այլ՝ ծնվում: Բայց նման կարծիքը ոչ միայն սխալ է (ղեկավարի գեն չկա), այլև վնասաբեր, քանի որ վերջին հաշվով քայքայում է և անտեսում ղեկավարության հարուստ ներուժը, որը կազմակերպությունում կարող է անգործության մատնվել [2]:

Ղեկավարելու ունակությունները ևս կարելի է զարգացնել: Հաջորդ բաժնում ներկայացվում են այն ամենակարևոր ունակություններից երեքը, որոնք պաշտոնյաները պետք է զարգացնեն ղեկավարելու և փոփոխություն կատարելու համար.

1. խոր իրավիճակային ըմբռնում,
2. ռազմավարական և համոզողական հաղորդակցային հմտություններ,
3. համակարգայնորեն մտածելու ընդունակություն:

**Խոր իրավիճակային ըմբռնում:** Իրավիճակային ըմբռնումը ոչ միայն կազմակերպության վրա ներգործող արտաքին միտումները և իրադարձությունը, այլև այն ներքին կազմակերպական գործընթացներն ու մշակութային գործոնները խորությամբ հասկանալն է, որոնք ազդում են հաջողության հանգեցնող փոփոխությունների վրա: Այդ ըմբռնման արդյունքը են ղեկավարները, որոնք ունակ են բազմապիսի աղբյուրներից ստացվող և՛ որակական, և՛ քանակական տվյալների համադրմամբ նկատելու պատկերները, միտումները կամ կապերը: Այդ ունակությունը ղեկավարներին հնարավորություն է տալիս ապահովելու կազմակերպության այն դիրքը, որը նրան անհրաժեշտ կլինի զբաղեցնել կամ օգտագործել ապագայում. վերը բերված ֆուտբոլային զուգահեռով՝ կանխատեսելու, թե որտեղ կհայտնվի գնդակը:

Ղեկավարները նոր հնարավորություններ ստեղծող նոր պատկերներն ու հարաբերությունները նկատելու այս ունակությունը զարգացնում են մշտական մասնագիտական պրակտիկայի միջոցով [15]: Օրինակ՝ տաղանդավոր ջոկա-

յին երաժիշտները մշտապես նվագում են գամմաներ և ավանդական ջազային պասսաժներ, մինչև կարողանան ցանկացած պահի կատարելապես նվագել երաժշտության այդ ստանդարտ մոդելները: Այդ հմտությունը, որը ձեռք է բերվել մանրամասներին կատարելապես տիրապետելու շնորհիվ, նրանց հնարավորություն է տալիս նվագելիս հանպատրաստից ստեղծագործելու, հիմնական մեղեդուց ստեղծելու նոտաների նոր պատկերներ [7]: Ճիշտ այդպես ղեկավարները պետք է զարգացնեն իրենց գործին վերաբերող խոր գիտելիքները՝ կրկնությամբ մասնագիտական գործիքարանին կատարելապես տիրապետելու շնորհիվ (տվյալների վերլուծություն, մարդկանց կառավարում, շահագրգիռ կողմերի կարիքների ըմբռնում և այլն), մինչև որ ընդունակ լինեն ճիշտ նկատելու իրենց միջավայրում առկա նոր պատկերներն ու հարաբերությունները: Այսինքն՝ ղեկավարները պետք է իրենց գործի գիտակ լինեն, որպեսզի նկատեն նոր պատկերները:

Օրինակ՝ ներկայումս ԱՄՆ-ի Շտաբների պետերի Միացյալ կոմիտեի նախագահ և Ռազմածովային օպերացիաների նախկին ղեկավար, ծովակալ Մայքլ Մուլենը օգնեց այսօր պետությունների առջև ծառացող արտառոց ծովային մարտահրավերներին դիմակայելու համար ստեղծելու «1000 նավից կազմված նավատորմի» հայեցակարգ: Ըստ այս նոր հայեցակարգի՝ միջազգային նավատորմները, նավահանգիստների տնօրինությունը, առևտրական բեռնառաքիչները և տեղական իրավապահ մարմինները պետք է համագործակցեն, որպեսզի դիմակայեն նավահանգիստների անվտանգությանն ուղղված մարտահրավերներին, պայքարեն զանգվածային ոչնչացման զենքի տարածման, մարդկանց առևտրի (թրաֆիկինգ), բաց ծովում իրականացվող ծովահենության և ազատ առևտրին ու ծովային անվտանգությանն սպառնացող այլ վտանգների դեմ: Ծովակալ Մուլենին ռազմածովային օպերացիաների նոր մոդելը տեսնելու («թարմ աչքով» տեսնելու) հնարավորություն տվեց իր գործին կատարելապես տիրապետելու հանգամանքը: Այդ ունակությունը զարգացել ու կատարելագործվել էր 41 տարվա փորձի և կրթության շնորհիվ: Ծովակալ Մուլենը երեք նավերում ծառայել է որպես կրտսեր սպա, եղել է երեք այլ նավերի հրամանատար, ղեկավարել է հարվածային ռազմարշավային խումբ («Ջորջ Վաշինգտոն» ավիակրի մարտական խումբ), եղել է Եվրոպայում ԱՄՆ-ի ծովային ուժերի հրամանատար և Ռազմածովային մագիստրոսական դպրոցում ստացել է օպերացիաների հետազոտման, իսկ Հարվարդում՝ կատարելագործված կառավարման ու ղեկավարման գծով մագիստրոսի աստիճան: Ուսուցման, հանգամանորեն ընտրված ու լայնատիրույթ աշխատանքային փորձի շնորհիվ ձեռք բերված այս հարուստ փորձը և կանոնավոր համալսարանական կրթությունը ծովակալ Մուլենին օժտել են իրավիճակային ըմբռնմամբ՝ նոր մոդելներ տեսնելու և ծովային օպերացիաների վարման նոր ուղղություն կանխատեսելու ուղղությամբ:

**Ռազմավարական հաղորդակցություն և կերպավորում:** Ղեկավարները ոչ միայն պետք է խոր իրավիճակային ըմբռնման միջոցով տեսնեն նոր մոդելներ, այլև կազմակերպության համար նոր ուղղության վերաբերյալ հաղորդակցվեն այնպիսի ձևով, որ գրավեն մարդկանց ուշադրությունը: Հաղորդակցման գործիքները, որոնք ղեկավարները կարող են օգտագործել, որպեսզի կազմակերպության անդամներին օգնեն հասկանալու այս նոր ուղղությունը, փոխաբերութ-

յուններն ու պատմությունները են [5]: Օրինակ՝ այնպիսի փոխաբերությունները, ինչպիսիք են «Գեներալ Կրուլակի եռաբլոկ պատերազմը», «Ծովակալ Մուլենի 1000 նավից կազմված նավատորմը» և նույնիսկ Ստիվ Ջոբի այն պատկերավոր արտահայտությունը, թե «Էպլ» *(Apple)* ընկերության աշխատողները այնպիսի «ահավոր արգասիքներ ստեղծող» «պոետներ» են, որոնք «կփոխեն աշխարհը, որն էլ կփոխի կրթությունը», և՛ բանականի, և՛ հուզականի միջոցով հուզիչ ու շարժառիթավորող լեզվի հնարներ են: Մանրակրկիտ կերպով ընտրված լեզուն, մասնավորապես՝ փոխաբերությունները, կարող է «կերպավորել» գաղափարը այնպես, որ այն աշխատողների համար դառնա և՛ հասկանալի, և՛ հուզիչ:

Կերպավորումը մի նոր գաղափարի կարևոր կողմի վրա կենտրոնանալու արվեստ է, ինչը օգնում է այն դարձնելու հեշտ հասկանալի և հնարավորություն է տալիս «ամրագրելու» աշխատողների գիտակցության մեջ: Արդյունավետ կերպավորումը բացառում է գաղափարի այլ մեկնաբանություններ (ոչ մի երկիր ի վիճակի չէ ծովային անվտանգության ապահովման նպատակով օգտագործելու 1000 նավից կազմված նավատորմ, ուստի ռազմածովային համագործակցությունը դառնում է անհրաժեշտություն) և ենթադրում է նոր գործողությունների պլան: Օրինակ՝ եթե ծովային հետևակայիններն իրենց առաքելությունները դիտում են «եռաբլոկ պատերազմի» լույսով, ապա քիչ հավանական է, որ նրանք Բաղդադի կամ Քաբուլի մերձակայքերը պարեկելիս կգործեն պարզապես որպես մարտիկներ: Այսինքն՝ կերպավորմամբ ձևավորվում են ընկալումը, մտածողությունը և գործունեությունը:

Ղեկավարներն իրենց հաղորդագրությունները մշտապես փոխանցելու համար պետք է նաև ռազմավարորեն օգտագործեն բոլոր տեղեկատվական միջոցները, մասնավորապես՝ նոր տեխնոլոգիաները, ինչպիսիք են ձայնային փոստի համակարգերը, տեսահեռուստախորհրդաժողովները, բջջային հեռախոսակապը և անձնական թվային քարտուղարները: Փաստորեն, հասարակական ցանցային տեխնոլոգիաները, ինչպիսիք են «Թվիտերը» (*Twitter*), «Մայ Սպեյսը» (*My Space*), «Ֆեյսբուկը» (*Facebook*) և նույնիսկ «բլոգները», կարող են ապահովել կազմակերպությանը նոր ուղղություն հաղորդելու համար եզակի ստեղծագործական մեթոդներ: Բացի այդ, ղեկավարներն իրենց հաղորդագրությունների փոխանցմանն օգնելու համար պետք է օգտագործեն կառավարիչներին, մասնավորապես՝ ստորին մակարդակի ղեկավարներին: «Ջեներալ Էլեկտրիկ» (ՋԷ) ընկերության նախկին գործադիր տնօրեն Ջեկ Ուելշը ռազմավարորեն է օգտագործել իրեն մատչելի բոլոր տեղեկատվական միջոցներն ու մարդկանց, որպեսզի ՋԷ-ին հաղորդի իր «արագություն, պարզություն և ինքնավստահություն» ուղղությունը [4]:

Արդյունավետ կերպով հաղորդակցվողները, ինչպիսիք են Ջեկ Ուելշը, Ստիվ Ջոբսը, ծովակալ Մայք Մուլենը և ուրիշներ, գիտակցում են, որ արդյունավետ հաղորդակցությունը պարզապես տեղեկույթի փոխանցում չէ իրենց ուղեղներից դեպի ենթակաների ուղեղներ: Այս ղեկավարները գիտեն՝ որպեսզի ենթակաները հասկանան նոր ուղղությունը և իրենցից պահանջվող նոր մտածողությունն ու գործունեությունը, պետք է ստեղծել կամ ձևավորել այն բանի միասնական ըմբռնումը, թե ինչ է փոփոխությունը, ինչու է այն կարևոր և ինչպես է նախատեսվում դա անել: Այդ միասնական ըմբռնումը ստեղծվում է հաղորդա-

գրության (փոխաբերություններ և պատմություններ) մանրակրկիտ կերպավորման, հաղորդակցման միջոցների մեծ բազմազանության ռազմավարական օգտագործման և կառավարիչների ու ստորին մակարդակի ղեկավարների կողմից այն մշտապես համոզիչ դարձնելու շնորհիվ: Ղեկավարին հաջողվում է տվյալ ուղղությունը կազմակերպության համար դարձնել «իրական» միայն այն դեպքում, երբ նոր ուղղությունը՝ «եռաբլոկ պատերազմ» կամ «1000 նավից կազմված նավատորմ», կազմակերպությունում դառնում է սովորական ամենօրյա խոսակցության թեմա:

**Մտածողությունը և գործունեությունը համակարգերի հեռանկարի տեսանկյունից:** Ղեկավարները պետք է անեն ավելին, քան նոր մոդելներ տեսնելն է, նոր ուղղություն հաստատելն է և հանգամանորեն կերպավորված ու ռազմավարորեն հաղորդվող տեսլականի միջոցով այդ նոր ուղղությունը ներկայացնելն է: Ղեկավարները նաև պետք է ապահովեն կազմակերպության ռազմավարության, կառուցվածքի, գործընթացների և աշխատողների, այլ կերպ ասած՝ դրա համակարգերի, վերադասավորումը, որպեսզի հասնեն նոր ուղղությանը օժանդակող արդյունքների: Այդ վերադասավորման համար ղեկավարները պետք է իրենց կազմակերպությունը դիտեն ոչ թե որպես առանձին մասերի պարզ գումար, այլ որպես համապարփակ ամբողջություն, և գիտակցեն, որ համակարգի որևէ բաղադրամասում կատարվող փոփոխությունը կազդի համակարգի մյուս բաղադրամասերի վրա [1, 13]: Օրինակ՝ գեներալ Կրուլակը գիտակցում էր, որ ապագա մարտական գործողությունների համար իր նոր «եռաբլոկ պատերազմ» ուղղությունը պահանջում է Ռազմածովային հետևակի պատրաստման, խրախուսման, ռեսուրսների ու կառուցվածքային համակարգերի զգալի փոփոխություն, և որ այս համակարգերը պետք է լինեն միմյանց ու ռազմածովային հետևակի այլ համակարգերի հետ վերակարգավորելի, որպեսզի այս նոր ուղղությունը հաջողության հասնի: Գեներալ Կրուլակը գիտեր, որ եթե նույնիսկ մեկ կարևոր համակարգային բաղադրամաս այլ բաղադրամասերի հետ վերակարգավորված չէ (օրինակ՝ ծովային հետևակայինները առաջխաղացում չեն ունեցել հումանիտար օգնություն ցուցաբերելու կամ ազգային պետական շինարարությամբ զբաղվելու ունակության համար), ապա այս ուղղության իրականացումը դժվար կլինի:

Բարձրաստիճան պաշտոնյաները հաճախ համարում են, որ իրենց կազմակերպությունը որպես փոխկապված ամբողջություն ստեղծող ինտեգրված համակարգերի համախումբ դիտելը բարդ խնդիր է [13, 14]: Այս բարդությունը նրանց՝ որպես վերլուծաբանների պատրաստման կողմնակի արգասիք է: Ինչպես վերը նշվել է, վերլուծաբանը պրոբլեմի պատճառը կամ աղբյուրը գտնելու համար այն տրոհում է մասերի կամ համառոտում: Այս մտածելակերպը, որը գծային է և հիմնված է սերտորեն առնչվող պատճառի ու հետևանքի միջև կապի վրա, արդյունք է տալիս հարաբերականորեն նեղ շրջանի բարդ խնդիրներ լուծելու ժամանակ: Այլ կերպ ասած՝ խնդիրների լուծման նկատմամբ վերլուծական մոտեցումը կազմակերպական բարդությունը կառավարելու անհրաժեշտ գործիք է: Այդուհանդերձ, նման մտածելակերպը բավարար չէ դինամիկ, անկանխատեսելի արտաքին միջավայրում կազմակերպությունը ուղեվարելու համար: Այս միջավայրերը բարձրաստիճան պաշտոնյաներից պահանջում են

մեծ քանակությամբ անհամաչափ, արտաքուստ չկապակցված տեղեկույթից որսալ ու միավորել պատկերները, կանխատեսել, թե ինչպես պետք է կազմակերպությունը արձագանքի այդ նոր պատկերներին, կանխազգալ փոփոխության ներգործությունը ոչ թե կազմակերպության մի մասի, այլ ամբողջության վրա և ջանադրաբար աշխատել կազմակերպության տարբեր մասերը մեկ ներդաշնակ ամբողջություն դարձնելու ուղղությամբ:

Համակարգերի հեռանկարի տեսանկյունից կազմակերպությունների նկատմամբ նման մոտեցումը ևս պահանջում է, որ ղեկավարն իրեն դիտի որպես այդ կազմակերպության նախագծողի կամ կոնստրուկտորի [13]: Ավանդաբար ղեկավարները դիտվում են որպես քարիզմատիկ կամ ոգեշնչող անձնավորություններ, որոնք իրենց հետևորդներին դրդում են որոնելու նոր ուղղություն: Սակայն նախագծումն ունի գործնական բնույթ. այն պահանջում է, որ ինչ-որ բան արվի ոչ թե տեսականորեն, այլ գործնականում: Նախագծման էությունն այնպիսի համակարգերի կառուցումն է, որոնց մասերը կապակցվում են, որպեսզի գործեն որպես մեկ ամբողջություն: Հետևաբար, արդյունավետ կազմակերպական նախագծումը պահանջում է ունակություն՝ կանխատեսելու, թե կազմակերպական մասերը ինչպես կարող են միավորված լինել, և պարզ պատկերացում, թե պահանջված արդյունքներին հասնելու համար ինչպես պետք է աշխատի ամբողջ համակարգը: Երկու դերերն էլ՝ և՛ քարիզմատիկ, և՛ նախագծող, անհրաժեշտ են, որպեսզի փոփոխությունը պսակվի հաջողությամբ:

### Ամփոփիչ դիտողություններ

Կառավարման բնագավառի նշանավոր գիտնական Ջեյմս Մաքգրեգոր Բեռնսը նշել է, որ «ղեկավարումը առավել ուսումնասիրված և սակավ հասկանալի երևույթներից մեկն է» [3]: Այս հոդվածը կառավարման ու ղեկավարման միջև եղած հիմնարար տարբերությունների նկարագրմամբ որոշ չափով հստակեցնում է ղեկավարման մեր ըմբռնումը, այն ուղիները, որոնցով կազմակերպական նպատակներին հասնելու համար կառավարումը և ղեկավարումը լրացնում են միմյանց, և մի շարք առավել կարևոր ունակություններ, որոնք պետք է զարգացնեն ղեկավարները:

Այսպիսով՝ կառավարիչները պայքարում են կազմակերպական բարդությունների դեմ, մինչդեռ ղեկավարները դիմակայում են արտաքին փոփոխությանը: Սակայն ռազմական ու պետական կառույցներում կազմակերպական բարդությունը և փոփոխությունը, որոնք արձագանք են միջավայրի տուրբուլենտությանը, տեղի են ունենում միաժամանակ: Հետևաբար, անհրաժեշտ է, որ այդ կազմակերպությունները ջանադրաբար աշխատեն այնպիսի ղեկավարների ձևավորման ուղղությամբ, որոնք ունենան ներքին կազմակերպական բարդությունը հաղթահարելու, արտաքին միջավայրի տուրբուլենտությունը ճշգրիտ պարզաբանելու և լավ ինտեգրող փոփոխության միջոցով կազմակերպական ուղղությունը փոփոխելու տաղանդ: Դրա զարգացման մեկնակետերից մեկն է այն կարևոր հատկանիշների գիտակցումը, որոնք պետք է ունենան տվյալ ղեկավարները: Լայն ու փոփոխակվող պատասխանատվությամբ մանրակրկիտ կերպով ընտրված աշխատանքների, ակտիվ ու բովանդակալից ուսուցման, մագիստրոսական և գործադիր ղեկավար կազմի համար նախատեսված պատեհա-

ժամ կրթության շնորհիվ խոստումնալից ղեկավարները կարող են զարգացնել իրավիճակային ըմբռնում, ռազմավարական հաղորդակցման հմտություններ և համակարգորեն մտածելու ունակություններ, որոնք անհրաժեշտ են լավ ղեկավար դառնալու համար:

# THE ROLE OF MANAGEMENT AND LEADERSHIP IN COMPLEX, TURBULENT ORGANIZATIONAL ENVIRONMENTS

*J. SUCHAN*[*], *Professor, Naval Postgraduate School*

Even when resources are plentiful, government and military bureaucracies are difficult to manage efficiently and effectively because they are composed of complex, interconnected systems. Not surprisingly, managing these complex systems (e.g. financial, logistics, acquisition, training and education) dominates managers' and senior executives' attention. Another, though often overlooked, reason for this very strong focus on management is that organizational reward systems-promotions, job assignments, and even payemphasize the careful attention to detail, the close adherence to policy, and the linear, analytical thinking skills that define effective management thinking and action. As Steve Kerr pointed out in his classic article, On the Folly of Rewarding A, While Hoping for B, organizations "have installed reward systems which are paying off for behaviors other than those they are seeking" [8].

Due to organizational reward systems and system complexity, the idea that efficient management results in organizational effectiveness has become a deeply ingrained assumption that dominates thinking in a number of organizations, particularly in the public sector. Because of this organizational "habit of mind", leadership is often confused with management, seen merely as one of its subsets, or viewed as a vague, amorphous concept whose effectiveness is difficult to measure. Consequently, most government and military bureaucracies are over managed but under led.

This focus on management may lead to improved organizational efficiency and effectiveness when the organization's environment is relatively stable. However, confused or overly simplistic thinking about leadership can be detrimental to military and government bureaucracies when they are required to alter significantly, or even transform, their thinking and practices.

---

[*] Jim Suchan (PhD, University of Illinois) is Professor of Management in the Graduate School of Business and Public Policy (GSBPP) at the Naval Postgraduate School. He has published over 40 articles in various academic and practitioner journals and has given over 50 presentations at domestic and international conferences. His current research interests are communicating change, the relationship between communication and leadership, and intercultural communication. He is currently the Chair of the Management Department and the Associate Dean for New Academic Ventures in GSBPP.

For example, in the South Caucasus region an emphasis on creating democratic institutions, insuring good governance, and building and sustaining social and economic development may require governmental organizations to fundamentally transform themselves. More specifically, Ministries of Defense (MOD) may find that traditional defense functions-deterrence of war and fighting and winning wars if deterrence fails-will no longer adequately define required missions. New, fundamentally different missions such as stability operations, joint peace-keeping operations, law enforcement, protection of valuable resources such as oil, may be required for MODs to serve and protect their people.

These transformations require a different organizational direction, changes in how people think and act, and significant alterations and realignments in organizational systems to support these new actions. In essence, leadership is required to help people understand the need and urgency for change and to develop the new skills the change will require. Strong management alone does not have the capability to meet these new requirements.

The roles and responsibilities of leadership and the relationship between management and leadership are often misunderstood in military and government organizations. Consequently, this article has three purposes: (1) to describe fundamental differences between management and leadership, (2) to explain how management and leadership thinking must complement each other, (3) and to discuss several of the key competencies leaders must develop.

**Fundamental Differences between Management and Leadership**

Researchers cite significant differences in the functions, responsibilities, and modes of thinking between managing and leading [10; 12; 18]. Management is about coping with the complexity caused by the processes, procedures, and practices of large, often bureaucratic organizations [9]. These organizations have evolved complex systems–for example, financial, logistical, technological, training and education–that must be aligned so that work activities meet organizational goals and internal and external stakeholders' needs. Furthermore, good management is essential to make each system effective–the right people, resources, processes, and training to complete the appropriate tasks. Management's mandate is to keep the current systems operating efficiently and to minimize risk. The processes managers typically use to manage the complexity within these systems are planning and budgeting, organizing and staffing, and controlling and problem solving.

Good management is always important. Without good management complex organizations become chaotic, inefficient, and ultimately ineffective because system breakdowns will result in important goals not being met. However, in times of organizational turbulence caused by new demands placed on the organization–for example, NATO membership, closer relations with the west, non-traditional military operations other than war–management alone is insufficient.

To respond effectively to this turbulence, the organization may require a new direction, a different vision, fundamentally altered organizational systems, and shifts in people's customary way of thinking and acting. Leadership is required to navigate the organization through this turbulence.

Leadership focuses on anticipating, responding to, and coping with change [11; 9]. Leadership is required to set a new organizational direction, and as a result, take people and the organization to new, unfamiliar places [2; 6]. This journey will often meet with resistance as people will be required to develop new skills, change long-standing habits of mind about their work, interact with different people to complete their tasks, and be rewarded for their work in different ways. Furthermore, undertaking this new direction and implementing change require the cooperation of people internal and external to the organization. Consequently, the ability to clearly and strategically communicate the reason for the change, the urgency in making the change, and the change itself is an essential element of leadership [11].

A leadership imperative is to recognize the need for change by determining and assessing events–economic, political, financial, or technological–that over the long-term will have significance consequence to the organization and its mission. To accurately make this assessment, effective leaders are able to see dynamic environments with "fresh, clear eyes". To use a soccer analogy, an outstanding soccer player is able to envision and move to where the ball will soon be, not merely to where it is. He is able to see a pattern of both players and ball movement that enables him to anticipate where he needs to be well before the ball gets there. The same is true of a leader: he or she is able to see patterns in external organizational events that enable him/her to envision, to see where the organization must be in the future and to set the direction to get there.

General Krulak, the former commandant of the US Marine Corps (1995–1999), saw increasingly complex world events through "fresh eyes". Recognizing that the 1991 World Trade Center bombing, the attacks on US embassies in Africa, and the increase in radical Muslim fundamentalism in northern Africa, Indonesia, and the Mid-East had created a unique threat that traditional Marine operations were incapable of confronting, General Krulak saw the need for military operations that blended combat with peace keeping, peace enforcement, and humanitarian assistance. To help Marines understand that need, he created in the mid 1990's the metaphor of the "three-block war". This metaphor indicated that soldiers may be required to conduct simultaneously full scale military operations, peacekeeping activities, and humanitarian relief within the space of three successive city blocks.

This three-block war concept signaled to Marines that they needed to develop fundamentally different ways of thinking and acting to be successful on radically altered 21$^{st}$ century battlefields. For example, leadership and decision making in this complex, dynamic landscape of fire fights, peace-keeping, and humanitarian assistance would need to be driven to the lowest levels of the organization – the corporal – to make use of real-time critical information in decision making. General Krulak

coined the term “strategic corporal” to capture this new role, and he altered training and organizational structure to insure corporals had the skills, power, and authority to be effective in this three-block war environment.

Krulak’s “three-block-war” and “strategic corporal” concepts were radical departures from Marine Corps thinking. At that time Marines viewed themselves as “warriors” whose mission was very straightforward–to defeat the enemy through superb training, maneuverability, group cohesion, and individual will power. In fact, the dominant metaphor was “every Marine is a rifleman”. These long-held beliefs about how Marines train and fight generated significant resistance to General Krulak’s “three-block war” and “strategic corporal” concepts. However, Krulak was able to overcome that resistance by establishing a sense of urgency that helped Marines understand why it was necessary to adopt these new concepts, constantly communicating these new concepts through easy-to-remember metaphors like “three-block war”, “strategic corporal”, and others, and institutionalizing the new approach through training and education. In short, General Krulak did not manage this process; he led it.

**The Relationship between Management, Leadership and Organizational Effectiveness**

A number of researchers contend that managing and leading are two fundamentally different roles requiring people with different skill sets [2; 3; 6]. As suggested earlier, talented managers value careful planning, control, stability, and efficient processes achieved by analytical, rational thought processes and avoidance of risk. In contrast effective leaders value innovation, risk taking, and flexibility often achieved by creativity; holistic, nonlinear thinking; and bold action. These researchers believe these roles and the skills required to perform them well are so different that they can only be carried out by different people.

A competing perspective is that even though managing and leading are distinct, both roles are complementary and should be carried out by the same person or group of people [16]. Although not everyone may be capable of both managing and leading, Kotter [10] believes the ability to perform both roles well is essential in senior-level executive positions. Organizations that manage change successfully work hard to develop these leader-managers through mentoring, managing carefully the progression of their jobs, and providing them with the graduate education and executive development required to develop the conceptual skills–for example, understanding change management strategies and viewing organizations as open systems–to skillfully handle both roles.

If management and leadership are distinct yet complementary, how can these two roles be integrated, balanced, or interrelated so that organizations perform effectively in different environments? In other words, how much emphasis needs to be placed on management and leadership in a given situation? Yukll and Lepsinger [17] contend that there are three distinct, though interrelated, factors that determine effective organizational performance:

1. efficiency and process reliability: management activities;
2. adaptation and innovation: leadership activities;
3. human resources and relations: leadership and management activities.

The relative importance of each of the performance indicators, and thus the balance between management and leadership activities, depends on the organization's specific situation. In times of relative organizational stability–for example during peace time for military or when government agencies have clear mandates and adequate resources to carry them out–efficiency and process reliability, an essential aspect of management, are more important than adaptation and innovation, which are aspects of leadership. That does not mean, of course, that innovation is ignored; improvements to organizational processes through benchmarking to import best practices from other organizations, creation and use of internal knowledge management systems to exchange information and good ideas across organizational boundaries, and incentives for innovation must be maintained. However, the scale of innovative activities, the degree of change they create, and the new learning required are not as great. These changes are primarily reactions to narrowly focused, functional-area specific problems.

However, when the organization's external environment is changing rapidly, then leadership behaviors that help the organization adapt and innovate such as developing a new vision, setting a new direction, articulating the need for change, and creating systems that spur innovation need to be the organization's dominant concern. Although changes in direction require new learning and adjustments in processes that often will reduce short-term organizational efficiency, management must not allow organizational processes to degrade significantly [16]. For example, a well designed, care fully run intrapreneurship program (a management function) that helps select, evaluate, and implement innovative ideas (a leadership function) is essential if employees are to believe innovative ideas they have are examined, supported, and put into practice. If this process of surfacing and assessing innovative ideas is not well managed, workers can quickly become cynical about innovation's importance and soon novel ideas will dry up.

In short, leadership is not more important than management. Although leadership and management have distinctive modes of thinking and action, these different organizational roles must complement each other. To what extent leadership or management needs to be emphasized depends on the organization's environment. Military and government agencies are becoming more complex and must operate in increasingly volatile environments; consequently, senior executives need to carefully determine the right blend of leadership and management to administer their organizational systems and processes effectively while responding to change.

**Competencies that Leaders Need**

Practitioners often state that people can develop managerial competency through training, education, and experience; however, they believe leadership is innate: leaders are born, not made. Not only is this thinking inaccurate (a leadership gene

does not exist) but is also destructive because it ultimately undermines and ignores rich leadership potential that may lie dormant in the organization [2].

Leadership competencies can be developed. This next section describes three of the most important competencies that executives must develop to lead and implement change:

1. deep situational awareness;
2. strategic and persuasive communication skills;
3. systems thinking capability.

**Deep Situational Awareness.** Situational awareness is a deep understanding not only of the external trends and event that impact the organization but also of the internal organizational processes and cultural factors that influence the kinds of changes that will be successful. This awareness results in leaders being capable of seeing patterns, trends, or linkages by synthesizing data–qualitative and quantitative–from very different sources. This ability to see patterns and trends enables leaders to help position the organization where it will need to be in the future, or to use, the soccer analogy discussed earlier, to envision where the ball will be.

Leaders develop this ability to see new patterns and relationships that offer new opportunities through the constant practice of their craft [15]. For example, talented jazz musicians constantly practice scales and traditional jazz riffs and runs until they can play these standard patterns of notes perfectly every time. That skill achieved through mastery of detail enables them to improvise, to create new patterns of notes from the main melody when performing [7]. Similarly, leaders need to develop deep knowledge of their business by mastering through repetition the tools of their craft (analysis of data, management of people, understanding stakeholders' needs, etc.) before they are capable of seeing accurately new patterns and relationships in their environment. To put it simply, leaders must be experts in their business to see new patterns.

For example, Admiral Michael Mullen, current chairman of the United States Joint Chiefs of Staff and former Chief of Naval Operations, helped create the "1,000 ship navy" concept to meet the unique maritime challenges nations now face. This new concept recognizes that international navies, port operators, commercial shippers, and local law enforcement agencies need to work together to cope with port security challenges, weapons of mass destruction proliferation, human trafficking, piracy on the high seas, and other threats to free trade and maritime security. What was instrumental in enabling Admiral Mullen to see a new pattern of maritime operations (i.e. to see with "fresh eyes") was mastery of his craft. That craft was developed and perfected over 41 years of experience and education. Admiral Mullen served as a junior officer on three ships, commanded three others, led a battle group (George Washington), commanded the Allied Joint forces as well as the US Naval Forces in Europe, and obtained a graduate degree in Operations Research from the Naval Postgraduate School and advanced management and leadership from Harvard. This

deep expertise gained from mentoring, carefully selected and wide ranging work experience, and timely graduate education provided Admiral Mullen with the situational awareness to see new patterns and envision a new direction in maritime operations.

**Strategic Communication and Framing.** Leaders not only need to see new patterns through deep situational awareness but also have to communicate the organization's new direction in a way that grabs people's attention. Communication tools leaders can use to help organizational members understand this new direction are metaphors and stories [5]. For example, metaphors such as General Krulak's "three-block war", Admiral Mullen's "1,000 ship navy", and even Steve Jobs' depiction of Apple employees as "poets" who are making "insanely great products" that will "change the world, that will change education" reflect language that excites and motivates through both reason and emotion. Carefully chosen language, parti cularly metaphors, can "frame" the idea in a way that is both understandable and emotionally appealing to workers.

Framing is the art of focusing on one key aspect of a new idea that helps make it easily understandable and enables it to "stick" in workers' minds. Effective framing crowds out other interpretations of an idea–no one country can deploy a 1,000 ship navy to insure maritime security; consequently, maritime cooperation is a necessity–and provides a map for new action. For example, if Marines see their missions through the "three-block war" lens, then they are far less likely to act merely as war fighters when they patrol neighborhoods in Baghdad or Kabul. In short, framing shapes perception, thinking, and action.

Leaders must also strategically use all media, particularly new technologies such as voice-mail systems, video–teleconferencing, cell phones and personal digital assistances to constantly communicate their message. In fact, social network technologies such as Twitter, My Space, and Facebook and even "blogs" may provide unique, creative ways to communicate the organization's new direction. Furthermore, leaders must use managers, particularly first–line supervisors, to help communicate their message. Jack Welch, the former Chief Executive Officer of General Electric (GE), strategically used all media available to him and people at every management level to communicate his "speed, simplicity, and self-confidence" direction for GE [4].

Effective communicators such as Jack Welch, Steve Jobs, Admiral Mike Mullen, and others recognize that effective communication is not merely transferring information from their heads into those of their employees. These leaders know that for their workers to understand the new direction, and the new thinking and action required of them, they must create or build a shared understanding of what is the change, why it is important, and how it is going to be implemented. That shared understanding is created through careful framing of the message (metaphors and stories), strategic use of a wide variety of communication media, and the constant reinforcement of the message by managers and first-line supervisors. Only when the new direction–the three-block war or 1,000 ship navy–becomes part of the ordinary,

everyday conversation in the organization has the leader succeeded in making that direction “real” to the organization.

**Thinking and Acting from a Systems Perspective.** Leaders must do more than see new patterns, set a new direction, and represent that new direction through a vision that is carefully framed and strategically communicated. Leaders must also insure that the organization’s strategy, structure, processes, and people– in other words its systems–are realigned to achieve the new organizational results that support the new direction. To achieve this realignment, leaders must think of their organization as an integrated whole rather than the mere sum of its parts and realize that a change in one component of the system will affect other system components [1; 13]. For example, General Krulak recognized that his “three-block war” new direction for future combat operations required significant changes in Marine training, reward, resource, and structural systems, and that these systems had to be realigned with each other and other Marine Corps systems for this new direction to succeed. General Krulak knew that if even one important system component was not aligned with the other components–Marines, for example, were not promoted for their ability to provide humanitarian assistance or engage in nation building-than implementation of this new direction would be difficult.

Senior people often find it challenging to see their organization as a set of integrated systems that create a coherent whole [13; 14]. This difficulty is a by product of their training as analysts. As indicated earlier, an analyst breaks apart or reduces a problem into its components to find the cause or source of the problem. This mode of thinking, which is linear and based on tightly connected cause and effect relationships, works well to solve relatively narrow, complex problems. In other words, approaching problems from an analytical perspective is an essential tool for managing organizational complexity. However, this mode of thinking is inadequate to navigate an organization through a dynamic, unpredictable external environment. These environments require senior executives to integrate and see patterns in large amounts of disparate, seemingly unrelated information, envision how the organization should respond to these new patterns, anticipate the impact of change on the whole organization, not just a part of it, and work hard to reintegrate the various parts of the organization into a coherent whole.

Approaching organizations from a systems perspective also requires a leader to think of himself or herself as the designer or constructor of the organization [13]. Traditionally, leaders are seen as charismatic or inspirational figures who motivate followers to seek a new direction. However, design is pragmatic; it requires that something works not in theory but in practice. The essence of design is the construction of systems whose parts mesh with each other to perform as a whole. Consequently, effective organizational design requires the ability to envision how the organizational parts can be reintegrated and a clear sense of how the whole system needs to operate to achieve required results. Both roles–charismatic and designer–are necessary for change to be successfully implemented.

## Final Comments

James MacGregor Burns [3], the noted management scholar, has stated that "leadership is one of the most observed and least understood phenomena" (p.1). This paper has provided some clarity to our understanding of leadership by describing fundamental differences between management and leadership, ways in which management and leadership complement each other to achieve organizational goals, and several of the most important capabilities leaders must develop.

Simply put, managers cope with organizational complexity while leaders contend with external change. However, in the military and government organizational complexity and change in response to environmental turbulence are occurring simultaneously. Consequently, it is imperative that these organizations work hard to develop leaders who have the talent to cope with internal organizational complexity, interpret accurately external environmental turbulence, and alter organizational direction by successfully integrating change. One starting point in this development is to recognize the key attributes these leaders must possess. Through carefully chosen jobs of wide and varied responsibility, active and insightful mentoring, and well timed graduate and executive management education, promising managers can develop the situational awareness, strategic communication skills, and system thinking capabilities needed to be talented leaders.

### REFERENCES


1) *N. Andreadis*. Learning and organizational effectiveness: A systems perspective. «Performance Improvement», 2009, 48(1), PP. 5–11.

2) *W. Bennis* & *B. Nanus*. Leaders: The strategies for taking charge. New York, 1985.

3) *J. M. Burns*. Leadership. New York, 1978.

4) *J. C. Collins* & *J. I. Porras*. Built to last. New York, 1994.

5) *J. A. Conger*. Inspiring others: The language of leadership. «Academy of Management Executive», 1991, 5(1), PP. 170–183.

6) *M. Depree*. Leadership is an art. New York, 2004.

7) *M. Depree*. Leadership jazz. New York, 1993.

8) *S. Kerr*. On the folly of rewarding A, while hoping for B. «Academy Management Journal», 1975, 18(4), PP. 769–783.

9) *J. P. Kotter*. What leaders really do. «Harvard Business Review», 2001, 79(11), PP. 85–96.

10) *J. P. Kotter*. A force for change: How leadership differs from management. New York, 1990.

11) *J. P. Kotter*. Leading Change. Boston, 1996.

12) *J. C. Rost*. Leadership for the 21st century. Westport, 1991.

13) *P. M. Senge*. The fifth discipline: The art and practice of the learning organization. New York, 2003.

14) *P. M. Senge*. Collaborating for systemic change. «MIT Sloan Management Review», 2007, 48(2), PP. 44–53.

15) *F. Westley* & *H. Mintzberg*. Visionary leadership and strategic management. «Strategic Management Journal», 1989, 10, PP. 17–32.

16) *G. Yukl* & *R. Lepsinger*. Flexible leadership: Creating value by balancing multiple challenges and choices. San Francisco, 2004.

17) *G. Yukl* & *R. Lepsinger*. Why integrating the leading and managing role is essential for organizational effectiveness. «Organizational Dynamics», 2005, 34(4), PP. 361–375.

18) *A. Zalesnik*. Managers and leaders: Are they different? «Harvard Business Review», 1977, 55(5), PP. 67–78.

# РОЛЬ УПРАВЛЕНИЯ И РУКОВОДСТВА В СЛОЖНЫХ ТУРБУЛЕНТНЫХ ОРГАНИЗАЦИОННЫХ СРЕДАХ

*Дж. СЮКАН, профессор, Магистрская школа ВМФ США*

РЕЗЮМЕ

В государственных и военных аппаратах, вследствие укоренившихся стереотипов, управление *(management)* и руководство *(leadership)* часто отождествляются. В действительности, между ними существуют фундаментальные различия.

Управление имеет дело с проблемами, возникшими вследствие процессов, процедур и деятельности больших и сложных, часто–административных–организаций. Управление нацелено на обеспечение эффективности действующих систем и уменьшение рисков путем воздействия на внутреннюю среду организации.

В сложных условиях организационной турбулентности, которые объективно возникают в связи с постоянными изменениями внешней среды, одно управление не достаточно. С целью эффективного реагирования на данную турбулентность организация нуждается в новом видении, новом направлении, новых системах и изменении повседневного мышления и деятельности людей. Эту функцию обеспечения выживания и роста организации в постоянно меняющейся внешней среде выполняет руководство посредством нацеливания на предупреждение, реагирование и преодоление внешнего изменения. Руководитель должен обладать рядом важных качеств, как: умение в сложной внешней динамично меняющейся среде в условиях недостаточности информации выделять общую картину, оценивать и прогнозировать ее развитие с определением места, в котором должна находиться организация в каждый последующий момент времени, умение убедительно разъяснять подчиненным необходимость инноваций и их сущность посредством использования полного спектра речевых (метафорических) ресурсов и информационных технологий и т. д. Для развития этих качеств необходимы опыт практической деятельности и системное целенаправленное обучение.

# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ[*]

*Յու. Գ. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ, գեներալ-գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ*



Պաշտպանությանը[1] պետության և նրա զինված ուժերի պատրաստումը համապատասխան պետական և ոչ պետական կառույցների կողմից համադասված միջոցառումների համակարգի կազմակերպման և իրականացման բարդ, բազմակողմ և շարունակական գործընթաց է՝ ուղղված զինված հարձակումից պաշտպանությանը նրա բոլոր ոլորտների պատեհաժամ և լրիվ պատրաստության համակողմանի ապահովմանը:

Պաշտպանությանը պետության և նրա ԶՈՒ-ի պատրաստումը կատարվում է նախ պետության կենսագործունեության բոլոր ոլորտներում (ոչ թե միայն ռազմական): Երկրորդ. դա արվում է մշտապես՝ խաղաղ ժամանակ, սպառնալից շրջանում և նույնիսկ ռազմական գործողությունների ընթացքում: Ընդսմին առավել դինամիկ կերպով այն կատարվում է ռազմական վտանգի աճման, հակառակորդի անճանաչման, կոնկրետ ուղղություններից կոնկրետ ռազմական սպառնալիքների ի հայտ գալու պահից սկսած:

Այսպիսով՝ պաշտպանությանը պետության և նրա ԶՈՒ-ի պատրաստման նպատակն այն է, որ անմիջական սպառնալիքի ի հայտ գալու պահին ապահովված լինեն հակառակորդ պետությունների համեմատությամբ իր պետության ավելի շահավետ դիրքը, նյութական և հոգևոր ոլորտներում ուժերի հարաբերակցության ձեռք բերված ընդունելի մակարդակը (կողմերի համախումբ հզորությունների (ներուժների) հարաբերակցությունը) կամ այնպիսի գերակշռությունը, որը խելացի օգտագործելու դեպքում ապահովեր պատերազմի կանխումը կամ այդ պատերազմում հաղթանակը:

Հետևաբար, պաշտպանությանը պետության պատրաստումն ընդգրկում է ԶՈՒ-ն (խաղաղ ժամանակ՝ նաև մյուս զորքերը[**]), բնակչությունը, տարածքը,

---

[*] Տպագրվել է 2009 թ. «Պետության պատրաստում պաշտպանությանը» թեմայով հմ. 3-ում:

[1] «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան պաշտպանություն ասելով պետք է հասկանալ «ռազմական անվտանգության համակարգը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ» (տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, հոդված 3, կետ 1 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38877)):

[**] Թեև բոլոր քաղաքական-իրավական փաստաթղթերում (ՀՀ Սահմանադրություն, համապատասխան օրենքներ, «Ռազմական դոկտրին») կիրառվում է «այլ զորքերը» տերմինը, մենք, հիմնվելով հայերենի քերականական նորմերի (*այլ*-ը թույլ չի տալիս որոշյալ հոդի կիրառում) և ռուսերենից *другие войска* (ոչ թե՝ *иные*) ճշգրիտ թարգմանության վրա, սույն հոդվածում գործածել ենք «մյուս զորքերը» տերմինը: *–Խմբ.:*

տնտեսությունը, ինչպես նաև տրանսպորտի և կապի, քաղաքական-դիվանագիտական, իրավական, տեղեկատվահոգեբանական, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության և այլ ոլորտներ:

ՀՀ ռազմական անվտանգության համակարգի* (ՌԱՀ) խնդիրները կարող են կառուցավորված լինել ըստ երեք հիմնական ուղղությունների՝ ՀՀ անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքների չեզոքացում, խաղաղ ժամանակի ոչ ուժային (տեղեկատվահոգեբանական, ռազմաքաղաքական, կազմակերպական և այլն) և ուժային օպերացիաների ու գործողությունների իրականացում, ռազմական ուժի կիրառում:

**ՀՀ անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքների չեզոքացումը** ապահովվում է.

–ռազմաքաղաքական իրադրության սպառնալից զարգացման և ՀՀ-ի վրա զինված հարձակման նախապատրաստման պատեհաժամ հայտնաբերմամբ,

–ԶՈՒ-ի և մյուս զորքերի կազմի, վիճակի, մարտական ու զորահավաքային պատրաստության, նրանց գործունեությունն ու կիրառումն ապահովող ուժերի և միջոցների պատրաստման, ինչպես նաև կառավարման համակարգերի պահպանմամբ այնպիսի մակարդակում, որով երաշխավորված լիներ հակառակորդին ցանկացած պայմաններում տրված վնասի պատճառումը,

–ԶՈՒ-ի մարտական ներուժի պահպանմամբ այնպիսի մակարդակում, որ երաշխավորված լինեն հնարավոր հարձակման կասեցումը և հետմղումը,

–օպերատիվ ծավալմանը ԶՈՒ-ի պատրաստության պահպանմամբ:

**Խաղաղ ժամանակի ոչ ուժային և ուժային օպերացիաների ու գործողությունների իրականացումը** ենթադրում է.

–ստանձնած պարտավորությունների կատարում՝ ըստ ազգային անվտանգության ոլորտում միջազգային պայմանագրերի, մասնակցություն խաղաղապահական օպերացիաներին,

–զորքերի մասնակի կամ լրիվ օպերատիվ ծավալում և կիրառմանը պատրաստության պահպանում,

–տարածքային և հակաօդային պաշտպանության միացյալ համակարգի կազմակերպում,

–բոլոր տեսակների տեղեկատվական և հոգեբանական պայքարի կազմակերպում և վարում:

**Ռազմական ուժի կիրառում:** Պաշտպանության ժամանակակից պլանավորումը, հիմնված լինելով պետության ռեսուրսների և հնարավորությունների իրատեսական գնահատման վրա, ելնում է այն մեկնակետից, որ ԶՈՒ-ն, ինչպես

* «Ռազմական անվտանգության համակարգը Հայաստանի Հանրապետության պետական լիազորված մարմինների ու պաշտոնատար անձանց, Զինված ուժերի և ռազմարդյունաբերական համալիրի, ռազմական անվտանգության խնդիրների լուծման համար նախատեսված հաստատությունների և կազմակերպությունների ամբողջությունն է: Այն իրականացնում է ռազմական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված համալիր գործունեություն, որը ներառում է՝

1) Զինված ուժերը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունը և տնտեսությունը պաշտպանության նախապատրաստող քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցներ ու միջոցառումներ,

2) ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառում» («Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», էջ 42):

նաև մյուս զորքերը, պետք է պատրաստ լինի հարձակումը հետ մղելու և հակառակորդին պարտություն մատնելու, պատերազմների ու զինված հակամարտությունների սանձազերծման և վարման ցանկացած տարբերակի դեպքում հակառակորդի կողմից խոցման ժամանակակից մարտական միջոցների զանգվածային կիրառման պայմաններում իրականացնելու ակտիվ գործողություններ (ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական):

Պաշտպանությանը պատրաստման հանգուցակետում **Զինված ուժերն** են: ԶՈՒ-ն ՌԱՀ-ի հիմքը կազմող ռազմական կառույց է, որն ապահովում է ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և անվտանգության զինված պաշտպանությունը[2]:

ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումներում կարելի է առանձնացնել ԶՈՒ-ի զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները՝ խաղաղ և պատերազմական շրջաններում համապատասխան առանձնահատկությունների հաշվառմամբ[*]:

*1. ԶՈՒ-ի և մյուս զորքերի բաղադրատարրերի կառուցվածքի, կազմի և թվաքանակի համապատասխանեցում ռազմական անվտանգության ապահովման խնդիրներին՝ պետության տնտեսական հնարավորությունների հաշվառմամբ:*

Անձնակազմի, սպառազինության և ռազմական տեխնիկայի օպտիմալ քանակը պետք է սահմանվի հետևյալ խնդիրները լուծելուց հետո.

–ռազմաքաղաքական իրադրության գնահատում, Հայաստանի համար հնարավոր ռազմական սպառնալիքների վերլուծություն և հավանական հակառակորդների զորքերի վիճակի գնահատում,

–ռազմական սպառնալիքները ոչ ռազմական մեթոդներով չեզոքացնելու հնարավորություն,

–հավանական հակառակորդի հնարավոր զինված հարձակման հետմղման համար ՀՀ ԶՈՒ-ի և մյուս զորքերի խնդիրների սահմանում:

Դրանից հետո միայն կարելի է ձևակերպել, որոշել և առաջադրել ռազմավարական խնդիրներ, ՀՀ ԶՈՒ-ի համար ստանդարտներ, քանակական ու որակական բնութագրեր և կազմը:

*2. ՀՀ ԶՈՒ-ի շինարարության, զարգացման և կիրառման նորմատիվ իրավական հիմքի, ինչպես նաև հասարակության հետ նրանց հարաբերությունների համակարգի կատարելագործում:*

Իրավական ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքում ձևավորվել է ԶՈՒ-ի զարգացման իրավական հիմքը, մասնավորապես, ընդունվել են մի շարք օրենքներ և այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնք կարգավորում են ԶՈՒ-ի հետ առնչվող պետական մարմինների միջև հարաբերությունները: Ռազմական ոլորտի հիմնարար փաստաթղթերն են՝ ՀՀ Սահմանադրությունը,

[2] Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 79:

[*] ՀՀ ԶՈՒ-ի զարգացման ուղղությունները հոդվածում քննարկվում են սխեմատիկորեն, քանի որ դրանք, ընդհանուր առմամբ լինելով բազմաառումային համալիր, պահանջում են հատուկ հետազոտություն:

«Պաշտպանության մասին»[3], «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»[4], «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին»[5], «Զինվորական ծառայություն անցնելու մասին»[6], «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին»[7], «Զինապարտության մասին»[8], «Այլընտրանքային ծառայության մասին»[9] ՀՀ օրենքները, պաշտպանության բնագավառում ՀՀ կնքած միջազգային պայմանագրերը, միջգերատեսչական հանձնաժողովների մշակած «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»[10] և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», ինչպես նաև ՀՀ Կառավարության հաստատած գերատեսչական ռազմավարությունները:

Ռազմական ոլորտի նորմատիվ իրավական հիմքերի, մասնավորապես, զինվորական կանոնադրությունների կատարելագործումը կատարվում է իրավական պետության զարգացմանը զուգընթաց: Անհրաժեշտ է շարունակել աշխատանքը օրենսդրական ակտերի փոխհամաձայնեցվածության, համակարգայնության և ՀՀ Սահմանադրությանը դրանց համապատասխանության մեծացման ուղղությամբ, նվազագույնի հասցնել օրենքների դեկլարատիվությունը, ինչպես նաև հստակեցնել դրանց գործնական կիրառման ռեալ մեխանիզմները:

*3. ՀՀ ԶՈՒ-ի և մյուս զորքերի կիրառման միասնականության, ՀՀ անվտանգության և պաշտպանության ռեալ պահանջմունքներին դրանց խնդիրների ծավալի ու բովանդակության համապատասխանեցման, ԶՈՒ-ին Սահմանադրությամբ չնախատեսված գործառույթների և խնդիրների հանձնարարման բացառման սկզբունքներով ռազմավարական պլանավորման կատարելագործում:*

Անհրաժեշտ է սահմանել պետության պաշտպանական անվտանգության հիմնական սկզբունքները, ռազմական շինարարության բնույթը և ուղղվածությունը, հնարավոր ռազմական հակամարտություններում ռազմավարական խնդիրների լուծման վերաբերյալ ԶՈՒ-ին և մյուս զորքերին ներկայացվող հիմնական պահանջները:

*4. ՀՀ ԶՈՒ-ի և մյուս զորքերի ռազմատեխնիկական ապահովման համակարգի կատարելագործում՝ արդյունավետության ապահովման, այն է՝ ֆինանսական միջոցների և նյութական ռեսուրսների կենտրոնացման և ռացիոնալ օգտագործման հիմքի վրա:*

---

[3] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38877):

[4] Տես նույն տեղում, էջ 698:

[5] Տես նույն տեղում, էջ 851:

[6] Տես «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 26, էջ 3:

[7] Տես «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=23503):

[8] Տես «Հայաստանի Հանրապետությունում 1995-1999 թթ. գործող օրենքների ժողովածու», հ. 2, էջ 680:

[9] Տես «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», 2004 թ., հմ. 6, էջ 3:

[10] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», նաև՝ «ՀԲ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում: Ե., 2007:

*5. ԶՈՒ-ում օրինականության, իրավակարգի և զինվորական կարգապահության ամրապնդում:*

*6. Զինվորական ծառայության հեղինակության ամրապնդման, ծառայությանը ՀՀ քաղաքացիների պատրաստման ուղղությամբ պետական քաղաքականության իրականացում:*

*7. Կադրերի պատրաստման, ռազմական կրթության, զինծառայողների օպերատիվ ու մարտական պատրաստման և դաստիարակության, բոլոր տեսակի ապահովումների համակարգերի գործունեության արդյունավետության մեծացում, ինչպես նաև ռազմագիտական քաղաքրիչի ստեղծում, դրանց միավորում ուսուցման և դաստիարակության մեկ միասնական համակարգի ջնով:*

*8. Պայմանագրային և զորակոչային հիմունքներով ԶՈՒ-ի համալրման համակարգի կատարելագործում:*

*9. Սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման ու նորոգման համակարգի արդյունավետության մեծացում:*

*10. ՀՀ ԶՈՒ-ի հատուկ տեղեկատվական և քարոզչահոգեբանական ապահովման համակարգի կատարելագործում:*

*11. Միջազգային ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատնտեսական համագործակցության զարգացում:*

Ընդսմին ԶՈՒ-ն պետք է կարողանա՝

**խաղաղ ժամանակ** առանց լրացուցիչ զորահավաքային միջոցառումների պահպանել մարտական պատրաստության մակարդակը, ցանկացած տեսակի զինված հակամարտությունում հաջողությամբ կատարել խնդիրները, ինչպես նաև բազմազգ ուժերի կազմում իրականացնել խաղաղարարական գործողություններ,

**ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության սրման դեպքում.** ապահովել զորքերի օպերատիվ ծավալումը և կանխել իրադրության սրումը,

**պատերազմի ժամանակ** առկա ուժերով հետ մղել հակառակորդի հարձակումը, իսկ լիամասշտաբ օպերատիվ ծավալումից հետո լուծել հակառակորդի վերջնական ջախջախման խնդիրները, զինված հարձակման կոլեկտիվ հետմղման դեպքում ապահովել փոխգործունակությունը դաշնակցային զորքերի հետ:

ԶՈՒ-ն բոլոր պարամետրերով՝ համալրում, քանակական կազմ, կազմակերպվածք, սպառազինություն, կառավարում, ռազմական արվեստի մակարդակ, պետք է համապատասխանեն կոնկրետ պատմական շրջանի պահանջներին: ՀՀ ԶՈՒ-ի շինարարության ուղենիշն է «պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովումը, որն անհրաժեշտ է հետ մղելու որևէ ագրեսիա՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը, պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով»[11]:

Անշուշտ, դրան հասնելը շատ բարդ գործ է, հատկապես այն քաղաքական, տնտեսական, աշխարհառազմավարական և ռազմական-ռազմավարական պայմաններում, որոնցում հայտնվել է մեր պետությունը:

[11] «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 70:

Այս տեսանկյունից որպես արդի ռազմական շինարարության հիմնադրույթներ պետք է դիտել՝

– տարածաշրջանում ուժերի հաշվեկշռի պահպանմանը միտված միջազգային հարաբերությունների կառուցումը գործընկերության հիմքի վրա՝ տարածաշրջանում գործող այն բոլոր ուժերի հետ արդյունավետ փոխհարաբերությունների զարգացմամբ, որոնց շահերը չեն հակասում ՀՀ ազգային շահերին,

– ներգրավվածությունը տարածաշրջանային և համաշխարհային ինտեգրման գործընթացներում, քանի որ ՀՀ-ն իրեն դիտում է որպես այն բոլոր դրական տարածաշրջանային ու միջազգային գործընթացների լիիրավ մասնակից, որոնք համահունչ են Հայաստանի հռչակած նպատակներին,

– հավատարմությունը վեճերի խաղաղ լուծման սկզբունքին՝ զինված հարձակման սպառնալիքի առկայության դեպքում այդ սպառնալիքի չեզոքացմանն ուղղված ռազմական գործողություններ վարելու, ներառյալ՝ համապատասխան գործողությունների համար դաշնակիցներին ու գործընկերներին դիմելու իրավունքի վերապահմամբ,

– ռազմական քաղաքականության համապատասխանությունը պետության պաշտպանական և աշխարհաքաղաքական երկարաժամկետ նպատակներին, ինչպես նաև աշխարհում, տարածաշրջանում ու պետությունում տիրող կոնկրետ ռազմաքաղաքական իրավիճակին,

– ռազմաքաղաքական խնդիրների լուծման համար քաղաքական-դիվանագիտական, տնտեսական ու ռազմական միջոցների համադասված օգտագործումը,

– հավանական հակառակորդների ռազմական համակարգերում թույլ ու խոցելի տեղերի, ինչպես նաև նրանց փոխհարաբերություններում հակասությունների հայտնաբերումը և օգտագործումը,

– ռազմաքաղաքական և ռազմավարական խնդիրների լուծումը նվազագույն բարոյաքաղաքական և նյութական ծախքերով,

– առավելագույն թվով դաշնակիցների ձեռքբերումը և պաշտպանողական ու հարձակողական բնույթի խնդիրների լուծման համար նրանց համատեղ ջանքերի միասնականության ապահովումը,

– հավանական հակառակորդների հետևողական մեկուսացումը և թուլացումը,

– զինվորական գործունեության օրենսդրական-իրավական ապահովումը,

– ներբանակային հարաբերություններում օրինականության և մարդասիրության ապահովումը:

Դրանք պայմանավորված են, մի կողմից, ժամանակակից պատերազմների բնույթով և ՀՀ-ի համար հնարավոր պատերազմի վերաբերյալ կանխատեսումներով, մյուս կողմից՝ երկրում ստեղծված իրավիճակով, ժողովրդավարացման գործընթացներով և մակարդակով, ռազմական գործում մարդկային գործոնի դերի մեծացմամբ և այլ հանգամանքներով:

Նշված սկզբունքները ռազմական շինարարությունը դարձնում են կարևորագույն պետական խնդիր, որի լուծմանը մասնակցում են պետական կառավարման բոլոր մարմինները ու պաշտոնատար անձինք:

# ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ

## ՀՀ ԶՈՒ-Ի ՍՏԵՂԾՈՒՄ ՈՒ ԿԱՅԱՑՈՒՄ



Հատուկ գնդի մարտիկները զինվորական երդման արարողության ժամանակ.
Երևան, 1990 թ. հոկտեմբերի 5



ՀՀ առաջին համազորային զորահանդեսը. կենտրոնում՝
ՀՀ Պաշտպանության նախարար, Արցախի հերոս (2000 թ.) Սերժ Սարգսյան
և ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ
գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանց
Երևան, 1994 թ. սեպտեմբերի 21



ՀՀ Պաշտպանության առաջին նախարար, ՀՀ Ազգային հերոս (1999 թ., հետմահու),
Արցախի հերոս (1998 թ.) Վազգեն Սարգսյանը
և Արցախի հերոս (2000 թ., հետմահու) գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը



Հայ ազատամարտիկները Հայաստանի արևելյան սահմանում.
կենտրոնում՝ ՀՀ Ազգային հերոս (1996 թ., հետմահու),
Արցախի հերոս (1999 թ., հետմահու) Մոնթե Մելքոնյան (Ավո)



Վիրավորներին տարահանելիս.
ձախից՝ Արցախի հերոս (1999 թ.) Սեյրան Օհանյան
(ներկայումս՝ ՀՀ Պաշտպանության նախարար)



Հայ կանայք ռազմի դաշտում



Դրվագ հայ-ռուսական համատեղ զորավարժություններից.
Հայաստան, 2003 թ.



Դրվագ ՀԱՊԿ-ի շրջանակներում կայացած «Ռուբեժ-2008»
հրամանատարաշտաբային համատեղ զորավարժությունից.
Հայաստան, 2008 թ. օգոստոս



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի
և ԱՄՆ-ի Պաշտպանության քարտուղար Լեոն Պանետայի հանդիպումը.
Վաշինգտոն, 2012 թ. մարտի 26



ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի այցը
ՀՀ ԶՈՒ-ի 12-րդ խաղաղապահ բրիգադի ստորաբաժանում.
Աֆղանստան, Ղունդուզ, 2010 թ. հուլիսի 24



Դրվագ Հայաստանի Հանրապետության 20-ամյակին նվիրված զորահանդեսից.
հայկական «Կռունկ» անօդաչու թռչող ապարատ.
Երևան, 2011 թ. սեպտեմբերի 21



Դրվագ Հայաստանի Հանրապետության 20-ամյակին նվիրված զորահանդեսից.
Ս-300 զենիթահրթիռային համալիր.
Երևան, 2011 թ. սեպտեմբերի 21

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄՏԱՎՈՐ ՆԵՐՈՒԺԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ-ում ռազմավարական հետազոտություններով զբաղվող առաջին պետական կառույցի՝ ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի մասնաշենքի հանդիսավոր բացման արարողությունը.
կենտրոնում՝ ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյան,
ԱՌՀԻ-ի պետ, քաղաքական գիտությունների դոկտոր, գեներալ-մայոր Հայկ Քոթանջյան

Երևան, 2007 թ. հունվարի 25







ՀՀ-ում առաջին ռազմագիտական պարբերականի՝
«Հայկական բանակ» հանդեսի (1995 թ.) և դրա հավելված՝
ռազմավարական հետազոտությունների արդյունքների հրապարակման առաջին պարբերականի՝ «Աշխատանքային տետրեր» գիտակիրառական-վերլուծական հանդեսի (2007 թ.) առաջին համարների շապիկները



ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի քարտուղարությամբ Միջգերատեսչական հանձնաժողովի մշակած՝
Հայաստանի պետականության պատմության մեջ առաջին Ազգային անվտանգության
ռազմավարության նախագծի քննարկումը ՀՀ ԳԱԱ Նախագահության
ընդլայնված նիստում (աջից՝ ձախ. ԱԳՆ փոխնախարար Արման Կիրակոսյան,
ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյան, ՀՀ Պաշտպանության նախարար,
նախագծի մշակման հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյան
և գիտական ղեկավար Հայկ Քոթանջյան)

Երևան, ՀՀ ԳԱԱ, 2006 թ. դեկտեմբեր



ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Քաղաքական ինստիտուտներ ու գործընթացներ» մասնագիտությամբ՝
Հայաստանի պաշտպանական համակարգում առաջին ասպիրանտուրայի
և դոկտորական աստիճանների շնորհման «Քաղաքական գիտություններ
և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի ստեղծումը
ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի
և ՀՀ Կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի մասնակցությամբ

Երևան, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2010 թ. փետրվարի 15

### Պետության պաշտպանության և ԶՈՒ-ի կազմակերպման հիմքերը

ՀՀ պաշտպանության կազմակերպման հիմնական ելակետային պարամետրերը տրվում են Սահմանադրության մեջ, միջազգային իրավական փաստաթղթերում, օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում ու քաղաքական անվտանգային փաստաթղթերում: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել ռազմական վտանգի զարգացման դինամիկան, ապագա պատերազմի բնույթը, ինչպես նաև պաշտպանությանը պետության և նրա ԶՈՒ-ի պատրաստման վրա ազդող գործոնների համախումբը:

Պաշտպանությանը պետության և նրա ԶՈՒ-ի պատրաստումը կատարվում է *ինչպես համապետական մակարդակով*, այնպես էլ *ԶՈՒ-ի ու մյուս զորքերի, ինչպես նաև ՌԱՀ-ի այլ մարրերի* կողմից՝ ըստ փոխհամաձայնեցված պլանների:

Պաշտպանությանը պատրաստման ամբողջ գործընթացը կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի[12]:

**Առաջին փուլն** իրականացվում է խաղաղ ժամանակ՝ պետության ամենօրյա գործունեության ընթացքում: Որպես կանոն, այն ավարտվում է նախքան սպառնալից շրջանի սկիզբը:

Առաջին փուլին բնորոշ առանձնահատկությունն է երկու բաղադրիչների առկայությունը: Առաջին բաղադրիչը կապված է ռազմական շինարարության միջոցառումների կատարման հետ: Այդ միջոցառումների բովանդակությունն ու ծավալը պայմանավորվում են ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության զարգացման դինամիկայով, մշտական ռազմական վտանգի առկայությամբ, ինչը առաջ է բերում պետության ուժային բաղադրամասի անընդմեջ զարգացման անհրաժեշտություն:

Ռազմական շինարարության միջոցառումներին զուգընթաց իրագործվում են փոխպայմանավորված այլ միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են պետության քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, իրավական, բարոյահոգեբանական և այլ ներուժի մեծացմանը և կազմում են պաշտպանությանը պետության պատրաստման երկրորդ բաղադրիչը:

Միջոցառումների այդ խմբի ծավալն ու բովանդակությունը կախված են ինչպես միջազգային ու ներքին իրադրության զարգացման վեկտորի ուղղությունից, այնպես էլ պետության տնտեսական և սոցիալական զարգացման պլաններից ու ծրագրերից:

Ռազմական վտանգի աղբյուրի անձնավորման սկզբից ներ ճշգրտվում են առաջին փուլի միջոցառումները, հակառակորդի անսպասելի հարձակումը կանխելու կամ հետ մղելու համար պայմաններ ստեղծելու նպատակով պետության պաշտպանական կարողությունները կկենտրոնացվեն առավել սպառնալից ուղղություններում:

Իրադրության նման զարգացումը կարող է նշանակել անցում պաշտպանությանը պետության և նրա ԶՈՒ-ի պատրաստման **երկրորդ (անմիջական) փուլին**:

[12] Տես *Ю. А. Мощенко.* Подготовка страны и Вооруженных сил к обороне (лекция). М., ВА ГШ, 2007:

Երկրորդ փուլի միջոցառումների բովանդակությունը, ծավալն ու ժամկետները կախված են սպառնալից շրջանի տևողությունից: Սպառնալից շրջան չլինելու կամ դրա ծայրահեղ կարճատևության դեպքում (ինչը ներկայումս առավել հավանական է) պաշտպանությանը պետության և նրա ԶՈՒ-ի պատրաստման ամբողջ գործընթացը անցկացվում է մեկ փուլով: Առավել հավանական է, որ պատերազմի սանձազերծման նման անբարենպաստ պայմաններում հարկ կլինի որոշ միջոցառումներ ավարտել ռազմական գործողությունների ընթացքում:

Այսպիսով՝ պաշտպանությանը պատրաստման հիմնական փուլը առաջին՝ պատեհաժամ, փուլն է, որի ընթացքում անհրաժեշտ է պլանավորել և իրականացնել այն բոլոր կարևոր միջոցառումները, որոնք նախատեսվում են ՀՀ համապատասխան օրենքներով, այլ իրավական ակտերով, «Ազգային անվտանգության ռազմավարությունով» և «Ռազմական դոկտրինով», ԶՈՒ-ի պլանային փաստաթղթերով, գերատեսչական ռազմավարություններով և այդ բնագավառի այլ փաստաթղթերով:

Տվյալ փուլում իրագործվում են նաև պլանային հետախուզական միջոցառումները, կատարվում են շրջանների ռազմաաշխարհագրական նկարագրության ճշգրտում, հնարավոր ռազմական գործողությունների, ուղղությունների, գոտիների որոշում, ստեղծվում են զորքերի և ուժերի անհրաժեշտ խմբավորումներ, կատարվում է ԶՈՒ-ի ռազմավարական կիրառման պլանավորման պարբերական ճշգրտում, մշակվում են առաջին ռազմական գործողությունները, կազմակերպվում է զորքերի (ուժերի) և շտաբների օպերատիվ, մարտական, զորահավաքային ու բարոյահոգեբանական նպատակաուղղված պատրաստում, վերջնամշակվում են զորքերի և ուժերի խմբավորումների կիրառման ձևերն ու եղանակները, լուծվում են դրանց փոխգործության խնդիրները, կատարելագործվում են դրանց կառավարման և համակողմանի ապահովման համակարգերը, կազմակերպվում են նպատակային գիտական հետազոտություններ և այլն:

Անմիջական փուլի հիմնական բովանդակությունը սկսված միջոցառումների կոնկրետացումն ու ավարտումն է: Այս փուլում համապետական գործունեության գլխավոր ուղղություններն են՝ հետախուզության արդյունավետության մեծացումը, պատերազմի պլանի և պատերազմում պետության ՌԱՀ-ի փուլային նպատակների ու գործողությունների ճշգրտումը, ԶՈՒ-ի և տնտեսության մոբիլիզացիոն ծավալումը, այդ թվում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կազմակերպում ըստ ռազմական դրության աշխատակարգի, ԶՈՒ-ի և մյուս զորքերի փոխադրումը ռազմական ժամանակի կազմակերպվածքի ու կազմի, ինչպես նաև այլ միջոցառումներ՝ ըստ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքների, ռազմական գործողությունների սանձազերծման դեպքում մարդկային և նյութական կորուստների նվազեցմանն ուղղված միջոցառումների, պետության ենթակառուցվածքների (առաջին հերթին՝ ենթադրվող հակամարտության շրջաններում) պատրաստման տեմպերի արագացումը, ռազմական կառավարման մարմինների ստեղծումը (այդ թվում՝ Նախագահի կողմից պատերազմի ժամանակ ԶՈՒ-ի Գլխավոր հրամանատարի հնարավոր նշանակումը), պաշտպանությանը պետության պատրաստումը կազմակերպված կերպով և պատեհաժամորեն

ավարտելու համար բոլոր պետական մարմինների ջանքերի համադասումը, հնարավոր հակամարտության կանխման (տեղայնացման), տարածաշրջանում խաղաղության և անվտանգության պահպանման կամ վերականգնման ուղղությամբ ջանքերի ակտիվացումը, ռազմական և այլ օգնության տրամադրման վերաբերյալ միջազգային դաշնակցային պարտավորությունների կատարումը, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և այլ տեսակի հակազդեցության ուժգնացումը, իսկ հարձակման դեպքում՝ զինված պայքարի ծավալումը:

Զինված հարձակմանը հետմղմանը **ԶՈՒ-ի անմիջական պատրաստման** հիմնական ուղղություններն են՝ պատերազմի առավել հավանական սցենարների, ռազմարշավների հաջորդականության մշակումը, առաջին օպերացիաների (մարտական գործողությունների) վերաբերյալ որոշումների ճշգրտումը, հակառակորդի կողմից պատրաստվող հարձակման մտահղացման պատեհաժամ բացահայտման ապահովումը, ռազմավարական ծավալման (մասնակի կամ լրիվ) իրականացումը, մասնակցությունը հնարավոր ռազմական հարձակման կանխմանն ուղղված պետական միջոցառումներին, պատերազմական ժամանակի համար զորքերի կառավարման և ապահովման համակարգերի ծավալումը:

## Տարածքային պաշտպանությունը որպես ՀՀ ՌԱՀ-ի կարևոր պակասող բաղկացուցիչ

Քանի որ չի բացառվում ռազմաճակատի ոչ մեծ հատվածում հակառակորդի կողմից ռազմավարական պաշտպանության հանկարծակի ճեղքման ու հետագա առաջխաղացման, դեսանտային (աերոմոբիլային) ուժերի իջեցման և չպաշտպանված ռազմավարական կետերի ու օբյեկտների գրավման, ինչպես նաև կապի համակարգերը շարքից հանելու հնարավորությունը, ապա ՀՀ-ում, Իսրայելի, Դանիայի, Սիրիայի և որոշ այլ պետությունների օրինակով, անհրաժեշտ է մշակել և ներդրել տարածքային պաշտպանության համակարգ:

Տարածքային պաշտպանությունը (ՏՊ) խնդիրներով ու կատարման եղանակներով համաձայնեցված ու փոխկապված այն պետական միջոցառումների համախումբն է, որոնք իրականացվում են պետական սահմանի հատվածների, կարևոր օբյեկտների ու հաղորդակցման ուղիների, բնակչության պաշտպանության, հակառակորդի պլանավորված կամ իրականացվող հետախուզական, դեսանտազորհային և օդադեսանտային, հատուկ օպերացիաների (գործողությունների) կանխման (ճախողման), նրա դիվերսիոն և զորային խմբավորումների ջախջախման, ինչպես նաև տեղերում ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցության նպատակով: ՏՊ-ն պետք է իրականացվի տարածքային-գոտիական սկզբունքով և ներառի աշխարհազորի արագ կազմավորվող (տարածքային սկզբունքով) ստորաբաժանումներ, իսկ գլխավոր ուղղություններում՝ ռազմականացված բնակավայրեր: ՏՊ ստորաբաժանումները պետք է օժտված լինեն մարտական գործողություններն ինքնավար կերպով վարելու կարողությամբ և ունենան համապատասխան նյութատեխնիկական ապահովում, առաջին հերթին՝ թեթև զենքի և զինամթերքի անհրաժեշտ պաշարներ, ընդսմին շեշտը պետք է դրվի դյուրակիր հակաօդային և հակատանկային միջոցների վրա: Այդ ստորաբաժանումները պետք է ենթարկվեն ՏՊ տեղական (գոտիական) պետին, իսկ օպերատիվ առումով՝ այն զորամիավորման հրամա-

նատարությանը, որի պատասխանատվության գոտում է գտնվում ստորաբաժանումը: ՏՊ համակարգը պետք է պատրաստ լինի կերպափոխվելու պարտիզանական, այդ թվում՝ ցանցային, կազմակերպության:

ՏՊ-ն կազմակերպելիս նպատակահարմար է կիրառել լայն լիազորություններով օժտված աշխարհազորային կրտսեր հրամանատարական (ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական) կազմի հատուկ պատրաստման համակարգ, ինչը վերադաս հրամանատարությանը հնարավորություն կտա խնդիրն առաջադրելու ընդհանուր գծերով՝ առանց հետագա անընդհատ վերահսկողության, իսկ կրտսեր հրամանատարական կազմին՝ գործելու ընդհանուր նպատակների և խնդիրների շրջանակներում՝ պահպանելով ճկունություն և օպերատիվություն:

ՏՊ համակարգի ստեղծումը պետք է համապատասխան կերպով ամրագրվի ՀՀ պաշտպանության բնագավառի իրավական կարգավորման համակարգում:

Ամփոփելով նյութը՝ կարող ենք անել հետևյալ **եզրակացությունները**.

1. Յուրաքանչյուր պետություն պետք է նպաստի պատերազմների կանխմանը և վեճերի լուծմանը խաղաղ միջոցներով: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է պատրաստ լինել իր հիմնարար արժեքների պաշտպանությանը զինված ուժի կիրառմամբ:

2. Հայաստանի նպատակն է պաշտպանական բարեփոխումների միջոցով ստեղծել մարտունակ բանակ, որը երաշխավորված կերպով ապահովի ՀՀ և ԼՂՀ ռազմական անվտանգությունը:

3. Պաշտպանությունը պետության և նրա ԶՈՒ-ի պատրաստումը տևական և բազմակողմանի գործընթաց է, որը պահանջում է բոլոր մակարդակների պետական, այդ թվում՝ ռազմական, կառույցների, տնտեսության և հասարակության համատեղ և համակարգված աշխատանք: Այն կազմակերպվում է իրավական հիմքի վրա՝ ռազմական վտանգի զարգացման ուղղությունների և դինամիկայի, այդ վտանգի՝ ռազմական սպառնալիքի վերածման հավանականության հաշվառմամբ: Տվյալ գործընթացի էությունը պետության պաշտպանունակության ամրապնդումն է և հավանական հակառակորդի զինված հարձակման հետմղման համար օպտիմալ պայմանների ստեղծումը, այդ թվում՝ տարածքային պաշտպանության արդյունավետ համակարգի ստեղծմամբ:

4. Որպես բանակաշինության հիմնական չափանիշներ ՀՀ-ում ընդունված են հետևյալ ցուցանիշները՝ զորքերի մեծ շարժունակությունը, որը համապատասխանում է պատերազմի վարման ժամանակակից պահանջներին, անձնակազմի օպտիմալ թվաքանակը և բարձր մակարդակի արհեստավարժությունը, ինչպես նաև պատրաստված զորահավաքային ռեզերվի առկայությունը, ԶՈՒ-ի ապահովումը կառավարման, ՀՕՊ-ի, հետախուզության, կապի և գերճշգրիտ կրակային խոցման ժամանակակից համակարգերով ու միջոցներով, անձնակազմի ապահովվածությունը անհրաժեշտ ծավալով համապատասխան պաշարներով:

# НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПОДГОТОВКИ ГОСУДАРСТВА И ЕГО ВООРУЖЕНЫХ СИЛ К ОБОРОНЕ

*Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, начальник ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

Подготовка государства и его ВС к обороне представляет собой сложный, многогранный и непрерывный процесс организации и выполнения соответствующими государственными и негосударственными структурами системы скоординированных мероприятий по всестороннему обеспечению военной безопасности государства, своевременной и полной подготовке всех его сфер к защите от вооруженного нападения.

Сущность подготовки к обороне состоит в укреплении обороноспособности государства и создании оптимальных условий для отражения вооруженного нападения. В предметно-содержательном аспекте она состоит из мероприятий по военно-стратегическому, экономическому, внешне- и внутриполитическому, научно-техническому и другим направлениям подготовки Системы военной безопасности (СВБ), населения и территории государства.

Этот процесс проводится, во-первых, во всех сферах жизнедеятельности государства, а не только в военной. Во-вторых, постоянно–в мирное время, угрожаемый период и даже в ходе военных действий.

Цель подготовки государства и его ВС к обороне заключается в том, чтобы к моменту возникновения непосредственной угрозы войны достигнуть более выгодного положения своего государства по сравнению с противником, сохранить достигнутый приемлемый уровень соотношения сил в материальной и духовной сферах (соотношение совокупной мощи (потенциалов) сторон) или создать превосходство, которое при разумном его использовании обеспечило бы предотвращение войны или победу в ней.

Задачи по подготовке к обороне могут быть структурированы по трем основным направлениям: нейтрализация военных угроз; осуществление несиловых и силовых операций и действий мирного времени; применение военной силы.

Весь процесс подготовки к обороне можно разделить на два основных этапа.

Первый (заблаговременный, основной) этап проходит в мирное время–в процессе повседневной деятельности государства и, как правило, завершается с началом угрожаемого периода. Второй (непосредственный) этап подготовки к обороне совпадает с течением угрожаемого периода. При отсутствии угрожаемого периода или его крайней непродолжительности (что в современных условиях наиболее вероятно) весь процесс будет проводиться в один этап. В подобных условиях отдельные мероприятия придется завершать уже в ходе военных действий.

С учетом некоторых особенностей РА, объективно возникает задача разработки и внедрения системы территориальной обороны (по территориально-зональному принципу) в качестве компонента СВБ (по примеру Израиля, Дании, Сирии и др.) в целях защиты участков государственной границы, важных объектов и коммуникаций, населения, предотвращения (срыва) планируемых или осуществляемых противником разведывательных, десантно-штурмовых и воздушно-десантных, специальных операций (действий), разгрома (ликвидации) его диверсионных и войсковых группировок, а также участия в обеспечении поддержания правового режима военного положения на местах.

## SOME ISSUES OF THE STATE'S AND ITS ARMED FORCES' PREPARATION FOR DEFENSE

*Yu. G. KHACHATOUROV, Colonel General, Chief of the Main Staff of the RA Armed Forces*

SUMMARY

The preparation of the state and its Armed Forces for defense is a complex, multifaceted and continuous process of organization and implementation of the system of coordinated measures by corresponding state and private structures. These measures include comprehensive ensuring of the state's military security, opportune and full preparation of all its spheres for protection from an armed attack.

The essence of preparation for defense is to strengthen the state's defense capability and create optimal conditions for repulsing an armed attack. In the substan-tial aspect it consists of measures on military-strategic, economic, external and internal political, scientific-technical and other directions of preparation of the state's Military Security System (MSS), population and territory.

This process is conducted, first, in all the spheres of the state's vital activity, and not only in the military one. Second, it is conducted continually–in peace time, threat period and even in the course of military operations.

The goal of the state's and its Armed Forces' preparation for defense by the moment of emerging a direct threat of war is to attain more advantageous situation for its state compared to an opponent, keep the attained acceptable level of the correlation of forces in material and spiritual spheres (correlation of the combined power (potentials) of parties) or create superiority which would ensure war prevention or victory in it when applied reasonably.

The tasks on preparation for defense can be structured in three basic directions: neutralization of military threats; conduct of non-enforcement and enforcement operations and actions of peace time; use of military force.

The whole process of preparation for defense can be divided into two basic stages.

The first (timely, basic) stage passes in peace time – in the process of the state's day-to-day activity and, as a rule, ends with the beginning of the threat period. The second (immediate) stage of preparation for defense coincides with the course of the threat period. The whole process will be conducted in one stage in the absence of the threat period or its utter short duration (which in contemporary conditions is more probable). In the given conditions separate measures will have to be finished already in the course of military operations.

Taking into account some peculiarities of the RA, there objectively arises a task of elaborating and introducing the system of territorial defense (on the territorial-zonal principle) as a component of the MSS (by the example of Israel, Denmark, Syria, etc.) to protect sections of the state border, important objects and communications, population, to prevent (break) the intelligence, landing assault and airborne, special operations (actions) being planned or implemented by an opponent, to defeat (liquidate) his raiding and army groupings, as well as to participate in ensuring the maintenance of legal regime of the martial law at places.

# ԻՍՐԱՅԵԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈԳՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ՝ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

*Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ), ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ*



Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին երկրի հասարակական-քաղաքական որոշ շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացավ Իսրայելի Պետության նկատմամբ: Այդուհանդերձ, տարածաշրջանային թշնամական միջավայրում Իսրայելի արդյունավետ գոյության փորձի մասնագիտական ըմբռնման ու գնահատման ուղղությամբ էական քայլեր չձեռնարկվեցին, մասնավորապես՝ չհետազոտվեց բնակչության, հատկապես՝ զինվորականության բարոյահոգեբանական պատրաստման իսրայելական համակարգը: Մեր կարծիքով՝ հրեա զինվորականի դաստիարակության գործում Իսրայելի ձեռքբերումների գնահատողական վերլուծությունը առանձնակի կարևորություն է ստանում հայ զինվորականի մարտական ոգու ապահովման համակարգի բարեփոխման համատեքստում:

Փորձենք ՀՀ ազգային անվտանգության շահերի տեսանկյունից ներկայացնել հրեա զինվորականի վարքականոնի, նրա ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգային դրույթները: Հարցը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության ազգային անվտանգության ռազմավարական շահերը ոչ լիովին են համընկնում. երկու պետությունների, ինչպես նաև համաշխարհային հրեության ու հայության միջև թեև առկա են որոշակի նմանություններ, սակայն կան և էական տարբերություններ[1]: Կարևոր ենք համարում նաև շեշտել այն հան-

* Արտատպվում է 2009 թ. «Մարտական ոգի և վարպետություն» թեմայով հմ. 1–2-ից՝ լրախմբագրմամբ:

[1] Երկու պետությունների ստեղծման գործընթացի համեմատական վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել, որ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունից, Իսրայելի Պետությունը հիմնադրվել է «զրոյից»՝ արաբների թշնամական միջավայրում, հրեա բնակչություն չլինելու պայմաններում՝ հրեաների ներգաղթի (Ալիյա, 1908–1948 թթ.) միջոցով: Նրանց մեծ մասը Էրեց-Իսրայելի վերականգնման գաղափարին իրենց ամբողջ գործունեությամբ, ռազմական ու մտավոր ներուժով նվիրված «մոլեռանդ հայրենասերներ» էին: Մեր իրականությունում՝ երեք հանրապետությունների ազգային գործիչների թվում այդպիսիք էին Արամ Մանուկյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Գրիգոր Հարությունյանը, Յակով Զարոբյանը, Ալեքսանդր Թամանյանը, Մարտիրոս Սարյանը, Արտեմ Ալիխանյանը, Անդրանիկ Իոսիֆյանցը, Մոնթե Մելքոնյանը և այլոք: ՀՀ ԶՈՒ-ի բարեփոխման գործում Իսրայելի փորձի ստեղծագործական ընկալումը ենթադրում է ազգային գաղափարին նվիրված, ազնիվ, մեծ մտավոր կարողություններով օժտված, բազմակողմանի զարգացած հրամանատարական ու սպայական կազմի առկայություն:

գամանքը, որ 2008 թվականը նշանավոր էր այս երկու ժողովուրդների պատմության մեջ: Այդ տարի լրացավ հայոց պետականության՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության վերականգնման 90-ամյակը և հրեական պետականության՝ ի դեմս Իսրայելի Պետության վերականգնման 60-ամյակը: Հատկանշական է, որ այս բախտորոշ իրադարձությունները հաջորդեցին այդ երկու ժողովուրդների դեմ իրագործված ցեղասպանությանը՝ Հայոց Մեծ Եղեռնին (առաջին համաշխարհային պատերազմ) և հրեաների Ողջակիզմանը՝ Հոլոքոստին (երկրորդ համաշխարհային պատերազմ): Իսրայելի Պետության վերաստեղծման 60-ամյակին նվիրված տոնախմբությունների շրջանակներում Երևանի՝ ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ տարած «Հաղթանակի» զբոսայգում կայացավ հայ-հրեական բարեկամության ծառուղու և հրեա ժողովրդի պետականության վերականգնման հոբելյանին նվիրված հուշակոթողի բացումը: Երևանի քաղաքապետարանի և ՀՀ-ում հրեական համայնքի համագործակցությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ ՀՀ-ում Իսրայելի դեսպան Շեմի Ցուրն իր ելույթում նշեց, որ ենթադրվում է իսրայելական «Կերեն Կեյմետ Լե-Իսրայել» (*Հրեական ազգային հիմնադրամ*) կազմակերպության ու հայկական համայնքի համագործակցությամբ Իսրայելում հիմնել հայկական պետականության վերականգնման 90-ամյա հոբելյանին նվիրված ծառուղի:

Վերադառնալով սույն ուսումնասիրության խնդրո առարկա հարցին՝ նշենք, որ Իսրայելում հրեա զինվորականի ռազմահայրենասիրական դաստիարակության կարևորության աստիճանը գնահատելու համար մենք հատուկ ընտրեցինք Իսրայելի Նախագահ, ռազմական հետախուզության նախկին ղեկավար Խայիմ Հերցոգի «Իսրայելի հերոսները» գիրքը[2]:

Ինչպես հին, այնպես էլ ժամանակակից հրեաների հերոսականության օրինակները ներառող և շարունակ համալրվող պանթեոնի մշակմանը Նախագահ Խ. Հերցոգի անմիջական մասնակցությունը վկայում է, որ Իսրայելում ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետության նախագահի ուղղակի ղեկավարման ոլորտն է:

Ե՛վ ռազմական, և՛ քաղաքացիական մասնագիտություններ ունեցող հրեա հերոսների պանթեոնի համալրման շարունակականության սկզբունքը, որը համաձայնորեն որդեգրել են Իսրայելն ու իսրայելակենտրոն սփյուռքը, ծառայում է այն գաղափարին, որ հրեության հերոսականությունը մշտապես բնորոշ է եղել հրեա ժողովրդին հրեական պետականության երեքհազարամյա պատմության բոլոր շրջաններում[3]: Տվյալ մեթոդաբանության բացառիկ կարևորությունը միտված է հրեաների հերոսական վարքի լավագույն օրինակների մշտական բացահայտմանը: Դրա նպատակն է նույնիսկ միապաղաղ բանակային առօրյայում իր ժողովրդին ծառայելու ունակության տեսանկյունից յուրաքանչ-

[2] Տես *Chaim Herzog*. Heroes of Israel. Profiles of Jewish Courage. Israel, 1991: Քանի որ սույն հոդվածը հիմնականում գրված է այդ գրքի հենքի վրա, մենք այսուհետև չենք նշի դրան արվող հղումները, բացի հատուկ դեպքերից:

[3] Տես *Yael Zerubavel*. Recovered Roots. Collective Memory and the Making of Israeli National Tradition. Chicago–London, 1995: Նշենք, որ սույն հոդվածը գրելիս մենք մեծապես օգտվել ենք նաև այս գրքից, ուստի հղումներում այն ևս չենք հիշատակում:

յուր հրեայի կամ հրեուհու մեծ ինքնահարգանքի պահպանումը՝ Էրեց-Իսրայելի պաշտպանության և ամրապնդման գործում յուրաքանչյուր հրեա զինվորականի անձնական ռեսուրսի առավելագույն և ստեղծագործական ներդրմամբ: Այլ կերպ ասած՝ Նախագահ Խ. Հերցոգը, հրեա երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կատարելով իր պարտքը, հրեա



Իսրայելի խորհրդարանի անդամ Դավիդ Բեն-Գուրիոնը կարդում է Իսրայելի «Անկախության հռչակագիրը». Թել Ավիվ, 1948 թ. մայիսի 14
(http://images.google.com/hosted/life/l?imgurl=b79b01b434c81b88&q=Israel%20 Proclamation%20of%20Nationhood&prev=/images%3Fq%3DIsrael%2B Proclamation%2Bof%2BNationhood%26gbv%3D2%26hl%3Dhy)

ժողովրդի պատմությունը ներկայացնում է որպես ազգային ինքնության պահպանման շարունակական հերոսական գործընթաց՝ այն բաժանելով երեք հիմնական ժամանակագրական փուլերի.

• օտարաքնակության պայմաններում պայքարի երկու հազարամյակ,

• գրեթե 100 տարի՝ Պաղեստին ներգաղթն սկսվելուց հետո,

• Իսրայելի ազգային պետականության վերականգնման ու պաշտպանության 60-ամյա շրջան:

Տվյալ առաքելությունը կատարում է տարածքով ու բնակչությամբ ոչ մեծ, սակայն իր քաղաքական, տնտեսական ու ռազմական հաղթանակների շնորհիվ համաշխարհային աշխարհաքաղաքական կենտրոններից մեկի դերն ստանձնած ու Մերձավոր Արևելքում առանցքային նշանակություն ձեռք բերած պետության նախագահը: Ակնհայտ է, որ նման ոչ սովորական պետության ղեկա-

վարը, ներգրավված լինելով Իսրայելի և սփյուռքի ազգային ռեսուրսի շարունակական նորարարական փոխզարգացման միջոցով անվտանգության ապահովման դինամիկ գործընթացում, լինելով հույժ զբաղված գործիչ, ցուցադրաբար է ժամանակ հատկացնում հրեության հերոսներին նվիրված գիրք գրելուն: Խոսքն այն մասին է, որ երկրի նախագահը ցուցադրում է հրեա ժողովրդի գոյատևման և առաջադիմական զարգացման գործում համաշխարհային հրեության գլխավոր համազգային գերակայություններից մեկը՝ թելադրված Իսրայելի կենսականորեն կարևոր շահերի բոլոր ոլորտներում և, առաջին հերթին, ռազմական անվտանգության ոլորտում հրեաների ամենօրյա ու զանգվածային հերոսականության անհրաժեշտությամբ:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու այն տրամաբանությունը, որով ղեկավարվել է Իսրայելի նախագահը հրեա ժողովրդի հերոսների անընդհատ համալրվող պանթեոնի կառուցվածքի և բովանդակության մշակման համար՝ այդ պանթեոնը դիտելով որպես հրեա և հրեուհի զինվորականների մարտական ոգու ձևավորման համակարգի հիմք*:

### 1. Հին ժամանակների հրեա հերոսների կանոնացումը ժամանակակից հրեա զինվորականի մարտական ոգու դաստիարակության համակարգում

Հրեա հերոսների պանթեոնում առանձնահատուկ տեղ է հատկացվում ուժով ու թվաքանակով գերազանցող փղշտացիներին ծնկի բերած *Դավիթ*՝ որպես հերոս թագավորի (մ. թ. ա. 11–10-րդ դարեր) կերպարին: Մարտը, որում Դավիթը քարի դիպուկ հարվածով տապալեց Գողիաթին, ապա սրով գլխատեց նրան, հիմնարար կերպով խորհրդանշում է հրեաների ռազմական պատմությունը, այն է՝ հրեա զինվորի հավատը, հնարամտությունը, արագաշարժությունն ու խիզախությունը ավելի զորեղ եղան, քան հսկա փղշտացու ֆիզիկական ուժը: Դա այն փաստի արտացոլումն է, որ Իսրայելի բանակը թեև միշտ եղել է հակառակորդի զորքերից սակավաթիվ ու թույլ, սակայն հաղթել է, քանի որ չի ընդունել խաղի՝ թշնամու թելադրած կանոնները:

Իսրայելի պատմության պաշտոնական մեկնաբանությունը նպատակաուղղված է հրեաների համախմբմանն այն գաղափարի շուրջ, որ մ. թ. ա. 2-րդ դարից՝ Մակաբեների ապստամբության ժամանակներից, գործում է մի բարոյական օրենք, ըստ որի՝ ամբողջ հրեա ժողովուրդը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հրեայի անվտանգության համար, որտեղ էլ նա լինի: Հրեա զինվորին ոգեշնչող հերոսների շարքում կարևոր տեղ ունի *Հուդա Մակաբեն* («Մուրճ»), մի գեղջուկ, որը դարձավ քաջարի զինվոր, ապա՝ տաղանդավոր զորավար և ժողովրդին երկրի անկախության համար պայքարի ոգեշնչող առաջնորդ: Միևնույն ժամանակ, իսրայելական հայրենասիրական դաստիարակության համակարգում Հուդա Մակաբեն ներկայացվում է որպես մի զինվոր, որը, հասունության տարիքում դառնալով քաղաքական գործիչ ու դիվանագետ,

* Հեղինակը շնորհակալություն է հայտնում «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի պատասխանատու քարտուղար լեյտենանտ Ա. Շահվերդյանին՝ լրացուցիչ աղբյուրների ցանկի ճշտման գործում ցուցաբերած օգնության համար:



Իսրայելի Պաշտպանության բանակի զինծառայողները պարբերաբար արշավում են դեպի այն բլուրը, որի գագաթին է եղել Մասադա փառապանծ ամրոցը (արտատպվում է Յ. Ձերուբավելի հիշատակված գրքից)

ամրապնդում էր պետականության՝ որպես հրեության բարձրագույն արժեքի առաջնայնության ճանաչման հրեական ավանդույթը և ձգտում էր հրեական պետությունը դարձնելու միջազգային հանրության և ուժերի հաշվեկշռի համակարգի մաս: Իսրայելի պաշտոնական պատմության մեջ և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում Հուդա Մակաբեի կերպարն օգտագործվում է որպես այնպիսի հերոսի կերպար, որը հրեաների սրտերում սերմանեց անսասան հավատ դեպի ազատության անմար իդեալը ու պատրաստակամություն՝ կյանքն ի փառս Իսրայելի անկախության զոհաբերելու:

*Բար-Կոխբան*, թշնամիների դեմ պայքարում այդ վճռական ու դաժան բռնապետ-առաջնորդը, միավորեց հրեաներին ու գլխավորեց 115–117 թթ. նրանց ապստամբությունը հռոմեացիների դեմ: Նրա կերպարը քարոզվում է որպես հրեա ժողովրդի հերոսական տոկունության, անպարտելի Հռոմեական կայսրության դեմ փոքր ժողովրդին ոտքի հանելու համարձակություն ունեցող առաջնորդի խորհրդանիշ: Հրեա զինվորի մարտական ոգու ամրապնդման համար ակտիվորեն օգտագործվում է Բար-Կոխբայի ապստամբական բանակից վերցված այն օրինակը, որ դրան զինվորագրվելու յուրաքանչյուր թեկնածու պետք է որպես հայրենիքին իր նվիրվածության ու հանուն նրա կյանքը զոհելու պատրաստակամության ապացույց կտրեր իր մատը[4]: Ընդ որում, ենթադրվում է թաքնված զուգահեռ սամուրայների «Բուսիդո» պատվո վարքականոնի հետ, որն ուներ նմանատիպ նորմ՝ մատը կտրել ի նշան նվիրվածության Հայրենիքի փրկության գործին: Հետագայում այդ նորմը կիրառվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կամիկաձեների երդման մեջ:

Հրեա երիտասարդության շրջանում որպես հրեական ոգու տոկունության, կամքի աննկունության և զինվորական արիության խորհրդանիշ քարոզվում է զելոտների հերոսական պայքարը 73 թ. *Մասադա ամրոցը* պաշարած հռո-

[4] Տես *Yigael Yadin*. Bar Kokhba: The Rediscovery of the Legendary Hero of the Second Jewish Revolt against Rome. Jerusalem, 1971:

մեակաճ լեգեոճի դեմ[5]: Միճչև վերջ դիմակայելով հռոմեացիճերի գրոհճերիճ՝ հրեա տղամարդիկ միաձայճ որոշեցիճ սպաճել իրեճց կաճաճց ու երեխաճերիճ, իսկ հետո վիճակ գցելով ըճտրեցիճ այճ տասը զիճվորիճ, որոճք ճախքաճ բերդ թշճամու մտճելը սպաճեցիճ մյուսճերիճ: Երիտասարդ զիճվորճերը երդվում եճ այճ ժայռի գագաթիճ, որտեղ գտճվում էր հերոսակաճ Մասադաճ: Հրեա զիճվորակաճճերի երդումճ է՝ «Մասադաճ այլևս չի ըճկճի»:



Մռճչացող առյուծի հուշարձաճը Թել Հայում: Հուշարձաճի վրա փորագրված եճ Տրումպելդորի հաճրահայտ վերջիճ խոսքը և ճրաճց աճուճճերը, ովքեր ճրա հետ զոհվել եճ մարտում (արտատպվում է Յ. Զերուբավելի հիշատակված գրքից)

## 2. Տրումպելդորի սխրագործությունը՝ որպես ժամաճակակից հրեա զիճվորակաճի վարքակաճոճի հիմք

Նորագույճ ժամաճակաշրջաճի հերոս հռչակվեց *Իոսիֆ Տրումպելդորը*[6], որի շիրմիճ կաճգճեցված է մռճչացող առյուծ: 1920 թ. Թել Հայ ռազմագյուղատճտեսակաճ բճակավայրի պաշտպաճությունը գլխավորած Տրումպելդորճ իր մահից առաջ ասաց մի խոսք, որը Իսրայելի հայրեճասիրակաճ քարոզչությունը դարձրեց ժամաճակակից հրեա հերոս զիճվորակաճի՝ որպես աճթերի աճձճավորությաճ, ազճիվ, համեստ ու խիզախ ասպետի դաստիարակությաճ օրիճակ: Իսրայելի պաշտպաճությաճ բաճակի երիտասարդ զիճվորակաճճերը երդում եճ տալիս Տրումպելդորի շիրմի վրա, որի քարիճ փորագրված է ճրա վերջիճ խոսքը. «Երջաճիկ է ճա, ով մեռճում է Հայրեճիքի համար»:

Հեճց Թել Հայի պաշտպաճությաճ կազմակերպմաճ օրիճակը դարձավ տարածքայիճ պաշտպաճությաճ համակարգի ստեղծմաճ առաջիճ փորձը. 40-ակաճ թվակաճճերիճ կիբուցճերում (գյուղատճտեսակաճ կոմուճաճերում) աշխատաճքի և ծառայությաճ միջոցով արաբակաճ բաճդկազմավորումճերի դեմ *Հագաճաիի* հատուկ ճախաճշաճակմաճ *Պալմախի* ստորաբաժաճմաճ պայքարում դրվեց ՆԱՀԱԼ տարածքայիճ պաշտպաճությաճ հիմքը:

## 3. Ֆաշիզմիճ հրեակաճ գետտոճերի մարտիկճերի դիմադրությաճ ոգու հերոսակաճությունը

Հրեա զիճվորակաճությաճ հերոսապատմաճ մեջ, որը լայճորեճ կիրառում է Իսրայելի և սփյուռքի հայրեճասիրակաճ քարոզչությունը, առաճձճահատուկ տեղ եճ գրավում Երրորդ ռայխի* համակեճտրոճացմաճ ճամբարճերում (Օսվեճցիմ, Մայդաճեկ, Դահաու և այլճ) հրեաճերիճ ոչճչացճելու ճպատակով գերմա-

[5] Տես *Yigael Yadin*. Masada: Herod’s Fortress and the Zealots’ Last Stand. New York, 1966:

[6] Տես *N. Ben-Ari* and *E. Kena’ani*, eds. Yosef Trumpeldor: Po’alo u-Tekufatd/Yosef Trumpeldor: His Life and His Times (Hebrew and English). Tel Aviv, 1970:

* Երրորդ ռայխ (կայսրություճ)՝ ֆաշիստակաճ Գերմաճիաճ:

նական ՍՍ ջոկատների կողմից զանգվածային տեղահանումներին *Վարշավայի և այլ գետտոների հրեաների զինված դիմադրության* օրինակները[7]: Դաստիարակչական քարոզչությունն ուղղված է հրեա զինվորների դրսևորած կորովի փառաբանմանը, երբեմնի ամոթալի ու նսեմացուցիչ գետտոյի հասկացությանը զինվորական փառքի ու պատվի լուսապսակի վերագրմանը:

### 4. Իսրայելի ինքնապաշտպանության և անկախության համար ընդհատակյա պայքարի հերոսականությունը

**Հագանահի Պալմախի հերոսները**: Երիտասարդ հրեաների մարտական ոգու դաստիարակության գործում կարևորություն է տրվում 1940-ական թվականներին Իսրայելի Պետության ստեղծման համար մղված պայքարում Հագանահի Պալմախ հատուկ նախանշանակման ստորաբաժանման վարած մարտական գործողությունների փորձին[8]: Հենց այդ փորձով է հիմնավորվում Իսրայելի Պաշտպանության բանակում՝ *ՑԱՀԱԼ*-ում, գործող այն սկզբունքը, ըստ որի՝ հրամանատարը պետք է գտնվի իր զինվորների առջևում: Քանի որ Պալմախն ուներ հատուկ նախանշանակման առաքելություն, նրա հրամանատարներից պահանջվում էր ոչ թե գնալ իր ենթակաների հետևից, ինչպես ընդունված է մի շարք բանակներում, այլ առաջնորդել նրանց: Պալմախում, ինչպես նաև ներկայիս ՑԱՀԱԼ-ում, հրամանատարի՝ «Իմ հետևի՛ց» հրամանը շարքային զինվորներին ներկայացվում է որպես հրամանատարի պարտավորություն՝ առավել մեծ վտանգի ենթարկելու ոչ թե զինվորին, այլ իր անձը:



Հաննա Սենեշ
(http://en.wikipedia.org/wiki/File:HannahSzenes1.jpg)

Հայրենասիրական դաստիարակության հոգեբանական արդյունավետության ապահովման ընդհանուր սկզբունքի համաձայն՝ հրեա զինվորականի հերոսականությունը անպայման անձնավորվում է կոնկրետ հրեա հերոսների մեջ: Այստեղ երիտասարդությունը հետևում է Պալմախի այնպիսի մարտիկների օրինակներին, ինչպիսիք են Կնեսետի և կառավարության անդամ դարձած Իգալ Ալոնը, ապագայում Գլխավոր շտաբի պետ, ապա՝ Իսրայելի Նախագահ դարձած Իծհակ Ռաբինը, Գլխավոր շտաբի պետ ու պաշտպանության նախարար դարձած Մոշե Դայանը, որը 1956 թ. գլխավորեց Սինայի հաղթական ռազմարշավը:

**Հրեա հերոսուհի Հաննա Սենեշը**: Նախագահ Խ. Հերցոգը անհրաժեշտ է համարել հրեա հերոսների պանթեոնում ներառել նաև քսաներեքամյա հրեուհի *Հաննա Սենեշին* (1921 – 1944)՝ անվախ դիվերսանտ պարաշյուտիստուհուն, որը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բրիտանական դեսանտա-

[7] Տես «Jewish Resistance: A Working Bibliography». «The Miles Lerman Center for the Study of Jewish Resistance». «Center for Advanced Holocaust Studies United States Holocaust Memorial Museum». Washington, DC (http://www.ushmm.org/research/center/lerman/bibliography/pdf/bibliography.pdf), *նաև*՝ «Holocaust Survivors and Remembrance Project: «Forget You Not». The Jewish Resistance During the Holocaust» (http://isurvived.org/TOC-IV.html#Resistance):

[8] Տես «Israeli Special Forces History» (http://www.isayeret.com/):

յինների կազմում կռվել էր Եվրոպայում, իջեցվել գերմանական թիկունք, լռել խոշտանգումների ժամանակ և 1944 թ. գնդակահարվել հունգարական բանտում: Հաննա Սենեշի կերպարի քարոզչությունն ուղղված է հրեա կանանց զինծառայության հայրենասիրական շարժառիթավորմանը. Իսրայելում, ի տարբերություն տղամարդկանցից, որոնք ծառայում են երեք տարի, կանայք ծառայում են երկու տարի, ինչը հնարավորություն է տալիս մեծ թվով տղամարդկանց ներգրավելու շարային ծառայության մեջ և դրանով իսկ որոշ չափով համակշռելու Իսրայելին թշնամի պետությունների բանակների թվային գերազանցությունը:

**5. Զոհողության հերոսականացումը և թշնամուն գերազանցող հատուցման անխուսափելիության սկզբունքը**

Ամբողջ աշխարհի հրեա երիտասարդության մեջ հերոսական ոգու դաստիարակության գործում բացառիկ կարևորություն է տրվում *թշնամուն զուգաչափ կամ գերազանցող փոխհատուցման անխուսափելիության քարոզմանը*: Այն հիմնվում է հետևյալ փաստի վրա: Հրեական ընդհատակյա պայքարը, որը երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ մինչև 1948 թ. Պաղեստինից բրիտանացիների հեռանալը, մղվում էր հրեաների Պաղեստին ներգաղթին խոչընդոտող Մեծ Բրիտանիայի դեմ, գլխավորում էր Իսրայելի ապագա վարչապետ Մենահիմ Բեգինը: Հրեա ընդհատակյա ուժերի մարտիկներին ճիպոտահարելու ու կախաղան բարձրացնելու անթույլատրելիության և դրա համար անգլիացիներին անխուսափելի զուգաչափ փոխհատուցման մասին հրեական ընդհատակի ահազանգը բրիտանական վարչակազմն ընդունեց իրեն հատուկ գոռոզամիտ թերահավատությամբ և գերեվարված հրեա մարտիկների նկատմամբ բռնություն գործադրեց: Դրան ի պատասխան՝ գերեվարված բրիտանացի սերժանտները ցուցադրաբար և անհապաղ կախաղան հանվեցին, ինչը ցնցեց թե՛ Մեծ Բրիտանիան, թե՛ ամբողջ արաբական աշխարհը: Դա դաս եղավ հրեական ինքնապաշտպանական ուժերի ու հրեական պետության ստեղծման բոլոր հակառակորդների համար:

Իսրայելի Պետությունն իր ամենօրյա գործունեությամբ հաստատում է այն բանի քարոզչությունը, թե այսօրվա հրեան այլևս նախկինում ստորացված մարդը չէ: Ժամանակակից հրեան, ինչպես և հերոսական անցյալում, պարտավոր է իր խելքի, ոգու, կամքի և ռազմարվեստի ամբողջ ներուժը ներդրել հանուն հրեա ժողովրդի պատվի պաշտպանության՝ թշնամուն ցուցադրելով այնպիսի փոխհատուցման անխուսափելիությունը, որը զուգաչափ լինի կամ գերազանցի յուրաքանչյուր հրեա զինվորականի նկատմամբ կատարված և համայն հրեությանը նսեմացնող հանցագործությանը:

**6. Ազգի առաջնորդ հերոսները. Բեն-Գուրիոն՝ «Իսրայելը չի կարող իրեն թույլ տալ պարտություն անգամ մեկ պատերազմում», «Այլևս երբե՛ք»**

Պետական քարոզչության մեջ *Դավիդ Բեն-Գուրիոնը*[9] (1886–1973) հանդես է գալիս որպես ազգին և իմաստուն ազգային առաջնորդ: Նա մի հերոս է, որը ոգեշնչել է ժողովրդին իր նպատակամղվածությամբ, ազգի ապագան խորը

[9] Տես «David Ben-Gurion». «Knesset Members» (http://www.knesset.gov.il/mk/eng/mk_eng.asp?mk_individual_id_t=684), նաև՝ «David Ben-Gurion». The Jewish Agency for Israel (http://www.jafi.org.il/education/100/people/BIOS/bg.html):

թափանցելու կարողությամբ: Բեն-Գուրիոնն աչքի է ընկնում համաշխարհային հրեության երկու գլխավոր փոխկապված կարգախոսների՝ «Իսրայելը չի կարող իրեն թույլ տալ պարտություն անգամ մեկ պատերազմում» և «Այլևս երբե՛ք» (խոսքը Ողջակիզման կրկնության հնարավորության մասին է), երաշխավորված ապահովման շուրջ Իսրայելն ու սփյուռքը համախմբելու և կողմնորոշելու անվեհեր քաղաքական կամքով: Իսրայելական քարոզչությունը Իսրայելի և ՑԱՀԱԼ-ի հիմնադիր Բեն-Գուրիոնի օրինակը ծառայեցնում է այն նպատակին, որ քաղաքական վերնախավն ու ժողովուրդը և՛ խաղաղ, և՛ մեծագույն ռազմական փորձության ժամանակ ձգտեն գտնելու ամենալավ նորարարական պրագմատիկ լուծումը, թե ինչպես համաշխարհային հրեության անսահմանափակ հոգևոր, կամային, մտավոր ու ֆինանսական ռեսուրսներն անկասելիորեն հաղթական կերպով օգտագործվեն ի նպաստ Իսրայելի և սփյուռքի:

Նշվում է 1950-ական թվականներին Եգիպտոսի դեմ ձեռնարկված Սինայի ռազմարշավի ժամանակ և փոխհատուցման սկզբունքի ընդունման գործում Բեն-Գուրիոնի ճիշտ քաղաքական ու ռազմական պրագմատիկ հաշվարկը: Ըստ այդ սկզբունքի՝ ՑԱՀԱԼ-ին և այլ ուժային կառույցների հանձնարարվում է զսպել իսլամական ահաբեկչությունը: Հետագայում այդ սկզբունքը դարձավ Իսրայելին հասցվող հարվածների կանխման նպատակով ահաբեկչական ճամբարների և շտաբների չեզոքացմանն ուղղված հատուկ կանխիչ գործողությունների հիմքը: Նշվում է նաև, որ Բեն-Գուրիոնի շնորհիվ Իսրայելն ունի արդյունավետ պրոֆեսիոնալ, ըստ հրեության աջակցության բնույթի՝ ժողովրդական բանակ, որը քաղաքականությունից դուրս է և ենթարկվում է քաղաքացիական իշխանությանը:

Այսպիսով՝ Իսրայելի Պետության ռազմահայրենասիրական քարոզչությունը, ինչպես նախորդ դեպքերում, Բեն-Գուրիոնի օրինակով ևս հարստացնում է հրեական պատմության պանթեոնը՝ նրան պատվավոր տեղ հատկացնելով նախորդ սերունդների և անցյալի մեծ հերոսների շարքում:

### 7. ՑԱՀԱԼ-ի կոլեկտիվ հերոսականությունը

**«Դատաստանի օրվա» պատերազմը:** Հավաքական հերոսականության ռազմահայրենասիրական քարոզչությունը փառաբանում է արաբական երկրների միացյալ ուժերի դեմ «վեցօրյա պատերազմում» ՑԱՀԱԼ-ի տարած փայլուն հաղթանակը: Հատուկ շեշտվում է հրեա զինվորի աներևակայելի տոկունությունը, քանի որ նա անչափ թանկ վճարեց արաբների կողմից «Դատաստանի օրվա» պատերազմի սանձազերծման վտանգի ռեալության գնահատման գործում Իսրայելի քաղաքական ու ռազմական ղեկավարության, ինչպես նաև հետախուզության թույլ տված սխալների համար: «Դատաստանի օրվա» պատերազմում ՑԱՀԱԼ-ի հերոսականության օրինակով հրեա զինվորի դաստիարակությունը կենտրոնացվում է այն դրույթի վրա, որ անգամ էլեկտրոնիկայի ու կառավարվող հրթիռների դարաշրջանում որոշիչ է մնում *մարդկային գործոնը՝ հրեա զինվորի ոգին, տոկունությունն ու մարտական վարպետությունը*:

**ՑԱՀԱԼ-ի կոմանդոսները Էնթեբեի (ՈՒգանդա) «Գնդաձև կայծակ» հակաահաբեկչական օպերացիայում. Իոնի Նետանյահու:** ՈՒգանդայում 1976 թ. հուլիսի 3-ի լույս 4-ի գիշերը ՑԱՀԱԼ-ի 200 կոմանդոսներ իրականացրեցին մի

օպերացիա, որի շնորհիվ ոչնչացվեցին մի խումբ ահաբեկիչներ և փրկվեցին պատանդ վերցված 105 հրեաներ[10]: Կոմանդոսների ցուցաբերած հերոսությունն ու վարպետությունը ներկայացվում են որպես ՑԱՀԱԼ-ի՝ միայն կամավորներից հավաքագրվող հատուկ նախանշանակման ընտրովի զորամասերի հիանալի զինվորականների դրսևորած մարտական վարպետության օրինակ: Դրանով իսկ Իսրայելը հաստատում է աշխարհի ցանկացած կետում հրեաների կյանքի նկատմամբ ոտնձգության համար ահաբեկիչներին անհապաղ հատուցման անխուսափելիության սկզբունքը: Վարպետորեն իրականացված կայծակնային հատուկ օպերացիան, ինչպես նաև կոմանդոսների հրամանատար Իոնի Նետանյահուի տոկունությունն ու անձնական հերոսությունը քարոզվում են այն կարևոր նպատակով, որ ամբողջ աշխարհին ի ցույց դրվի, թե, ինչպես գրում է Իսրայելի Նախագահ Խայիմ Հերցոգը, ի տարբերություն անցյալ ժամանակներից, փորձանքի մեջ հայտնված հրեաներն այժմ ունեն պաշտպաններ: ՈՒ թեև երբեմն հրեաներն ստիպված են լինում վախ ապրել, հույսը երբեք չի լքում նրանց:

**8. Իսրայելի զինվորի ռազմահայրենասիրական դաստիարակության ընդհանուր սկզբունքները**

Հրեա ժողովրդի և նրա պետության առջև պատմական պատասխանատվության սերմանումն ու գիտակցումը պետության բարձրագույն գերակայությունն են:

Իսրայելի Պաշտպանության բանակում և համաշխարհային հրեության շրջանում հաջողությամբ քարոզվում և անշեղորեն արմատավորվում է ՑԱՀԱԼ-ի զինծառայողների այն կերպարը, որ նրանք՝

– մեծ մտավոր ներուժով օժտված, արհեստավարժ, անկաշառ, չկոռումպացված, մոլեռանդաբար հայրենասեր ու հերոսականորեն աներկյուղ զինվորականներ են (սկսած շարքայինից մինչև գեներալ),

– մաքրակրոն զինվորականներ են, որոնք չունեն վատ սովորություններ (խաղամոլություն, ծխամոլություն, հարբեցողություն և այլն) և հակված չեն զգայական հաճույքների (որկրամոլություն, վավաշոտություն): Հայոց բանակի կազմավորման շրջանում նման կերպարի ջատագով էր Լեոնիդ Ազգալդյանը, իսկ անցյալում՝ Անդրանիկը:

Հայրենիքին հերոսական ծառայության հրեա զինվորի բարձր շարժառիթավորմանը նպաստում են՝

• բազմադարյան օտարաբնակության պայմաններում ողբերգական կենսափորձի կրկնության անթույլատրելիության գիտակցումը, քանի որ այն ժամանակ հրեա ժողովուրդն անպաշտպան էր թշնամիների առջև և ենթարկվել էր Ողջակիզման աղետի, որի զոհ էին դարձել 6 մլն հրեաներ,

• այն բանի գիտակցումը, որ համազգային աղետի կրկնության, ուստի և որևէ պատերազմում պարտության բացառման գրավականը ուժեղ հրեական

---

[10] Տես «Entebbe Raid (Operation Entebbe, Jonatan Operation, Operation Thunderbolt)». «Britannica Online Encyclopedia», 2009 (http://www.britannica.com/EBchecked/topic/188804/Entebbe-raid); *Max Hastings.* Yoni, Hero of Entebbe. 1979; *Iddo Netanyahu.* Yoni's Last Battle: The Rescue at Entebbe. 1976; *Raffi Berg.* Recollections of Entebbe, 30 years on (http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/5101412.stm):

պետականությունն է՝ հանձին թշնամական պետություններից ավելի արագ զարգացող Իսրայելի, որին օժանդակում են արևմտյան ուժային կենտրոնները՝ ԱՄՆ-ը, Թուրքիան, ՆԱՏՕ-ն և ԵՄ-ը, ինչպես նաև աջակցում են ազդեցիկ հրեական սփյուռքի համաշխարհային ցանցի ռեսուրսները,

• հրեա զինվորականի մեջ այն հայրենասիրական արժեքային կողմնորոշման ձևավորումը, որ հրեական պետության զինված ուժերը պահպանում են Իեհոշուա բին Նունի հրեա զինվորների, Դավիթ թագավորի, Մակաբեների (Հասմոնեականների), Մասադայի պաշտպանների, Բար-Կոխբայի մարտիկների հինավուրց ավանդույթը, որի շարունակողը եղան Պաղեստինի վերաբնակեցման շրջանի, հակաֆաշիստական պայքարի և Իսրայելի անկախության համար մղվող ժամանակակից պատերազմների հերոսները,

• հրեա ժողովրդի վստահությունը, որ Իսրայելն ունի իր տարածքի մեծության ու բնակչության թվաքանակի համեմատությամբ բացառիկ մեծ ռազմական, այդ թվում՝ միջուկային, ներուժ*, ինչը պայմանավորված է արաբական երկրների ու Իրանի հետ հարաբերությունների լարվածությամբ,

• միջազգային անվտանգության համակարգում Իսրայելի ունեցած բացառիկ կարևոր աշխարհառազմավարական դերակատարության գիտակցումը հրեա զինվորականների կողմից: ՑԱՀԱԼ-ի զինվորականների շրջանում ձևավորվում է վստահություն Մերձավոր Արևելքում իրենց առաքելության բացառիկության նկատմամբ: Իսրայելի տարածքից ռազմական հասանելիության սահմաններում է գտնվում Արևմուտքի նավթային ռեսուրսների գրեթե կեսը, որը տե-

---

* Իսրայելի պաշտպանական ծախսերը 2002 թ. կազմել են 9,84 մլրդ ԱՄՆ-ի դոլար (1984 թ.՝ 4,3 մլրդ) և անշեղորեն աճում են, թեև բնակչության մեկ շնչի հաշվով մնում են համեմատաբար կայուն, սակայն բավական բարձր՝ մոտավորապես 1,5 հազ. դոլար:

Իսրայելի պաշտպանունակության ամրապնդմանն աջակցման գործում զգալի ներդրում է Միացյալ Նահանգներից ստացվող ռազմական օգնությունը: Առաջին անգամ Իսրայելն ԱՄՆ-ից անհատույց ռազմական օգնություն է ստացել 1974 թ. (1,5 մլրդ դոլար): 1974–2002 թթ. ժամանակահատվածում Իսրայելն ԱՄՆ-ից ստացել է 41,06 մլրդ դոլարի անհատույց ռազմական օգնություն: Ընդ որում, ռազմական օգնության միջոցների մեծ մասը Իսրայելը պարտավոր է ծախսել ԱՄՆ-ում ռազմական տեխնիկա, պահեստամասեր, զինամթերք ու հանդերձանք ձեռք բերելու համար:

Հարևան երկրների հետ մշտապես լարված հարաբերություններն Իսրայելին ստիպում են պահել հզոր զինված ուժեր՝ համալրված ռազմական պայքարի վարման ժամանակակից միջոցներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքը: Թեև Իսրայելը երբեք բացահայտ կերպով չի անցկացրել միջուկային զենքի փորձարկումներ, այդուհանդերձ, համաձայն եղած գնահատականների՝ նա աշխարհի միջուկային տերությունների շարքում զբաղեցնում է 6-րդ տեղը՝ Միացյալ Նահանգներից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից ու Չինաստանից հետո: Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի շրջանակներում ԱՄՆ-ի վարչակազմի (և անձամբ Նախագահ Ռ. Նիքսոնի) հետ ձեռք էր բերվել համաձայնություն, ըստ որի «ենթադրվում, սակայն չէր ճանաչվում» Իսրայելի՝ միջուկային երկիր լինելու հանգամանքը: 1963 թվականից Իսրայելում ստեղծվում են բալիստիկ հրթիռային համակարգեր, որոնք կարող են կրել միջուկային մարտագլխիկներ: Դեռ 1989 թ. հաջողությամբ փորձարկվել է մինչև 1500 կմ հեռահարությամբ «Իերիխոն–2Բ» բալիստիկ հրթիռը՝ ունակ խոցելու այնպիսի նշանակետեր, որոնք գտնվում են Լիբիայի ու Իրանի տարածքում: Իսրայելի Զինված ուժերն սպառազինված են նաև միջուկային զենքի փոխադրման ավիացիոն միջոցներով, այդ թվում՝ ամերիկյան արտադրության Ֆ-16, Ֆ-4Ե «Ֆանտոմ» և Ա-4Ն «Սկայ-Հոկ» ինքնաթիռներով: Իսրայելը Մերձավոր Արևելքի միակ տերությունն է, որն ամենայն հավանականությամբ ունի ցամաքային, ծովային ու օդային բազավորմամբ միջուկային համակարգեր:

ղավորվում է արևմուտքից՝ Լիբիայի, արևելքից՝ Իրանի և հարավից՝ Սաուդյան Արաբիայի միջև ընկած եռանկյունում:

Երիտասարդության հայրենասիրական դաստիարակության գործում կարևորվում է պետական աջակցությունը հրեա ժողովրդի պատմության պաշտոնական մեկնակերպին և առաքելությանը, որոնք կառուցված են մի շարք հիմնադրույթների վրա.

1. մարդկության զարգացման գործում հրեա ժողովրդի ունեցած դերը ամրագրված է Երկրագնդի վրա կյանքի ծագման հետ հրեության պատմության նույնականացման ձևով, ինչի հետևանքով Իսրայելի Պետության պաշտոնական տարեգրությունը կրում է առասպելական բնույթ և իրադարձությունները թվագրում է աշխարհի արարման օրից (թալմուդյան ավանդույթի համաձայն՝ Ադամի ժամանակաշրջանի սկիզբ ընդունված է մ. թ. ա. 3761 թ., ներկայումս Իսրայելում 5769 թվականն է),

2. աշխարհի հնագույն քաղաքակրթությունների հետ հրեական պետականության պատմության զուգաչափության հռչակումը. ըստ պաշտոնական մեկնակերպի՝ հրեական ժողովրդի պետականությունն սկիզբ է առել մ. թ. ա. 11-րդ դարում,

3. հրեա ժողովուրդն իր ամբողջ պատմության ընթացքում իր ազգային շահերը պաշտպանելու համար հարկադրված է եղել պայքարելու հակառակորդի գերազանցող ուժերի դեմ,

4. հրեական ինքնության պահպանման գործում հրեա զորավարներին պետականության անկումից հետո փոխարինելու եկան հրեա մտավորականության ներկայացուցիչները, որոնք մինչև պետականության վերականգնումը որպես կրոնին հավատարմության և ազգային ինքնության պահպանման ակունք հրեաներին շնորհեցին Թորայի* մեկնությունները՝ Թալմուդը,

5. երկու հազարամյակ շարունակ հուդայականությունը, Թալմուդը և նրա լեզուն՝ եբրայերենը (իվրիտերեն), եղել են հայրենիքից կտրված հրեության գոյատևման գլխավոր ազգային հոգևոր-բարոյական ռեսուրսը: Ըստ հրեության պատմության պաշտոնական մեկնության՝ պետականության կորստի՝ ցրման (օտարաբնակության) պայմաններում Թալմուդը փոխարինեց կորսված Հայրենիքը՝ Էրեց-Իսրայելը,

6. երկու հազարամյակ աշխարհով մեկ սփռված բոլոր հավատացյալ հրեաները իրենց աղոթքների ժամանակ հայացքները ուղղել են դեպի պատմական Հայրենիք՝ կրկնելով «Հաջորդ տարի՝ Երուսաղեմում» բառերը,

7. սիոնիզմը՝ որպես Իսրայելի Պետության վերաստեղծման ճանապարհով հրեության փրկության ռազմավարություն. 19-րդ դարի վերջին եվրոպական հրեության վերնախավը գիտակցեց, որ Իսրայելի Պետության ստեղծման նպատակով հրեաների Պաղեստին վերադարձը նախընտրելի է մեսիայի (փրկչի)՝ որպես հրեության փրկչի պասիվ սպասումից,

8. մինչև Իսրայելի անկախությունը Պաղեստինի կիբուցներում (կոմունաներում) արտադրողական աշխատանքով և զինված տարածքային ինքնապաշտ-

* *Թորա*՝ Հին կտակարանի առաջին հինգ գրքերի՝ Հնգամատյանի (Ծննդոց, Ելից, Ղևտացվոց, Թվոց, Երկրորդ օրինաց) հրեական անվանումը:

պանությամբ հրեաների ավանդական չարչիական գործունեության փոխարինումը՝ որպես հրեա ժողովրդի սոցիալական և հոգեբանական կերպափոխման քաղաքական սկզբունք,

9. Իսրայելի Պետության վերաստեղծումը՝ որպես հրեա ժողովրդի վերածննդի հիմնական գործոն՝ նպատակաուղղված ամբողջ համաշխարհային իսրայելակենտրոն հրեության առաջընթաց զարգացմանը,

10. Իսրայելի միակ պետական լեզվի կարգավիճակի շնորհումը Թալմուդի հնագույն լեզվին՝ իվրիտերենին՝ որպես համաշխարհային հրեության էթնոլեզվաբանական բազմապիսի խճանկարի բոլոր բաղադրիչների համախմբման գործոնի,

11. համաշխարհային հրեության համակարգի իսրայելակենտրոնությունը,

12. Իսրայելի ու հրեական սփյուռքի կազմակերպությունների միջև պատասխանատու հարաբերությունների համակարգի անընդհատ կատարելագործման նպատակով յուրաքանչյուր մերձավորարևելյան ճգնաժամից դասերի ինքնաքննադատական քաղման սկզբունքը,

13. Իսրայելի և հրեական սփյուռքի միջև այն գնահատականի համաձայնեցվածությունը, որը տրվում է յուրաքանչյուր հրեայի մասնակցությանը Իսրայելի Պետության ազգային անվտանգության պաշտպանությանը՝ որպես յուրաքանչյուր հրեայի և ընդհանրապես համաշխարհային հրեության հոգևոր, բարոյական, քաղաքական ու տնտեսական զարգացման անձնական և համազգային բարձրագույն նպատակի,

14. Իսրայելի Պաշտպանության բանակում ծառայությունը դիտվում է որպես բուհ ընդունվելուց կամ պրոֆեսիոնալ կարիերա սկսելուց առաջ յուրաքանչյուր հրեայի և հրեուհու պատվի ու արժանապատվության գլխավոր քննություն և ինչպես Իսրայելում, այնպես էլ հրեական սփյուռքում նրանց հետագա պրոֆեսիոնալ ու սոցիալական առաջընթացի հիմքային փուլ,

15. ՑԱՀԱԼ-ի մարտական գործողություններին հրեայի և հրեուհու մասնակցության շարժառիթավորումը՝ որպես Իսրայելում և հրեական սփյուռքի բնակության համայնքներում անձնական հեղինակության բարձրացման և առաջընթացի առավել արգասաբեր միջոց,

16. ՑԱՀԱԼ-ի սպայական կազմի բարձր մտավոր մակարդակը, որը ձևավորվում է ի հաշիվ հասարակության և բանակի միջև առավել կրթված ու հայրենասիրական տրամադրություններով տոգորված կադրերի փոխանակման,

17. Իսրայելի ավանդական կողմնորոշումը՝ իր զարգացումն ապահովելու ազգային անվտանգության ռազմավարության գերակայությունների հիմքի վրա, ինչն արվում է ռազմական քաղաքականության ոլորտում ԳՇ և զորատեսակների շտաբներում առաջատարի դեր կատարող տաղանդավոր գեներալներից քաղաքական վերնախավի ձևավորմամբ (Իծհակ Ռաբին, Խայիմ Հերցոգ, Արիել Շարոն, Էհուդ Բարակ, Մոշե Դայան, Էզեր Վեյցման և այլն),

18. ՑԱՀԱԼ-ի հաղթանակի համար, բացի հակառակորդի հնարավորությունները գերազանցող սպառազինությունից (ներառյալ՝ միջուկային ներուժը), անհրաժեշտ է ունենալ միակուռ, վարժված ու մշտապես մարտի ձգտող բանակ: Բանակի համախմբվածության հիմքում ժողովրդի միասնականությունն է: Հակառակորդի գերազանցող ուժերի նկատմամբ հաղթանակի հասնելու համար

անհրաժեշտ են հրեա զինվորականի ոգու, խիզախության, հնարամտության, կռահողականության, ինչպես նաև մտքի և գործողությունների արագության գերազանցության անընդմեջ պահպանումը, այդ թվում՝ որոշումներ կայացնող հրամանատարների՝ հանպատրաստից ստեղծագործելու հատկությունները:

Այս արժեքներին ու սկզբունքներին համապատասխան կատարվող դաստիարակության արդյունավետության վկայությունն են հետևյալ փաստերը.

– տարածաշրջանում Իսրայելի կայուն ռազմական առաջավարությունը, որը հաստատվում է ինչպես պատերազմներում, այնպես էլ ամեն մի ռազմական ընդհարման ժամանակ հակառակորդի նկատմամբ ՑԱՀԱԼ-ի անձնակազմի մարտունակության գերազանցությամբ,

– համաձայն վերջերս կայացած սոցիոլոգիական հարցումների՝ Իսրայելի հրեաների ավելի քան 94 %-ը պատրաստ է կամավոր զինվորագրվելու ՑԱՀԱԼ-ին և կյանքը զոհելու հանուն հայրենիքի (ԱՄՆ-ի քաղաքացիների շրջանում այդ ցուցանիշը 63 % է):

### 9. Հայ հերոսների պանթեոնի ու հերոսական իրադարձությունների օրացույցի մշակման և ՀՀ պաշտպանական բարեփոխումներում օգտագործման ուղենիշներ

Որպես Իսրայելի բանակի բարձր մարտունակության ապահովման կարևոր նախապայմանի՝ հրեա զինվորականի ռազմահայրենասիրական դաստիարակության ու մարտական ոգու ապահովման ավանդական արժեքների և հայեցակարգային հիմնադրույթների ուսումնասիրությունը, Իսրայելի և Հայաստանի, համաշխարհային հրեության և հայության միջև որոշակի նմանությունների ու տարբերությունների հաշվառմամբ, զգալի դրական նշանակություն ունի հայ զինվորականի հոգևոր-բարոյական դաստիարակության և ընդհանրապես ՀՀ ԶՈՒ-ի մարտունակության բարձրացման խնդիրները լուծելու համար:

Անշուշտ, խոսքը հայ իրականության մեջ Իսրայելի զինվորականության վարքականոնի՝ որպես հրեության փորձի մեխանիկական ներբերման մասին չէ. հայ և հրեա ժողովուրդները, պատմական անցյալի որոշակի նմանությամբ հանդերձ, ունեն զուտ ազգային առանձնահատկություններ, այդ թվում՝ ռազմական արվեստի բնագավառում: Միևնույն ժամանակ, ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակում հայ զինվորականության հոգևոր-բարոյական դաստիարակության, բարձր մարտական ոգու ապահովման համակարգի կատարելագործման ուղիների մշակման ժամանակ Իսրայելի օրինակով նպատակահարմար է դիտարկել հետևյալ հիմնադրույթները.

• ազգային ողբերգության կրկնության հնարավորությունը բացառելու անհրաժեշտության գիտակցում,

• հզոր անկախ պետականություն՝ որպես ազգային ողբերգության կրկնության բացառման երաշխիք,

• ամեն մի պատերազմում պետության անպարտելիության բարոյական սկզբունքի գիտակցում և հետևողական կիրառում,

• թշնամական երկրներով շրջապատված լինելու պարագայում տարածաշրջանում պետության կայուն ռազմական առաջատարության, հակառակորդի նկատմամբ զինված ուժերի մարտունակության մշտական գերազանցության ապահովում,

• համաշխարհային սփյուռքի համակարգի պետութենակենտրոնություն,

• պետության ու սփյուռքի միջև ի շահ պետության, ազգային ժառանգության և ամբողջ ժողովրդի պաշտպանության փոխադարձաբար զարգացող ու փոխլրացնող համագործակցության գերակայություն:

Ավարտելով այս զուգահեռները՝ հարկ ենք համարում շեշտել, որ Հայաստանի Զինված ուժերում ևս կա ազգի հերոսականությունը անձնավորված ձևով ներկայացնելու ավանդույթ: Մենք ունենք մի շարք պատմական անձինք, որոնց կերպարները կարող են քարոզվել որպես անհուն հայրենասիրության, ազգանվիրության, ինքնազոհողության, քաջության տիպարներ: Հայերը՝ որպես աշխարհի հնագույն ազգերից մեկը, զգալի ներդրում ունենալով համաշխարհային մշակույթի մեջ, շարունակում են զարգացնել իրենց հարուստ պատմամշակութային ժառանգությունը: Այսպես. 2009 թ. օգոստոսի 11-ն ըստ հին Հայկական (Հայկյան) օրացույցի 4502 թ. սկիզբն է:

Մեր բազմահազարամյա պատմության մեջ քիչ չեն հերոսների ձեռքով գրված ոգեշնչող էջերը: Ընդսմին, մեր կարծիքով, «Հայոց ռազմահայրենասիրական պանթեոնում» և ազգային օրացույցում կարող են ներառվել հետևյալ առասպելական ու պատմական անձանցից և նշանակալից իրադարձություններից շատերը.

***հնագույն առասպելական շրջան***. *Հայկ Նահապետ*, որն սպանեց տիտան Բելին՝ հաստատելով հայ ժողովրդի անկախության իրավունքը,

***հին պատմական շրջան (մ. թ. ա. 9-րդ դ.–մ. թ. ա. 1-ին դ.).*** *Արգիշտի Ա* թագավոր, որը Այրարատյան թագավորությունը պաշտպանեց Ասորեստանի ոտնձգություններից, *Տիգրան Մեծ*, որը շնորհիվ իր ռազմական ու դիվանագիտական տաղանդի ստեղծեց Մեծ Հայքը[11],

***միջնադար և նոր պատմության շրջան (4-րդ դ.–19-րդ դ.).*** *Արշակ Բ* և *Պապ* թագավորներ՝ բարեփոխիչներ, որոնք միավորեցին հայկական տիրույթները, սպարապետ իշխան *Վարդան Մամիկոնյան*, որն առաջնորդեց հայոց բանակը 451 թ. Ավարայրի ճակատամարտում՝ տապալելով քրիստոնյա հայերին զրադաշտականության պարտադրման պարսից ծրագրերը, իշխան *Գևորգ Մարզպետունի* (10-րդ դար), որը մարմնավորում է մեծ հայրենասերի ուականավոր զորավարի կերպարը, մի զորավար, որը կարողացավ չնչին ուժերով ջախջախել արաբական գերակշռող ուժերը, Կիլիկիո Հայոց պետության մեծ իշխան (1187–1198) և թագավոր (1198–1219) *Լևոն Բ*, որը շնորհիվ իր ռազմական ու դիվանագիտական տաղանդի կարողացավ հաջողությամբ պայքարել ընդդեմ Եգիպտոսի սուլթան Սալահ ադ Դինի, սելջուկ թուրքերի, Բյուզանդիայի և ոչ միայն հզորացնել իր պետությունը, այլև էապես ընդարձակել նրա սահմանները ու ազդեցության ոլորտը, հասնել եվրոպական միապետների կողմից Կիլիկիո Հայոց Թագավորության ճանաչմանը*, ակա-

---

[11] Տես *Հրանտ Արմեն*, Մեծն Տիգրան, 2-րդ հրատ.: Կահիրե, 1957:

* Լևոն Բ աջակցեց Սրբազան հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ 1-ին Շիկամորուսին Խաչակրաց 3-րդ արշավանքի ժամանակ, ինչի համար վերջինիս որդի Հայնրիխ 6-րդից ստացավ թագ: Թագադրմանը ներկա էին Բյուզանդիայից, Սրբազան հռոմեական կայսրությունից, Բաղդադի ամիրայությունից ժամանած պատվիրակությունները: Թագադրումը կատարվեց ինչպես հայկական (Կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատ), այնպես էլ լատինական (Հռոմի պապի



Անդրանիկ Օզանյան, ազգային հերոս, որին առաջին աշխարհամարտի ժամանակ շնորհվեց ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում

նավոր ռազմական ու պետական գործիչ *Դավիթ-Բեկ* (18-րդ դարի սկիզբ), որը գլխավորեց Սյունիքի պայքարը թուրք զավթիչների դեմ, 1812 թ. Հայրենական պատերազմի հերոս, իշխան գեներալ *Վալերիան Մադաթյան* (Մադաթով (1782–1829))[12],

***հայերի ազգային-ազատագրական շարժումը Օսմանյան կայսրությունում (19-րդ դ.–20-րդ դ. սկիզբ).*** Այնթապի, Զեյթունի, Մուշի, Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Սասունի, Վանի և պատմական Հայաստանի այլ վայրերի ինքնապաշտպանության հերոսներ. Վանի հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր *Արամ Մանուկյան* (1879–1919), հայդուկ, հերոսական Սասունի ազգային-ազատագրական շարժման առաջնորդ, ազգային հերոս *Անդրանիկ Օզանյան* (Զորավար Անդրանիկ (1865– 1927)), որը 1912 թ. 1-ին Բալկանյան պատերազմի մակեդոնական ճակատում գլխավորել է օսմանյան լծի դեմ ապստամբած բուլղարացիներին աջակցող հայ կամավորների ջոկատը, առաջին աշխարհամարտի տարիներին ստացել Ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում, հայ ազգային-ազատագրական շարժման կարկառուն գործիչներ, ինքնապաշտպանության առասպելական պարտիզանական առաջնորդներ *Աղբյուր Սերոբ* (Սերոբ Վարդանյան (1864–1899)), *Գևորգ Չաուշ* (Գևորգ Ղազարյան (1870/ 1871–1907)) և ուրիշներ,



Դրվագ Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունից, որի կազմակերպիչն էր Արամ Մանուկյանը

***1918 թ. մայիսյան հերոսամարտեր***[13]. Սարդարապատի օպերացիայի մշակող գեներալ Մովսես Սիլիկյան (1862–1937), Սարդարապատի և Բաշ-Ապարանի հաղթանակների կազմակերպիչներ գնդապետներ *Դանիել-Բեկ* (1861–1921) ու *Պողոս-Բեկ* (1864–1922) *Փիրումյաններ*, գեներալ *Դրո* (Դրաստամատ Կանայան (1883–1956)), զինվորական և քաղաքական գործիչ, արդի ազգային գաղափարախոսության մշակման հիմնադիր, Լեռնահայաստանի դիկտատոր *Գարեգին Նժդեհ* (Գարեգին Տեր-Հարությունյան (1886–1953)), որը գլխավորեց մահմեդական հրոսակախմբերից ու բոլշևիկյան զորքերից Սյունիքի հերոսական ինքնապաշտպանությունը, ինչի շնորհիվ Զանգեզուրը մնաց հայկական, Սար-

---

պատվիրակ, Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելբախ) ծեսերով (տես *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն հայոց, Ե., 1982, *F. Tournebize*. Histoire politique et religieuse de l’Arménie. Paris, 1900, «Հայկական սովետական հանրագիտարան», h. IV. Ե., 1978, էջ 589–590):

[12] Տես «Жизнь генерал-лейтенанта Мадатова». СПб., 1874:

[13] Տես *Ս. Աֆանասյան*, Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, 1918 թ. մայիս: Ե., 1991:

ղարապատի ճակատամարտի գաղափարական ոգեշնչողներ կաթողիկոս *Գևորգ Ե Սուրենյանց* (1847–1930) ու արքեպիսկոպոս *Գարեգին Հովսեփյան* (1867–1952), և ուրիշներ,





Գեներալներ Դանիել-Բեկ (ձախից) և Պողոս-Բեկ (աջից) Փիրումյաններ, Սարդարապատի հերոսամարտում տոնած հաղթանակի կազմակերպիչներ

***փոխհատուցման գործողություններ Հայոց ցեղասպանության եղիպ-թուրքական գաղափարախոսների ու կազմակերպիչների նկատմամբ, որոնք մահապատժի էին դատապարտված Ստամբուլի զինվորական տրիբունալի կողմից (20-րդ դար)***՝ «Նեմեզիսի»[*] հերոսներ *Սողոմոն Թեհլերյան (1896–1960), Միսաք Թոռլաքյան* (1890/1894–1968), *Արամ Երկանյան* (1895–1930), *Արփաշես Գևորգյան* (1894–1937), *Հակոբ Մելքումով* (Մելքումյան (1885–1962)), և ուրիշներ,

***երկրորդ համաշխարհային պատերազմ (1939–1945)***. նշանակալից և պատվաբեր է, որ Խորհրդային բանակում ծառայել են հայազգի 5 մարշալ՝ ռազմաճակատի հրամանատար, հետագայում՝ Խորհրդային Միության պաշտպանության նախարարի տեղակալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության առասպելական մարշալ *Հովհաննես Բաղրամյան* (1897–1982), Խորհրդային Միության հերոս, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ *Համազասպ Բաբաջանյան* (1906–1977), ավիացիայի գլխավոր մարշալ *Արմենակ Խանփերյանց* (Սերգեյ Խուդյակով (1901–1950)), Խորհրդային Միության հերոս, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ *Հովհաննես Իսակով* (1894–1967), ինժեներական զորքերի մարշալ *Սերգեյ Ագանով* (1917–1996)[14]: Ընդսմին Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԶՈՒ-ի տեսակների երեք շտաբների պետերից երկուսը՝ ՌԾՈՒ-ի և ՌՕՈՒ-ի շտաբների պետերը, եղել են հայ (ծովակալ Հ. Իսակովը և մարշալ Ա. Խանփերյանցը):

Ամբողջ Խորհրդային Միությունով ցնծացին 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի առասպելական հրամանատար գեներալ *Նվեր Սաֆարյանի* (1907–1982), «Բալթիկայի բազե» պատվավոր տիտղոսի արժանացած, գրո-

[*] «Նեմեզիս»՝ 1915 թ. Հայերի ցեղասպանության կազմակերպման և իրականացման մեջ մեղավոր «Միաբանություն և առաջընթաց» թուրքական կուսակցության առաջնորդների նկատմամբ հատուցման ակտերի իրականացման օպերացիայի անվանում (վրիժառության հունական աստվածուհի Նեմեզիսի անունով):

[14] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, сс. 110, 109, 1351, 551, 29:

հային օդաչու, Խորհրդային Միության կրկնակի հերոս, գվարդիայի փոխգնդապետ *Նելսոն Ստեփանյանի*[15] (1913–1944) անունները:

Ուզում ենք հատկապես նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տարբեր երկրների բանակներում ֆաշիզմի դեմ կռվել են հայ ժողովրդի 600 հազար որդիներ և դուստրեր, որոնցից 500 հազարը՝ Խորհրդային բանակում: Եվ դա այն դեպքում, երբ բուն Խորհրդային Հայաստանում մինչև պատերազմը բնակվում էր մոտ 1,3 մլն հայ, իսկ ԽՍՀՄ մյուս հանրապետություններում՝ ավելի քան 1,5 մլն: Հայ ժողովուրդը Հայրենական պատերազմին վերաբերվեց մի արտակարգ հայրենասիրական պոռթկումով: Այդ պատերազմին հայերի մասնակցությունը աննախադեպ էր թե՛ մասնակիցների թվի, թե՛ ցուցաբերած խիզախության առումով:

Պատերազմի ժամանակ կազմավորված հայկական ազգային դիվիզիաները ծանր մարտերով անցան Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին և Բալկաններ՝ հավերժ փառքով պսակելով իրենց մարտական դրոշները: Եռակի շքանշանակիր 89-րդ հրաձգային դիվիզիան, որին Թամանյան թերակղզու ազատագրմանը ակտիվ մասնակցության համար շնորհվել էր «Թամանյան» պատվավոր անվանումը, միակ ազգային դիվիզիան էր, որը մասնակցեց Բեռլինի գրավմանը:

Աննախադեպ էր նաև Խորհրդային Միության հերոսի կոչմանն արժանացած հայերի թիվը՝ 106 մարդ, իսկ 26-ը դարձան «Պատվո» շքանշանի 3 աստիճանների ասպետներ[16]:



Միսաք Մանուշյան

Աննախադեպ էին նաև երկրորդ համաշխարհային պատերազմում հայերի կրած կորուստները՝ մոտ 300 հազար սպանված: Համեմատության համար ասենք, որ երկրորդ համաշխարհային պատերազմում նման կորուստներ ունեցան Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի բանակները:

Սփյուռքահայերը ևս ակտիվ մասնակցություն ունեցան ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի դեմ իրենց պետությունների մղած պայքարում: Սփյուռքի փառապանծ հերոսների թվում էին՝ Փարիզի Դիմադրության շարժման (*Մակի*) առաջնորդ, Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ, Ֆրանսիայի ազգային հերոս *Միսաք Մանուշյանը* (1906–1944), ԱՄՆ-ի ԶՈՒ-ի բրիգադի գեներալ *Հայկ Շեքերջյանը* (1886–1966), որը պատասխանատու էր Նորմանդիայում դաշնակից պետությունների զորքերի ափհանման թիկունքային ապահովման համար, ԱՄՆ-ի բարձրագույն զինվորական պարգևի՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանի (այդ շքանշանով երկրորդ աշխարհամարտի ժամանակ պարգևատրվել է ընդամենը 87 հոգի) ասպետ ավագ լեյտենանտ *Էռնեստ Դերվիշյանը* (1916–1984), որն աչքի ընկավ իր անվեհերությամբ՝ միայնակ գերեվարելով հակառակորդի 45 զինվորի ու գրավելով 3 գնդացիր, և շատ ուրիշներ:

[15] Տես նույն տեղում, էջ 1243:

[16] Տես «Кавалеры ордена Славы трех степеней». М., 2000:

1943 թ. Թեհրանում դաշնակից պետությունների ղեկավարների անվտանգության ապահովման գործում մեծ դեր խաղացին Իրանում խորհրդային ռեզիդենտ գնդապետ *Իվան Աղայանցը* (1911–1968) և հետագայում Խորհրդային Միության հերոսի կոչմանն արժանացած *Գևորգ Վարդանյանը* (1924 թ.):

Երկրորդ համաշխարհային պատերազմին հայերի ակտիվ մասնակցությունը, մեր կարծիքով, ազգային ոգու և հերոսության դրսևորման փայլուն օրինակներից մեկն է,

***կին հերոսուհիներ***. Վարդան Մամիկոնյանի դուստր *Սուրբ Շուշանիկ* (5-րդ դ.), որն իր հայրենասիրության ու կրոնին հավատարմության համար դավաճան ամուսնու կողմից ենթարկվեց խոշտանգումների և մարտիրոսացավ[17], Ֆրանսիայի Դիմադրության ակտիվ գործիչ, բանաստեղծուհի *Լուիզ Ասլանյանը* (1904–1944), որը գեստապոյի տանջարանում ենթարկվեց դաժան խոշտանգումների, սակայն չհայտնեց իր զինակիցների անունները և այրվեց Ռավենսբրուկ մահվան ճամբարի վառարանում, Արցախի ականավոր քաղաքական, ռազմական ու պետական գործիչ, Ղարաբաղյան շարժման կազմակերպիչներից մեկը, ԼՂՀ ԱԺ պաշտպանական անվտանգության և օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ *Ժաննա Գալստյանը* (1948 թ. ծ.), որը Արցախյան ազատամարտի ժամանակ իր ծավալած գործունեությամբ խորհրդանշում է զինվոր հայուհու՝ Հայրենիքի անվեհեր պաշտպանի կերպարը:

***Արցախյան ազատամարտ***. Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար, ազգային կանոնավոր զինվորական կազմակերպության ստեղծման ղեկավար, Հայաստանի Ազգային հերոս *Վազգեն Սարգսյան* (1959–1999), Հայաստանի Ազգային հերոս *Մոնթե Մելքոնյան*[18] (1957–1993)՝ սփյուռքահայ մտավորականի ու տաղանդավոր զինվորականի օրինակ, մի մարդու, որն իր կյանքը նվիրեց հայության պաշտպանությանը, Հայաստանի Ազգային հերոս *Թաթուլ Կրպեյան*[19] (1965–1991), որը մարմնավորում է մահապարտ հերոսի կերպարը, հայկական հատուկ նախանշանակման ջոկատի մարտական ավանդույթների հիմնադիր *Լեոնիդ Ազգալդյան* (1942–1992), և ուրիշներ:

Այս ցուցակը կարելի է շարունակել: Բայց, միևնույն ժամանակ, այսօրվա իրականության մեջ ռազմահայրենասիրական աշխատանքի ոլորտում այս պատմական անձանց ներկայացման խնդիրը համակարգված ձևով չի լուծվում՝ ո՛չ որպես խորհրդանշանային հերոսների և նրանց մեծագործությունների պանթեոնի, ո՛չ էլ դաստիարակչական պրակտիկայում տեղեկատվական, ուսումնական, ռազմաարարողակարգային և ռազմաարձանագրային կիրառման տեսանկյունից:

[17] Տես *Պ. Մ. Մուրադյան*, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը (բնագրեր և հետազոտություն): Ե., 1996:

[18] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագիր Ազգային հերոսի շնորհման մասին: ՆՀ-647»:

[19] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագիր Ազգային հերոսի շնորհման մասին: ՆՀ-648»:

Մտավոր, մշակութալուսավորական ժառանգության լավագույն նմուշների մշտական հայտնաբերումը և նպատակաուղղված կիրառումը, անշուշտ, կնպաստեն յուրաքանչյուր հայի՝ որպես իր ազգի ներկայացուցչի և իր պետության քաղաքացու մեջ իր ազգային պատմամշակութային անցյալի, լեզվի, դավանության, բարոյահոգեբանական ինքնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Այդ համատեքստում, մեր կարծիքով, զավթիչների դեմ անընդհատ պայքարի պայմաններում ու ներկայիս փուլում հայերի համար ազգային արժեքների վառ խորհրդանիշներ են հարուստ հին հնդեվրոպական լեզուն, յուրատիպ այբուբենը և գիրը՝ որպես ազգային ինքնության պահպանման զենք, քրիստոնեական հավատն ու ազգային, աշխարհում առաջին պետական, Քրիստոսի անմիջական աշակերտներ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների 1-ին դարում ծավալած լուսավորչական գործունեության վրա հիմնվող Առաքելական եկեղեցին՝ որպես հոգևոր-լուսավորական կենտրոն և դարեր շարունակ ազգապահպանության մարմնացում, ինչպես նաև գիտության ու մշակույթի բնագավառներում ձեռք բերված նշանակալից նվաճումները: Ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական մասնագիտություններ ունեցող հայ հերոսների պանթեոնի մշտական համալրումը պետք է նպատակաուղղված լինի մարտական ոգու բարձրացմանը և իր ժողովրդին հավատարիմ լինելու ու ծառայելու գաղափարի սերմանմանը հայության, առաջին հերթին՝ երիտասարդ սերնդի շրջանում: Որպես ազգային մտավոր սխրանքի ականավոր ներկայացուցիչների չափանիշ, որը համապատասխանում է համաշխարհային գիտության ու մշակույթի լավագույն նմուշներին, կարելի է դիտարկել հետևյալ կերպարները.

***լուսավորություն, կրթություն, կրոն.*** Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հիմնադիր եպիսկոպոս *Գրիգոր Լուսավորիչ* (3–4-րդ դդ.), հայոց այբուբենի ստեղծող, լուսավորիչ, Սուրբ Գրքի թարգմանիչ, ազգային դպրոցի ու մանկավարժական մտքի հիմնադիր, գրության համակարգերի գյուտի փաստացի հայտնի հեղինակ *Մեսրոպ Մաշտոց* և նրա սխրակից կաթողիկոս *Սահակ Պարթև* (5-րդ դ.), գիտնականներ-*Մխիթարյան միաբանության հայրեր* (18–20-րդ դդ.), որոնք իրենց աշխատություններով ոչ միայն նպաստել են ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ու գիտական մտքի զարգացմանը, այլև հայ ժողովրդի մտավոր նվաճումները ներկայացրել են Եվրոպայի լայն գիտական շրջաններին, Արևմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժման հոգևոր առաջնորդ Կաթողիկոս *Խրիմյան Հայրիկ* (Մկրտիչ Խրիմյան (1820–1907)), և ուրիշներ,

***գիտություն.*** համաշխարհային պատմագրության ականավոր ներկայացուցիչ, Պատմահայր, քննադատական պատմագրության հայրենական դպրոցի հիմնադիր եպիսկոպոս *Մովսես Խորենացի* (5-րդ դ.), փիլիսոփա, նոր պլատոնականության հետևորդ, նոր պլատոնականության Ալեքսանդրիայի դպրոցի ներկայացուցիչ *Դավիթ Անհաղթ* (5–6-րդ դդ.), աշխարհագրագետ, քարտեզագիր, պատմաբան, աստղագետ *Անանիա Շիրակացի* (7-րդ դ.), բանաստեղծ, պատմաբան, լեզվաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Մխիթարյանների միաբանության աբբահայր *Ղևոնդ Ալիշան* (Քերովբե Ալիշանյան (1820–1901)), որն անգնահատելի ավանդ ունեցավ հայագիտության զարգացման գործում,

համաշխարհային ճանաչում ստացած գիտնական, տեսական աստղաֆիզիկայի ստեղծողներից, Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ՌԴ Պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ նախագահ, Հայաստանի Ազգային հերոս *Վիկտոր Համբարձումյան* (1908–1996), արևելագետ, հասարակական գործիչ, «Էրմիտաժի» տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և առաջին նախագահ *Հովսեփ Օրբելի* (1887–1961), ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրներից, ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ *Լևոն Օրբելի* (1882–1958), միութենական Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտի հիմնադիր, խորհրդային ատոմային ռումբի ստեղծողներից, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ *Աբրահամ Ալիխանյան* (1904–1970), ԽՍՀՄ «միջուկային վահանի» ստեղծող, առաջին ատոմային և ջերմամիջուկային մարտապաշարների ու հրթիռամիջուկային միջոցների առաջատար մշակող և գլխավոր կոնստրուկտոր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ԽՍՀՄ Լենինյան և չորս Պետական մրցանակների դափնեկիր *Սամվել Քոչարյան* (1909–1993), ավիակոնստրուկտոր, առաջին գերձայնային մարտական ինքնաթիռների՝ հռչակավոր ՄիԳ-երի ստեղծող, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ *Արտեմ Միկոյան* (1905–1970), փառապանծ բետռախույզ ու հիդրոլոգ, Խորհրդային Միության և Ռուսաստանի հերոս (այդ երկու պարգևները ունեցող չորս մարդկանցից մեկը), Սբ. Մեսրոպ Մաշտոց շքանշանի (ՀՀ) ասպետ *Արթուր Չիլինգարով* (1939 թ. ծ.), և ուրիշներ,

***քաղաքականություն, դիվանագիտություն, հասարակական գործունեություն.*** Ռուսաստանի Կայսրությունում վարչական բարեփոխումների նախաձեռնող, ներքին գործերի նախարար, կոմս, գեներալ *Միքայել Լորիս-Մելիքով* (1825–1888)[20], հասարակական-քաղաքական գործիչ *Պողոս Նուբար-փաշա* (1851–1930), որը Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի հանձնարարությամբ Փարիզի խաղաղության կոնֆերանսում ներկայացնում էր հայ ժողովրդի շահերը[21], ԽՍՀՄ ականավոր պետական գործիչ, Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, դիվանագետ, որի ջանքերի շնորհիվ Կարիբյան ճգնաժամն ունեցավ խաղաղ ավարտ, *Անաստաս Միկոյան* (1895–1978), ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցության կարկառուն գործիչ, Կալիֆոռնիայի 35-րդ նահանգապետ, Կալիֆոռնիայի նախկին գերագույն դատախազ *Գուրգեն Ջորջ Դուքմեջյան* (1928 թ. ծ.), ամերիկյան դիվանագետ *Էդուարդ Ջերեջյան* (1939 թ. ծ.), լրագրող, «Ագոս» թերթի (Թուրքիա) գլխավոր խմբագիր, ազգայնամոլական շարժառիթներով թուրք ծայրահեղականների ձեռքով սպանված *Հրանտ Դինք* (1954–2007), և ուրիշներ,

***գրականություն, արվեստ.*** բանաստեղծ, փիլիսոփա, վանական, հայկական Վերածննդի հիմնադիր *Գրիգոր Նարեկացի* (10-րդ դ.), հայ նոր գրականության ու գրական լեզվի ստեղծող, մանկավարժ, ազգագրագետ *Խաչատուր Աբովյան* (1809–1848), հայ գրականության մեջ պատմահայրենասիրական ար-

[20] Տես *Ю. Л. Костанян.* Граф Михаил Тариелович Лорис-Меликов. СПб., 2005:

[21] Տես *Д. Ллойд Джордж.* Правда о мирных договорах, т. 2. М., 1957:

ձակի ժանրի հիմնադիր *Րաֆֆի* (Հակոբ Մելիք-Հակոբյան (1835–1888)), Հարավային Կովկասում ազգամիջյան խաղաղարարության առաջնորդ, մեծ գրող ու բանաստեղծ *Հովհաննես Թումանյան* (1869–1923), հայկական հայրենասիրական պոեզիայի դասականներ *Եղիշե Չարենց* (Եղիշե Սողոմոնյան (1897–1937)) և *Հովհաննես Շիրազ* (Հովհաննես Կարապետյան (1915–1984)), ժամանակակից ամերիկյան գրականության դասական *Վիլյամ Սարոյան* (1908–1981), հայկական նոր դասական երաժշտության հիմնադիր *Կոմիտաս* (Սողոմոն Սողոմոնյան (1869–1935)), 20-րդ դարի մեծ կոմպոզիտոր, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ *Արամ Խաչատրյան* (1903–1978), աշխարհահռչակ ֆրանսիական էստրադային երգիչ ու դերասան, հասարակական ու դիվանագիտական գործիչ, Հայաստանի Ազգային հերոս *Շառլ Ազնավուր* (1924 թ. ծ.), և ուրիշներ:

### ***Ամփոփում***

Թեև այս տաղանդավոր մարդիկ տարբեր, երբեմն՝ հայ ժողովրդի համար աղետալի դժվար, ժամանակների ականավոր գործիչներ են, սակայն նրանց միավորում է հայրենասիրության բարձր զգացումը, անձնվեր ծառայությունն ի փառս հայ ժողովրդի: Նրանց օրինակը կարող է և պետք է ծառայի հայության հերոսական կենսունակության գաղափարի ամրապնդմանը և դրա նպատակաուղղվածությանը մարդկության ինքնաարտահայտման ամենաբարձր ստանդարտներին: Կարևոր է ազգային տաղանդն ու հերոսական ոգին իմաստավորել և քարոզել որպես հայ ժողովրդին բնորոշ հատկություն: Նպատակահարմար է կատարելագործել ազգային պետության և հայաստանակենտրոն Սփյուռքի փոխադարձաբար հարստացնող համակարգված համագործակցությունը, այդ թվում նաև ազգային հերոսականության քարոզման, ամբողջ ազգային ժառանգության համակարգման, արդյունավետ կիրառման, հարստացման ու սերնդից սերունդ փոխանցման ուղղությամբ: Այս առումով շատ կարևոր է թվում ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը միտված իսրայելակենտրոն սփյուռքի և Էրեց-Իսրայելի արդյունավետ փոխգործության ու ամենաբարձր պետական մակարդակով ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի ձևավորման փորձի խոր ուսումնասիրությունը:

ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների համատեքստում հենց այս տեսանկյունից է ակտուալ ուսումնասիրել Իսրայելի Նախագահ և ռազմական հետախուզության նախկին ղեկավար Խայիմ Հերցոգի ներկայացմամբ Իսրայելի Պետության այն փորձը, որը նա կուտակել է ինչպես հրեական ազգային պետության, այնպես էլ վերջինիս հետ ակտիվ կերպով համագործակցող հրեական սփյուռքի տիրույթներում հրեա ժողովրդի ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգված կազմակերպման գործում:

Ցեղասպանության ու Ողջակիզման ազգային աղետներին իրենց հին պետականության վերականգնմամբ պատասխանած հայ և հրեա ժողովուրդների հերոսականության համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս ստեղծելու հայ զինվորի մարտական ոգու ձևավորման ամբողջական համակարգ՝ բաղկացած հետևյալ տարրերից.

– *գիտական*՝ հետազոտություններ և մշակումներ,

– *մշակութային*՝ հայրենասիրական ստեղծագործությունների ստեղծում ու քարոզում,

– *ուսումնական*՝ դասագրքերի ու ձեռնարկների ստեղծում, ուսումնադաստիարակչական գործընթացի փոխլրացնող քաղաքացիական ու զորային բաժինների կազմակերպում,

– *զինվորական ծիսական ու հերալդիկ*՝ արշավներ մարտական փառքի վայրեր, զինվորական երդումներ հերոսների արձանների ու ճակատամարտերի հուշահամալիրների մոտ, մեր ժամանակների հերոսների պարգևատրման հանդիսավոր արարողություններ, լավագույն զինվորական ստորաբաժանումներին ու երիտասարդական հայրենասիրական կազմակերպություններին հերոսների անունների և անվանաշաների շնորհում՝ ինչպես ազգային պետության, այնպես էլ Հայոց Սփյուռքի հայության համապատասխան սոցիալական խմբերի տեղեկատվական ապահովմամբ:

«**Հայաստանը իրավունք չունի պարտվելու և ոչ մի պատերազմում. այլևս երբեք Ցեղասպանություն հայ ժողովրդի նկատմամբ**» թևավոր խոսքը լավագույնս արտահայտում է ներկայիս անկախ Հայաստանի Զինված ուժերի առաքելությունը և պետք է դառնա հայ զինվորի մարտական ոգու ձևավորման ոլորտում պաշտպանական բարեփոխումների նպատակն ու կարգախոսը:

## ОБ ОПЫТЕ ФОРМИРОВАНИЯ БОЕВОГО ДУХА ВОИНА В АРМИИ ОБОРОНЫ ИЗРАИЛЯ В СВЕТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ РА

*Г. С. КОТАНДЖЯН, генерал-майор, доктор политических наук (РФ),*
*Действительный член Российской Академии военных наук,*
*ученый-эксперт по контртерроризму (США),*
*член Научно-экспертного совета ОДКБ, начальник ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

В свете интересов национальной безопасности РА представим концептуальные положения кодекса еврейского воина, его военно-патриотического воспитания. При изучении данной проблемы необходимо учитывать тот факт, что стратегические интересы национальной безопасности Республики Армения и Государства Израиль совпадают не полностью: хотя между двумя государствами, а также между мировым еврейством и армянством существуют определенные сходства, однако есть и значительные различия[1]. Для оценки

[1] При сравнительном анализе процесса создания двух государств нужно учитывать то обстоятельство, что Государство Израиль, в отличие от Республики Армения, было основано с «нуля»–во враждебной среде арабов, в условиях отсутствия еврейского населения, посредством иммиграции евреев (Алия, 1908–1948 гг.). В большинстве своем это были «патриоты-фанатики», всю свою деятельность, свой военный и интеллектуальный потенциал поставившие на службу идее воссоздания Эрец-Исраэла. В армянской действительности среди национальных деятелей трех республик таковыми были Арам Манукян, Александр Мясникян, Александр Таманян, Мартирос Сарьян, Григорий Арутюнян, Артем Алиханян, Андроник Иосифьянц, Яков Заробян, Монте Мелконян и др. Творческое понимание опыта Израиля при реформирова-

меры той важности, которая в Израиле придается военно-патриотическому воспитанию еврея-воина, нами специально выбрана книга Президента Израиля, бывшего руководителя военной разведки Хаима Герцога «Герои Израиля»[2].

Прямое участие Президента Х. Герцога в разработке постоянно пополняемого пантеона героев-евреев, включающего примеры героизма как древних евреев, так и современников, свидетельствует о том, что в Израиле военно-патриотическое воспитание является сферой прямого руководства главой Государства.

В данной статье[3] делается попытка представить выбранную Президентом Израиля логику разработки структуры и содержания непрерывно пополняемого пантеона героев еврейского народа как основы системы воспитания воинского духа воина–еврея и еврейки.

### 1. Канонизация еврейских героев древности в системе воспитания боевого духа современного еврейского воина

В пантеоне еврейских героев особое место отведено образу Давида как героя-царя (11–10 века до н. э.), поставившего на колени превосходивших евреев силой и численностью филистимлян. Здесь отражен тот факт, что хотя



Воины Армии Обороны Израиля у крепости Масада приносят клятву верности (из книги Я. Зерубавеля)

армия Израиля всегда была меньше по численности и слабее армий противника, но побеждала, так как не принимала игры по навязанным врагом правилам.

Официальное толкование истории Израиля направлено на сплочение

---

нии ВС РА предполагает наличие преданного национальной идее, честного, одаренного большими умственными способностями, всесторонне развитого командирского и офицерского состава.

[2] См. *Chaim Herzog*. Heroes of Israel. Profiles of Jewish Courage. Israel, 1991 (поскольку данная статья написана в основном на базе этой книги, то в дальнейшем ссылки на нее не указываются).

[3] См. *Yael Zerubavel*. Recovered Roots. Collective Memory and the Making of Israeli National Tradition. Chicago–London, 1995 (в процессе работы над данной статьей мы в значительной мере пользовались также этой книгой, поэтому в ссылках она также не упоминается).

евреев вокруг той идеи, что со второго века до н. э.–со времен восстания Маккавеев–действует нравственный закон, согласно которому еврейский народ в своей целостности несет ответственность за безопасность любого еврея, где бы он ни находился. Среди героев, вдохновляющих еврейского солдата, важное место занимает *Иуда Маккавей* («Молот»), крестьянин, превратившийся в отважного воина, а затем в талантливого полководца и вождя, вдохновляющего народ на битву за независимость страны. В то же время в системе израильского патриотического воспитания Иуда Маккавей пропагандируется как воин, в своей зрелости ставший политиком и дипломатом, упрочивавшим еврейскую традицию признания первенства государственности как высшей ценности еврейства и добивавшимся того, чтобы Иудейское царство стало частью международного сообщества и системы баланса сил.

Образ *Бар-Кохбы,* решительного и жестокого в борьбе с врагами вождя-деспота, объединившего евреев и возглавившего восстание против римлян в 115–117 гг. н. э., пропагандируется как символ героической стойкости еврейского народа, вождя, осмелившегося поднять маленький народ против непобедимой Римской империи. Пример того, что каждый кандидат в солдаты повстанческой армии Бар-Кохбы в доказательство решимости отдать жизнь за родину и преданности ей должен был отрезать себе палец, активно используется для поддержания кодекса чести еврейского воина[4].

В качестве символа стойкости еврейского духа, несгибаемости воли и воинского бесстрашия пропагандируется героическая борьба зелотов против римского легиона, осадившего в 73 году н. э. крепость Масада[5]. Евреи-мужчины по коллективному решению лишили жизни женщин и детей, а затем, бросив жребий, выбрали десять воинов, убивших всех остальных перед вступлением врага в город. Молодые солдаты приносят присягу на вершине скалы, где располагалась героическая Масада. Воинская клятва еврейских воинов гласит: «Масада больше не падет».



Ռազմական քաղաքականությունը պետք է դիտել որպես պաշտպանական քաղաքականության առանցքային բաղադրիչ, որը հետադարձ գործառութային կապեր ունի մյուս բոլոր բաղադրիչների հետ: Ընդսմին ռազմական քաղաքականության հայեցակարգային (ղեկավարման) մասը (պաշտպանության նախարարի իրավասության սահմաններում որոշումների ընդունում, Նախագահի, Ազգային ժողովի ու կառավարության իրավասությանը վերաբերող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակում ու միջգերատեսչական համաձայնեցում կամ մասնակցություն դրանց մշակմանը, ինչպես նաև սահմանված կարգով այդ նախագծերի ներկայացում ընդունման կամ հաստատման) ապահովում է պաշտպանության նախարարությունը, իսկ գործադրման մասը (պլանավորում, իրականացում և վերահսկողություն)՝ զինված ուժերի գլխավոր շտաբը՝ որպես զինված ուժերի կառավարման կենտրոնական մարմին: Հետադարձ գործառութային կապերի շրջանակներում գլխավոր շտաբն իր իրավասության սահմաններում մասնակցում է նաև ռազմական քաղաքականության հայեցակարգային բաժինների փորձաքննության ապահովմանը՝ համապատասխան իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ տրամադրելով փորձագիտական խորհրդատվություն և ներկայացնելով առաջարկություններ[9]:

Կարծում ենք, որ սույն մեթոդաբանական նկատառումները օգտակար կլինեն ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կառուցվածքային կերպափոխումների մշակմամբ ու իրականացմամբ զբաղվող մասնագետների համար և համապատասխան նախադրյալներ կստեղծեն այդ գործընթացի ավելի համակարգված ըմբռնման համար:

---

[9] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան,* Նշ. աշխ., ինչպես նաև այնտեղ բերված գրականությունը:

# ПОНЯТИЕ «ОБОРОННАЯ ПОЛИТИКА» КАК ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЙ ИНСТРУМЕНТ ОСУЩЕСТВЛЕНИЯ ОБОРОННЫХ РЕФОРМ В АРМЕНИИ

*В. П. АВЕТИСЯН, подполковник, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак»–юрист,*
*А. А. МИНАСЯН, майор, кандидат философских наук, начальник научной электронной библиотеки ИНСИ,*
*Д. С. ЧИЛИНГАРЯН, полковник, заместитель начальника ИНСИ–главный редактор военно-научного журнала «Айкакан банак»,*
*Г. С. КОТАНДЖЯН, генерал-майор, доктор политических наук (РФ), Действительный член Российской Академии военных наук, ученый-эксперт по контртерроризму (США), член Научно-экспертного совета ОДКБ, начальник ИНСИ МО РА*

В Республике Армения начался второй этап осуществления оборонных реформ. На данном этапе, наряду с другими коренными изменениями, осуществляются четкое разграничение и новая по сути координация функций Министерства обороны и Главного Штаба ВС, формирование в военной сфере системы гражданского контроля в качестве важного элемента демократии[1]. Министерство обороны, включая все свои подразделения, трансформируется в главное государственное военно-политическое учреждение, а ГШ становится центральным органом войскового управления.

Эффективность реформ подобного инновационного содержания и общегосударственного масштаба предполагает применение элементов научно выверенного эксперимента, причем эти элементы должны проходить испытание в сложных процессах оборонно-политических трансформаций.

Наиболее значимым из этих процессов является создание оптимальной модели управления оборонной системой. Разумеется, оно должно объективно осуществляться на основе систематизированного изучения известных нам моделей и проявлений нашей действительности, так как эклектическое совмещение более известной нам прежней советской «аппаратной» пирамидальной модели администрирования с западной моделью «менеджмента»[2] не может привести к удовлетворительным результатам.

Однако для сравнения данных явлений, в том числе моделей управления, и выявления их положительных и отрицательных сторон необходимо, в первую очередь, четко сформулировать в соответствующей плоскости рассмотрения характерные для этих явлений системообразующие

[1] См. *С. Оганян.* Оборонные реформы Республики Армения: второй этап. «Айкакан банак», 2008, N 2–3.

[2] Анализ этих моделей см. *Д. С. Чилингарян, В. П. Аветисян, Т. Р. Мартиросян.* Об опыте руководства и управления системой оборонной политики США (на арм. яз.). «Айкакан банак», 2008, N 4.

понятия. Следует отметить, что формирование национальных понятийных и терминологических аппаратов безопасностной, в том числе–оборонной, политики происходит путем тесного военно-научного сотрудничества с государствами-партнерами из членов ОДКБ и НАТО. В этом плане мы должны в контексте стратегии национальной безопасности правильно усвоить необходимые понятия, перенимаемые как из преимущественно применяемых в нашем национально-оборонном строительстве прежней советской и российской, так и из западных военно-политических–безопасностных культур.

На наш взгляд, одним из таких важных системообразующих понятий является «оборонная политика». Отметим, что хотя это понятие в западной политологии уже давно используется[3], однако оно еще не фигурирует даже в реформируемой российской военно-политической терминологии: его нет в качестве словарной статьи в новых военно-научных словарях[4]. Тем не менее в этом вопросе некоторые российские военные специалисты склоняются к западному подходу. В частности, Президент Российской Академии военных наук, генерал армии М. Гареев пишет: «Если по-прежнему наша военная доктрина будет определять только военные угрозы и военные способы обеспечения безопасности страны, тогда напрашивается необходимость иметь отдельную «доктрину», которая определила бы порядок противодействия так называемым невоенным угрозам... На наш взгляд, было бы более целесообразным рассматривать все военные и невоенные угрозы в их органическом единстве и изложить официальные взгляды на обеспечение безопасности страны в одном документе. Возможно, его следует тогда называть «оборонная доктрина»»[5].

Чтобы лучше представить проблему, попытаемся вышеотмеченным способом уяснить вопрос эквивалентности образующих соответствующий ряд английских, русских и армянских научных терминов. В английском языке данный ряд включает термины *defense, army, military, war*[*]. Первый означает «оборонный», третий хотя и означает «военный», однако в американском толковании относится только к армии *(army)*, т. е. к сухопутным войскам, и в этом смысле идентичен второму термину, а четвертый означает «относящийся к войне». В русском этот ряд образуют следующие термины: оборонный, армейский, войсковой, военный. Причем второй и третий относятся к роду

[3] См., например, *D. J. Murray, P. R. Viotti.* The Defense Policies of Nations: a Comparative Study. 1994 (http://books.google.com/books?id=MCnY_VN9AjIC&printsec=frontcover&dq=D.+J.+Murray,+The+Defense+Policies+of+Nations:+a+comparative+study&lr=#PPR7,M1); *A. A. Jordan, W. J. Tailor, M. J. Mazarr.* American National Security. 1999 (http://books.google.com/books?-id=qIp9MkJvms8C&printsec=frontcover&hl=ru).

[4] См., например, «Военный энциклопедический словарь». М., 2002.

[5] *М. Гареев.* Новые условия–новая военная доктрина. «Независимое военное обозрение», 2 февраля 2007 г.

[*] В данной статье мы рассматриваем только случай адъективного применения этих терминов.

войск. В армянском подобный ряд составляют термины *պաշտպանական, ռազմական, զինվորական, բանակային, զորային, պատերազմական.* Изучив определяемые этими терминами понятия, можем построить следующие ряды эквивалентов: *defense–оборонный–պաշտպանական*, *army (military)–военный (армейский, войсковой)–ռազմական (բանակային, զինվորական, զորային) и war–военный–պատերազմական*[6]. Естественно, подобное неоднозначное соответствие часто становится причиной смысловых ошибок.

Итак, как можно определить պաշտպանական քաղաքականություն (оборонная политика, defense policy)? Попытаемся дать соответствующую дефиницию на основе формулировок, приводимых в западной и русской политико-безопасностной и военно-научной литературе[7], и словаря «Проекта Стратегии национальной безопасности РА»[8].

Оборонная политика является составной частью политики государства, нацеленной на защиту государства, его населения, территориальной целостности и суверенитета от вероятного внешнего противника. Официально она закрепляется в оборонном разделе «Стратегии национальной безопасности» и в базирующейся на ее положениях «Военной доктрине»[*]. Субъектами оборонной политики являются государство, его соответствующие специализированные институты и учреждения, а также международные организации безопасностной ориентации.

Оборонная политика в своей целостности имеет две взаимосвязанные, однако принципиально отличающиеся по содержанию и формам осуществления составляющие:

– **внутреннюю**, связанную с формированием и развитием оборонного потенциала государства, созданием, содержанием и подготовкой военной организации государства, осуществлением военного строительства и использованием в установленном законом порядке средств вооруженного насилия;

– **внешнюю**, связанную с защитой государства, его населения, суверенитета и территориальной целостности, предупреждением и отражением

---

[6] См., например, *R. Bowyer.* Dictionary of Military Terms. 3-d edition. London, 2004.

[7] См. *P. L. Hays, B. J. Vallance, A. R. Van Tassel. American* Defense Policy. 1999 (http://books.google.com/books?id=evo4nKODKDsC&dq=%22defense=policy%22+and+%22military+policy%22&printsec=frontcover&source=in&hl=en&ei=_7m3SY6nOdKd_gaUI5m9Cw&sa=X&oi=book_result#PPP1,M1), а также: «Война и мир в терминах и определениях». Словарь под ред. *Д. О. Рогозина.* М., 2004. Следует отметить, что в политологии мало понятий и терминов имеют единственную и всеобще признанную дефиницию.

[8] См. «Проект Стратегии национальной безопасности РА. Основные термины и понятия». «Айкакан банак», 2006, N 2.

[*] В случае трехуровневой системы национальных политико-безопасностных документов стратегического масштаба (например, в США) разрабатываются три документа: «Стратегия национальной безопасности», «Оборонная стратегия» и «Военная стратегия» (или «Военная доктрина»).

возможной агрессии извне, а также с сохранением или расширением границ, установлением (поддержанием) господства в определенных регионах, находящихся за пределами государства, и достижением оборонительных, либо агрессивных, завоевательных целей.

Различают также оборонную политику мирного времени и военного времени.

***Внутренняя оборонная политика*** базируется преимущественно на внутригосударственных правовых нормах.

***Внешняя оборонная политика*** базируется на соответствующих международных правовых нормах, получивших свое нормативное отражение во внутригосударственных правовых актах, на международных договорах и концепции внешней политики государства.

**Внутренняя оборонная политика**, опираясь на военный, экономический, социальный, интеллектуальный, духовно-культурный потенциал государства, отражает следующие принципы:

– соответствие внутренней оборонной политики интересам оборонной безопасности и реальным возможностям государства;

– координация, систематизация и обеспечение синергии межведомственных усилий по решению оборонных задач в различных сферах жизнедеятельности государства;

– развитие и использование социально-экономических и военно-стратегических преимуществ государства;

– решение военно-политических и стратегических задач с минимальными затратами людских, морально-политических и материальных ресурсов;

– постоянная готовность вооруженных сил и государства в целом к надежному отражению агрессии;

– разумная военная достаточность, недопущение ощутимого военного превосходства потенциальных противников, особенно в опережении разработок и во внезапном применении важных средств вооруженной борьбы.

**Внешняя оборонная политика**, включая внешнюю военную политику со всеми ее сферами и инструментарием, отражает следующие принципы:

– соответствие внешней оборонной политики долгосрочным внешним стратегическим безопасностным целям и процессам, происходящим в международной безопасностной среде;

– координация политических, экономических, дипломатических, информационных и военных средств для решения оборонных задач;

– выявление и использование слабых и уязвимых мест в оборонных системах государств–потенциальных противников, а также противоречий в системе их взаимоотношений;

– привлечение на свою сторону максимального числа союзников и обеспечение единства их совместных усилий;

–последовательная изоляция и ослабление потенциальных противников;

–сосредоточение военных, военно-экономических и дипломатических усилий на решении важнейших задач для борьбы против вероятных главных противников.

Таким образом, оборонная политика является важнейшим инструментом обеспечения оборонной безопасности государства. Ее разработка носит межведомственный характер, а осуществление многосферно–как во внутригосударственной, так и международной плоскости. Руководство и управление разработкой и осуществлением оборонной политики в рамках своей компетенции выполняет выступающее как единое целое Министерство обороны.

Подразделения Министерства обороны, которые в результате осуществления в РА оборонных реформ перестанут быть войсковыми частями, трансформируются в административно-аппаратный инструмент, основными функциями которого являются:

–экспертные консультации при подготовке руководством Министерства обороны (Министр и его заместители) в сфере оборонной политики стратегических решений военно-политического, военного, военно-технического, финансово-экономического, информационно-психологического, научно-образовательного, культурного и иного характера;

–планирование, организация и контроль за выполнением этих решений как в рамках межведомственного сотрудничества, так и посредством Главного штаба–в войсковом звене.

Итак, из логики оборонных реформ вытекает, что все Министерство обороны в лице Министра, его заместителей и советников, а также его аппарата, структур вне аппарата и отдельных подразделений должно заниматься оборонной политикой–как внешней, так и внутренней, включающей военную, оборонно-правовую, оборонно-экономическую, оборонно-финансовую, оборонно-техническую, оборонно-образовательную, оборонно-научную, оборонно-информационную, оборонно-воспитательную и другие составляющие.

Военную политику следует рассматривать в качестве основной составляющей оборонной политики, имеющей обратную функциональную связь со всеми другими составляющими. Причем Министерство обороны обеспечивает концептуальную (управленческую) часть военной политики (принятие решений в пределах компетенции Министра обороны, разработку проектов правовых нормативных актов и других документов, относящихся к полномочиям Президента, Национального собрания и Правительства, межведомственное согласование или участие в разработке этих проектов, а также их представление в установленном порядке для принятия или утверждения), а исполнительную часть (планирование, осуществление и контроль) обеспечивает главный штаб вооруженных сил как центральный орган управления вооруженными силами. В рамках обратной функциональной

связи главный штаб в пределах своих полномочий участвует также в обеспечении экспертиз концептуальных разделов военной политики, предоставляя экспертные консультации и предложения относительно проектов соответствующих правовых актов и других документов[9].

По нашему мнению, данные методологические соображения окажутся полезными для специалистов, занимающихся разработкой и осуществлением структурной трансформации системы Министерства обороны РА и создадут соответствующие предпосылки для более систематизированного понимания процесса трансформирования.

[9] Об этом более подробно см. *Д. С. Чилингарян, В. П. Аветисян, Т. Р. Мартиросян*. Ук. соч.; а также приведенную в их статье литературу.

## THE «DEFENSE POLICY» CONCEPT AS A THEORETICAL-METHODOLOGICAL TOOL OF IMPLEMENTING THE DEFENSE REFORMS IN ARMENIA

*V. P. AVETISYAN, Lieutenant-Colonel, Deputy Editor-in-Chief of the Defense-Academic Journal «Haikakan Banak»–Lawyer, A. A. MINASYAN, Major, Candidate of Philosophy, Head of the Academic Electronic Library, INSS,*
*D. S. CHILINGARYAN, Colonel, Deputy Commandant of the INSS–Editor-in-Chief of the Defense-Academic Journal «Haikakan Banak»,*
*H. S. KOTANJIAN, Major General, Doctor of Political Sciences (RF), Fellow Member of the Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA), Member of the CSTO Academic-Expert Council, Commandant of the INSS, MoD, RA*

SUMMARY

The necessity for using relevant academically verified concepts and terminology reviewed in complex processes of defense-political transformations objectively arises as a result of radical changes occurring at the second stage of the defense reforms in the Republic of Armenia, which cause also essential structural changes in the defense system.

The most important one of such processes is developing an optimal model of the defense system management. This should be implemented not by eclectically mixing well-known management concepts but on the basis of coordinated study of these approaches and their manifestations in reality.

The clear-cut definition of the system-forming concepts of this sphere is essential for such a study.

In the article an attempt is made to define one of the system-forming concepts-«defense policy»-though being used in political science for a long time but not located as a lexical entry even in new Armenian defense-academic dictionaries. This is carried out in close defense-academic cooperation with the CSTO and NATO member partner-states in the context of setting up security as

well as defense, national terminological machineries, using also the glossary of the «RA National Security Strategy».

The authors define «defense policy» as a component of the state policy which is targeted at protecting the state, its population, territorial integrity and sovereignty from a potential external enemy by political-military-economic-information means. This is officially summarized in the defense section of the RA «National Security Strategy» and «Military Doctrine» based upon its provisions.

In the article the entities of defense policy are pointed out, external and internal components of defense policy are analyzed, defense policies of peace and war time are differentiated. The interagency scope and multi-sphere implementation of defense policy as the most important tool for ensuring state's defense security are described by introducing a substratum of methodological proposals.

At the same time governance and management bodies' functions and specific features of developing and implementing defense policy, the correlation and functional feedback of defense policy and its key component–military policy, the bodies implementing military policy's conceptual (governance) and practising (management–planning, running and control) sections, and their competence limits are represented.

It is particularly mentioned that as the result of defense reforms the Ministry of Defense of the Republic of Armenia, with the Defense Minister at the head, is one holistic institution developing and implementing defense policy within its competence. And the Main Staff of Armenia's Armed Forces implements this policy in the National Army.

# ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ*

*Դ. Է. ՏՈՆՈՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Միջազգային ռազմական համագործակցության և պաշտպանական ծրագրերի վարչության պետ***



Արդեն չորրորդ տարին է, ինչ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրության վրա և համագործակցելով իր գործընկերների ու դաշնակիցների հետ, ձեռնամուխ է եղել պաշտպանական բարեփոխումների իրականացմանը: Իր ելույթներից մեկում Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը նշել է, որ այսօր առավել բարձր նշաձող պետք է դնել և վստահ շարժվել այդ ուղղությամբ: Պաշտպանական բարեփոխումները պահանջում են ամենօրյա հետևողական և համակարգված աշխատանք: Նա նաև նշել է, որ ինչպես Զինված ուժերում «հանգստի օրեր» չեն լինում, այնպես էլ բարեփոխումները չեն կարող ունենալ «հանգստի օրեր»: Բարեփոխումները չեն կարող զարգանալ ընդհատումներով, դրանցով պետք է զբաղվել անընդհատ:

Հայաստանի շուրջ ձևավորված անվտանգության միջավայրից բխող բազմաթիվ համաչափ և անհամաչափ, տարածաշրջանային և արտատարածաշրջանային մարտահրավերների չեզոքացման խնդիրներով, ձևերով ու եղանակներով են մեծապես պայմանավորված ՀՀ պաշտպանական բարեփոխումների բնույթն ու բովանդակությունը, սկզբունքները, նպատակները և խնդիրները, ընդհանրապես՝ պաշտպանական համակարգի կառուցվածքն ու զարգացման հեռանկարները: Բարեփոխումների հիմնական նպատակները և խնդիրները ձևակերպված են «ՀՀ ռազմական դոկտրինում»[1], իսկ դրանց հիմնավորումն ու մեկնաբանությունները տրված են ՀՀ պաշտպանության նախարարի մի շարք ելույթներում և ուղերձներում[2]:

Արդի պայմաններում հարկ է էապես վերաիմաստավորել անվտանգության վերաբերյալ ավանդական պատկերացումները՝ զգալի չափով ընդլայնելով անվտանգության, այդ թվում՝ պաշտպանության ոլորտին առնչվող, հարցերի շրջանակը: Դրա հետևանքով անհրաժեշտություն է ծագում վերանայելու ինչպես պետության պաշտպանական համակարգի առջև դրվող խնդիրների համալիրը, այնպես էլ զինված ուժերի կիրառման պայմաններն ու պահանջները,

---

* Տպագրվել է 2008 թ. «Միջազգային համագործակցություն» թեմայով հմ. 4-ում:

** Դ. Է. Տոնոյանը ներկայումս ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալն է, քաղաքացիական հատուկ ծառայության երկրորդ դասի պետական խորհրդական:

[1] Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

[2] Տես, օրինակ, *Ս. Ա. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումներ. երկրորդ փուլ: «Հայկական բանակ», 2008, հմ. 2–3:

դրանց թվաքանակն ու կառուցվածքը, ռազմատեխնիկական քաղաքականությունը, մարտական պատրաստման բուն էությունն ու ուղղվածությունը:

Հայաստանի Հանրապետությունը, արտաքին անվտանգության ռազմավարության մեջ կիրառելով միջազգային ինտեգրման ու փոխլրացման սկզբունքները, ձգտում է արտաքին ռազմաքաղաքական հարաբերությունների բազմազանեցմամբ ու պաշտպանական համակարգի կատարելագործմամբ ապահովելու իր ռազմական անվտանգությունը[3]: Այդ նպատակով մենք որդեգրել ենք պաշտպանական ոլորտում շարունակական բարեփոխումների ռազմավարություն, որն իրականացնում ենք ազգային ինքնության պահպանման պայմանով՝ առաջնորդվելով ՀՀ շահերով, հենվելով առավելապես ազգային ներուժի վրա, միևնույն ժամանակ օգտագործելով միջազգային հանրության փորձն ու աջակցությունը: Այս համատեքստում շատ կարևոր են ազգային և միջազգային հնարավորությունների ճշգրիտ գնահատումն ու հարաբերակցումը:

Եթե, օրինակ, ռազմական անվտանգության ապահովման երաշխիքը մարտունակ, արդիական սպառազինությամբ զինված, բարձր մակարդակի մարտական ու բարոյահոգեբանական պատրաստություն ունեցող, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու ունակ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու չեզոքացմանը պատրաստ Զինված ուժերն են[4], ապա ռազմական անվտանգության ապահովման գործում միջազգային հնարավորությունների կիրառումն արտահայտվում է անվտանգության համակարգերի շրջանակներում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների հաստատմամբ ու շարունակական զարգացմամբ: Դրա կարևոր բաղադրիչներն են, մի կողմից, համագործակցության զարգացումը ռազմավարական գործընկեր Ռուսաստանի Դաշնության հետ և անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը, մյուս կողմից՝ բարձր մակարդակի հարաբերությունների հաստատումը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության և նրա անդամ պետությունների, ինչպես նաև Չինաստանի՝ որպես առանձին ուժային կենտրոնի հետ:

Այսպես. Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով անվտանգության ապահովման գործում ռազմաքաղաքական շահերի ընդհանրությունը, ելնելով այս ուղղությամբ ջանքերի կենտրոնացման անհրաժեշտությունից, իր գործունեությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հետ ներդաշնակեցնում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման, տարածաշրջանային սկզբունքով անվտանգության համակարգի զարգացման, ԱՊՀ հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործման, ռազմատեխնիկական համագործակցության, ռազմական ենթակառուցվածքների զարգացման, զինվորական կադրերի պատրաստման, ռազմական գիտության, միջազգային ահաբեկչության և այլ միջազգային հանցագործությունների դեմ պայքարի հարցերում:

[3] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 30–45:

[4] Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 34:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, իր եվրոպական ինտեգրման քաղաքականությունից ելնելով, ակտիվ համագործակցություն է իրականացնում Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության և նրա անդամ գործընկեր պետությունների հետ՝ Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ) և «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրի շրջանակներում: ՆԱՏՕ-ի հետ հեռանկարային և բարձր մակարդակի հարաբերություններ զարգացնելու և փոխգործողության կարողությունները ընդլայնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը ՆԱՏՕ-ի հետ իրականացնում է «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր» և մասնակցում է ՆԱՏՕ-ի «Պլանավորման և վերանայման գործընթացին», ինչպես նաև երկկողմ ռազմական համագործակցության ծրագրեր է իրականացնում ՆԱՏՕ-ի անդամ գործընկեր պետությունների հետ:

Ընդհանրապես, բարեփոխումները շարունակական գործընթաց են: Դրանք իրականացվում են բոլոր ոլորտներում և բոլոր երկրներում: Սակայն ժամանակ առ ժամանակ, մի շարք մարտահրավերների ու գործոնների բերումով, բարեփոխումներն ստանում են ավելի համընդհանուր և արմատական բնույթ: Որո՞նք են այդ հանգամանքները:

Առաջինը անվտանգության միջավայրի կտրուկ փոփոխությունն է: Այսօր մի շարք անհամաչափ սպառնալիքների ազդեցությամբ ամբողջ աշխարհում անվտանգության միջավայրը ենթարկվում է էական փոփոխությունների: Եվ օրինաչափ է, որ բոլոր մեծ ու փոքր պետություններում, միջազգային և տարածաշրջանային կառույցներում տեղի է ունենում անվտանգության հայեցակարգերի, սպառնալիքներին հակազդեցության ավանդական մեխանիզմների արդիականացում: Օրինակ՝ Սառը պատերազմի ավարտից հետո Կանադայի Զինված ուժերը ռազմավարական վերանայման արդյունքներով ամբողջությամբ հրաժարվեցին զրահատանկային ստորաբաժանումներից: Սակայն Աֆղանստանում իրականացվող միջազգային առաքելությանը մասնակցության հետևանքով ստեղծվեց նման ստորաբաժանումների վերականգնման անհրաժեշտություն:

Հարավային Կովկասում ևս անվտանգության միջավայրը զգալիորեն փոփոխվում է: Ընդ որում, այդ փոփոխությունների բնույթն ու մասշտաբները այնքան համընդհանուր և անկանխատեսելի են, որ ավելի ճիշտ է դրանք բնութագրել ոչ թե որպես առկա անվտանգության միջավայրի փոփոխություն, այլ նոր միջավայրի ձևավորում: Համապատասխանաբար, նույնքան հիմնարար բարեփոխումների անհրաժեշտություն ունեն նաև իրենց անվտանգության ապահովման վերաբերյալ տարածաշրջանային պետությունների պատկերացումները:

Պաշտպանական բարեփոխումների երկրորդ խթանը պետության քաղաքական ու տնտեսական զարգացմանը համարժեք պաշտպանական համակարգի ստեղծման անհրաժեշտությունն է: Մասնավորապես՝ Խորհրդային Միության փլուզումից և խորհրդային պլանային տնտեսության անկումից հետո հետխորհրդային տարածքի բոլոր պետությունները ձեռնամուխ եղան իրենց պաշտպանական համակարգերի համապատասխանեցմանը շուկայական տնտեսության պահանջներին:

Հայաստանում ևս տեղի ունեցավ նման գործընթաց: Բայց, ցավոք, հակամարտությունների և տարաբնույթ հակասությունների առկայության հետևան-

քով տարածաշրջանային պետությունների կայացումն ու տնտեսական զարգացումը հանգեցրեցին սպառազինությունների մրցավազքի, պատերազմի անմիջական վտանգի ստեղծման և առկա սպառնալիքների ընդլայնման: Այս հանգամանքն իր «ճշգրտումներն» է մտցնում պաշտպանական բարեփոխումների գործընթացում:

Հաջորդը ժողովրդավարացման գործընթացներն են: Ժողովրդավարական հաստատությունների կայացումն իր հետ բերում է այնպիսի հրամայականներ, որոնք ազդում են պաշտպանական համակարգի կառուցվածքի, գործունեության մեխանիզմների և մեթոդների վրա: Օրինակ՝ խորհրդային ժամանակաշրջանում միակուսակցական քաղաքական վերահսկողության տակ գտնվող զինված ուժերը բոլոր հետխորհրդային պետություններում ապաքաղաքականացվեցին՝ համապատասխանեցվելով ժողովրդավարական նորմերին:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների մի զգալի մասն ուղղված է հենց Զինված ուժերում ժողովրդավարական նորմերի ներդրմանը, ինչն արտահայտվում է քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ստեղծմամբ և ընդլայնմամբ: Հայաստանի Հանրապետությունը հետևողական է Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում[5]: Թեև, ընդհանուր առմամբ, զինված ուժերի ժողովրդավարացումը նպաստում է դրանց մարտունակության մակարդակի բարձրացմանը, սակայն իր դասական իմաստով լիովին կիրառելի չէ և կարող է բացասաբար անդրադառնալ մարտունակության վրա (օրինակ՝ ցանկացած երկրի սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքների որոշակի շրջանակ զինված ուժերում օրենքով սահմանափակված է): Ուստի Զինված ուժերում ժողովրդավարացումն ստեղծում է որոշակի հակասություններ և դրանք հարթելու անհրաժեշտություն: Այս ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը փոխառելի է համարում եվրոպական գործընկեր պետությունների փորձը:

Մյուս նպատակն է պետության միջազգային ինտեգրվածության ապահովումն ու միջազգային անվտանգության ապահովման չափաբաժնի ստանձնումը: Օրինակ՝ թեև Գերմանիան ՆԱՏՕ-ի անդամ է, սակայն մինչև վերջերս նրան արգելված էր ռազմարշավային (էքսպեդիցիոն) ուժերի և կարողությունների ստեղծումը: Մինչդեռ Գերմանիայի մասնակցությունը Աֆղանստանում և Բալկաններում իրականացվող առաքելություններին ստիպեց փոխել այս դիրքորոշումը, իսկ Գերմանիային՝ վերանայել իր զորային կառույցը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պաշտպանական բարեփոխումների իրականացման համատեքստում միջազգային ինտեգրումը դիտում է որպես առաջնային նպատակ՝ ստեղծելով անվտանգության տարբեր համակարգերի ուժերի հետ փոխգործելի ստորաբաժանումներ և կարողություններ[6]: Մասնավորապես, մի կողմից, ՀՀ ԶՈՒ-ի և ՌԴ ԶՈՒ-ի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորումը ոչ միայն ՌԴ-ի հետ, այլև ՀԱՊԿ-ի շրջանակներում լիարժեք փոխգործություն է ապահովում, մյուս կողմից՝ Խաղաղապահ բրիգադի կազ-

[5] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 24:

[6] Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 56:

մավորումն ստեղծում է ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր պետությունների հետ համատեղ գործողություններ իրականացնելու հնարավորություններ:

Սառը պատերազմի ավարտից հետո ՆԱՏՕ-ի անդամ պետությունները, սկսելով իրենց պաշտպանական համակարգերի վերափոխման գործընթացը, հանգամանորեն ուսումնասիրեցին խորհրդային ռազմական մշակույթը, ինչի հետևանքով այդ մշակույթի շատ տարրեր ընդօրինակվեցին և ներմուծվեցին այդ պետությունների ժամանակակից համակարգերի մեջ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը նույնպես ձգտում է պաշտպանական բարեփոխումներն իրականացնելու միջազգային ռազմական համագործակցությանը հնարավորինս համակողմանի ինտեգրմամբ, քանի որ առանց միջազգային փորձի փոխառման հնարավոր չէ իրականացնել բարեփոխումների այն լայն շրջանակը, որն անվտանգության ժամանակակից միջավայրում կապահովի և՛ պաշտպանունակություն, և՛ փոխգործելիություն: Այս առումով առավել հետաքրքրական է արևմտյան փորձը, քանի որ ներկայումս քիչ թե շատ կիրառելի և արդյունավետ խորհրդային ստանդարտներն արդեն իսկ ներդրվել են ՀՀ Զինված ուժերում:

Դա է պատճառը, որ պաշտպանական բարեփոխումների հիմքում դրված են հիմնականում ՆԱՏՕ-ի, ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների հետ համագործակցության ծրագրերը, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու և կիրառելու այնտեղ գործող ստանդարտները, մեթոդիկան ու մարտավարությունը: Սա հույժ կարևոր է, քանի որ առաջադիմական արևմտյան ստանդարտների ու մարտավարության համադրումը ՀՀ Զինված ուժերում գործող տեղայնացված խորհրդային ստանդարտների և անցած 15 տարիների ընթացքում ձեռք բերված ազգային մարտական փորձի հետ կարող է հանգեցնել շատ լավ արդյունքների:

Նման համադրման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության միջավայրի, առկա ու հնարավոր ռազմական սպառնալիքների յուրահատուկ բնույթից, հետևաբար նաև Զինված ուժերի բարեփոխումների և արդիականացման որոշակի առանձնահատկություններից, ինչը հնարավորություն չի տալիս ո՛չ ամբողջությամբ պահպանելու նախկին խորհրդային ստանդարտները, և ո՛չ էլ պաշտպանական բարեփոխումներն իրականացնելու զուտ արևմտյան երկրների օրինակով: Այսպես. Արևելյան Եվրոպայի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների համար առկա սպառնալիքների բնույթը, այն է՝ դասական սպառնալիքներ չլինելու հանգամանքը, թելադրում է շարժունակ, ինքնաբավ, օպերատիվ տեղակայման և ծավալման (ցամաքային զորքերի առնվազն 40 %-ը), ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում ինքնուրույնաբար մարտական գործողություններ վարելու ունակ (ցամաքային զորքերի առնվազն 8 %-ը) ստորաբաժանումների (ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային) ստեղծման անհրաժեշտություն, ընդ որում դրանք պետք է լինեն միմյանց հետ լիարժեքորեն փոխգործելի[7]: Այդ բարեփոխումներն ընթանում են ՆԱՏՕ-ի անդամ երկրների համար մշակված ընդհանուր ստանդարտների

[7] Տես «Comprehensive Political Guidance», endorsed by NATO Heads of State and Government on 29 November, 2006, Paragraph 13:

հիման վրա: Հայաստանի Հանրապետությունը այդ ստանդարտներին լիովին համապատասխան կազմավորում է Խաղաղապահ բրիգադ, իսկ մյուս ոլորտներում ստեղծում է միայն փոխգործելիության հնարավորություններ՝ առանց տվյալ ստանդարտներին լիովին անցնելու, քանի որ, ի տարբերություն եվրոպական երկրներից, Հայաստանի համար գոյություն ունեցող ռազմական սպառնալիքներն առավելապես դասական բնույթի են (համաչափ, ներտարածաշրջանային, լիամասշտաբ պատերազմի հավանականություն):

Ընդհանրապես, տարբեր պետություններում ընթացող պաշտպանական բարեփոխումներն ունեն մի քանի ակներև միտումներ: Առաջինը թե՛ միջազգային, թե՛ ներքին պաշտպանական համակարգերի ինտեգրված բնույթն է: Եթե միջազգային ինտեգրումը պայմանավորված է անվտանգության նոր սպառնալիքներին համատեղ հակազդեցության անհրաժեշտությամբ, ապա ներքին ինտեգրումը պայմանավորված է պաշտպանական համակարգերի արդյունավետ գործելու, մասնավորապես, որոշումների կայացման, խնդիրների ձևավորման և իրականացման ժամանակը կրճատելու, ԶՈՒ-ի կենտրոնացված նյութատեխնիկական ապահովման և այդ նպատակով ֆինանսական միջոցների խնայողության, Գլխավոր շտաբում՝ առկա սպառնալիքներին համապատասխան ուժերի և կարողությունների պլանավորման նկատմամբ կենտրոնացված քաղաքական իշխանությունների կողմից վերահսկողություն իրականացնելու հրամայականով: Պատահական չէ, որ Հայաստանի պաշտպանական համակարգը, այսինքն՝ պաշտպանության նախարարությունն ու ԶՈՒ-ի Գլխավոր շտաբը, նույնպես ունի ինտեգրված բնույթ:

Հաջորդ միտումը պրոֆեսիոնալիզմի և պայմանագրային պահեստազորային համակարգի[8] համատեղումն է: Եթե պրոֆեսիոնալիզմը բարձրացնում է ԶՈՒ-ի մարտունակության մակարդակը, ապա պայմանագրային պահեստազորային համակարգն անհրաժեշտ է զորահավաքի միջոցով տարածքային պաշտպանություն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ այս համակարգի ներդրումը զորացրումից հետո ակտիվ զինծառայողներին քաղաքացիական մասնագիտությամբ վերապատրաստման, իսկ ԶՈՒ-ի կրճատման դեպքում (օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտության լուծումից հետո) նաև զորամասերի կոնվերսիայի անհրաժեշտություն է ստեղծում:

ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրն այն ձևաչափն է, որը համագործակցության դաշտ է ապահովում միաժամանակ ՆԱՏՕ-ի կառույցների, անդամ պետությունների և գործընկերների միջև: Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը», «Պլանավորման և վերանայման գործընթացը» և մյուս ծրագրերը, զորավարժությունները ու միջոցառումները, ինչպես նաև ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների հետ երկկողմ համագործակցության պլանները մշակվում և իրականացվում են ԳՀԽ շրջանակներում: Այս ամենի հետևանքով ՆԱՏՕ-ի կառույցների և անդամ երկրների հետ ձևավորված բարձր մակարդակի ռազմական համագործակցությունը լայն հնարավորություններ է ընձեռում փորձի փոխանակման, գրեթե բոլոր մասնագիտություններով փորձագետների ամենաբարձր մակարդակով խորհրդա-

[8] Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 53–54:

տվությունների կազմակերպման, փոխգործելիության ընդլայնման, այդ թվում՝ Խաղաղապահ բրիգադի կազմավորման, մի շարք կարևոր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման ու վերապատրաստման համար:

Վերջին տարիներին ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունն անցնում է որակապես նոր մակարդակի: Մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի կողմից առաջարկվող մի շարք ծրագրեր և նախաձեռնություններ, ինչպիսիք են «Պաշտպանական հաստատությունների կառուցում» գործընկերության գործողությունների ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ), «Արդար կառավարում» նախաձեռնությունը, գիտահետազոտական կենտրոնների հետ սերտ կապերի հաստատումը և այլն, լրացուցիչ հնարավորություններ են ստեղծել պաշտպանական պլանավորման, հայեցակարգային փաստաթղթերի մշակման, օրենսդրական ապահովման, պաշտպանական կառույցների արդիականացման ուղղությամբ արդյունավետ համագործակցություն զարգացնելու համար, իսկ դրանք պաշտպանական բարեփոխումների առանցքային ոլորտներն են:

Ցավոք, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության վերոնշյալ ձևաչափից բացի, եվրոպական մյուս կառույցների հետ համագործակցության ծրագրերը հնարավորություն չեն տալիս դրանք ծառայեցնելու պաշտպանական բարեփոխումների իրականացման նպատակին: Մասնավորապես՝ Եվրոպական Միության հետ պաշտպանության ոլորտում համագործակցությունը, չնայած փոխադարձ շահագրգռվածությանն ու մեծ հեռանկարներին, դեռ սաղմնային վիճակում է, իսկ ԵԱՀԿ-ի հետ համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է ռազմաքաղաքական բնույթի խնդիրներով և սպառազինությունների վերահսկման ոլորտով:

Ընդհանուր առմամբ, պաշտպանական բարեփոխումների ծրագրային գործընթացը ՀՀ պաշտպանության նախարարի կողմից բաժանվել է երեք փուլի.

1. *հայեցակարգային մոտեցումների և համապատասխան փաստաթղթերի մշակում*՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթների հստակեցման նպատակով (2007–2008 թթ.),

2. *պաշտպանության ռազմավարական վերանայում*՝ Զինված ուժերի առկա հնարավորությունների և արդիականացման անհրաժեշտությունների, պահանջվող բարեփոխումների ծավալների որոշման և պլանավորման նպատակով (2008–2010 թթ.),

3. *գործնական բարեփոխումների իրականացում*՝ Զինված ուժերի համար մատչելի ազգային ու միջազգային հնարավորությունների կիրառմամբ (2010–2015 թթ.):

Այս տարվա մայիսին ՀՀ Պաշտպանության նախարարը ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհրդի «26+1» ձևաչափով նիստի ժամանակ ներկայացրեց ՀՀ–ՆԱՏՕ ԱԳԳԾ-ով իրականացված բարեփոխումների առաջին երկամյա փուլի կատարողականը:

Բարեփոխումների երկրորդ փուլի՝ առաջիկա երկու տարիների հիմնական խնդիրն է լինելու պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացումը, որի ընթացքում կօգտագործվեն միջազգային ռազմական համագործակցությամբ ընձեռվող հնարավորություններն ու առաջավոր միջազգային փորձը: ՀՀ պաշտպանության նախարարի ցուցումով ռազմավարական վերանայման

գործընթացը ճիշտ ուղղորդելու և առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝

1. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» և «ՀՀ ռազմական դոկտրինի» մեջ ուրվագծված ՀՀ անվտանգային միջավայրն ու ռազմական սպառնալիքները ենթարկել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարով վերլուծության՝ այդ ձևաչափով Հայաստանի ազգային անվտանգության առաջնահերթությունները, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման գործում Զինված ուժերի դերն ու առաքելությունը որոշելու համար,

2. Հայաստանի ազգային անվտանգության առաջնահերթությունները և Զինված ուժերի դերն ու առաքելությունները հաշվի առնել ԶՈՒ-ի համապատասխան գործառութային ոլորտներում (անձնակազմ, կրթություն, պահեստազոր, ռազմատեխնիկական արդիականացում, մարտական պատրաստություն և այլն), ինչի շնորհիվ հնարավոր կլինի որոշել այդ առաքելությունների համար անհրաժեշտ ռազմական կարողությունների պահանջարկն ու ՀՀ ԶՈՒ-ի ուժային կառուցվածքը (լավագույն կազմակերպման, համալրման և սպառազինման ձևերը),

3. պարզել, թե ՀՀ Զինված ուժերը որ դեպքերում կարող են պահպանել առկա կառույցները, իսկ որ դեպքերում հարկ կլինի փոփոխել կամ արդիականացնել որոշ օղակներ: Որոշել ՀՀ ԶՈՒ-ի թվաքանակը՝ հաշվի առնելով նրա առաքելությունները և առկա ռիսկերը, որպեսզի ապահովված լինի այդ առաքելությունների կատարումը,

4. Զինված ուժերի կառուցվածքը և թվաքանակը որոշելիս հաշվի առնել արտաքին հարձակման հավանականության աստիճանը, քանի որ այն կարող է վտանգի տակ դնել ՀՀ ԶՈՒ-ի առաջնային առաքելության կատարումը՝ երկրի անվտանգության, պաշտպանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովումը,

5. ԶՈՒ-ի առաջնային առաքելության հետ մեկտեղ դիտարկել այլ կարևոր առաքելություններ, ինչպիսիք են, օրինակ, մասնակցությունը բազմազգ խաղաղապահական գործողություններին և արձագանքումը բնական կամ տեխնածին աղետներին, զանգվածային ոչնչացման զենքի (ԶՈԶ) տարածմանը, թմրադեղերի վաճառքին ու ահաբեկչությանը: Պետք է ուշադրություն դարձնել հատկապես արձագանքմանն այն ճգնաժամներին, որոնք հանգեցնում են արտակարգ դրության հայտարարմանը, դրանց ժամանակ ԶՈՒ-ի առաքելությունների սահմանմանը և կատարմանը: Յուրաքանչյուր առաքելության հավանականությունը, արդարացված ռիսկերը և ռիսկերի նվազեցմանն ուղղված քայլերը՝ ռազմավարությունը (ինչպիսիք են, օրինակ, տարածաշրջանային կամ միջազգային գործընկերների ու դաշնակիցների հետ ռազմական փոխգործության ընդլայնումը), նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան ԶՈՒ-ի կառուցվածքի որոշումը,

6. պաշտպանության ռազմավարական վերանայումը իրականացնել՝ հաշվի առնելով ԶՈՒ-ի արդիականացման ու կառուցվածքային փոփոխությունների ժամանակային կանխատեսումները և այդ փոփոխությունների հնարավոր ազդեցությունների որոշումը մինչ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը ու դրանից հետո:

ՀՀ Պաշտպանության նախարարի նախաձեռնությամբ պաշտպանության ռազմավարական վերանայումն իրականացնելու համար Հայաստանի Հանրա-

պետության Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով և հաստատվել են վերանայման փուլերն ու ժամանակացույցը: Ռազմավարական վերանայման տրամաբանությունը հուշում է, որ այս ժամանակաշրջանը պետք է լինի խորը ուսումնասիրությունների, համակողմանի վերլուծությունների և գիտական եզրահանգումների ժամանակաշրջան: Ուստի այս գործընթացին պետք է ծառայեցվեն միջազգային ռազմական համագործակցությամբ ընձեռվող բոլոր հնարավորություններն ու միջազգային փորձը:

## ОСУЩЕСТВЛЕНИЕ ОБОРОННЫХ РЕФОРМ В РАМКАХ ВОЕННОГО СОТРУДНИЧЕСТВА

*Д. Э. ТОНОЯН, полковник, начальник Управления Международного военного сотрудничества и оборонных программ МО РА*

РЕЗЮМЕ

За последние годы международное военное сотрудничество Министерства обороны РА стремительно развивается. Это развитие обусловлено не только расширением объемов и рамок сотрудничества, но и качественным характером преследуемых целей; оно полностью служит эффективному осуществлению оборонных реформ.

Международная вовлеченность Республики Армения в безопасностную и оборонную сферы, с одной стороны–членство в Организации Договора о коллективной безопасности, а с другой–построение постоянно развивающихся отношений на основе индивидуального плана сотрудничества с Организацией Североатлантического Договора, двустороннее сотрудничество с Российской Федерацией, США, Китаем и европейскими государствами, не только создают надежные международные гарантии для обеспечения безопасности, но и предоставляют широкие возможности для синтеза и применения концепций безопасности, принципов и стандартов этих организаций и государств.

Подписываемые и осуществляемые программы сотрудничества в двусторонних и многосторонних рамках, включенные в них мероприятия с точки зрения оборонных реформ взаимосопоставимы и целенаправлены на обеспечение перспективного развития Вооруженных сил РА в соответствии с современными требованиями.

Сегодня Министерству обороны РА оказывается международное экспертное, консультационное и практическое содействие в достаточных объемах. Оно затрагивает почти все сферы реформ–от стратегического уровня до тактического. С целью создания современных и достаточных возможностей для коллективной и индивидуальной обороны осуществляемые заимствование, адаптирование и внедрение передового международного опыта представляют собой один из главных элементов целенаправленного проведения оборонных реформ в РА.

# THE IMPLEMENTATION OF DEFENSE REFORMS WITHIN THE FRAMEWORK OF MILITARY COOPERATION

*D. E. TONOYAN, Colonel, Head of the Board of International Military Cooperation and Defense Programs, MoD, RA*

SUMMARY

In recent years the international military cooperation of the RA Ministry of Defense is impetuously developing. This development is conditioned not only by the extension of range and framework of cooperation, but also by qualitative nature of pursued goals; it fully serves the efficient implementation of defense reforms.

The international involvement of the Republic of Armenia in security and defense spheres, on one hand–the membership in the Collective Security Treaty Organization, on the other–the establishment of constantly developing relations on the basis of individual partnership plan with the North Atlantic Treaty Organization, the bilateral cooperation with the Russian Federation, the USA, China and European States, are not only reliable international guarantees for ensuring security, but also provide great opportunities for the synthesis and use of security conceptions, principles and standards of these security organizations and states.

The cooperation programs being signed and implemented, those in bilateral and multilateral framework, the measures included in them in terms of defense reforms are mutually comparable and targeted at ensuring perspective development of the RA Armed Forces in accordance with contemporary requirements.

Today, the RA Ministry of Defense is sufficiently rendered international expert, consulting and practical support. It touches upon almost all the spheres of reforms–from the strategic level to the tactical one. For the creation of modern and sufficient capabilities for the collective and individual defense the current adoption, adaptation and introduction of advanced international practice is one of the key elements of targeted implementation of the RA defense reforms.

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

*Ա. Բ. ԳԱՐԻՆ, պրոֆեսոր***



Ազգային անվտանգության վիճակը կարելի է վերլուծել իրային, նյութական մակարդակում, իրերի գոյության պայմանների մակարդակում և մետամակարդակում, այսինքն՝ ազգային անվտանգության թեմայով քննարկումների մեթոդների ռեֆլեքսիայի մակարդակում («մետամաթեմատիկայի» նման՝ ի տարբերություն «մաթեմատիկայից»):

Որևէ համակարգի գնահատման համար պարամետրերի ընտրությունը պատկանում է մետամակարդակին, և հաճախ այն որոշիչ է լինում հետազոտման օբյեկտի վերաբերյալ կարծիք կազմելիս, չնայած այդ ընտրության չափանիշները և նրա շարժառիթավորումը հաճախ վրիպում են վերլուծաբանի ուշադրությունից: Այս հոդվածում շեշտը դրվում է օպտիմալ ազգային անվտանգության համար պայմանների և առավելապես՝ մշակութային պայմանների ստեղծման վերլուծության վրա, պայմաններ, որոնք նույնպես հաճախ դուրս են մնում վերլուծաբանի տեսադաշտից:

Սկսենք մետամակարդակից: Իր երկրի մասին «ազգային շահեր» և «ազգային անվտանգություն» տերմիններով մտորումները հետկոմունիստական երկրների համար համեմատաբար նոր են. այս տերմինաբանությունը ազգային անվտանգության ռազմավարության ձևակերպման ստանդարտ ընթացակարգերի հետ եկել են անգլոսաքսոնական Արևմուտքից, որտեղ «ազգային» նշանակում է «պետական» (քանի որ այնտեղ ազգերը որպես համասեռություն ձևավորվում էին քաղաքական տարածքի միասնության տրվածության ֆոնի վրա): Խորհրդային Միությունում անվտանգության թեմայով մտորումները ձևակերպվել են աշխարհի վերաբերյալ համընդհանուր և համընդգրկուն, ազգի շրջանակներով չսահմանափակվող մարքսիստական տեսակետի տերմիններով: Գորբաչովն սկսեց խոսել անվտանգության ռազմավարության ոլորտում «համամարդկային արժեքների» մասին, ինչը տերմինաբանորեն խորթ էր արևմտյան ռազմավարական ականջին: «Տվեք մեզ ձեր ազգային շահերը, որպեսզի մենք հասկանանք, թե ինչի մասին է խոսքը», այսպիսին էր արևմտյան ռազմավարական մասնագետների վերաբերմունքը: Խորհրդային Միության փլուզումից

---

* Տպագրվել է 2006 թ. հմ. 4-ում:

** Փիլիսոփայական գիտությունների դոկտոր (ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության բաժանմունք) **Ալեքսանդր Գարինը** Ջ. Մարշալի անվան ռազմավարական հետազոտությունների եվրոպական կենտրոնի պրոֆեսոր է նաև քաղաքական փիլիսոփայության ոլորտում, փիլիսոփայական գիտությունների թեկնածու (Մյունխենի համալսարան), ունի մաթեմատիկայի մագիստրոսի աստիճան (Լենինգրադի պետհամալսարան): Ա. Գարինը ազգային անվտանգության պրոբլեմների գծով մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է: Գիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը ազգային անվտանգության մշակութային առումներն են:

հետո գորբաչովյան այս իդեալիստական փուլն ավարտվեց և, մեր կարծիքով, հետկոմունիստական երկրներում շատ քաղաքագետներ անցան ազգային շահի նոր տերմինաբանությանը, ցավոք, կտրուկ ձևով՝ հեռանալով բանականության համապիտանիությունից և սուզվելով աշխարհաքաղաքականության ազգային եսասիրության մեջ, ընդմին հաճախակի դա Մաքինդերի ժամանակների, այսինքն՝ 20-րդ դարի սկզբի, մակարդակի աշխարհաքաղաքականություն էր:

Ազգային անվտանգության տերմինների լեզուն սկիզբ է առնում փիլիսոփա Հոբսի ոգով արված այն ենթադրությունից, թե աշխարհը բաղկացած է ինքնիշխան պետություններից, և նրան բնորոշ է ազգային եսասերների միջև առկա քաոսի դեռևս բնական վիճակը: Այս կարգի մեթոդական «ռեալիզմը» չի վստահում խելամիտ հանրային բարիքի «իդեալիստական» ձևակերպումներին և գերադասում է, որ երկիրը որքան հնարավոր է շուտ և ազնվորեն ներկայացնի իր շահերը, և, միաժամանակ, այդ շահերը դարձնի այլ երկրների շահերի հետ հնարավորինս ոչ հակամարտային բնույթի: Այսպես. տնտեսության ոլորտում գերակայում է շահերի վրա հիմնվող պայմանագրի լեզուն, այլասիրական վարք չի սպասվում, փոխարենը դաշնակիցներից ակնկալվում է իրենց շահերի բարեկիրթ, լուսավորյալ ըմբռնումը: Համամարդկային բարիքի բանականությունն իր արգասիքները ներկայացնում է շահերի լեզվով այն նկատառումով, որ քերահավատները իրենն չմեղադրեն երեսպաշտության մեջ:

Միջազգային հարաբերությունների տեսության մեջ այդպիսի աշխարհաքաղաքական «ռեալիզմի» մոդելն ունի երկու գրավիչ կողմ՝ բովանդակային և ձևական: Բովանդակային կողմից այս մոտեցումը պատմականորեն ծագել է քաղաքականությունից կրոնական մոլեռանդության դուրսմղումից հետո, ինչպես եղավ կաթոլիկների և բողոքականների միջև ծագած երեսնամյա ֆունդամենտալիստական պատերազմի հետևանքով: Քաղաքականությունը առանձնացվել է որպես հատուկ ինքնավար ոլորտ, որն ազատված է կրոնի առաջնայնությունից: Այդպիսի մեթոդական «ռեալիզմը» վերացարկվում է երկրի ներքին ռեժիմի բնույթից, ինչպես «սև արկղից», կարևոր է մնում միայն եսասեր և միջազգային ասպարեզում իր շահը ռացիոնալ կերպով առավելարկող պետության վարքը: Այսպիսի մոտեցման դեպքում քաղաքականությունից անհետանում են բացարձակապաշտական (յակոբինյան) բնույթի մոլեռանդական հավակնությունները, բայց անհետանում են նաև կրոնական կամ կեղծ կրոնական բնույթի իդեալները: Քննադատների աչքում քաղաքականությունը ձեռք է բերում ցինիզմի երանգավորում: Մարքսիզմը, օրինակ, ընդհակառակը, խոսում էր ամբողջ մարդկության պատմության վարդագույն ապատակի մասին, թեև այն ներացնում էր մինչև դասակարգային նպատակ:

Ձևական կողմից նման «ռեալիզմի» մոտեցումը բավարարում է «Օկամի ածելիի» մեթոդական սկզբունքին, որը պահանջում է տեսական մոդելի նվազագունություն՝ «հարկ չկա բազմապատկելու էությունը առանց անհրաժեշտության»: Եվ կենսական ազգային շահերի լեզուն տալիս է այդպիսի մոդել:

Սակայն այս նվազագունությունն ունի իր գինը: Թեև ազգային անվտանգության ռազմավարությունն առաջին հերթին ստեղծվում է անվտանգության մասին երկրի ներսում գոյություն ունեցող կարծիքի համախմբման համար, սակայն այն ներկայացվում է նաև այլ երկրների: Բայց «ազգային շահի» լեզուն

հրապարակավ վատ է «վաճառվում» այլ երկրների: Ըստ սահմանման՝ շահը ծառայում է միայն մի որևէ խմբի՝ նրա պայմանների բարելավման համար: Այդ խմբից դուրս նա կասկածներ է հարուցում: Այսպես. խորհրդարաններում լոբբիստներն ստիպված են ապավինելու ընդհանուր բարիքի լեզվին, որպեսզի առաջ մղեն իրենց օրենքը: Այդ պատճառով միջազգային հարաբերությունների տեսության մեջ ռեալիզմի զարգացման համեմատ հարկ եղավ ուշադրություն դարձնել պետությունների միջև կրկնվող փոխգործությունների համար լավ համբավի ստեղծման կարևորության վրա: «Ռեալիզմի» եսասիրությունը մեղմացվեց «անվտանգության երկընտրանքի», «ռեժիմների» և «փափուկ իշխանության» *(soft power)* տեսությունների հավելումով, ընդսմին դրանք պնդում են, որ «ռեալիզմն» առանց իդեալիստական մասնաբաժնի չի համապատասխանում իրականությանը:

Բացի դրանից, նկազարկման այդպիսի մոդելը, որը վերացարկվում է պետության ներքին կառուցվածքից, ավելի լավ է համապատասխանում այն զարգացած երկրներին, որոնցում պետությունը հասարակությանն է տրամադրում իր ներքին կյանքի ոլորտների մի մասը, օրինակ՝ տնտեսությունը: Զարգացած երկրները անվտանգության մակարդակում մտահոգված չեն այսպիսի ոլորտների տրամադրմամբ: «Ռեալիզմի» մոդելն իր պարզագույն տեսքով չի կարող լիարժեք կերպով կիրառված լինել զարգացող երկրներում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ: Նույնիսկ զարգացած երկրների համար ազգային շահերի այդպիսի մոդելը լրացվում է համաշխարհային պատմության ընթացքի համընդգրկուն տարրով, օրինակ՝ բռնապետությունից անցում ժողովրդավարության, որը տեղ է գտել ԱՄՆ-ի ազգային դոկտրինում:

Զարմանալի չէ, որ հետկոմունիստական երկրների անվտանգության ազգային դոկտրինները շատ ավելի են հագեցված անվտանգության առումներով, քան արևմտյան երկրների դոկտրինները: Մշակութային բնույթի առումները նույնպես կարող են կարևոր նշանակություն ունենալ ազգային անվտանգության ռազմավարության համար, հատկապես՝ զարգացող երկրների դեպքում: Մշակույթ ասելով մենք հասկանում ենք ոչ թե «բախտի» անփոփոխ պարամետրը, այլ դինամիկական բնութագիրը, որը փոփոխվում է պատմության ընթացքում, ճիշտ է՝ դանդաղորեն: Բայց Արևմուտքում էլ են տեղի ունենում մետամակարդակում ազգային անվտանգության դոկտրինների ձևակերպման սկզբունքների մասին մշակութային առումներ ներառող բանավեճեր: Բավական է նշել, օրինակ, Ֆուկույամայի «Ամերիկան ուղեխաչքում. ժողովրդավարությունը, հզորությունը և նոր պահպանողականների ժառանգությունը» նոր գիրքը[1]:

Մետամակարդակում երկրի անվտանգության վերաբերյալ դատողությունների շարքին է պատկանում նաև հասարակության մեջ ազգային անվտանգության հարցերով բաց բանավեճերի առկայության և դրանց գիտականության մակարդակի հարցը: Այդպիսի բանավեճերի առկայությունը և գիտականության մակարդակը կարելի է ներառել այն պարամետրերից մեկի մեջ, որոնց միջոցով

[1] Տես *Francis Fukuyama.* America at the Crossroads. Democracy, Power and the Neoconservative Legacy. London, 2006:

մենք կարող ենք որոշել ազգային անվտանգության վիճակը: 1830-ական թվականներին Եգիպտոսից Ֆրանսիա մեկնած մուսուլմանական առաջին պատվիրակությունը (ըստ մի խորաքափանց մոլլայի ուսումնասիրությունների, որն այդ ճանապարհորդության մասին եգիպտացիների համար գիրք-հաշվետվություն է գրել) նշել է, որ ֆրանսիական հրետանու հաջողությունը, այն է՝ Եգիպտոսում Նապոլեոնի արշավանքի հաջողությունները, պայմանավորված է ֆրանսիական փիլիսոփայության, ընդհանրապես Ֆրանսիայում գիտության բացության և հետաքրքրասիրության հաջողություններով[2]:

Որքանո՞վ գիտական կարող է լինել վերլուծությունը մի այնպիսի հումանիտար ոլորտում, ինչպիսին ազգային անվտանգությունն է: Ազգային շահի լեզուն կարող է շփոթության մեջ գցել: Շահը այստեղ պետք է դառնա վերլուծության ոչ թե ձևը, այլ՝ օբյեկտը: Շահը, ի տարբերություն բանականությունից, հաջողություն է փնտրում, դատողականությունը՝ ըմբռնողություն: Դատողականությունը, ըստ Հաբերմասի ձևակերպման (իդեալական քննարկման դեպքում), պահանջում է ճշմարտության արտահայտում, այն փնտրելիս՝ նորմատիվային ճշմարտացիություն և այդ գործընթացում՝ անկեղծություն, այսինքն՝ ավելի լավ փաստարկի ճնշմամբ իր տեսակետը փոխելու պատրաստակամություն՝ կարևորագույն այլընտրանքային փաստարկների հաշվառմամբ[3]: Ընդհակառակը, շահը բևեռվում է տվյալ խմբի, տվյալ երկրի վրա, և այս դեպքում հեշտությամբ կարելի է աչքաթող անել համեմատության համընդգրկուն հորիզոնը:

Ազգային անվտանգության մեջ ռազմավարության սկզբունքը մեթոդական առումով մեզ հղում է պատմությանը, քանի որ ապագայի պլանավորումը, հետևելով շարունակականությանը, հնարավոր է միայն անցյալի ֆոնի վրա: Այստեղ կարևորություն են ստանում երկու հարց, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են մետամակարդակում պատմական գիտությանը. դրանք են՝ հետազոտության օբյեկտիվությունը և ամբողջությամբ վերցված պատմական գործընթացի ընկալումը (օրինակ՝ պատմության պարբերացման հարցը): Նախ՝ գիտականության օբյեկտիվության մասին:

Պատմական գիտության զարգացման և գիտակցման ընթացքում պարզ դարձավ, որ պատմաբանը կաշկանդված է հետազոտման օբյեկտի հեռանկարային ընկալմամբ. հետազոտման օբյեկտը ընտրվում է[4]: Միակ բանը, որ կարող է անել պատմաբանը, դա ընտրած հեռանկարի նախադրյալները գիտակցելն ու դրանք հստակ կերպով արտահայտելն է: Փաստերը, աղբյուրները, իհարկե, «վետոյի» իրավունք ունեն, սակայն պատմական նկարագրության մեջ վստահելի փաստերը համեմատաբար քիչ են, այդ իսկ պատճառով պատմաբանն ստիպված է առաջ քաշել վարկածներ փաստացի տվյալներն իրար հետ կապող «գծերի» վերաբերյալ: Մետապատմության մակարդակում կա դատողություն այն մասին, թե ինչպես պահպանել վերկուսակցական դիտորդի օբյեկտիվութ-

[2] Տես *Rif'a al Tahtawi.* Ein Muslim entdeckt Europa. Bericht über seinen Aufenthalt in Paris 1826–1831. München, 1989:

[3] Տես *Jon Elster.* Alchemies of the Mind. Rationality and the Emotions. Cambridge, 1999:

[4] Տես *Reinhart Koselleck.* Vergangene Zukunft. Zur Semantik geschichtlicher Zeiten. Frankfurt am Main, 1989:

յունը: Գիտությունը պահանջում է մրցողականություն և հակափաստարկի նկատմամբ բացություն, ինչպես ժամանակակից ազնիվ դատական համակարգում է: Մրցողականության և դատավորի առկայության դեպքում դատապաշտպանի դիրքը օրինական է: Վերլուծաբանը կարող է հանդես գալ երկու գործառույթով՝ որպես վերկուսակցական գիտնական և որպես «դատապաշտպան», որն ամենալավ փաստարկն է փնտրում քաղաքական գործընթացի կողմերից մեկի օգտին: Վերջին դեպքում նա հանդես է գալիս ոչ որպես գիտնական, այլ որպես այս կամ այն շահի պաշտպանության համար վառ ձևակերպումների միջոցով հասարակական կարծիքի ակտիվացման գործընթացի մասնակից: Կարևոր է չշփոթել այս երկու գործառույթները: Քաղաքական իշխանության և բանականության, քաղաքականության և գիտության զուգորդումը հետազոտության հատուկ թեմա է:

Իշխող քաղաքական գործիչը ընդդիմության նկատմամբ ունի մեծ առավելություններ. նա գերակա դեր ունի օրակարգի առաջադրման հարցում, քանի որ նրա վրա է կենտրոնացած ԶԼՄ-ների ուշադրությունը: ԶԼՄ-ները չեն հետաքրքրվում ընդդիմության ծրագրերով՝ նկատի ունենալով տվյալ պահին նրանց քաղաքական ոչ ռեալությունը, ուստի այն տպավորությունն է ստեղծվում, թե ընդդիմությունը կառուցողական ասելու բան չունի: Մյուս կողմից՝ եթե ընդդիմությունը պաշտպանում է կառավարության խելամիտ քայլերը, ապա հասարակության աչքում կորցնում է իր դեմքը: Իշխող քաղաքական գործիչը, ընդհակառակը, հասարակությանը դիմելիս կարող է ակտիվ կերպով «ռացիոնալացնել» իր փաստարկները. անգամ այն, ինչը շարժառիթավորվում է շահերով, ներկայացվում է որպես բանականությունից բխող՝ հանուն ընդհանուր բարօրության[5]: Ընդդիմին իրական բանականության ձայնը պարզապես կարող է անտեսվել: Քաղաքական գործչի համար դժվար է փաստել որևէ բացասական երևույթ, քանի որ ընդդիմությունն անմիջապես այդ իրավիճակի պատասխանատվությունը կվերագրի հենց իշխող քաղաքական գործչին՝ իրեն համարելով ավելի ընդունակ: Դրանով է պայմանավորված իշխանության միտումը՝ տեղեկույթի ընտրազատմամբ գունազարդելու գործերի վիճակը: Մյուս կողմից՝ հնարավոր է, որ որոշ քաղաքական գործողությունների արդյունքը կարող է ծառայել ի նպաստ ընդհանուրի, այդ թվում և ի նպաստ քաղաքական գործչի շահի: Այդ բանավիճային բարդություններում կարող է չքանալ քննարկման գիտականությունը:

Իշխող քաղաքական գործիչը կարող է փորձել (եթե կառավարման համակարգը թույլ է տալիս) խուսափել հասարակության լայն շրջանների կողմից իր համար ցավոտ թեմաների քննարկումից՝ դրանց «անվտանգայնացման» *(securitization)* միջոցով: «Անվտանգայնացումը» տերմին է, որը նկարագրում է մի գործընթաց, երբ կյանքի որևէ ոլորտ հայտարարվում է անվտանգության ոլորտ, որը գաղտնիության պատճառով պետք է զերծ լինի քննարկումից և ենթակա միայն կառավարության իրավասությանը: Հակադիր միտումը հասարակության հնարավորինս լայն շրջանների ներգրավումն է անվտանգության թեմայով քննարկումներում: Այսպես. անտիկ շրջանի Աթենքում ժողովրդավա-

[5] Տես *Bent Flyvbjerg*. Rationality and Power: Democracy in Practice. Chicago, 1998:

րության «հայտնագործության» հետևանքով քաղաքականության կարևորագույն թեմաներով քննարկմանը մասնակցող լսարանն ընդլայնվեց՝ ընդգրկելով բոլոր ազատ մարդկանց, այդ թվում և գյուղացիությանը[6]: Ժողովրդավարությունը քաղաքականացրեց հասարակությանը: Քաղաքացիականության հարցում առաջ եկավ հավասարության զգացում՝ հետին պլան մղելով գույքային տարբերությունների բարձր վարկը: Վերակառուցման վերջին տարիներին խորհրդային հասարակության քաղաքականացումը հիշեցնում էր այդ երևույթը:

Անվտանգության ոլորտի վերլուծության ժամանակ մասնագետի խնդիրը այդ առումով վերկուսակցականության պահպանումն է: Նրա ճանապարհին կարող է կանգնած լինել ոչ միայն շահը, այլև աննկատ հուզականությունը: Այդ պատճառով ցանկալի է, որ մարդն ինքն իրեն հաշիվ տա հույզերի (կրքերի), շահերի և բանականության հարաբերակցության հոգեբանական մեխանիզմի հարցում: Ջոն Էլստերը քաղաքական հոգեբանությանը վերաբերող իր աշխատություններում առաջարկում է այսպիսի վերլուծություն[7]: Միջպետական հարաբերությունները հագեցած են հուզական բանավեճով, որը ներգործում է դիալեկտիկորեն. հաճախ մարդիկ դիրքորոշում են ընդունում հակառակ մյուս կողմի կարծիքի: Այս դեպքում հույզերը կարող են աննկատ ձևով թելադրել համապատասխան փաստարկի համար տեղեկույթի ընտրությունը: Սոցիալական հոգեբանությունը «ատրիբուցիայի հիմնարար սխալ» է անվանում մարդկանց վարքը մակերեսորեն («դիսպոզիցիոն կերպով») մեկնաբանելու միամիտ հակումը՝ մարդու արարքը բացատրելով նրա բնավորությամբ[8]: Սեփական արարքները մարդիկ, ընդհակառակը, համարում են իրավիճակային՝ դրանք ընկալելով որպես գիտակցված պատասխան կոնկրետ իրավիճակի մարտահրավերներին: Սխալը միակողմանի պիտակավորումն է: Հաճախ մարդու նկատմամբ ունեցած համակրանքով կամ հակակրանքով են պայմանավորվում տիաժ հետևանքներով արարքի շարժառիթների վերաբերյալ դատողությունները. մարդիկ հակված են այդ արարքը դիտելու որպես բացառություն, ոչ դիտավորություն, եթե մարդը համակրելի է, և, ընդհակառակը, հակակրելի անձի եզակի արարքը միանգամից մեկնաբանվում է որպես ընդհանրապես նրան բնորոշ արարք: Ատրիբուցիայի այս հոգեբանական առանձնահատկությանը պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ մարդ բնականորեն հակված է հաճոյաքանելու իր խմբին, օրինակ՝ իր երկրին, ի հակադրումն այլ խմբի: Վերլուծաբանը պետք է վեր գտնվի այս բնական հուզական և հոգեբանական որոգայթներից. «Պլատոնը բարեկամ է, բայց ավելի մեծ բարեկամ է ճշմարտությունը»:

Հակափաստարկումների համար քննարկման բացությունը հնարավորություն է տալիս քաղաքական ուղեգիծը շտկելու ի նպաստ երկրի: Այսպես. Վալտեր Միդը ամերիկյան քաղաքականության ընկալման համար կարևոր «Հատուկ կանխատեսում» իր հայտնի գրքում նշում է, որ ԱՄՆ-ն սկզբում երկյուղած

---

[6] Տես *Christian Meyer.* Die Entstehung des Politischen bei den Griechen. Frankfurt am Main, 1983:

[7] Տես *Ջոն Էլստեր,* Նշ. աշխ.:

[8] Տես *David G. Myers.* The Fundamental Attribution Error. Why Do We Make the Attribution Error? New York, 1996:

երկիր էր, և որ միայն ծույլը չէր քննադատում նրա «ոչ հմուտ» արտաքին քաղաքականությունը[9]: Չերչիլն ասում էր, որ ԱՄՆ-ը միշտ ընդունում է միակ ճիշտ որոշումը... այն բանից հետո, երբ արդեն փորձել է մնացած բոլոր տարբերակները: Սակայն երկրի ներսում սուր քննարկումների և դրան հետևող շտկումների հնարավորությունը հանգեցնում էր ԱՄՆ-ի ազդեցության աճմանը:

Ազգային անվտանգության ոլորտում դատողությունների վերկուսակցականության պրոբլեմը քննարկվում է նաև ԱՄՆ-ում: Ֆարիդ Զաքարիան իր «Ազատության ապագան: Ոչ ազատական ժողովրդավարությունը տանը և արտասահմանում» գրքում գրում է վերկուսակցական գիտության պակասի մասին. ըստ ձևակերպման «ուղեղային շատ կենտրոններ» անկողմնակալ վերլուծություն կատարելու փոխարեն փնտրում են ամենալավ փաստարկները հօգուտ իրենց հովանավորների կուսակցական քաղաքականության[10]: Վերլուծաբանը ցանկանում է ազդեցիկ լինել, ԱՄՆ-ի նախագահները արտաքին գործերի նախարարներին ընտրում են իրենց դուր եկող ուղղությանը հարող պրոֆեսորների թվից: Այդ պատճառով ազգային անվտանգության քննարկման գործում կարևոր ռազմավարական նշանակություն ունի անկողմնապահության մշակույթի մթնոլորտի ստեղծումը:

Մետապատմության երկրորդ առումն այն է, թե մենք ինչպես ենք ընդհանուր առմամբ ընկալում պատմության ընթացքը, ինչն իր արտացոլումն է ստանում պատմության պարբերացման մեջ: Պարտադիր չէ, որ «պատմական կոորդինատների եվրոպական համակարգը» համընկնի պատմության վերաբերյալ այլ պատկերացումների հետ, օրինակ՝ ֆունդամենտալիստական մուսուլմանական տեսակետների հետ:

Պատմության ընկալման կտրուկ փոփոխություն տեղի ունեցավ Ֆրանսիական հեղափոխության ժամանակ, երբ հոծ բազմությունների ճնշման ներքո արագ ընդունվում էին աննախադեպ որոշումներ, որոնք հանգեցնում էին հասարակական կյանքի կտրուկ փոփոխությունների[11]: Այդ պատճառով առաջ է գալիս «Նոր Ժամանակ» տերմինը: Փոփոխությունների այդպիսի տեմպի լավատեսական ընկալմամբ պատմությունը հանդես է գալիս որպես առաջադիմական զարգացում՝ զուգակցված դրական և անկանխատեսելի նորարարությունների ակնկալիքով: «Օ՜, որքա՜ն զարմանահրաշ հայտնագործություններ է մեզ համար պատրաստում լուսավորության դարը»: Դրան համապատասխանում է գծային առաջադիմության բանավիճորեն երանգավորված ընկալումը. ոչ թե միապետությունից, այլ բռնապետությունից դեպի հանրապետություն (այնուհետև՝ ժողովրդավարություն), ինչպես դա նշված է ԱՄՆ-ի ժամանակակից Ազգային ռազմավարության մեջ: Պատմության տեմպի և անկանխատեսելիության ընկալման հոռետեսական կողմը խթանեց պահպանողականության շարժումը: Միշտ չէ, որ պատմության այսպիսի ընկալումն ընդունվում է այլ մշակույթների կողմից: Այս դեպքում պատմության ընկալման կոորդինատները

---

[9] Տես *Walter Russell Mead.* Special Providence: American Foreign Policy and How It Changed the World. Routledge, 2002:

[10] Տես *Fareed Zakaria.* The Future of Freedom. Illiberal Democracy at Home and Abroad. 2004:

[11] Տես *Ռայնհարդ Կոզելեկ,* Նշ. աշխ.:

տարբեր երկրների դեպքում չեն համընկնի, ինչը կարող է դառնալ մշակույթների միջև հակամարտությունների ծագման շարժառիթ: Պատմության ժամանակակից եվրոպական ընկալման թարմությունը շեշտելու համար հիշենք այն հեռանկարը, որը եղել էր մինչև Նոր Ժամանակի հեղափոխությունները, օրինակ՝ ԱՄՆ-ի հիմնադիրների մտքում (նրանց «Դաշնապաշտական նոթագրություններում»):

Համաձայն արիստոտելյան տեսակետի, որը որոշ փոփոխություններով ամենուր ընդունվել է մինչև 19-րդ դարի սկիզբը, կան վերջնական թվով վարչակարգեր՝ միապետությունից մինչև ժողովրդավարություն, և երկրները, որպես կանոն, իրենց պատմության ընթացքում հաջորդաբար ընտրում են դրանք՝ շրջանով անցնելով մեկից մյուսը[12]: Երեք լավագույն ձևի կառավարումները, որոնք հոգ են տանում ընդհանուր բարիքի մասին, միապետությունը, ազնվապետությունը և ժողովրդավարությունն են, սակայն դրանք կարող են այլասերվել՝ վերածվելով, համապատասխանաբար, բռնապետության, խմբիշխանության և ամբոխապետության (ամբոխի իշխանությունը): Պոլիբիոսը Հռոմի հաջողության գաղտնիքը բացատրելու համար այս սխեմայում ավելացրեց միապետականի, ազնվապետականի և ժողովրդավարականի տարրերի հաշվեկշռված մասնաբաժինների իդեալը: Այսպես էին մտածում մինչև 18-րդ դարի վերջը: Այս տեսանկյունից պատմությունը սկզբունքորեն ոչ մի նոր բան չի տվել. այն կարող էր կյանքի ուսուցիչը լինել, նրա պաշարից միշտ կարելի էր վերցնել ընթացիկի նմանակը: Միաստվածությունը բախտի այդ հավերժական շրջանին ավելացրեց Հովհաննու Հայտնությունը՝ «աշխարհի վախճանի մասին», սակայն աշխարհի կերպարանափոխումը պետք է տեղի ունենար սովորական էմպիրիկ պատմության սահմանից դուրս: Ֆրանսիական հեղափոխության ժամանակ վարչակարգերի հաջորդական փոփոխման տեսությունը մղվեց հետին պլան՝ իր տեղը զիջելով դեպի հանրապետություն կամ ժողովրդավարություն գծային առաջընթացի տեսակետին:

Պարզ է, որ պատմության ֆունդամենտալիստական մուսուլմանական ընկալումը չի ընդունում կոորդինատների այս համակարգը: Իսլամում «հիմնամտածողականության»[13] ուղղությունը իսլամի հիմնադրման դարաշրջանը դիտում է որպես հավերժական ընդօրինակման ժամանակաշրջան՝ ընդհուպ մինչև Հայտնությամբ կանխատեսվող վախճանը: Մուհամեդ մարգարեի՝ Մեդինայի սահմանադրությունը ոսկե ժամանակի սահմանադրություն էր: Ղուրանի պատմական մեկնաբանությունը, նրա ծագման պայմանների հետազոտումը այդ երկրներում արգելված են: Շարիաթի օրենքները բխում են ընդօրինակման նմուշների արտապատմականությունից: Նորամուծություններից ակնկալում են ոչ թե առաջընթաց, այլ անկում: Առկա է անապատային ցեղային ժողովրդավարության ձգտում:

«Պատմական կոորդինատների» համակարգի ընտրությունը, այսինքն՝ պատմության ընթացքի ընդհանուր ըմբռնումը, տեղի է ունենում արդեն մետա-

[12] Տես նույն տեղում:

[13] Տես *Irshad Manji.* The Trouble With Islam: A Wake Up Call For Honesty and Changing. Canada, 2003:

մակարդակում, և նրանից են կախված միջազգային քաղաքականության զարգացման միտումների դրական կամ բացասական գնահատումները:

Մետամակարդակից անցնենք ազգային անվտանգության գործուն համակարգի ստեղծման համար անհրաժեշտ մշակութային պայմանների վերլուծության մակարդակին:

«Ազգային անվտանգություն» բառակապակցությունը ենթադրում է օբյեկտի՝ մարդկանց որոշակի խմբի միասնականություն: Մարդկանց խմբային վարքի վերլուծության համար նպատակահարմար է առանձնացնել տարբեր շերտեր. էվոլյուցիոն ծրագրով տրվող կենսաբանական շերտ, հոգեբանական-հուզական շերտ, խմբային նույնականության ձևավորման մշակութային շերտ և մշակութավարքային շերտ, որը կապ ունի արդիականացման պահանջների հետ:

Մարդու կենսաբանական բաղադրամասը պայմանավորում է մարդու վարքը՝ չորոշարկելով այն, քանի որ մարդը մշակութորեն է ձևավորում այդ «նյութը»: Էտոլոգիան՝ կենդանիների վարքի մասին գիտությունը, հնարավորություն է տալիս կենդանիների խմբային վարքը համեմատելու մարդկանց խմբերի վարքի հետ: Ըստ ժամանակակից դարվինական տեսության՝ կենդանիներին կառավարում է զավթողագործության և իրենց ընտանեկան գեների պահպանման ու մրցակիցների գեների ոչնչացման սկզբունքը: Պրիմատները հարձակվում են մրցակցող խմբերի վրա՝ ծածուկ սպանելով օտար մանուկներին ու ծերերին: Այստեղից էլ էտոլոգները եզրակացնում են, որ մարդն ունի այդ կենսաբանական նյութին քաղաքակիրթ կերպով հակազդելու երկու այլընտրանքային հնարավորություն[14]: Մեկը իր ընտանիքի անդամների սպանության արգելման շեմային պատնեշի տարածումն է ընդարձակվող փոխաբերական «ընտանիքի»՝ ցեղի, տարածաշրջանի, երկրի, միության, ամբողջ մարդկության վրա: Ընդսմին այդ քաղաքակիրթ տարածման վրա կատարվող էներգիական ծախսերն աճում են «ընտանեկանության» շառավղի մեծացման համեմատ՝ հասնելով մինչև առավելագույնը՝ ընդհուպ համամարդկային մարդասիրությունը: Այլընտրանքը, որը հանգեցնում է ազրեսիվ էներգիայի անջատմանը, գործում է հակառակ ուղղությամբ. օգտվելով ռեսուրսների պակասից՝ կրճատել ընտանեկանության շառավիղը, փնտրել օտարներին՝ նրանց համարժեք շփումից բացառելու, կամ տրամաբանական սահմանում՝ ոչնչացնելու համար: Շատ երկրներում դեռևս չի ավարտվել ցեղային, տարածաշրջանային պատկանելության հիման վրա բնակչության համախմբումից («իմ ավանդական խումբը միասնական ձայն է») անցումը համախմբմանը անհատական վարվեցողականության ժամանակակից սկզբունքների հիման վրա («մեկ մարդ՝ մեկ ձայն»): Այստեղ մարդասիրությանն ուղղված խմբային վարքի կենսաբանական գործոնի մշակութային ձևավորման կառավարումը ազգային անվտանգության խնդիր է, ինչը լավ երևում է Հարավսլավիայի օրինակով:

Կենսաբանական շերտից վեր կարելի է վերացականորեն առանձնացնել խմբային վարքի հոգեբանական-հուզական շերտը, որը նպատակահարմար է հաշվի առնել ազգային միասնության պայմանների վերլուծման ժամանակ: Ըստ

[14] Տես *Christian Vogel.* Vom Töten zum Mord. Das wirkliche Böse in der Evolutionsgeschichte. München, 1989:

սոցիալական հոգեբանության՝ մարդկանց ցանկացած խումբ ինքնաբերաբար է մշակում իր վարքային համակարգը՝ որպես կանոն այն հակադրելով իր հետ շփվող հարևան խմբի վարքին: Այդ հակադրությունը հիմնված է իր խմբի մեծարման վրա[15]: Իր խմբի և նրա անհատների բնութագրերն ընդունվում են որպես նորմատիվային: Գործերի ոչ նորմալ դրվածքի դեպքում, օրինակ՝ երկար ժամանակ այլ խմբի ենթարկվելու պարագայում, կարող է առաջանալ կոլեկտիվ նևրոզ, երբ իր խմբի ստանդարտներն ընկալվում են որպես մյուս խմբի ստանդարտներից որակապես ավելի ցածր: Դրան ի պատասխան՝ «նատիվիստական» արձագանքը պնդում է, թե իրենք մրցակցից վաղ են հասել տվյալ նվաճումներին (օրինակ՝ մարդու իրավունքների մասին իբր արդեն գրված է Ղուրանում):

Սոցիալական հոգեբանության մասնագետները յուրային խմբի նկատմամբ դրսևորած այդ պրիմիտիվ հաճոյաբանությունը, որն արտահայտվում է ի հակադրումն մյուսների, համարում են նախապաշարմունքների և խտրականության հիմքը: Արդյո՞ք շփումն օգնում է դրանց հաղթահարմանը: Ո՛չ, քանի որ նախապես բացասական հուզական վերաբերմունքը հանգեցնում է տեղեկույթի բացասական ընտրազատմանը՝ «Ես սպասում էի, և ես տեսա» սկզբունքով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ, օրինակ, օտարատյացները հուզական նախապաշարմունքից միանգամից անցնում են իրենց չսիրած խմբի նկատմամբ բացասական կարգի քաղաքական միջոցառումներ առաջարկելուն և միայն դրանից հետո են բանական փաստարկ փնտրում՝ այդպիսի միջոցառումներն արդարացնելու համար: Նախապաշարմունքների հաղթահարմանը կարող է օգնել միայն երկու խմբի համար էլ ընդհանուր որևէ կենսական խնդիր, երբ մի խմբի անդամները մյուս խմբի կարիքն են զգում: Այդ խնդիրը կարող է լինել դրական կամ բացասական, օրինակ, պաշտպանություն սիաբեկչությունից:

Երկրի բնակչության հիմնական խմբերի ինքնագիտակցության այս հոգեբանական գործոնը՝ ինքնագիտակցությունների համատեղելիությունը, կարող է լինել տվյալ երկրի ներքին անվտանգության վիճակի գնահատման պարամետրերից մեկը: Այդ ոլորտում անվտանգության ռազմավարությունը պետք է գործադրի դրական ուղղվածությամբ ջանքեր: Ծայրահեղ ճգնաժամային իրավիճակ՝ ջարդերի, քաղաքացիական պատերազմի հասցված օտարատեցություն, մենք կարող ենք դիտել, օրինակ, Դարֆուրում:

Խմբային ինքնաբերական գիտակցության հոգեբանական-հուզական շերտից վեր կարող ենք առանձնացնել ազգային նույնականության բուն մշակութային ձևավորման շերտը: Բենեդիկտ Անդերսոնը իր հայտնի «Երևակայական հանրություններ» գրքում ազգային գիտակցության ձևավորման գործընթացում շեշտում է սուբյեկտիվ գործոնի առաջնայնությունը[16]: Մարդկանց գիտակցության մեջ ազգի միասնականությունը կարող է ձևավորվել ըստ երկու մոդելի՝ սկզբնական քաղաքական միասնության հիմքի վրա (այսպես է եղել Ֆրանսիայում, և այդպես ստիպված են ձևավորել ազգը հետգաղութային երկրները), կամ

[15] Տես *Դևիդ Գ. Մայերս,* Նշ. աշխ.:

[16] Տես *Benedict Anderson.* Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism. New York, 1991:

էլ՝ միասնական մշակույթի ձևավորման հիման վրա, որին հետևում է անկախ պետություն ներկայացնելու պահանջը: Ընդմին ընտրախավերը ժողովրդին առաջարկում են տեղային բարբառային նախադրյալների հիման վրա միասնական բարձր մշակույթի ստեղծման ծրագիր՝ նորմատիվային լեզվի ստեղծում (տեղային ֆոլկլորի հավաքագրում՝ բայց ստանդարտացված լեզվով), փորձ՝ մարդկանց համոզելու, որ իրենց համար ավելի լավ կլինի ապրել և հաջողության հասնել նոր պետության մեջ[17]: Այս ծրագիրը ժողովուրդը կարող է ընդունել կամ չընդունել: Այսպես. Գերմանիայի առանձին պետությունները ի հեճուկս Ֆրանսիայի ձգտում էին միավորվելու մշակույթի ոլորտում: Այդ գործընթացը մոդել դարձավ Արևելյան Եվրոպայի շատ երկրների համար: Գերմանիան չկարողացավ Շվեյցարիայի գերմանախոս բնակչությանը ներքաշել այդ գործընթացի մեջ, իսկ ավստրիացիները, ելնելով քաղաքական հանգամանքներից, մեկ մտնում էին Գերմանիայի կազմի մեջ, մեկ դուրս գալիս: Այսպես չեխերը ձեռք բերեցին իրենց պետությունը առաջին համաշխարհային պատերազմից հետո: Բնական է, որ ճարտասանորեն այս գործընթացը ներկայացվեց որպես ոչ թե կառուցում, այլ ազգի թաքնված «էության» բացահայտում: Ազգային մշակութային կազմավորումների գոյության նախանշվածության գաղափարը Նոր Ժամանակի փիլիսոփայական գաղափար է (Հերդեր, 18-րդ դարի վերջ): Պատմական կոորդինատների մյուս համակարգում՝ մուսուլմանական աշխարհում, ումմայի կրոնական միասնության գիտակցումը խոչընդոտում է Եվրոպայի օրինակով տարածքաազգային գիտակցության արմատավորմանը: Տվյալ երկրում ազգային անվտանգության վիճակի վերլուծության ժամանակ նպատակահարմար է որոշել, թե որ փուլում է գտնվում այդ երկիրը բնակչության կողմից իր ազգային համախմբվածության գիտակցման առումով: Այդ գործոնը կարող է լինել ազգային անվտանգության գնահատման պարամետրերից մեկը: Այսպես, օրինակ, Ֆրանսիայում կրկին ծագել է նման խնդիր, որին ֆրանսիական քաղաքականությունը պատասխան է փնտրում: Ֆրանսիական հանրապետական իդեալը ենթադրում է այնպիսի քաղաքացու, որը կույր լինի հասարակական ոլորտում էթնիկական սկզբունքի նկատմամբ, ինչը շատ վիճելի է:

Մշակութային առումով ազգի նույնականությունը կարող է ձևավորվել ցանկացած խորհրդանշական պատկերացման շուրջ, ինչպիսիք են կրոնը, էթնոսը, տարածքը, սահմանադրությունը և այլն: Այս սուբյեկտիվ գործընթացը նկարագրվում է «միֆոմոտորիկա» տերմինով[18]: Այստեղ ընտրախավն ընտրում է որևէ խորհրդանիշ, որը, որպես կանոն, հակադրվում է հարևանի կամ մարտահրավեր նետող այլ խմբի խորհրդանիշին: Ընտրված խորհրդանիշի շուրջ ստեղծվում է հիմնադիր ու միավորող առասպել: Այսպես կարելի է մեկնաբանել միաստվածության «հայտնագործությունը» և նրա շուրջ հրեական նույնականության ստեղծումը՝ ի հակադրումն հին Եգիպտոսի[19]: Փարավոնին՝ աստվածների և

---

[17] Տես *Miroslav Hroch.* Social Preconditions of National Revival in Europe: a Comparative Analysis of the Social Composition of Patriotic Groups Among the Smaller European Nations. London, 2000:

[18] Տես *Jan Assmann.* Herrschaft und Heil: Politische Theologie in Altägypten, Israel und Europa. Frankfurt am Main, 2002:

[19] Տես նույն տեղում:

ժողովրդի միջև այդ միջնորդին, պատճենելու փոխարեն հրեաները Աստծու հետ «կնքեցին» անմիջական պայմանագիր: Սննդի վերաբերյալ որոշ կրոնական արգելումների իմաստը յուրային խմբի սահմանազատումն էր մյուսներից, ինչը հատկապես կարևոր էր հին հրեաների բաբելոնյան տարագրման շրջանում, երբ կար ձուլման վտանգ: Միաստվածության հետ մեկտեղ, ի հակադրումն հեթանոսության, կրոն (այդ թվում՝ քրիստոնեական և մուսուլմանական) ճշմարիտի և ստի կատեգորիաների միջոցով ներթափանցում է անհանդուրժողականությունը[20]: Ազգային անվտանգության ժամանակակից ռազմավարության համար կրոնի բնագավառում միֆոմոտորիկայի մարտահրավերը միաստվածության կոնկրետ կրոնների ճշմարիտության մասին պատկերացումների և դրանց հակադրման՝ հանդուրժողության ու անհանդուրժողության զուգակցումն է:

Այս մարտահրավերներին եվրոպական պատասխաններից մեկը քաղաքականությունից կրոնի առանձնացումն էր, ինչի հետ կապված է քաղաքականության էության վերաբերյալ որոշակի տեսակետը: Կան քաղաքականության երկու ծայրահեղական ըմբռնումներ: Առաջինը ենթադրում է, որ քաղաքականությունը մի ոլորտ է, որտեղ լուծվում են ընդհանուր բարիքի հարցերը՝ ի տարբերություն սեփական բարիքի ոլորտից, օրինակ՝ ձեռնարկչությունից: Այսպիսի մոտեցումը մատնանշում է փոխզիջումներ և ոչ բռնի գործողություններ նաև քաղաքականության մեջ: Քաղաքականության էության վերաբերյալ մեկ այլ տեսակետ Վայմարյան հանրապետության ճգնաժամային տարիներին հաջող կերպով արտահայտել է Կարլ Շմիտը[21]: Նա քաղաքականությունը առանձնացրել է որպես բարեկամների և թշնամիների որոշման ոլորտ[22]: Քաղաքական չափումը մաքուր տեսքով առավել ցայտուն դրսևորվում է արտակարգ իրավիճակում, երբ նորմալ ժամանակների համար ստեղծված իրավունքը լռում է, և գործն ակամա սպասում է քաղաքական առաջնորդի անձնական վերիրավական որոշման: Գերիշխանն է նա, ով որոշում է թշնամուն: Այս գործընթացի ծավալումը հանգեցնում է «քաղաքական աստվածաբանության», եթե դրան հավելվող կրոնական տեսակետը թշնամուն դարձնում է Աստծու թշնամի, բացարձակ թշնամի, որի հետ չի կարելի փոխզիջումների գնալ, այլ միայն՝ ոչնչացնել: Այսպիսի դիրքորոշման դեմ պացիֆիզմն անզոր է. ձեր ընդդիմախոսի ազատ կամքը կարող է անկախ ձեր պացիֆիստական դիրքորոշումից ձեզ համարել բացարձակ թշնամի: Ավելի մեղմ ձևով քաղաքական աստվածաբանությունը կարող է հակամարտության ժամանակ շարժառիթավորել մեծ ռիսկի դիմելու պատրաստակամությունը, քանի որ Աստծուն համարում է իր կողմնակիցը: Նրանք, ովքեր ժխտում են քաղաքական աստվածաբանությունն իրենց համար, երբեմն մտովի չեն կարողանում ընդունել, որ այն կարող է գոյություն ունենալ ուրիշների համար, և այդ պատճառով փորձում են այն վերամեկնաբանել օգտապաշտական բացատրություններով. աղքատությունը, շահագործումը և նմանատիպ երևույթները իբր հանգեցնում են անզիջողական դիրքորոշման: Քաղաքականության ոլորտի այս

[20] Տես *Jan Assmann.* Die Mosaische Unterscheidung. Oder der Preis des Monotheismus. Hanser, 2003:

[21] Տես *Kurt Sontheimer.* Antidemokratisches Denken in der Weimarer Republik. München, 1968:

[22] Տես *Carl Schmitt.* Der Begriff des Politischen. Berlin, 2002:

կամ այն ըմբռնման ընտրությունն ընդհանուր առմամբ բխում է մետամակարդակում ընդունված որոշումից, և այն (գիտակցված է, թե ո՛չ) պայմանավորում է ազգային անվտանգության ռազմավարության ուղղությունը:

Հետամնաց երկրի համար՝ ի հակադրումն առաջատար երկրների, միֆոմոտորիկան կարող է տալ «մշակույթի» նույնականության մոդելն՝ ընդդեմ «քաղաքակրթության»: Այսպես. Գերմանիան իրեն համարում էր մշակույթի ժողովուրդ *(Kulturvolk)*՝ ի տարբերություն Ֆրանսիայի «քաղաքակրթությունից», և արևմտյան քաղաքակրթությունից մշակույթի պաշտպանության դրոշի ներքո վարել է երեք պատերազմ, ընդհուպ մինչև 1945 թ.[23]: Այս հակադրության մեջ մշակույթն ինչ-որ ազգային, իսկական երևույթ է՝ որպես հակակշիռ «միայն» մակերեսային տեխնածին քաղաքակրթության, որն ընկալվում է որպես ագրեսիվ և ավերիչ: Վայմարյան հանրապետությունում այդ մոդելին գումարվեց բանավեճը՝ ծագած երկու տեսակի հանրությունների՝ կոլեկտիվիստական բնույթի համայնքների և անհատապաշտական բնույթի ազատական հասարակության կողմնակիցների միջև (*Gemeinschaft-ն* ընդդեմ *Gesellschaft-ի*), ինչը, իհարկե, կեղծ, պարտադրված երկընտրանք էր[24]:

Այսօր հասնելու ձգտող երկրների միֆոմոտորիկայի «աչքում» «իսկական մշակույթին» դիմակայող «մակերեսային քաղաքակրթության» քավության նոխազի դերի թեկնածուն իհարկե ԱՄՆ-ն է: Ներկայումս ազգային անվտանգության օպտիմալ ռազմավարության մեջ պետք է ձգտել դրական ազդեցություն գործելու միֆոմոտորիկայի նման գործընթացների վրա, օրինակ՝ դպրոցական դասագրքերում միֆոմոտորիկայի նկատմամբ վերահսկողություն սահմանելու միջոցով:

Ազգային անվտանգության ոլորտը ենթադրում է մրցակցային միջավայր, որտեղ բնական է երկրի մրցունակության ծեռքբերման ձգտումը: Մրցակցության և մրցության գաղափարի նկատմամբ մշակութային վերաբերմունքը տարբեր փիլիսոփայական ու պատմական «կոորդինատների համակարգերում» տարբեր է: Միխայել Վալցերը առաջ է քաշում արդարության հայեցակարգ, որն ընդգրկում է ինչպես նրա ընդհանուր ուղղությունը մրցակցային աշխարհում, այնպես էլ նրա մշակութային փոփոխակները՝ կախված տվյալ երկրից[25]: Ընդհանուր առմամբ մրցության գաղափարը խրախուսվում է, քանի որ անհատին հնարավորություն է տալիս բացահայտելու իր ներուժը և այդ արարչագործության շնորհիվ երկրի ներուժը բարձրացնելու նոր մակարդակի: Տվյալ երկրի մշակույթի գործն է որոշել (իր օրենսդիրների միջոցով), թե հնարավոր բարիքների որ ոլորտներում սկսվի մրցությունը և ինչ պայմաններով, իսկ որ ոլորտներում այն պետք է հանուն համերաշխության դադարեցվի: Արդարությունը պահանջում է, որ լինեն շատ այդպիսի մրցություններ բարիքի համար, ընդսմին՝ յուրաքանչյուր բարիքն իր ոլորտում ու այդ մրցությունների հավասար կարգավիճակներով, և որ մի ոլորտում մրցության պարգևները չվերածվեն մյուս ոլորտում ստացված պար-

[23] Տես *Norbert Elias.* Über den Prozeß der Zivilisation. Frankfurt am Main, 1976:

[24] Տես *Կուրտ Զոնթհայմեր,* Նշ. աշխ.:

[25] Տես *Michael Walzer.* Spheres of Justice. A Defense of Pluralism and Equality. New York, 1983:

գևի, այն է՝ որ, օրինակ, քաղաքական գործիչը չհարստանա պաշտոնի հաշվին: Չպետք է լինի գերակայող բարիք, որին տիրանալը հանգեցներ մյուս բոլոր բարիքներին տիրանալուն: Ռազմավարությունը պետք է նպաստի այդպիսի համակարգի ստեղծմանը:

Որո՞նք պետք է լինեն խաղի օպտիմալ կանոնները, որ նպաստեն տնտեսական ոլորտում ծավալված մրցության ընթացքում մարդու (և երկրի) ներուժի լիակատար դրսևորմանը: Տնտեսագետ Հերնանդո դը Սոտոն իր «Կապիտալի գաղտնիքը» գրքում[26] բացատրում է ֆրանսիացի պատմաբան Ֆերնան Բրոդելի այն դիտարկումը, որ շուկա եղել է բոլոր քաղաքակրթություններում, իսկ կապիտալիզմը (այսինքն՝ իսկայական կապիտալներով շուկան) ծագել է միայն Եվրոպայում[27]: Ինչու, հարցնում է դը Սոտոն, 200 երկրներից միայն 25-ն են արդյունավետ կապիտալիստական երկրներ: Դը Սոտոն վկայակոչում է Հարոլդ Բերմանի այն գաղափարները, որոնք արտահայտված են վերջինիս «Իրավունք և հեղափոխություն: Արևմտյան իրավական ավանդույթի կայացումը» գրքում[28]: Ըստ Բերմանի՝ 11-րդ դարում Եվրոպայում անհակասական, օրինակարգված, քաղաքագետներից վեր կանգնած այնպիսի իրավունքի համակարգի մշակումը, որը տնօրինում են ոչ թե քաղաքագետները, այլ մասնագետները, հանգեցրեց Արևմուտքի աստիճանական տնտեսական վերելքի, քանի որ այդ իրավունքը գործարարներին տվեց պաշտպանվածություն, այսինքն՝ այնպիսի մրցության կանոններ, որի դեպքում գործարարները, կարևոր չէ, թե ինչ մակարդակի, կարող էին դրսևորել իրենց ներուժը՝ իրենց կապիտալն անմիջականորեն չվերածելով քաղաքական հարաբերությունների: Եվրոպական երկրներն ու Ամերիկան խաղի տեղային կանոնները, տեղային իրավունքը 19-րդ դարում հասցրեցին գիտական իրավունքի մակարդակի և այդ հիմքի վրա իրենց երկրները միավորեցին միասնական գործնական իրավունքով[29]: Ընդհակառակը՝ զարգացող աշխարհին ապրում է երկու մակարդակի իրավունքով. մեկը՝ գիտական՝ կենտրոնում և ընտրախավի համար, և մյուսը՝ արշիպելագի կղզիների պես բազմաթիվ՝ աղքատների համար, որոնք գործում են իրենց՝ պաշտոնապես չճանաչված, կանոններով: Զարգացող երկրներում կան իսկայական չանձնավորված, ոչ ոքի չպատկանող գոտիներ, որոնք մեռած կապիտալ են: Մասնավոր սեփականության հենց իրավաբանական ձևակերպումն է այն շարժիչը, որը տնտեսական ներուժը վերածում է ոչ թե պարզապես իրեղեն ունեցվածքի, այլ երկրի կապիտալի: Այն իրավունքը, որն աշխատում է, օգնում է «վստահության շառավիղը» հասցնելու ամբողջ երկրի չափերին, ինչը առավելագույնս հեշտացնում է տնտեսության ոլորտում ստեղծագործական ակտիվության դրսևորումը՝ այն դարձնելով օրինական և օպտիմալացման համար թափանցիկ: «Ընտա-

[26] Տես *Hernando de Soto.* The Mystery of Capital. Why Capitalism Triumphs in the West and Fails Everywhere Else. London, 2000:

[27] Տես *Fernan Braudel.* Material'naia tsivilizatsiia, ekonomika i kapitalizm XV-XVIII vv. Tom 2. «Igry obmena». M., 1988:

[28] Տես *Harold J. Berman.* Law and Revolution: the Formation of the Western Legal Tradition. Cambridge, 1983:

[29] Տես *Հերնանդո դը Սոտո,* Նշ. աշխ.:

նեկան բարոյազանցությանը» (Բանֆիլդի տերմինը), ընդհակառակը, համապատասխանում է այն ամենի նկատմամբ անվստահության սկզբունքը, ինչը դուրս է իր մեծ կամ փոքր ընտանիքի վստահության շառավղից[30]:

Հաջողության հասած եվրոպական երկրներն իրենց զարգացման ընթացքում 17–19 դդ. անցել են «լավ կազմակերպված ոստիկանական պետության»[31] (ոչ թե իշխանության կամայականության, այլ իրավունքի հիմքի վրա) և, միաժամանակ, «բուրժուական առաքինությունների դաստիարակման» ծրագրային փուլերը[32]: Պետության ոլորտի եվրոպական ընտրախավերը այդ ժամանակ տեսան, որ երկրի բարգավաճման հիմքը իր առաքինությունների հաշվին իր ոտքերի վրա տնտեսապես ամուր կանգնած «փոքր» մարդն է, իսկ երկրի կառավարչության խնդիրն է այդ մարդուն տալ խելացի իրավական շրջանակներ: Մտքի նախաձեռնությունն ակնկալվում էր ներքևից, բարեփոխման և դաստիարակության ընդհանուր ուղղությունը՝ վերևից: Բարեփոխման վարչական կողմը ենթադրում էր բյուրոկրատական ապարատի ստեղծում, մի ապարատ, որը աշխատեր օրենքի սահմաններում (գործնական), և որի պետական պաշտոնյան՝ լավագույն ուսումնական հաստատության շրջանավարտը, ունենար այդ շրջանակներում իրագործվող նախաձեռնողականություն, իր ծառայողական դիրքի նկատմամբ վստահություն և պատիվ՝ լինելու ոչ թե մասնավոր, այլ ընդհանուր բարիքի ներկայացուցիչ[33]:

«Բողոքականության էթիկայի» մասին Վեբերի թեզը հաստատում է, որ այն ժամանակ երկրների բարգավաճմանը նպաստել է անհատների որոշակի ոճի կյանքը, որը շարժառիթավորված էր կրոնով[34]: Օրինակ՝ բողոքական Ջոն Լոկի գաղափարի համաձայն՝ մարդու գլխավոր խնդիրն է պատասխանել Աստծու կոչին՝ կյանքում գտնվելով իր տեղում, գտնել իր կոչումը, կատարել Տիրոջ առաջ իր պարտքը[35]: Ինչպե՞ս: Դա արդեն անհատի նախաձեռնության և արթնացած խղճի գործն էր: Հանուն բարձրագույն պարտքի ցուցաբերվող այդ նախաձեռնության համար Լոկը պահանջում էր որոշակի ազատություն, իրավունքներ: Ընտրախավի հետագա խնդիրը դարձավ այն, թե ինչպես նախաձեռնողությունն ուղղորդող խղճի գաղափարը հասցնել հասարակ մարդուն: Զանազան փորձերից հետո որոշվեց խիղճը, պարտքի զգացումը դաստիարակել դեռ մանուկ հասակում՝ դպրոցում: Խնայողության, աշխատասիրության, ճշտապահության և այլ նմանատիպ տնտեսական առաքինությունները դարձան հանուն իր

---

[30] Տես *Lawrence E. Harrison.* Underdevelopment is a State of Mind: the Latin American Case. Lanham, New York, Oxford, 2000:

[31] Տես *Mark Raeff.* The Well-Ordered Police State. Social and Institutional Change Through Law in the Germanies and Russia, 1600–1800. New Haven, 1983:

[32] Տես *Paul Munch.* Ordnung, Fleiß und Sparsamkeit. Texte und Dokumente zur Entstehung der «Bürgerlichen Tugenden». München, 1984:

[33] Տես *Raphael Lutz.* Recht und Ordnung. Herrschaft durch Verwaltung im 19 Jahrhundert. Frankfurt am Main, 2000:

[34] Տես *Max Weber.* «Die Wirtschaftsethik der Weltreligionen» in Gesammelte Aufsätze zur Religionssoziologie. Tübingen, 1988:

[35] Տես *John Dunn.* The Political Thought of John Locke. A Historical Account of the Argument of the «Two Treatises of Government». Cambridge, 1969:

պարտքի կատարման «փոքր» մարդու ազատության, անկախության գաղափարի մի մասը, մի պարտք, որի մասին ևս չէին մոռանում խոսել: Այսպես. վարչական բարեփոխումների և բնակչության մշակութային դաստիարակության շնորհիվ Գերմանիան կեղտոտ, ծույլ, հիմար, անհագ երկրի համբավ ունեցող պետությունից (Էրազմ Ռոտերդամցին այդ մասին գրել է դեռ 16-րդ դարում) դարձավ այն դրական հակապատկերը, որն այսօր Գերմանիայում տեսնում է զբոսաշրջիկը[36]: Երկրի լավ գործող վարչական համակարգի կառուցումը ռազմավարական խնդիր է, իսկ այդ ուղղությամբ առաջխաղացումը՝ ազգային անվտանգության գնահատման պարամետր: Ճիշտ այդպես էլ բնակչության մեջ «բուրժուական» առաքինությունների ձևավորումը մրցունակ տնտեսության ստեղծման անհրաժեշտ սուբյեկտիվ գործոն է: Ժամանակակից տնտեսությունը կենսունակ է հենց շնորհիվ ամենաստորին օղակի աշխատողի նախաձեռնողականության և գիտակցականության. հիշենք որակի խմբակները Ճապոնիայի ավտոմոբիլային ձեռնարկություններում: Բնակչության այդպիսի մշակութային հատկանիշների գնահատումը, դրանց լավացման ուղղությամբ առաջընթացը երկրի ազգային անվտանգության ռազմավարական գործոններ են:

Վերջապես նշենք, որ բարեփոխումների իրագործման տեմպերը նույնպես կախված են մշակութային կողմնորոշումից. Վացլավ Հավելը ասել է անդունդի վրայով թռիչքի մասին, իսկ Չինաստանի վարչապետը՝ քարերի վրայով գետն անցնելու մասին, ինչը արմատապես տարբերվում է Մաո Ցզե Դունի վոլյունտարիստական տեմպերից: Ինչպես նշում են մասնագետները, չինական ավանդական մշակույթում չկա խորին հարգանք վերացական մոդելների նկատմամբ, չկա Աստված՝ երկնի ու երկրի արարիչը, չկա պլատոնականություն՝ իր բազմաթիվ գաղափարներով: Այդ պատճառով էլ Չինաստանը, մաոիզմի ողբերգական փորձից հետո, իր պրագմատիկ մոտեցման շնորհիվ կարողացավ «սխալմամբ» խուսափել Միջազգային արժութային հիմնադրամի արևմտյան մոդելներով իրականացվող բարեփոխումների սխալականությունից, մոդելներ, որոնք այնքան են սահմանափակվում, որ հասցվում են զուտ ֆինանսների:

Ի մի բերելով ասվածը՝ կարելի է անել այն եզրակացությունը, որ հատկապես անցումային երկրների համար ազգային անվտանգության ռազմավարության պլանավորման ժամանակ կարևոր է աչքաթող չանել մշակութային գործոնը՝ իր ռազմավարական բազմազանությամբ հանդերձ:

---

[36] Տես *Պաուլ Մունխ*, Նշ. աշխ.:

# КУЛЬТУРНЫЙ ФАКТОР В СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*А. Б. ГАРИН, профессор**

Состояние национальной безопасности можно анализировать на нескольких уровнях: на уровне материальном, вещественном, на уровне условий существования вещей и на метауровне, то есть на уровне рефлексии методов самого дискурса на тему национальной безопасности (подобно «метаматематике» в отличие от «математики»).

Выбор параметров, по которым мы оцениваем какую-либо систему, принадлежит метауровню, и он часто оказывается решающим для взгляда на объект исследования, хотя критерии этого выбора и его мотивировка часто ускользают от внимания аналитика. В этой статье делается акцент на анализе создания условий для оптимальной национальной безопасности, и особенно культурных условий, часто выпадающих из поля зрения аналитика.

Начнем с метауровня. Размышление о своей стране в терминах «национальных интересов» и «национальной безопасности» в посткоммунистических странах относительно ново; эта терминология вместе со стандартными процедурами формулирования стратегии национальной безопасности пришли с англосаксонского Запада, где «национальный» означает «государственный» (ввиду того, что нации как однородность складывались там на фоне заданности единства политической территории). В Советском Союзе размышления на тему безопасности формулировались в терминах глобального и универсального марксистского взгляда на мир, не ограниченного рамками нации. Горбачев стал говорить об «общечеловеческих ценностях» в области стратегии безопасности, что было терминологически чуждо для западного стратегического уха. «Дайте нам ваши национальные интересы, чтобы мы понимали, о чем идет речь»,– была реакция западных стратегических специалистов. С распадом Советского Союза эта горбачевская идеалистическая фаза закончилась, и, на наш взгляд, многие политологи в посткоммунистических странах перешли на новую терминологию национального интереса, к сожалению,– радикально, уйдя от универсализма разума в национальный эгоизм геополитики, причем, часто – геополитики уровня времен Маккиндера, то есть начала 20 века.

Язык терминов национальной безопасности первоначально исходит из допущения в духе философа Гоббса о том, что мир состоит из суверенных

---

* Доктор философских наук (отделение философии Академии наук СССР) **Александр Гарин** является профессором Европейского центра стратегических исследований им. Дж. Маршалла, кандидатом философских наук в области политической философии (Мюнхенский университет), имеет степень магистра в области математики (Ленинградский госуниверситет). А. Гарин – автор ряда научных работ по проблемам национальной безопасности. Основная область научных интересов – культурные аспекты национальной безопасности.

государств, и что для него характерно все еще естественное состояние хаоса между национальными эгоистами. Такого рода методический «реализм» не доверяет «идеалистическим» формулировкам разумного публичного блага и предпочитает, чтобы страна скорее честно предъявила свои интересы, и, одновременно, привела бы эти интересы по возможности в неконфликтное отношение с интересами других стран. Так, в области экономики доминирует язык контракта, основанный на интересах; альтруистического поведения не ожидается, зато от союзников ожидается джентльменское, просвещенное понимание своих интересов. Разум общечеловеческого блага выдает свои результаты на языке интересов для того, чтобы скептики не обвинили его в лицемерии.

Модель такого геополитического «реализма» в теории международных отношений имеет две привлекательные стороны: содержательную и формальную. С содержательной стороны этот подход возник исторически, после устранения религиозного фанатизма из политики, как это произошло вследствие тридцатилетней фундаменталистской войны между католиками и протестантами. Политика была выделена в особую автономную область, освобожденную от примата религии. Такой методический «реализм» абстрагируется от характера внутреннего режима страны, как от «черного ящика», важным остается лишь поведение государства-эгоиста и рационального максимизатора своей пользы на международной арене. При таком подходе из политики исчезают фанатические претензии абсолютного (якобинского) характера, но вместе с ними уходят и идеалы религиозного или псевдорелигиозного уровня. Политика в глазах критиков приобретает оттенок цинизма. Марксизм, например, напротив, говорил о радужной цели истории всего человечества, хотя и сужал ее до цели классовой.

С формальной стороны подход такого «реализма» удовлетворяет методическому принципу «бритвы Оккама», требующему минимализма теоретической модели: «не надо умножать сущности без нужды»; и язык жизненных национальных интересов дает такую модель.

Однако этот минимализм имеет свою цену. Хотя стратегия национальной безопасности пишется прежде всего для консолидации мнения о безопасности внутри страны, но она подается и другим странам. Однако язык «национального интереса» плохо «продается» на публике других стран. Интерес, по определению, служит лишь какой-то одной группе в улучшении ее обстоятельств. Вне самой этой группы он возбуждает подозрения. Так, в парламентах лоббисты вынуждены прибегать к языку общего блага, чтобы протолкнуть свой закон. Поэтому по мере развития реализма в теории международных отношений вынуждены были обратить внимание на важность создания репутации для повторяющихся взаимодействий между государствами. Эгоизм «реализма» был смягчен добавлениями «дилеммы безопасности», теорией «режимов» и теорией «мягкой

мощи» *(soft power)*, которые утверждают, что без доли идеализма «реализм» не соответствует реальности.

Помимо этого, такая минималистская модель, абстрагирующаяся от внутреннего устройства государства, лучше соответствует развитым странам, в которых государство делегировало обществу часть сфер своей внутренней жизни, например, экономику. Развитые страны не озабочены такими делегированными сферами на уровне безопасности. Модель «реализма» в ее простейшем виде плохо применима к динамике процессов развивающихся стран. Даже для развитых стран к такой модели национальных интересов добавляется универсалистский элемент направления мировой истории, например, переход от тирании к демократии, помещенный в национальную доктрину США.

Не удивительно, что национальные доктрины безопасности посткоммунистических стран гораздо более насыщены аспектами безопасности, чем доктрины западных стран. Особенно для развивающихся стран аспекты культурного характера также могут иметь важное значение для стратегии национальной безопасности. Под культурой мы понимаем не статичный параметр «судьбы», а динамическую характеристику, правда, в ходе истории меняющуюся медленно. Но и на Западе происходят включающие культурные аспекты дебаты о принципах формулировки доктрины национальной безопасности на метауровне. Достаточно отметить, например, новую книгу Фукуямы «Америка на перепутье. Демократия, мощь и наследие неоконсерваторов»[1].

К рассуждению о безопасности страны на метауровне относится и вопрос о наличии в обществе открытых дебатов по вопросам национальной безопасности и уровне их научности. Наличие и уровень таких дебатов можно включить в один из параметров, по которым мы можем измерять состояние национальной безопасности. Первая мусульманская делегация во Францию из Египта в 1830-х годах по наблюдениям одного проницательного муллы, который написал для египтян книгу-отчет об этом путешествии, отмечала, что за успехом французской артиллерии – успехами наполеоновского похода в Египет – стоит успех французской философии, открытости и любознательности науки в целом во Франции[2].

Насколько может быть научен анализ в такой гуманитарной сфере, как национальная безопасность? Язык национального интереса может сбивать с толку. Интерес здесь должен стать объектом анализа, но не его формой. Интерес, в отличие от разума, ищет успеха, разумность – понимания. Разумность по определению Хабермаса (в ситуации идеального дискурса)

---

[1] См. *Francis Fukuyama.* America at the Crossroads. Democracy, Power and the Neoconservative Legacy. London, 2006.

* Անգլերենում ընդունված *theater tactical* (թատերաբեմային՝ ռազմաճակատային, տակտիկական) արտահայտությունը մենք թարգմանում ենք ըստ մեզանում ավելի լայն տարածում ստացած ռուսական բաժանման՝ օպերատիվ-տակտիկական, քանի որ ՆԱՏՕ-ի պետություններում ռազմական արվեստը բաժանվում է երկու դասի՝ ստրատեգիայի և տակտիկայի, մինչդեռ Խորհրդային Միությունում ընդունված էր այն բաժանել երեք դասի՝ ստրատեգիա (ռազմավարություն), օպերատիվ արվեստ և տակտիկա (մարտավարություն): ՈՒստի ռազմական տեխնիկայի՝ ըստ նրա գործողության շառավղի դասակարգման համար անգլերենում ընդունված տերմինների դիմաց մենք տալիս ենք հետևյալ համարժեքները. *strategic(al)*–ստրատեգիական (հեռահարությունը՝ մի քանի հազար կիլոմետր), *theater tactical*–օպերատիվ-տակտիկական (հեռահարությունը՝ մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր կիլոմետր), *battlefield tactical*–տակտիկական (հեռահարությունը՝ մեկից մինչև մի քանի տասնյակ կիլոմետր):–*Խմբ.:*

ԳՀԼ և ԳՀՄ տակտիկական ՈՒԷԶ-երը, որոնք ճառագայթում են բազմաիմպուլսային եղանակով, կարող են կիրառվել ցամաքում՝ տեղակայված լինելով շարժական փոխադրիչների վրա, կամ ավելի հավաք ձևով կարող են տեղադրվել ռմբակոծիչ-կործանիչ ինքնաթիռների, ուղղաթիռների, անօդաչու թռչող ապարատների վրա, որպեսզի կրակ վարեն միմյանցից հեռու գտնվող ընտրված և նշանառված նշանակետերի վրա: Միակի բանելակարգով ԳՀՄ զենքերը կարող են առաքվել թևավոր ու կառավարվող հրթիռներով և ավիառումբերով, որպեսզի ճառագայթեն՝ մոտ գտնվելով ընտրված նշանակետերի խմբերին:

Տակտիկական ՈՒԷԶ-երը, եթե դրանք համեմատենք կինետիկական էներգիայով ավելի սովորական զենքերի հետ, որոնց պարզ օրինակներն են հրազենի գնդակները, հրետանային արկերը, բալիստիկական և տակտիկական հրթիռները, ունեն վեց առանձնահատկություն:

1. ՈՒԷԶ-երն իրենց «գնդակներն» արձակում են ոչ թե ձայնի, այլ *լույսի արագությամբ,* ինչն ընտրված «խեղացի» նշանակետին զրկում է խոցումից հակատարաշարժով խուսափելու հնարավորությունից:

2. Բազմաիմպուլսային տակտիկական ՈՒԷԶ-երը գործնականորեն ունեն ընտրված նշանակետերի հրակոծման համար գնդակների *անսահմանափակ պահունակ.* նշանակետերի հրակոծումը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև որ նշանակետը ոչնչացվի կամ ստացվի նրա ոչնչացման փաստի հավաստի գնահատական:

3. Նշանակետի հրակոծումը կարճատև է՝ 5–15 վրկ, ինչն ապահովում է ՈՒԷԶ-ի մեկ կրող կայանքով *մեծ թվով նշանակետերի հրակոծման* հնարավորություն:

4. Նշանակետի հրակոծումը կատարվում է մեծ հեռավորության վրա՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով *100 և ավելի կմ հեռահարություն*:

5. Մեծ կարևորություն ունեցող նշանակետերի պաշտպանությունը ՈՒԷԶ-երից կպահանջի *հակամիջոցների բանկ ու երկար ժամանակ պահանջող մշակումներ,* ընդ որում դրանց մի մասը գործնականում կիրառելի չի լինի: Ներկայիս սերնդի նշանակետերի օժտումը ՈՒԷԶ-երի հարձակումներից պաշտպանության միջոցներով նույնպես գործնականում կիրառելի չէ. նշանակետերի պաշտպանումը ՈՒԷԶ-երից պահանջում է լիովին նոր սերնդի ռազմատեխնիկական նվաճումներ, ինչի համար գործնականում պահանջվում են բազում տարիներ: ՈՒԷԶ-երի համար հակամիջոցների դեմ ուղղված միջոցների մշակման դասական ռազմական փուլաշրջանը կպահանջի շատ տասնամյակներ:

6. Այդուհանդերձ, ժամանակակից ռազմադաշտում տակտիկական ՈՒԷԶ-երի կիրառումը *եղբայրասպանությունից խուսափելու համար* կպահանջի նաև կրակի կառավարման շատ խիստ կարգուկանոն: ՈՒԷԶ-երի կրակից եղբայրասպանությունից խուսափելու համար պետք կլինի ժամանակի ռեալ մասշտաբում հակառակորդի և յուրային ուժերի ու ռազմագույքի տեղաբաշխման ճիշտ իմացություն թվային տեսքով:

ՈՒԷԶ-ի կողմից նշանակետի հրակոծումը և նրա կրակի կառավարումը կլինեն խիստ ավտոմատացված. այս օղակում մարդը կգործի միայն անհրաժեշտ վերահսկողություն և միջամտություն ապահովելու համար: Մերձամարտում ՈՒԷԶ-ի կրակից եղբայրասպանությունից խուսափելու համար ռազմա-

դաշտում գտնվող բոլոր յուրային նշանակետերը և հարմարանքները պետք է ունենան գաղտնագրային էլեկտրոնային համարանիշեր*, որոնք ծրագրավորված լինեն անկանոն փոփոխման համար, որպեսզի համոզված լինենք, որ այդ զենքով նշանառված նշանակետերը ոչ թե յուրային են, այլ՝ հակառակորդինը:

ՈՒԷԶ-ի մարտակայանքներն իրենց լավ կիզակետված ճառագայթումն ուղղում են ընտրված նշանակետերին, որոնք նույնականացվել, տարբերակվել (ճանաչվել), ուղեկցվել և նշանառվել են նշանակետի հայտնաբերման մոտակա ռադիոտեղորոշիչի միջոցով, որը կառավարում է զենքի շարժական նշանոցը: Զենքի կրող մարտակայանքից առաքվող բազմաիմպուլսային ուղղորդված էներգիան պետք է կուտակվի *շարժվող նշանակետի միևնույն նշանառված կետում,* որպեսզի առաջ բերի խանգարիչ կամ կործանարար գործողություններ, որոնք ռազմադաշտում արդյունավետ կերպով կվերացնեն նշանակետի ռազմական պիտանիությունը:

Սակայն, քանի որ Հայաստանի և նրա սահմանների հորիզոնից այն կողմ գտնվող օդային տարածքը համեմատաբար պարփակ է, ապա ՈՒԷԶ-ի վրագետնյա շարժական կրող մարտակայանքների կազմի մեջ մտնող՝ նշանակետերի հայտնաբերման ռադիոտեղորոշումային համակարգի համար մենք նկատի ունենք այլ կառուցվածք, որպեսզի նա կատարի նշանակետի հայտնաբերման, ուղեկցման, նշանագրման և ոչնչացման գնահատման գործառույթներ: Ընդսմին Հայաստանի երկնքի համընդգրկուն պաշտպանական վահանի ստեղծումն արդեն իրագործելի է դառնում: Մեծ թվով զուգահեռ պրոցեսորներից կազմված գերհզոր համակարգչային (ԳՀՀ) կլաստերների միավորման գործում ներկայումս ձեռք բերված հաջողությունները հնարավոր են դարձնում հարյուրավոր, նույնիսկ հազարավոր ռադիոտեղորոշումային կայաններից ստացվող տեղեկույթի միաբերումն ու միաձուլումը: Դրանք կլինեն վրագետնյա բազավորմամբ և օդագնացային ռադիոտեղորոշիչներ՝ ներառյալ Հայաստանում ՈՒԷԶ-ի հավաքակազմի հետ գործարկվածները, ընդսմին յուրաքանչյուր վրագետնյա օպտիկաթելքային անվտանգ կապուղու և օդային միկրոալիքային կապուղու միջոցով ստացվող տեղեկույթը հաղորդվում է պաշտպանված ռազմական ԳՀՀ կլաստերին: ԳՀՀ արագությունն այնպիսին է, որ համատեղված տվյալների վերլուծությունը ժամանակի ռեալ մասշտաբում ապահովում է միաժամանակ շարժվող հազարավոր նշանակետերի ճշգրիտ տեղորոշումը և ուղեկցումը՝ սկսած ցածրաթռիչ հրետանային արկերից մինչև բարձրաթռիչ ինքնաթիռներն ու հրթիռները:

Նախկինում շատ թանկարժեք ԱՎԱՔՍ *(AWACS)* ամերիկյան օդագնացային ռադիոտեղորոշումային համակարգը, որը հիմնված էր հին տեխնոլոգիայի վրա, ժամանակի ռեալ մասշտաբում կարող էր կառավարել 300 նշանակետերի միաժամանակյա ուղեկցում: Այսօր հնարավոր է ոչ միայն շատ արդյունավետ ձևով ուղեկցել հազարավոր նշանակետերի, այլև մեծ թվով կրող զինակայանքներ ժամանակի ռեալ մասշտաբում ապահովել նշանակետերի ոչնչացման համար անհրաժեշտ տեղեկույթով՝ յուրաքանչյուր նշանակետի համար նշանացուցման վեկտորների ճշգրիտ նշումով և ՈՒԷԶ-երի մարտակայանքների հա-

---

* Համարանիշ *(signature)* ասելով մենք հասկանում ենք «յուրային–օտար» տարբերակման-ճանաչման համակարգը:–*Խմբ.:*

վաքակազմում տեղեկույթի բաշխմամբ: Հայաստանի Ազգային հրամանատարական կենտրոնի ապահով Ռազմակայանում տեղադրված ԳՀՀ-ն, ունենալով նշանակետերի մասին ժամանակի ռեալ մասշտաբում տվյալների բազա, կարող է ՈՒԷՁ-ի հավաքակազմին նշանակել առանձնակի կարևորություն ունեցող նշանակետերը: Նշանակետերը կարող են ՈՒԷՁ-երի հավաքակազմի կայանքից մյուսին փոխանցվել՝ դրանցից յուրաքանչյուրի առավել օպտիմալ հրակոծման համար: Ըստ էության դրանով նվազագույնի կհասցվի ներթափանցած նշանակետերի թիվը, մինչև որ ստացվեն առավել կարևոր նշանակետերի՝ հրակոծման հետևանքով ոչնչացման դրական գնահատականները:

Ըստ մեզ՝ սա է *Հայաստանի օդային տարածքի համապարփակ պաշտպանական վահանի ստեղծման հայեցակարգը:*

**Տակտիկական գերհզոր լազերային ՈՒԷՁ-երի** շարժական մարտակայանքները կունենան բազմաիմպուլսային լազերային համակարգ, որը կճառագայթի 50 կՎտ միջին հզորությամբ, ինչը բնորոշվում է իմպուլսների կրկնության 50 Հց հաճախականությամբ և իմպուլսի 1 մկվրկ տևողությամբ: Դա հաղորդում է կիզակետված-ճառագայթումային գագաթային 1,0 ԳՎտ հզորություն և մեկ իմպուլսի հաշվով 1000 Ջ էներգիա: Այդ համակարգը կարող է լինել բազմատարր պինդմարմնային լազեր՝ բաղկացած 10 կՎտ հզորությամբ հինգ լազերներից, որոնք ճառագայթում են 1 մկմ երկարությամբ ինֆրակարմիր (անտեսանելի) ալիք: Այդ համակարգի սպասարկումը շատ ավելի հեշտ է, և նա ռազմական նպատակներով կիրառման ժամանակ շատ ավելի դիմացկուն է, քան ցանկացած այլ տեսակի հզոր լազերները: Պինդմարմնային լազերների մղումը կկատարվի բազմաթիվ իմպուլսային դիոդային լազերներով: ԳՀԼ գեներատորների ակտիվ սառեցումը կկատարվի պարփակ համակարգով շրջանառող հեղուկի և օդային ջերմափոխանակիչի միջոցով: Լրիվ էլեկտրական արդյունավետությունը կլինի 10 %, ընդմին ԳՀԼ մարտակայանքի սնուցման համար կպահանջվի 500 կՎտ հզորությամբ տեղափոխելի շարժիչ-գեներատոր:

Յուրաքանչյուրը 10 կՎտ միջին հզորությամբ հինգ պինդմարմնային լազերների ճառագայթումը ՈՒԷՁ-ի կրող կայանքում տեղակայված ուղղորդիչ օպտիկայի միջոցով կմիաբերվի մեկ փնջի, որը հետո կառաքվի կասեգրենյան տիպի հեռադիտակի միջոցով: Ելքային բացվածքը կլինի 1 մ տրամագիծ ունեցող ձևախախտելի հարմարաօպտիկական գնդաձև հայելին, որը կկառավարվի բազմաթիվ հաղորդակներով: Գնդաձև հայելային մակերևույթը ձևախախտվում է նշանակետից անդրադարձող տեղեկույթի հիման վրա, որն ստացվում է առաքված սակավահզոր նշանառվական լազերային իմպուլսների միջոցով, ընդմին այդ իմպուլսներն անցնում են հենց այդ նույն ելքային օպտիկայով: Այդ սակավահզոր լազերը գործում է անընդհատ օպտիկական տեղորոշիչի եղանակով և արագ տեսածրմամբ որոշում է հեռավոր նշանակետում նշանառման կետը: Լույսի արագությամբ կատարվող այս պրոցեսում նաև ճշգրտորեն և արագ չափվում է լազերային ալիքի ճակատային աղավաղումը, որն առաջանում է մարտադաշտում գերակշռող մթնոլորտային իրավիճակի ազդեցությամբ:

Հաղորդակները մի քանի միլիվայրկյանում ավտոմատ կերպով ծրագրավորվում են, որպեսզի գնդաձև հայելու մակերևույթը ձևախախտեն այնպես, որ ճշգրտորեն համակշռվեն եղած մթնոլորտային աղավաղումները, այսինքն՝ վե-

բացվեն ԳՀԼ կիզակետված փնջի ալիքային ճակատի աղավաղումները, որպեսզի հրակոծման ամբողջ ընթացքում հեռավոր նշանակետի նշանառված կետի վրա պահվի հստակ կիզակետ: ԳՀԼ միաբերված փնջի բարորակությունը կլինի դիֆրակցիայով սահմանափակված տեսական արժեքից ոչ ավելի, քան 1,4 անգամ մեծ: 1 մ տրամագծով կասեգրենյան աստղադիտակով ուղղորդված փունջը կունենա 2 միկրոռադիանից փոքր տարամիտում, այնպես որ, կենտրոնական կիզակետային բիծը 60 կմ հեռավորության վրա գտնվող նշանակետի վրա կունենա 25 սմ-ի կարգի տրամագիծ: Ավելի մոտ գտնվող նշանակետերի վրա կիզակետային բծերն ավելի փոքր և ավելի ներգործուն կլինեն:



Նկ. 1. Մարտակայանքում տեղակայված տակտիկական գերհզոր լազերային ՈՒԷԶ՝ հակաօդային պաշտպանության և մերձամարտերի ժամանակ կիրառման համար («U.S. Army 1998 Science and Technology Master Plan for 2010» հրատարակությունից)

Ընտրված նշանակետերի ճառագայթային նշանառման և ուղեկցման ժամանակակից տեխնիկան հիմնված է կոպիտ ռադիոտեղորոշումային պատկերման վրա, որին հաջորդում են ճշգրիտ ռադիոտեղորոշումային պատկերը և նշանակետի գերճշգրիտ լազերային ռադիոտեղորոշումային տեսածրումը՝ ՈՒԷԶ-ի մարտակայանքում տեղակայված սակավահզոր նշանառվական լազերի կիրառմամբ: Հայտնաբերման, նշանառման և ուղեկցման (ՀՆՈՒ) համակարգը հնարավոր է դարձնում շարժվող նշանակետի վեկտորի որոշումը ճառագայթի ցրման բաժնեմասի սահմաններում՝ առնվազն 0,5 միկրոռադիան անկյունային ճշտությամբ: Նշանառման այս սխալը հանգեցնում է 60 կմ հեռավորության վրա գտնվող հեռավոր նշանակետի վրա 25 սանտիմետրանոց ճառագայթային բծի 3,0 սմ միջին քառակուսային թրթռման, որը ճառագայթահարվող մակերեսի համար փոքր ճապաղում է: Փոքր ճապաղումն էական է բարձր էներգիական խտությունների ընդունման և հեռվում շարժվող նշանակետերի վրա կործանաբար ազդեցություն գործելու համար:

Հեռավոր նշանակետերի վրա ճառագայթահարվող 500 սմ$^2$ մակերեսը ապահովում է յուրաքանչյուր իմպուլսի հաշվով 2 Ջ/սմ$^2$ էներգիական խտություն,

որը կուտակվում է 10 վրկ-ում 500 իմպուլս հաջորդականությամբ, 1000 Ջ/սմ$^2$ լրիվ կրակային խտության համար: Նշանակետի խոցումը կատարվում է արագ, ինչը տեղի է ունենում ջերմային ու դինամիկական ներգործությունների համակցության շնորհիվ: Նշանակետի պատյանի արագ աճող ջերմային հոգնածությունը, նրա այրվածքները կամ իրանի տեղային հալումը ուժեղանում են արագ շարժվող նշանակետի իներցիալ ուժերի շնորհիվ: Վերջնական արդյունքը լինում է այն, որ մի քանի վայրկյանում տեղի է ունենում ինքնաթիռի, ինքնուղղորդվող հրթիռի, թևավոր հրթիռի կամ ուղղաթիռի մեխանիկական քայքայում՝ նշանակետի ոչնչացման փաստի հստակ հավաստմամբ:

**Տակտիկական գերհզոր միկրոալիքային ՈՒԷՋ-երի** շարժական մարտակայանքները կունենան բազմաիմպուլսային ԳՀՄ գեներատորներ, որոնց ճառագայթման միջին հզորությունը կլինի 200 կՎտ, ինչը բնորոշվում է իմպուլսների կրկնության 100 Հց հաճախականությամբ և իմպուլսի 1 մկվրկ տևողությամբ: Գագաթային հզորությունը կլինի 2 ԳՎտ, իսկ ճառագայթվող էներգիան՝ յուրաքանչյուր իմպուլսի հաշվով 2000 Ջ: Համակարգը բաղկացած կլինի երկու ԳՀՄ գեներատորներից, որոնցից յուրաքանչյուրը կճառագայթի C տիրույթում 1 ԳՎտ գագաթային հզորություն՝ 7,5 ԳՀց հաճախականությամբ, կամ ալիքի 4,0 սմ երկարությամբ: ԳՀՄ գեներատորների ակտիվ սառեցումը կկատարվի պարփակ համակարգում շրջանառող հեղուկի և օդային ջերմափոխիչի միջոցով: Սահմանային էլեկտրական արդյունավետությունը կլինի 40 %, և ԳՀՄ մարտական կայանքի սնուցման համար կպահանջվի նաև 500 կՎտ հզորությամբ շարժական շարժիչ-գեներատոր:

ՈՒԷՋ-ի այս կրող կայանքում յուրաքանչյուրը 100 կՎտ միջին հզորությամբ երկու ԳՀՄ գեներատորների ճառագայթումը կմիաբերվի ճառագայթների ուղղորդիչ օպտիկայի միջոցով՝ համապատասխան ալիքատար հանգույցների կիրառմամբ: ԳՀՄ ճառագայթը կառաքվի միկրոալիքների համար կասեգրենյան հեռադիտակային ալեցիրի միջոցով: Ելքային բացվածքը կլինի 4 մ տրամագծով ծալովի գնդաձև անդրադարձիչ ալեցիրը, որը կարող է ուղղաձիգ և ազիմուտային կառավարմամբ ուղղվել դեպի շարժվող նշանակետերը: 7,5 ԳՀց հաճախականություն ունեցող ԳՀՄ ճառագայթի համար ալիքի ճակատի աղավաղում կամ մթնոլորտային մարումներ չեն լինի: Բացի այդ, ԳՀՄ ճառագայթը կպահպանի իր արդյունավետությունը անգամ ռազմաղաշտի ամենաանբարենպաստ եղանակային պայմաններում: ԳՀԼ ՈՒԷՋ-երի կրող կայանքներում կիրառվող ՀՆՈՒ-ի համակարգին նման համակարգը հաջորդաբար կհայտնաբերի, կնշանառի բազմաթիվ նշանակետեր և կուղեկցի դրանց:

4 մ տրամագծով ծալովի կասեգրենյան հեռադիտակային ալեցիրից ուղղված ճառագայթումը կունենա 10 միլիռադիան ճառագայթային տարամիտում, այնպես որ, 10 կմ հեռավորության վրա գտնվող նշանակետի վրա ստեղծված կենտրոնական կիզակետային բիծը կունենա 100 մ շառավիղ: ԳՀՄ ճառագայթմամբ ստեղծվող այս լայնատարած լուսավորումը ամբողջությամբ ընդգրկում է նշանակետերը: Այս հանգամանքն ապահովում է նշանակետերի ներթափանցման հսկայական թվով ուղիների ընդգրկում, որպեսզի իմպուլսային էլեկտրամագնիսական մեծ դաշտը կարողանա լույսի արագությամբ անմիջապես մոտենալ՝ թափանցելով և ներգործելով նշանակետերի պաշտպանված ներսա-

մասերի վրա: Դրանով իսկ քայքայվում է, ժամանակավորապես կամ անդառնալի կերպով վնասվում է մուտցող ինքնաթիռների, կառավարվող և թևավոր հրթիռների, մարտական տանկերի, փոխադրիչների, հրետանային արկերի և այլ տեխնիկայի զգայուն էլեկտրոնիկան, խոչընդոտվում է նրանց կողմից առաջադրանքի կատարումը:

Ժամանակակից ռադիոկառավարվող կործանիչ-ռմբակոծիչները հատկապես զգայուն են ԳՀՄ զենքի նկատմամբ, որը, վերացնելով համակարգիչներով կառավարվող նրանց աերոդինամիկական հավասարակշռությունը, ոչնչացնում է ինքնաթիռը: Նախկինում կործանվել են գերմանական ռադիոկառավարվող «Տոռնադո» տիպի կործանիչ-ռմբակոծիչները, որոնք պարզապես անցնում էին հեռուստատեսային հաղորդիչ աշտարակներին շատ մոտ: ԳՀՄ հարձակումը համընդգրկուն է և ապահովում է բոլոր տեսակի այն մարտական նշանակետերի ոչնչացումը, որոնք իրենց գործառման համար կիրառում են ցանկացած ձևի ժամանակակից էլեկտրոնիկա: Ռազմադաշտում մարտական տանկերի մեկնասարքերը կարող են շարքից հանվել կրակի կառավարման էլեկտրոնիկայի հետ մեկտեղ: Կարող է շարքից դուրս գալ նաև ցանկացած գրոհող հրետանային մարտապաշարի պայթուցիչը:

Այսպիսով՝ ԳՀՄ-ն լույսի արագությամբ գործող էներգիական ուղղորդված մեկ այլ զենք է, որով նշանակետն արագ ոչնչացվում է, և դա արվում է շնորհիվ էլեկտրոնային խափանիչ և դինամիկական ներգործությունների համակցության, որոնք ուժեղանում են արագ շարժվող նշանակետի իներցիալ ուժերի շնորհիվ: Ինքնուղղորդվող, կառավարվող և թևավոր հրթիռները կորցնում են իրենց զգայարարական, ինչպես նաև ուղղորդման ու կառավարման համակարգի էլեկտրոնիկան: Ընդհանրապես զենքի ցանկացած համակարգ, որը նշանակետերին հետևելու և փնտրելու համար գործում է զգայարարների միջոցով, հիանալի թիրախ է ԳՀՄ-ով ուղիղ, «շքամուտքային» ճառագայթային հարձակման համար: ԳՀՄ-ով «հետնամուտքային» հարձակումը կատարվում է ժամանակակից զենքի բազմաթիվ կարանատեղերով, հեղյուսային անցքերով և տարանջատիչ կեմերով, որոնցով կարող են ներթափանցել իմպուլսային էլեկտրամագնիսական մեծ դաշտեր: Հնարավոր չէ ունենալ միաձույլ իրան, որը դիմակայի ԳՀՄ-ով «հետնամուտքային» հարձակմանը, քանի որ ժամանակակից զենքը պետք է կարգաբերման և նորոգման համար մատչելի լինի:

Ճառագայթահարվող 20000 $մ^2$ միջին մակերեսն ապահովում է 10 կմ հեռավորության վրա գտնվող նշանակետերի վրա՝ յուրաքանչյուր իմպուլսի հաշվով 10 $մկՋ/սմ^2$ էներգիական խտություն, որը նշանակետի հրակոծման ժամանակ կրկնվում է 1 վրկ տևողությամբ 100 իմպուլսի շարանով, որպեսզի վիճակագրնեն ընդգրկվեն գործող զգայուն էլեկտրոնիկայի խոցման բոլոր հնարավոր ուղիները: Հայտնի է, որ ԳՀՄ-ով «հետնամուտքային» ճառագայթային հարձակման ժամանակ մեկ իմպուլսին բաժին հասնող 10 $մկՋ/սմ^2$ ընկնող էներգիական խտությունը կործանարար է ժամանակակից ռազմական նշանակետերի բոլոր տեսակի էլեկտրոնիկաների համար: 60 կմ հեռավորության վրա գտնվող նշանակետերի վրա կստացվի 36 անգամ փոքր էներգիական խտություն: Հայտնի է, որ դա առաջ է բերում էական *էլեկտրոնային խափանումներ,* ընդ որում՝ «հետնամուտքային» հարձակման ժամանակ առանց էլեկտրոնիկայի պարտադիր «այր-

մաճ», իսկ «շքամուտքային» հարձակման ժամանակ, այդուհանդերձ՝ նրանց զգալի վնասներ պատճառելով: Նշանակետերի վրա առաջացող էլեկտրոնային խափանումները կարող են բավական լինել, որ նրանք չկարողանան կատարել իրենց ռազմական առաջադրանքը: ԳՀՄ ազդեցության ենթարկված նշանակետերն ի հայտ կբերեն իրենց թուլությունը:

Միակի իմպուլսով ԳՀՄ զենքերը կարող են տեղակայված լինել ինքնուղղորդվող հրթիռներում, կառավարվող ավիառումբերում կամ հրետանային արկերում: Դրանք պայթյունով մղվող համակարգեր են, որոնցում մեկ կրակոցի պայթուցիկ էներգիան օգտագործվում է մի քանի հայտնի սխեմաներով էլեկտրամագնիսական էներգիայի իմպուլսի վերածված ձևով, ընդսմին այդ իմպուլսը հետո վերածվում է փողային տիպի ուղղորդված ալեցիրի ճառագայթման: Միակի իմպուլսով ԳՀՄ զենքը կարող է այնպես ուղարկվել, որ մոտիկից ճառագայթահարի կարևոր նշանակետերի խումբը, որպեսզի բավարար մեծ ինտենսիվությամբ ներթափանցի հրամանատարական և կառավարման կենտրոններում տեղակայված էկրանավորված էլեկտրոնիկայի մեջ, տանկային շարասյուներ և այլն: Ճառագայթումը կլինի լայնատիրույթ՝ 0,5–10 ԳՀց ընդգրկույթում, իմպուլսները կլինեն կարճ՝ 5–20 նվրկ, իսկ գագաթային հզորությունը՝ 1–5 ԳՎտ: Փողային բացվածքային ալեցիրը կծառայի նշանակետերի վրա լայն էլեկտրամագնիսական փնջի ուղղորդման համար, ընդսմին այդ նշանակետերը կարող են գտնվել պայթող զենքից 20–100 մ հեռավորության վրա:




Նկ. 2. Օպերատիվ-տակտիկական գերհզոր լազերային (1) և գերհզոր միկրոալիքային (2) ՈՒԷԶ-երի և ԷՊ-ի խանգարումային կայանի գծապատկերը
(«U.S. Army 1998 Science and Technology Master Plan for 2010» հրատարակությունից)

Ըստ էության, ԳՀՄ ՈՒԷԶ-ի հարձակումը կարելի է համարել ծանր հրետանու արգելապատնեշային կրակի ռազմական նմանակ՝ մարտադաշտում հակառակորդի դիմադրությունը թուլացնելու համար, այնպես, որ ավելի ճշգրիտ նշանառվական գրոհը հետևի հրաձգային կրակին: Ինչ վերաբերում է ԳՀԼ ՈՒԷԶ-ին, ապա գերհզոր լազերների գրոհը նման է հրաձգային կրակին: ԳՀՄ ՈՒԷԶ-ն իրոք որ 21-րդ դարի զենք է: Էլեկտրոնիկայի առումով որքան բարդ են մոտեցող ժամանակակից կրող կայանքը կամ հրթիռը, այնքան դրանք զգայուն են ԳՀՄ հարձակման նկատմամբ և ավելի հեշտ կոչնչացվեն: Հակառակորդները կարող են ընտրություն կատարել՝ կա՛մ օգտագործել ժամանակակից «խելացի»

զենք, որը հիմնված է արագագործ էլեկտրոնիկայի և զգայարարների վրա, և դառնալ ԳՀՄ հարձակումից ոչնչացման ավելի ենթակա, կա՛մ օգտագործել շատ ավելի հին զենք՝ հիմնված 50 տարվա ջերմաէլեկտրոնային լամպերի, դանդաղ և կոպիտ էլեկտրոնիկայի վրա, որոնք ընկալունակ չեն ԳՀՄ հարձակումների նկատմամբ: Այսպիսով՝ ԳՀՄ ՈՒԷԶ-ի արդյունավետ կիրառումը պահանջում է համակողմանի տեխնիկական իրազեկություն հնարավոր հակառակորդների զինանոցին:

**2. ՀԱԿԱՄԻՋՈՑԱՅԻՆ ԶԵՆՔԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐ:** Հակամիջոցային զենքերի (ՀՄԶ-եր) համակարգերը բաղկացած են հաճախականության վերալարումով սակավահզոր լազերներից (ՀՎՍԼ), որոնք ճառագայթում են երկու՝ տեսանելի և ԻԿ, տիրույթներում, ռադիոտեղորոշումային կրկնիչներից (ՌԿ) և անընդհատ ճառագայթող ռադիոհաճախականային (ԱՃՌՀ) հաղորդիչներից, որոնք էլեկտրոնային պատերազմի (ԷՊ) շարժիչ ուժն են: ՀՎՍԼ-ներն ըստ էության «խելացի» ուղղորդվող էներգիական զենքեր են, որոնք շատ թեթևակշիռ են և կարող են ծավալված լինել մի շարք կրող ռազմակայանքներում: Հակառակորդի մոտեցող զենքերի և ռազմագույքի հրակոծման ժամանակ ՀՎՍԼ-ները ոչ թե ոչնչացնում են նշանակետերը կամ նրանց ֆիզիկական վնաս են պատճառում, այլ առաջացնում են ժամանակավոր վնաս, խափանում, կուրություն, մոլորեցում և ռազմական ունակությունների կորուստ:

Այդուհանդերձ, այս օպտիկական, ԻԿ, ռադիոհաճախականային և միկրոալիքային ազդանշանների գեներատորների արդյունավետ օգտագործման համար պետք է ունենալ նաև տեխնիկական հետախուզական տվյալների բազա հավանական հակառակորդների զենքի և ռազմագույքի մասին: Այս տեսակի տեխնիկական հետախուզությունը համեմատաբար հեշտ կլինի իրագործել եկող տասնամյակում, քանի որ Հայաստանի հավանական հակառակորդներն իրենց արդիական զենքերի մեծ մասը ձեռք բերած կլինեն մի երրորդ կողմից՝ իրենց սեփական ուժերով արդիականացնելու և արտադրելու փոխարեն:

Հակամիջոցներից պաշտպանության միջոցների համակարգերը, որոնք նախանշանակված են ռազմագույքի խոցման և պաշտպանության համար, գտնվում են զենքի սերնդից սերունդ շարունակական որոնման մեջ: Սա նաև այն բնագավառն է, որում հասել են մարտական արդյունավետության էական մեծացմանը էներգիայի համեմատաբար փոքր ծախսերի պայմանով՝ փոխարենը օգտագործելով ավելի շատ տեխնիկական հնարամտություն, խորամանկություն և խելք. հատկություններ, որոնց շնորհիվ հայ զինվորականները և հայկական զենքերի մշակողները կգերազանցեն մյուսներին:

**Հաճախականության վերալարումով սակավահզոր լազերները** կարող են կիրառվել այնպիսի ընտրված մոտեցող նշանակետերի դեմ, ինչպիսիք են կառավարվող հրթիռները և մարտական տանկերը, նշանակետի հայտնաբերման նրանց օպտիկական ու ԻԿ և այլ տեսակի զգայարարները ոչնչացնելու, մոլորեցնելու կամ կուրացնելու համար: Ըստ էության, այդ կրող կայանքների վրա տեղակայված զգայարարները պետք է «զգուշանան», որ իրենց կողմից նշանակետերի ընտրության և նրանց վրա ինքնուղղորդման ժամանակ արտապատկերումը կատարեն հատուկ զտիչների, պաշտպանական ալիքային ընդգրկույթի և կիզակետող օպտիկայի միջոցով: Այսպիսով՝ այդ զգայարարները կարող են

շլացվել համախականության վերալարումով լազերի ալիքի այնպիսի երկարությամբ, որը հարմարեցված է զգայարարների վրա ներգործելու համար հենց այդպիսի պաշտպանական օպտիկայով անցնելուն: Նրանք կկուրացվեն կամ կշլացվեն այնպիսի հարվածող լազերային ճառագայթմամբ, որը զգայարարի վրա ներգործում է հենց այդ նույն ընդգրկույթում: Այս դեպքում հարվածող ճառագայթումը օգտագործում է նույն կողային կիզակետող համակարգը, որպեսզի ընկնող լազերային լույսը ներսում կիզակետվի զգայարարի վրա, ինչն ապահովում է անհրաժեշտ էներգիական խտություն կուրացման, շլացման և խափանման համար:

Ընտրված մոտեցող նշանակետերի վրա տեղակայված, առաջադրանք կատարող այս զգայուն զգայարարների կուրացման կամ շլացման ժամանակ համախականության վերալարումով հակամիջոցային լազերը իմպուլսներ է ճառագայթում այնքան ժամանակ, մինչև որ ընդգրկվեն նրա վերալարման տիրույթի ալիքի բոլոր երկարությունները, այնպես, որ ալիքի երկարությունների այն ընդգրկույթը, որն ունակ է ընդունելու զգայարարը, առաջ բերի վերջինիս աշխատանքի խափանում: Որպեսզի ՀՄԶ-ն արդյունավետ կերպով գործի, նշանակետի վրա եղած պաշտպանական օպտիկայի մասին այն տեղեկույթը, որը վերաբերում է զգայարարների կողմից ընկալման ենթակա ալիքների փաստացի երկարություններին, պարտադիր չէ, որ ճշգրիտ լինի, բայց դրանց մոտավոր իմացությունը բավական օգտավետ կլիներ: Նշանակետերի վրա տեղակայվող զտիչների փոխարինումը վերալարման սահմաններում օգուտ չի տա: Դեռ ավելին. մոտեցող տակտիկական հրթիռների՝ նշանակետեր որոնող ԻԿ զգայարարները կարող են մոլորեցվել նույնիսկ կուրացման շեմից ցածր գործող ԻԿ-ՀՄԶ-ի միջոցով, հատկապես այն առումով, որ նա հրթիռը «կտանի» անվտանգ հարվածի գոտի: Կախված մոտեցող նշանակետերի կառավարման համակարգի էլեկտրաօպտիկական համակարգի բարդությունից՝ կարող են լինել ՀՄԶ-ով հրակոծմամբ նրանց մարտական առաքելությունը անհաջողության մատնելու բազմաթիվ այլ խելամիտ ուղիներ, որոնց մասին մենք այստեղ չենք խոսի:

Առկա հայկական նախագծերում ներկայացված մեկ միասնական ՀՎՍԼ-ում են միավորված էլեկտրաօպտիկական հակամիջոցային (ԷՕՀՄ) և ինֆրակարմիր հակամիջոցային (ԻԿՀՄ) համակարգերը, որպեսզի շարքից հանեն վտանգ ներկայացնող նշանակետերի զգայարարները՝ ճնշելով նրանց խոցելի դիտող զգայարարները: ԷՕՀՄ բանելակարգում զենքը տեսանելի ճառագայթում է առաքում ալիքների այնպիսի երկարություններով, որոնք կվերալարվեն 0,45-ից 0,75 մկմ-ի միջև: ԻԿՀՄ բանելակարգում *միևնույն կայանքը* կարճակի միջին ինֆրակարմիր ճառագայթում՝ ալիքի այնպիսի երկարություններով, որոնք կվերալարվեն 2,0–5,0 մկմ տիրույթում, որպեսզի հակազդեն մոտեցող տակտիկական նշանակետերի զտիչապաշտպանված ջերմաորսիչ զգայարարներին:

**Ռադիոտեղորոշումային կրկնիչները** (ՌԿ) հակազդման այլ լավ մտածված համակարգեր են, որոնք շատ օգտակար են ԷՊ-ի ժամանակ: Դրանք իրոք որ մոլորեցման զենք են և յուրային նշանակետերը հարվածներից պաշտպանելու միջոց են այն բանից հետո, երբ հակառակորդի ռադիոտեղորոշիչները հայտնաբերում են դրանք: Հնարավոր հակառակորդի ռադիոտեղորոշիչների անընդհատ «բռնումը» և վերլուծությունը այդ հակամիջոցի արդյունավետութ-

յան էական պահանջն է: Դա արվում է մշտապես՝ օդագնացային և վրագետնյա ունկնդրիչ կայաններից բոլոր ռազմական ռադիոտեղորոշիչների վերաբերյալ համալիր ազդանշանային տեղեկույթի (ԱԶԴՏԵԼ) հավաքմամբ: ԱԶԴՏԵԼ-ը կապահովի հավանական հակառակորդի կրող կայանքներից ստացվող յուրաքանչյուր ռադիոտեղորոշումային իմպուլսային շարանի անհատական էլեկտրոնային համարանշումը՝ ընդհուպ մինչև մանրամասնությունները ալիքի տեսքի, էլեկտրոնային փականների, հաճախականային թռիչքի և իմպուլսային շարանի փոփոխակումների մասին:




Նկ. 3. Միջին և գագաթային հզորությունների հարաբերությունը՝
ԷՊ-ի խանգարումային կայանների (1), ռադիոտեղորոշումային կայանների (2)
և գերհզոր միկրոալիքային ՈՒԷԶ-երի (3) տիրույթներում
(«U.S. Army 1998 Science and Technology Master Plan for 2010» հրատարակությունից)

Այն յուրային կրող ռազմակայանքներում, որոնց հիմքում ԱԶԴՏԵԼ-ի ամենավերջին տվյալների էլեկտրոնային բազան է, համակարգչով կառավարվող ՌԿ-ները ծրագրավորված կլինեն ճշգրտորեն նմանարկելու հակառակորդից եկող հատուկ ռադիոտեղորոշումային իմպուլսների շարանը: Հակառակորդի ռադիոտեղորոշիչով լուսավորված յուրային կրող կայանքը այժմ վերադարձնում է ռադիոտեղորոշումային իմպուլսների մի շարան, որը նույնական է եկող շարանին, բայց ունի մի փոքր հապաղում՝ դրանով իսկ նենգափոխելով նշանակետերի գտնվելու իրական տեղը և թյուրիմացության մեջ գցելով հակառակորդի ինքնուղղորդման և կրակի կառավարման համակարգը: Գոյություն ունեն մոլորեցնող ռադիոտեղորոշումային հակամիջոցների բազմաթիվ փոփոխակներ, որոնք ստեղծում են պատրանք-նշանակետեր, որպեսզի հակառակորդը ծախսի իր հրետանային մարտապաշարը, իսկ իրենք հարձակումից փրկեն յուրային ռազմագույքը:

ՌԿ պահանջվող տեխնոլոգիայի հիմքն են հզորության պինդմարմնային միկրոալիքային ուժեղարարները, որոնք մոլորեցնող ռադիոտեղորոշումային պատասխան ազդանշանները հաղորդում են համակարգում ընդգրկված ռազմական համակարգիչների հսկողությամբ: Հզորության պինդմարմնային միկրոալիքային ուժեղարարների արտադրությունը Հայաստանում կարող է արագ կերպով կազմակերպվել էլեկտրոնային արդյունաբերության առկա ենթակառույցի հիմքի վրա: Դրա համար արտադրության կազմակերպումը կծառայի իրացման երկու՝ թե՛ ռազմական և թե՛ առևտրական, պահանջարկների բավարարմանը:

**Անընդհատ ալիքի ռադիոհաճախականային (ԱԱՌՀ) հաղորդիչները** ԷՊ-ի համար էլեկտրամագնիսական ազդանշանների ճնշման և ռադիոհաղորդումների խլացման դասական համակարգեր են, որոնք շլացուցիչ էլեկտրամագնիսական աղմուկի առաքմամբ հակառակորդի կապի համակարգում, ռադիոտեղորոշիչներում և այլ ազդանշանային գեներատորներում առաջ են բերում ժամանակավոր խափանումներ: Դրանք հզոր հաղորդիչներ են, որոնք իրենց չափերով նման են հեռուստակայանի ազդանշանային գեներատորներին: Նրանք հաղորդում են պատահական էլեկտրամագնիսական աղմուկ, որն առաքվում է համապատասխան ալեցիրների միջոցով: Ուժեղ աղմուկը վրադրվում է հակառակորդի ազդանշաններին՝ ռազմական գործողությունների ընթացքում ժամանակավորապես շարքից հանելով հակառակորդի կապը և հեշտացնելով յուրային ուժերի ծրագրված գրոհը:

ԱԱՌՀ հաղորդիչները սովորաբար տեղակայված են լինում հատուկ նախանշանակման ինքնաթիռների և ուղղաթիռների վրա: Նրանց կիրառումը պահանջում է շատ ուշադիր ռազմական ծրագրում՝ եղբայրասպանությունից կամ յուրային կապի խանգարումից խուսափելու համար:

ԱԱՌՀ պահանջվող տեխնոլոգիան հիմնված է տարբեր տեսակի էլեկտրոնային փնջի լամպային ուժեղարարների և տատանակների վրա, որոնց արտադրությունը կարող է կազմակերպվել Հայաստանում, ինչը ևս կծառայեր իրացման թե՛ ռազմական և թե՛ առևտրական պահանջարկի բավարարմանը:

**3. ՃՇԳՐԻՏ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՄԱՐՏԱՊԱՇԱՐՆԵՐ, ԾԱՎԱԼԱՅԻՆ ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐ ԵՎ ՋԵՐՄԱՃՆՇՈՒՄԱՅԻՆ ԶԵՆՔԵՐ:** Ճշգրիտ կառավարվող մարտապաշարները (ՃԿՄ-ներ) մշակվել են վերջին 40 տարիների ընթացքում՝ որպես ժամանակակից պատերազմական գործողությունների արդյունք: ՃԿՄ-ներն սկզբնապես որոշ կիրառություն են ունեցել վիետնամական պատերազմում, այնուհետև նշանակալից կիրառություն են ստացել Պարսից ծոցի պատերազմում, իսկ առավել տարածված և արդյունավետ ձևով կիրառվել են 2003 թ. իրաքյան պատերազմում: Բացի այդ, վիետնամական, աֆղանական և իրաքյան պատերազմներում տեղի ունեցավ ծավալային պայթուցիկների (ԾՊ-ներ) մեծամասշտաբ կիրառություն, ընդսմին վերջին երկու պատերազմները նաև ցույց տվեցին խորանիստ ամրաշինությունների, ստորգետնյա հրամանատարական կետերի, ռազմապահեստային քարանձավների, ահաբեկչական կազմակերպությունների թաքստոցների և ԶԽԶ-ների արտադրության պաշտպանված միջոցների ու պահեստների դեմ ջերմաճնշումային զենքերի (ՋՃԶ-ներ) կիրառման անհրաժեշտությունը:

**Ճշգրիտ կառավարվող մարտապաշար** կարող են լինել օդային կայունաբարով ղեկավարվելու կարողությամբ օժտված ավիառումբերն ու հրթիռները, որոնք ռմբակոծիչ ինքնաթիռից նշանակետի ավտոմատ լազերային լուսավորման շնորհիվ ունեն ինքնուղղորդվելու և կառավարվելու ունակություն: Նախկինում դա արվում էր նաև ինքնաթիռից ռումբի՝ փակ փուլաշրջանով կիսաավտոմատ հեռուստատեսային (ՀՏ) կառավարմամբ: Բոլորովին վերջերս ռումբի ինքնուղղորդումը կատարվում էր փակ փուլաշրջանով ավտոմատ կառավարմամբ՝ պարզապես համընդհանուր դիրքորոշումային համակարգից (ՀԴՀ)՝ GPS-ից, ստացվող անընդհատ տեղեկույթի օգտագործմամբ: Ռումբի վրա եղած

էլեկտրոնային սարքերից ստացվող ՀԴՀ տեղեկույթը և նշանակետի հայտնաբերման վերաբերյալ տեղեկույթը դրված են փակ փուլաշրջանով կառավարման հիմքում: ՀԴՀ-ով կառավարումը չափազանց հաջող էր իրաքյան պատերազմի ժամանակ. եղած հին մարտապաշարները նվազագույն ծախսերով վերասարքավորելու դեպքում ապահովվում էր նրանցով խոցման մեծ հավանականություն: ՀԴՀ տեղեկութային բազան բաց է յուրաքանչյուր օգտագործողի համար, ով ունի երկրի վրա ցանկացած վայրում 1 մ բնորոշ ճշգրտությամբ իր դիրքը որոշելու նպատակով Համակարգին հարցում անելու էլեկտրոնային ունակություն: ՃԿՄ մյուս ձևերն են՝ ռադիոտեղորոշումային ուղղորդումով հրթիռները, որոնք բլոկավորում են հակառակորդի ռադիոտեղորոշիչ կայանքը, որպեսզի շարքից հանեն կամ ճնշեն թշնամու կողմից ռադիոտեղորոշումային համակարգերի օգտագործումը, և ԻԿ ազդանշաններով ինքնուղղորդվող հրթիռները, որոնք բլոկավորում են նշանակետերի ԻԿ արտապատկերումը:

**Ծավալային պայթուցիկներ** են այն կառավարվող ավիառումբերը, որոնք նախորոշված բարձրության վրա սփռում են ածխաջրածնային վառելիքի օդակախույթի ընդարձակ ամպ: Երկարատև հապաղումով պայթուցիչով գործարկված ներսարված ճայթիչը կբոցավառի մեծ սփռված ամպը և առաջ կբերի անպայթյուն այրում օդում: Արդյունքը լինում է տպավորիչ ծավալով պայթուցիկ հրագունդը, որով ստեղծվում է մի ավելցուկային ճնշում, որը սովորական պայթուցիկների (ՍՊ) ստեղծած ավելցուկային ճնշման համեմատությամբ ունի ավելի մեծ գոյատևություն: Երկարատև պայթյունն առաջ է բերում նաև շատ ավելի մեծ մոմենտ: Մոմենտը ստեղծված ուժի և ուժի պահպանման ժամանակահատվածի արտադրյալն է: ԾՊ-ով ստեղծված երկարատև դրական հարվածային ալիքը մի կարևոր պարամետր է, որն ստեղծված մեծ մոմենտի շնորհիվ ավելի արդյունավետ է ոչնչացնում կառույցները: ԾՊ-ն արագ կերպով մեծ տարածքներ ականազերծելու համար ամենաարդյունավետ զենքն է: Մեծ ավելցուկային ճնշումը արդյունավետ կերպով պայթեցնում է վրագետնյա ականները: ԾՊ-ները արդյունավետ են նաև հավաքակայաններում գտնվող զրահապատ մեքենաների, մարտական տանկերի շարասյուների և բաց երկնքի տակ կամ համեմատաբար թեթևաշեն հանգարներում կանգնեցված ինքնաթիռների էսկադրիլյաների ոչնչացման համար: ԾՊ-ները շատ օգտակար են ամրակետերի և դաշտային հրամանատարական կետերի ոչնչացման համար: Ամենահզոր ԾՊ-ն է մեկ տոննա քաշ ունեցող ամերիկյան BLU-96 ռումբը, որը արդյունավետ կերպով կիրառվել է Աֆղանստանում և իրաքյան պատերազմի ժամանակ:

**Ջերմաճնշումային զենքերը** նույնպես կառավարվող ավիառումբեր են, սակայն՝ երկրի խորքը ներթափանցող և դիմացկուն թաղանթով օժտված: ՋՃԶ-ները իրենց կազմում ունեն պինդ ծավալային պայթուցիկ նյութ, կամ նրանց մարտագլխիկը կարող է կազմված լինել պոլիմերով միացված անզգայունակ պայթուցիկ նյութից: Վերջինս զգայունակ չէ, որ պայթի՝ ենթարկվելով երկրի խորքը թափանցող հարվածի հետևանքով առաջացող արագ մեխանիկական կամ ջերմային էներգիայի ազդեցությանը: Մարտագլխիկի բռնկումը կիարուցվի նախապես տրված 100–200 մվրկ հապաղմամբ պայթուցիչով: ԾՊ ճայթային հակազդումը դանդաղ է, բայց նա ՍՊ-ի համեմատությամբ մեծ քա-

նակի էներգիա է առաքում: Ներթափանցման սահմանափակ գոտում ՋՃՁ-ով ստեղծված երկարատև պայթյունը շատ արդյունավետ է ամրաշինված ստորգետնյա կառույցների, թունելների, ստորգետնյա զինապահեստների և հրամանատարական կետերի ոչնչացման համար: Ամենաhզոր ՋՃՁ-ն է մեկ տոննա քաշ ունեցող ամերիկյան BLU-118/B ռումբը, որը նույնպես արդյունավետ կերպով կիրառվել է աֆղանական և իրաքյան պատերազմների ժամանակ:

ՃԿՄ-ների, հատկապես այն ՃԿՄ-ների, որոնք նախանշանակված են ՀԴՀ-ով կառավարվող ավիառումբերի համար, և ԾՊ ու ՋՃՁ արկերի ստեղծումն ու արտադրությունը կարող են հեշտությամբ կազմակերպվել Հայաստանում:

**4. ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ԱՊԱՐԱՏՆԵՐ, ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐ ԵՎ ԹԵՎԱՎՈՐ ՀՐԹԻՌՆԵՐ:** **Անօդաչու թռչող ապարատները** (ԱԹԱ-ներ) վերջին երեք տասնամյակում առաջ բերեցին ռազմական և հետախուզական հսկայական համաշխարհային հետաքրքրություն: ԱԹԱ-ների հիմնական արտադրողներն են (ըստ կարևորության) ԱՄՆ-ը, Իսրայելը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Իտալիան, Նիդեռլանդները, Կանադան, Ռուսաստանը, Չինաստանը, Ճապոնիան, Թայվանը, Շվեյցարիան և Հարավաֆրիկյան Հանրապետությունը:

Ստրատեգիական ԱԹԱ-ներ առայժմ կան միայն ԱՄՆ-ի զինանոցում: Նրանք բնութագրվում են մեծ դիմացկունությամբ (սովորաբար 40 կամ ավելի թռիչքաժամ), գործողության մեծ շառավղով (Global Hawk RQ-4A ԱԹԱ-ի դեպքում՝ 26000 կմ), բարձրաթռիչությամբ (շուրջ 20000 մ), ունեն 700 կմ/ժ կրեյսերական արագություն և 11600 կգ մեկնարկային կշիռ:

Տակտիկական ԱԹԱ-ներ կան եվրոպական բանակների և Իսրայելի զինանոցում, ընդ որում Իսրայելը մեծ թվով շարունակվող նախաձեռնությունների ռահվիրա է: Այս տիպի ԱԹԱ-ների ամենաարդիական տարբերակը ֆրանսիական Sperwer/Ugglan ԱԹԱ-ն է, որի թռիչքի տևողությունը 6 ժամ է, գործողության շառավիղը՝ 200 կմ, թռիչքի շահագործային բարձրությունը՝ 5200 մ, ընդ որում կրեյսերական արագությունը 205 կմ/ժ է, իսկ մեկնարկային կշիռը՝ 300 կգ: Դա կարող է պատշաճ մակարդակ լինել հայկական ԱԹԱ-ի սկզբնական նմուշի համար: Երկրորդ սերունդը իր թռիչքաժամերը կերկարաձգի մինչև 24 ժամ, գործողության շառավիղը կմեծացնի մինչև 1000 կմ, թռիչքի շահագործային բարձրությունը՝ մինչև 10000 մ, ինչպիսին է գործողության միջին շառավղով իսրայելական տակտիկական ԱԹԱ-ն:

ԱԹԱ-ները hիանալի կրող կայանքներ են ռազմադաշտի հետախուզության, դիտարկման, նշանակետի հայտնաբերման և հարձակման գաղտնի առաքելություններ կատարելու համար՝ միևնույն ժամանակ մարտական կառավարման համար ժամանակի ռեալ մասշտաբում տեղեկույթ ապահովելով: Նրանք կիրառվել են նաև որպես արդյունավետ նմանարկիչ հարմարանքներ՝ նմանարկելով մեծ կործանիչ-ռմբակոծիչ ինքնաթիռների ռադիոտեղորոշումային համարանշումը, ընդ որում դրանցում փողային տիպի ալեցիրներն օգտագործվում են անդրադարձող ռադիոտեղորոշումային ազդանշանների ուժեղացման համար:

Այդպիսի ԱԹԱ-ների էսկադրիլյան կիրառվել է Իրաքում 1981 թ. հունիսի 7-ին «երկիր–օդ» դասի հրթիռների (ԵՕՀ) արգելապատնեշն իրենց վրա քա-

շելու նպատակով, մինչդեռ խիրայելական կործանիչ-ռմբակոծիչների ավիագունդը ներթափանցել է ստեղծված «պատուհանով»՝ ֆրանսիացիների կողմից Իրաքում կառուցված «Օսիրաք» հզոր ատոմակայանը ոչնչացնելու համար: ՈՒթ F-16 ինքնաթիռ, յուրաքանչյուրն ունենալով երկու հատ 1000 կգ-ոց ռումբ, փոքր բարձրությամբ և շատ մեծ արագությամբ միայն մեկ անգամ անցել են նշանակետի վրայով և ամբողջությամբ ավերել ատոմային ռեակտորի միջուկը, որը տեղակայված է եղել բետոնե հաստ սահմանափակիչ պատյանի մեջ: 1000 կգ-ոց ռումբերը ճշգրիտ կառավարվող չէին: F-16 արշավօղանավերն ուղեկցվում էին պաշտպանական վեց F-15 կործանիչ-ռմբակոծիչներով: Բոլոր 14 ինքնաթիռները վերադարձան անկորուստ՝ կատարելով առաջադրանքը, թեև առկա էր հսկայական ռադիոտեղորոշումային ծածկապաշտպանություն՝ խորհրդային շրջանի ԵՕՀ-ի լավագույն հակաօդային պաշտպանությունը, որն Իրաքն ուներ այն ժամանակ: Բարձրակարգ օդային հարձակման այս դասական տարբերակը ցույց տվեց, որ ամենալավ հակաօդային պաշտպանությունն իսկ կարող է հեշտությամբ հաղթահարվել շնորհիվ ԱԹԱ-ների հիմքի վրա կիրառված արդյունավետ մոլորեցման, տեխնիկական հետախուզության և հնարամտության:

ԱԹԱ-ները կատարյալ միջոց են տարածաշրջանային ռադիոտեղորոշումային կայանքների ռադիոտեղորոշումային համարանիշերի հավաքման, ռադիոտեղորոշումային տվյալների բազայի ստեղծման համար, ինչպես որ դա պահանջվում է մոլորեցման գործողություններում: ԱԹԱ-ների օգտակար բեռնվածքը կարող է ներառել էլեկտրաօպտիկական (ԷՕ) և ԻԿ խցիկներ, լիցքային կապով սարքի (ԼԿՍ) տեսախցիկներ, փոփոխական բացվածքով ռադիոտեղորոշիչ, քիմիական նյութերի նկատմամբ զգայունակ ու վերլուծիչ սարքավորանք, հեռուստատեսային խցիկներ, ականափնտրիչ սարքավորանք, էլեկտրոնային հակամիջոցային համակարգեր (ԷՀՄՀ), ԷՊ-ի համակարգեր, էլեկտրոնային հետախուզության (ԷԼԵՀԵՏ) ու ԱՁԴՀԵՏ-ի համակարգեր և մարտագլխիկներ: Օգտակար բեռների լրակազմը ձևավորվում է ըստ ԱԹԱ-ների յուրաքանչյուր հատուկ առաջադրանքի:

ԱԹԱ-ների այս բոլոր օգտակար բեռնվածքները կներառվեն Հայաստանում առաջին սերնդի ԱԹԱ-ների ստեղծման և կառուցման գործում: Մոլորեցուցիչ օգտակար բեռնվածքների ստեղծումը, արտադրումը և սարումը պետք է կատարվեն Հայաստանում ԱԹԱ-ների արտադրությանը զուգահեռ:

Այժմ ԱԹԱ-ների զարգացումն ընթանում է երկու տարբեր ուղղություններով կամ փոփոխակումներով: Ամենավերջին կատարելագործումների ուղղություններից մեկում ԱԹԱ-ների ռազմական եզրաչափքը նվազեցվում է՝ հասցվելով ինքնաթիռների խաղալիք մոդելի չափերին, ընդ որին նման ԱԹԱ-ները կարող են արձակվել և կառավարվել անհատապես մեկ զինվորի կողմից: Կատարելագործումը կատարվում է բարձր աստիճանի մանրաչափավորված օգտակար բեռներով մինի-ԱԹԱ-ների և միկրո-ԱԹԱ-ների ստեղծման ուղղությամբ: Ամենավերջին կատարելագործումների մյուս ուղղությունը ԱԹԱ-ների ընդարձակումն է՝ զորեղ անօդաչու մարտական թռչող ապարատների (ԱՄԹԱ) ստեղծման համար: Դրանք «որսորդ-սպանիչ» մասնագիտացված կրող կայանքներ են, որոնց վրա տեղակայված են «օդ–օդ» և «օդ–երկիր» դասերի կառավարվող հրթիռներ

և նոր դասի կառավարվող «խելացի» ենթամարտապաշարների[*] տարբեր տեսակներ:

Վերջին փոփոխակումների ժամանակ ԱԹԱ-ների կատարելագործումը կատարվել է ԱՄՆ-ում՝ որպես ԱՄԹԱ-ի ծրագրի մի մասը, հարթ անտեսանելի-«ստելսային» անօդաչու հարվածային ռեակտիվ ինքնաթիռի ձևով: ԱՄԹԱ-ները կօգտագործվեն կարևոր նշանակություն ունեցող, լավ պաշտպանված այն ռազմական նշանակետերի վրա հարձակում գործելու համար, որոնք կարող են նույնականացվել և տեղորոշվել նախապես՝ առաջադրանքի կատարումից առաջ, ընդմիջն կատարվում է կողային համակարգիչների բեռնում ժամանակի գրեթե ռեալ մասշտաբում տվյալների բազայով, և նրանք գործում են մարդու հեռակառավարմամբ: Բոյինգ X-45-ը և Northrop–Grumman X-47-ը ԱՄԹԱ-ի գծով մրցող ծրագրեր են: Խորհրդային Միությունը նույնպես ունեցել է ԱՄԹԱ-ի մի քանի ծրագիր, որոնց կատարմանը Ռուսաստանը դեռևս ձեռնամուխ չի եղել:

Անտեսանելիության հատկությունը բացատրվում է ռազմական առումով զգալի տարածությունների վրա ռադիոտեղորոշումային հայտնաբերման նրկատմամբ անընկալունակության համատեքստում: Այսինքն՝ անտեսանելի օբյեկտների ռադիոտեղորոշումային հայտնաբերման հեռավորությունը շատ ավելի կարճ է, քան պետք է, որ ռազմական պատասխանը արժանահավատ լինի: Անտեսանելի դառնալու համար ինքնաթիռը կամ հրթիռը պետք է պատրաստված լինի ռադիոտեղորոշումային իմպուլսներ կլանող (ոչ թե անդրադարձնող) նյութերից: Անտեսանելի ինքնաթիռի ռադիոտեղորոշումային անդրադարձման արդյունավետ մակերեսը, ներառյալ՝ ներքին մետաղապատ օբյեկտների դասավորությունը և դրսից տեղակայված զենքերը, չափելու համար կիրառվում են լայնատարած անարձագանք փորձախցեր, որպեսզի հաստատվի, որ նրա անտեսանելիությունը ռազմական կիրառության մեջ պիտանի է:

**Անտեսանելի («ստելս») ինքնաթիռը՝** կործանիչ-ռմբակոծիչի տեսքով, ԱԹԱ-ները և նոր սերնդի ԱՄԹԱ-ները կարող են Հայաստանի սպառազինության համար դառնալ հիմնական կրող կայանքներ՝ պաշտպանական ու տեխնիկական հետախուզության բնագավառում կատարվող գաղտնի առաքելությունների համար: Անտեսանելի ԱԹԱ-ները հետախուզական արբանյակների հիանալի փոխարինող են այնպիսի երկրի համար, որն առայժմ ի վիճակի չէ ուղեծրում ունենալու իր սեփական պաշտպանական արբանյակները: Հայաստանի համար օգտակար կլինի ունենալ գործողության միջին շառավղի անտեսանելի բարձրաթռիչ ԱԹԱ՝ տարածաշրջանի տարածքի վերաբերյալ գաղտնի կերպով հետախուզական տվյալներ կուտակելու համար, ինչը անտեսանելի թևավոր հրթիռների զարգացման անհրաժեշտ բաղադրիչ մասը կլինի:

Անտեսանելի կործանիչ-ռմբակոծիչները Հայաստանի համար կարող են

---

[*] *Ենթամարտապաշար* (submunition) ասելով մենք հասկանում ենք այն լիցքը, որը բազմակի անգամ կրկնօրինակված ձևով տեղադրված է լինում ականի, արկի կամ ռումբի մեջ և վերջինիս պայթյունի դեպքում ցրվում է մեծ տարածքով՝ առաջ բերելով շատ ավելի մեծ ավերումներ, քան իրեն կրող մարտապաշարը: – *Խմբ.:*

լինել վճռորոշ ուժային բազմապատկության գործոն: Վերջին հաշվով դա նաև կհանգեցնի անտեսանելի ԱՄԹԱ-ների զարգացմանը՝ դաշնակից գործընկերների հետ համագործակցությամբ:

Սկզբում ինքնաթիռների անտեսանելի ֆյուզելաժն ու իրանը կարտադրվեն Հայաստանում՝ դաշնակից կամ բարեկամական երկրների համագործակից մատակարարների և ընկերությունների կողմից ներմուծվող ռեակտիվ շարժիչների, ավիոնիկայի*, կողային էլեկտրոնիկայի և ռադիոտեղորոշիչների օգտագործմամբ: Վերջնական հավաքումը կկատարվի Հայաստանում: Հետագայում ռեակտիվ շարժիչների, ինքնաթիռների էլեկտրոնիկայի և տարբեր տեսակի ռադիոտեղորոշիչների համատեղ արտադրությունը նույնպես կարող է ձեռնարկվել Հայաստանում:

ՀՀ ԶՈՒ-ի համար ստեղծված առաջին սերնդի անտեսանելի ինքնաթիռը մեր կարծիքով կլինի մեծ տարաշարժունությամբ օժտված, կարճ վերթռիչքով անտեսանելի կործանիչ-ռմբակոծիչ: Այն պետք է կատարի ինչպես «օդ–օդ», այնպես էլ «օդ–երկիր» խոցման մերձամարտային առաջադրանքներ: Սովորական վերթիռային կշիռը կլինի մոտ 5000 կգ: Տեղակայվող կրովի սպառազինությունը կկշռի 2000 կգ և բաղկացած կլինի «օդ–օդ» ու «օդ–երկիր» դասերի կառավարվող և ինքնուղղորդվող հրթիռներից, ՀԴՀ-ով կառավարվող ռումբերից և միակ հրանոթից: Կողային վառելիքի պաշարի կշիռը կլինի մոտավորապես 1500 կամ, ավելի քիչ սպառազինություն տեղակայվելու դեպքում, ավելի կգ: Գործողության շրջանը կլինի 1500 կմ-ի սահմաններում, իսկ պահանջվող վերթիռային տարածությունը կլինի կարճ՝ մոտ 800 մ:

Մեկ ռեակտիվ շարժիչ ունեցող այս անտեսանելի ինքնաթիռը մեծ տարաշարժունություն կունենա, և նրանում ռեակտիվ արտանետման համար կկիրառվեն ուղղորդված ծայրափողակներ: Թեթևակշիռ ինքնաթիռը պետք է ապավինի իր անտեսանելիությանը և մեծ տարաշարժունությանը, որպեսզի իր գոյությունը պաշտպանի մերձամարտում՝ միաժամանակ ծառայելով որպես համեմատաբար ավելի հեռահար հրթիռների արձակման լավ կրող կայանք: Միակ օդաչուի խցիկը կպաշտպանվի ամուր պոլիմերից ու թեթևակշիռ կոմպոզիտային նյութերից պատրաստված դիմացկուն զրահով: Օդաչուին պաշտպանելու համար նրա նստոցը օժտված կլինի արագ ինքնանետման և պարաշյուտաէջքի տարահանիչ հատկություններով:

Անտեսանելի կործանիչ-գրոհիչ ինքնաթիռը կունենա նաև երկրադետ ռելիեֆակրկնիչ ռադիոտեղորոշիչ**, նշանակետի հայտնաբերման ռադիոտեղորոշիչ և համակարգչով ղեկավարվող ռադիոհեռակառավարվող դինամիկական կայունություն: Կողային օգտակար բեռը կներառի աչքերի համար անվտանգ լազերային հեռաչափեր, որոնք մեկ այլ հայկական տեխնիկական

* *Ավիոնիկա* է կոչվում ինքնաթիռների կողային էլեկտրոնային սարքավորանքի ամբողջությունը:–*Խմբ.:*

** *Երկրադետ ռելիեֆակրկնիչ (lookdown terrain-following) ռադիոտեղորոշիչ* ասելով մենք հասկանում ենք այն սարքը, որը ինքնաթիռին հնարավորություն է տալիս շատ ցածր թռչելու՝ իր թռիչքի ցանկացած կետում մնալով երկրի մակերևույթից միևնույն նախապես տրված (50 մ-ից փոքր) հեռավորության վրա, ինչով ապահովվում է ինքնաթիռի քողարկումը ռադիոտեղորոշիչներով հայտնաբերումից:–*Խմբ.:*

նորամուծություն են, նշանացուցիչ, դիրքորոշման և ուղեկցման լազերներ, կողային լազերներ՝ հրթիռներին և զգայարարներին էլեկտրաօպտիկական հակազդեցություն ցույց տալու համար, իսկ մի քանի մասնագիտացված ինքնաթիռներում՝ նաև կրակի կառավարման ու նշանակետի նշանառման և ուղեկցման համակարգերի հետ ինտեգրված տակտիկական ՌԻԷԶ-ի կողային լազեր:

Այս նկարագրությունից հասկանալի է դառնում, որ կործանիչ-գրոհիչ էսկադրիլյան կարող է այնպես կազմված լինել, որ ներառի մի շարք մասնագիտացված ինքնաթիռներ, որոնցից յուրաքանչյուրը, ի հավելումն օդանավի վրա գտնվող ամրակցված զենքի և հատուկ հարմարանքների, բեռնված լինի գերազանցապես ռմբանետիչ կամ կողային զենքի մեկ կամ երկու տեսակի լրակազմերով:

**Թևավոր անտեսանելի հրթիռները** ծրագրավորվում են մանրամասն տեղագրական և հետախուզական տեղեկույթի հիման վրա, որն ստացվում է գործողության միջին շառավղի բարձրաթռիչ անտեսանելի ԱԹՍ-ների գաղտնի գործողությունների միջոցով: Անտեսանելի թևավոր հրթիռները կլինեն Հայաստանի



«Էքսկալիբուր» արկի պայթյունի պատկերումը
(վերցված է Ինտերնետից. www.globalsecurity.org)

պաշտպանական ժամանակակից հեռահար զենք միջին հեռահարության ցանկացած հարձակում զսպելու կամ կանխելու համար: Ինչպես անտեսանելի ինքնաթիռների արտադրության դեպքում, այս դեպքում ևս սկզբում թևավոր անտեսանելի հրթիռների կառուցման համար շարժիչը, գործողության վճռորոշ էլեկտրոնիկան և ռադիոտեղորոշիչները կներմուծվեն դաշնակից կամ բարեկամ երկրների համագործակից մատակարարների և ընկերությունների կողմից: Վերջնական հավաքումը կկատարվի Հայաստանում: Հետագայում այդ մասերի համատեղ արտադրությունը նույնպես կարող է կազմակերպվել Հայաստանում: Անտեսանելի հրթիռի իրանը, արձակման կայանքը (վրագետնյա արձակման դեպքում) և հատկապես ռելիեֆակրկնիչ ռադիոտեղորոշիչի վճռորոշ նշանակությամբ ծրագրային ապահովումը և նշանակետի հայտնաբերման համակարգը կարտադրվեն Հայաստանում: Անտեսանելի թևավոր հրթիռի նշանախոցման շրջանը կլինի 1500 կմ շառավղով: Դա կկատարվի նաև կործանիչ-գրոհիչ ինքնաթիռից:

Ցանկանում ենք, վերջապես, շեշտել, որ թռչող բոլոր տեսակի «ստելսային» մարմինների արտադրության համար այսօր Հայաստանում առկա է մի յուրահատուկ տեխնոլոգիա: Այն չի կրկնում ստելսային նյութերի արտադրության՝

առաջատար արևմտյան երկրներում մշակված տեխնոլոգիաները: Հայկական տեխնոլոգիան հիմնված է նանոնյութերի* մեծաքանակ և տնտեսապես հույժ արդյունավետ արտադրության նախագծի վրա, ըստ որում նանոնյութերից հեշտությամբ կարելի է պատրաստել ցանկացած մարմնի այնպիսի չափի թաղանթապատվածք, որով երաշխավորված լինի մարմնի անտեսանելիությունը բոլոր տեսակի ռադիոտեղորոշիչներով դիտարկումների ժամանակ: Բնականաբար, ստելսային նանոնյութերը կազմված են այնպիսի օրգանական միացություններից, որոնք ոչ թե անդրադարձնում, այլ կլանում են ռադիոտեղորոշիչների էլեկտրամագնիսական իմպուլսները:

**5. ԹԵԹԵՎԱԿՇԻՌ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՊԱՏՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՋՐԱՀԱՀԱՐ ԶԵՆՔԻ ԱՐԿԵՐ:** Պաշտպանիչ պատվածքների և զրահահար զենքերի զարգացումը ռազմական պատմության մեջ տեղի է ունեցել զուգահեռաբար: Ժամանակակից՝ 21-րդ դարի պատերազմում շատ կարևոր է թեթևակշիռ պաշտպանիչ պատվածքների օգտագործումը, որոնք ունեն նաև անտեսանելիացման (հակառադիոտեղորոշումային) հատկություններ: Զրահի պակասեցված, բայց արդյունավետություն ապահովող կշիռը նշանակում է, որ կրող կայանքները կարող են տանել ավելի շատ զենքեր՝ զինվորների և օդաչուների անհրաժեշտ պաշտպանության ապահովման պայմանով:

**Թեթևակշիռ դիմացկուն զրահը** կարող է պատրաստվել այնպիսի նյութերից, որոնք նաև անպայմանորեն ապահովում են անտեսանելիության հատկություններ: Դրանց թվին դասվում են կարծր պոլիմերները, կոմպոզիտային նյութերը, բուսախեժային ապակեթելերը և ածխածնային պլաստմասսաները: Բացի այդ, այս նյութերից պատրաստված արտաքին մակերևույթները կարող են պատվել հատուկ լաքով՝ ընկնող ռադիոտեղորոշումային իմպուլսների միկրոալիքային անդրադարձումն է՛լ ավելի նվազեցնելու համար: Քևլարը և այլ տեսակի կարծրացված պոլիմերները մարտական տանկերի, զրահափոխադրիչների, ինքնաթիռի և ուղղաթիռի անձնակազմի խցիկների, ամրաշինված հրամանատարական կետերի և այլ կերտվածքների համար թեթևակշիռ ամրակայուն պաշտպանական պատվածքների ստեղծման միջոցներ են: Այս նյութերի արտադրության տեխնոլոգիաները շատ մատչելի են Հայաստանի համար:

**Զրահահար զենքի արկերն** ունեն բավական երկար իրան և ներթափանցող սուր ծայր, որոնք պատրաստված են հնարավորինս կարծր մետաղից, որպեսզի արդյունավետ կերպով ծակեն մարտական տանկերը և փոխադրիչները այնպես, որ արկի հետնամասում գտնվող պայթուցիկ նյութը կամ հրկիզվող լիցքը կործանարար լինի: Վերջին մի քանի տասնամյակներում աշխարհի գլխավոր բանակները որպես զրահահար արկեր օգտագործել են աղքատացված ուրան (ԱՈՒ): Այս նպատակով բնական ուրանի օգտագործումը շատ ավելի թանկ ու անշահավետ կլիներ:

ԱՈՒ-ն հիմնականում բաղկացած է ՈՒ-238-ից և բնական ուրանի հարստացման գործընթացի վերջնամասն է, որտեղ հեշտ ճեղքվող ՈՒ-235-ի խտությունը հանքաքարում եղած 0,71 %-ի համեմատությամբ խիստ մեծացված

---

* *Նանոնյութերի* բաղադրիչները նանոմետրային չափերի համասեռ մանրածավալ նյութեր են, ընդսմին 1 նանոմետրը 1 մետրի միլիարդերորդ մասն է:–*Խմբ.:*

է: ԱՈՒ-ի մեջ ՈՒ-235-ի մնացուկային քանակը կարող է կազմել 0,2 %, ընդ որում ԱՈՒ-ի ռադիոակտիվությունը բնական ֆոնին մոտ կլինի: ԱՈՒ-ից պատրաստված հսկայական քանակով զրահահար արկեր են կրակվել անապատում՝ Պարսից ծոցի պատերազմի ժամանակ: Անապատում ոչնչացված իրաքյան զրահատեխնիկայի վրա ճստած ուրանի փոշու ներգործությանը ենթարկված որոշ ամերիկյան զինվորների օրգանիզմում ավելի ուշ ի հայտ եկան լուրջ բժշկական համախտանիշներ: Դրա պատճառը համարվում է ԱՈՒ-ի ներգործությունը: Դեռևս այդ համախտանիշները պատշաճ կերպով չեն բուժվել և բժշկական տեսակետից ոչ լիովին են հասկացված: Այնուամենայնիվ, այս փորձը առաջ բերեց մեծ մտահոգություն՝ կապված մեծ արդյունավետություն ունեցող զրահահար արկերի համար աղքատացված ուրանի օգտագործման հետ: Եվ այդուհանդերձ զրահահար զենքերը ժամանակակից պատերազմի կարևոր բաղադրիչ մաս են: Դրանք ավելի կործանարար զրահահարության դեմ ավելի լավ զրահի ստեղծման՝ պատմական սուր–վահան որոնումների մի մասն են:

Կործանարար զրահահար զենքերը Հայաստանի պաշտպանության համար մեկ այլ անհրաժեշտություն են, ուստի և մենք առաջարկում ենք ԱՈՒ-ն փոխարինել կարծրությամբ նրան մոտ մեկ այլ նյութով՝ վոլֆրամի համաձուլվածքով (ՎՀ): Վոլֆրամ հեշտությամբ կարելի է գտնել Հայաստանի հանքանյութերում, իսկ ՎՀ մետաղագործությանը Հայաստանում տիրապետում են: ՎՀ-ից պատրաստված զրահահար արկերը նույնքան արդյունավետ կլինեն, որքան ԱՈՒ-ից պատրաստվածները: Դեռ ավելին. համակարգչային մոդելավորման ժամանակակից տեխնիկան այժմ հնարավորություն է տալիս ամբողջությամբ բնութագրելու զրահահար զենքի արկերի արդյունավետությունը արկի ցանկացած նյութի և նրա այնպիսի ձևի համար, որը կծակի տվյալ զրահապատ նյութերն ու երկրաչափությունը: Հավանական հակառակորդի կայանքների վրա գտնվող նշանակետերի նյութերն ու երկրաչափությունը կարող են ճշգրտորեն մոդելավորված լինել: Այդպիսի հավաստի համակարգչային մոդելը հանդես է գալիս որպես արագ զարգացման գործիք, ընդ որում կարելի է արագ հավաքել տարբեր զրահահար արկեր և դաշտային պայմաններում զրահաթերթերի վրա փորձարկումներ կատարել:

**6. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿՐՈՂ ԿԱՅԱՆՔՆԵՐ, ԶԳԱՅԱՐԱՐՆԵՐ ԵՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ ԲՌՆՈՂ ՍԱՐՔԵՐ: Տեխնիկական հետախուզության կրող կայանքները, զգայարարները և ազդանշաններ բռնող սարքերը** ռազմական հետախուզության (ՌՀ) համակարգի կարևոր բաղադրիչ մասերն են, որոնք վճռական նշանակություն ունեն Հայաստանի պաշտպանության համար: Հակառակորդների ոտնձգությունների հուսալի զսպումը և կանխարգելումը հնարավոր կլինեն միայն այն դեպքում, երբ ՌՀ տեխնիկական տվյալները լինեն համալիր, ամբողջական և պարբերաբար թարմացվող, ընդսմին առկա լինեն նաև բացահայտ, հզոր, համալիր, արագ արձագանքող մշտական ուժեր:

ՀՀ ԶՈՒ-ի համար վերը նկարագրված առաջին և երկրորդ սերնդի ԱԹԱ-ները, հատկապես նրանք, որոնց գործողության շրջանը 200–1000 կմ է, և որոնք ունեն օգտակար բեռի նշված տարրեր, Հայաստանի համար կլինեն լավագույն տակտիկական հետախուզական կրող կայանքների թվում: Տեղագրական և հետախուզական տեղեկույթի բազաների գաղտնի և պարբերական թարմացման

նպատակով կատարվող տեխնիկական հետախուզության համար հատկապես էական կլինեն գործողության միջին շառավիղով բարձրաթռիչ անտեսանելի ԱԹԱ-ները: Բացի ՌՀ պահանջների բավարարումից, քարտեզագրման խնդրում ձեռքբերված տեղեկույթն անհրաժեշտ է անտեսանելի թևավոր հրթիռների ծրագրավորման համար: Դեռ ավելին. անտեսանելի ԱԹԱ-ների զաղտնի առաքելությունները կանոնավոր կերպով կկատարվեն այնպիսի օգտակար բեռներով, որոնք կտեսածրեն ավտոմատ կերպով՝ տարածաշրջանային ռադիոտեղորոշումային կայանների ազդանշանների հետ մեկտեղ որսալով ու ձայնագրելով ձայնային և թվային հաղորդումները, այն ամենը, ինչ պետք է վերլուծվի ԱԹԱ-ների բարեհաջող վերադարձից հետո:

Անտեսանելի ԱԹԱ-ների՝ ազդանշաններ որսալու թռիչքային առաքելություններին զուգընթաց պետք է ստեղծվի ազդանշանների բռնման վերգետնյա կայանների ցանց: Դրա համար լավ հիմք կծառայեն Աշտարակի հեռազործ մշտազննիչ ալեհավաքները, որոնք պետք է կատարելագործվեն, պատճենվեն և տեղադրվեն մի քանի առավել բարենպաստ վայրերում՝ բոլոր ուղղությունները վերածածկելու համար: Ազդանշանների վերահսկման յուրաքանչյուր ալեհավաքային կայան օժտված կլինի բոլոր կարևոր էլեկտրամագնիսական տիրույթներում գործող ավտոմատ էլեկտրոնային տեսածիրներով և ձայնագրող սարքերով, որպեսզի տարածաշրջանային ռադիոտեղորոշումային ազդանշանների հետ մեկտեղ հավաքի նաև ձայնային ու թվային հաղորդումները: Հայաստանը դեռևս պահպանել է աշխարհում լավագույն սակավաղմուկ լայնուղորդ մեծ ալեհավաքի նախագծման և կառուցման ունակություն, որը նրան ժառանգություն է մնացել խորհրդային ժամանակաշրջանից:

Այսպիսով՝ բոլոր տարածաշրջանային ռադիոտեղորոշիչների, հաղորդակցման հանգույցների, հաղորդակցային երթևեկության ուղեգծերի և այլ արձակումների վերաբերյալ ԱԶԴՀԵՏ-ի և ԷԼԵՀԵՏ-ի ազդանշանների մանրակրկիտ հավաքումը, վերլուծությունը և տվյալների բազայի ձևավորումը տեխնիկական ՌՀ կարևոր գործառույթներ են, որոնք պետք է անընդհատ կատարվեն: ԱԶԴՀԵՏ-ային և ԷԼԵՀԵՏ-ային տեխնիկական հետախուզության այս կայանները նույնպես հիմնականում կգործեն որպես Հայաստանի իրազեկման պաշտպանական ցանց՝ աշխատելով օրական 24 ժամ, կլոր տարի: Դեռ ավելին. կստեղծվեն հաղորդիչներով օժտված մանրաչափավորված «խելացի» զգայարաններ, որոնք վաղ նախազգուշացման գնահատումից հետո գաղտնի կերպով կցրվեն հավանական թշնամության գոտիներում: Առկա են դրանց արդյունավետ տարածման եղանակները՝ մանրազգայարանները և հաղորդիչները ավելի մեծ շրջաններում ցրելու համար:

**7. ԳԵՐՀԶՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐ ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿԵՏ ՈՒՂԵԿՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՄԱՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՀՐԱՄԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՀՍԿՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՀԱՄԱՐ, ՕԴԱՎՐԱԳԵՏՆՅԱ ՄԱՐՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ, ԿԻԲԵՌՊԱՏԵՐԱԶՄԻ, ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ:** Այս, ինչպես նաև մի շարք այլ նպատակների ծառայող **գերհզոր համակարգչային** (ԳՀՀ) **կլաստերները** այժմ Հայաստանի համար տեխնիկապես և ֆինանսապես հասանելի են: Հայաստանի պաշտպանությունն սկզբնապես կպահանջի ունենալ առնվազն երկու ԳՀՀ կլաստերային հարմարանքներ, որոնք

տեղակայված լինեն լավ պաշտպանված խորանիստ սենքերում, որոնցից մեկը պետք է գտնվի Ազգային հրամանատարական կենտրոնի (ԱՀԿ) Ռազմադաշտիճում: Բոլոր տվյալների փոխանցումը ԳՀՀ կլաստերին և կլաստերից կկատարվի օպտիկաթելքային գծերով, և հարմարանքը հետագայում կտեղակայվի էլեկտրամագնիսական առումով լավ էկրանավորված սենյակում, ընդմին այդ էկրանավորումը համարժեք կլինի, օրինակ, ԱՄՆ-ի ՊՆ «Թեմպեստ» (փոքրիկ) դասի ազդանշանային էկրանավորմանը, որպեսզի դիմակայի ՋՃՁ և ԳՀՄ զենքերի միացյալ հարձակմանը կամ էլ ԷՊ-ի օպերացիային:

ԳՀՀ կլաստերը կազմված է մեծ քանակով արագագործ պրոցեսորների միավորումից, որոնք զուգահեռաբար աշխատում են տեղայնացված ու բաշխված հիշողության և արագագործ փոխադարձ կապի բլոկների միջոցով, հիշողության մեծ տարողունակությամբ բաշխված կոշտ սկավառակատարների (ԿՍՏ) հետ: Այսօր մեծ հուսալիություն ունեցող 64 բիթային, 3,2 ԳՀց-ոց արագագործ պրոցեսորներ կարելի է գնել երեք գլխավոր մրցակիցներից: Այդ պրոցեսորներն են՝ Intel ֆիրմայի Itanium-4, AMD ֆիրմայի Opteron և HP ֆիրմայի երկրորդ սերնդի Alfa պրոցեսորները, ընդմին վերջինս մյուս երկուսի նկատմամբ ունի էական առավելություններ: Նշենք նաև, որ մրցակցությունը հանգեցրել է այդ հզոր պրոցեսորների գների իջեցման, և մեծ քանակներով գնման դեպքում վաճառվում է շատ մատչելի գներով:

Հայկական ռազմական ԳՀՀ կլաստերի մեր նախնական ուրվագիծը կազմված է 1000 հատ այդպիսի 64 բիթային, 3,2 ԳՀց-ոց պրոցեսորներից՝ միավորված 500 զուգահեռ հանգույցներում (մեկ հանգույցում՝ երկու պրոցեսոր), և մեկ վայրկյանում կկատարի առավելագույնս 3,0 հազար միլիարդ (3,0 տրիլիոն, կամ տերա) *թվային* գործողություն (3,0 TOPS): Դա վերածվում է մեկ վայրկյանում *սահող ստորակետով* 2,0 տերա գործողությունների (2,0 TFLOPS) կատարման հաշվողական ունակության: Բաշխված օպերատիվ հիշողությունը (ՕՀ՝ RAM) կլինի 1,0 տերաբայթ (1,0 TB RAM), իսկ կապակցված բաշխված ԿՍՏ-ները կունենան գրանցման 40,0 տերաբայթ ընդհանուր տարողունակություն (40,0 TB HDD): Այսօր Հայաստանում առկա են թե՛ նախագծեր և թե՛ իրազեկ աշխատակազմ, որոնց միջոցով այդ ԳՀՀ կլաստերը կհավաքվի մեկ տարվա ընթացքում: Եվս մեկ տարի կպահանջվի Հայաստանում օպերացիոն համակարգերի և սպասարկման այլ ծրագրային ապահովումների լիակատար ինտեգրման համար, ինչով ԳՀՀ կլաստերը կդառնա օգտագործողի բարեկամ գործիք:

ՈՒրվագծված ԳՀՀ կլաստերի աշխատանքային ցուցանիշները այսօրվա սեղանի համակարգիչների համեմատությամբ կարող են աներևակայելի թվալ: Այդուհանդերձ նշված հատկություններով ԳՀՀ կլաստերը Հայաստանում կարող է հավաքվել մեկ տարվա ընթացքում՝ ներմուծված պրոցեսորներից և արագ փոխադարձ կապի տարրերից, որին հիմք կծառայեն հայկական նախագծերը և լավ իրազեկված տեխնիկական խումբը: Այսօրվա գներով այն կարժենա մոտ 1,2 մլն ԱՄՆ-ի դոլար: Դա կարելի է համեմատել այն ԳՀՀ կլաստերի հետ, որը մինչև 2004 թ. կհավաքվի ԱՄՆ-ի Լոուրենս Լիվերմորի ազգային լաբորատորիայում (ԼԼԱԼ): ԼԼԱԼ-ը վերջին տասնամյակում եղել է աշխարհում ԳՀՀ կլաստերների բնագավառի առաջատարը և գործածության մեջ ունի մի քանի մեծա-

գույն կլաստեր: ԼՂԱԼ-ի ամենավերջին ԳՀՀ կլաստերի մեջ կկատարվի 360 TOPS գործողություն՝ 65000 զուգահեռ հանգույցների միջոցով, և նա կունենա 32 տերաբայթ բաշխված ՕՀ, այսինքն՝ նա իր գործողությամբ 120 անգամ հզոր կլինի Հայաստանի համար մեր կողմից ուրվագծվող «համեստ» ԳՀՀ կլաստերից:

Ստորև նշենք ներկայացվող հայկական ԳՀՀ կլաստերի ամենակարևոր ռազմական կիրառումները:

**Բազմանշանակետային ուղեկցումը** և Հայաստանի երկնքի ամբողջական վերածածկումը, որը կտարածվի նաև նրա սահմանների հորիզոնից շատ ավելի այն կողմ, այժմ դառնում են ԳՀՀ կլաստերի իրագործելի ռազմական գործողություններից մեկը: Հայաստանի ինչպես վրագետնյա, այնպես էլ օդային բոլոր ռազմական ռադիոտեղորոշումային կայաններից ստացվող տեղեկույթը կարող է միագումարվել և միաբերվել՝ պատերազմական և խաղաղ ժամանակ հազարավոր նշանակետերի ուղեկցումն ապահովելու համար: Վրագետնյա ռադիոտեղորոշումային հանգույցները կարող են միացվել անվտանգ օպտիկաթելքային գծերի միջոցով, որոնք ԳՀՀ կլաստերին կփոխանցեն թվայնացված, տեղում մասնակիորեն վերլուծված տեղեկույթ: Կարող են ժամանակի ռեալ մասշտաբում որոշվել նշանակետի հրակոծման վեկտորները, որպեսզի մոտեցող նշանակետերի խմբերը բաշխվեն ըստ կրող այն զինակայանքների, որոնց դիրքավորումը տվյալ խմբի ոչնչացման համար օպտիմալ է:

Ազգային հրամանատարական կենտրոնի Ռազմադաշտային օդավրագետնյա մարտը կդիտվի և կկառավարվի ժամանակի ռեալ մասշտաբում: Կարող են կատարվել տարբեր ռազմական զորավարժություններ և մանրամասն թվային մոդելավորումներ՝ այդ եզակի ունակությունը կատարելագործելու համար:

ԳՀՀ կլաստերի մյուս հիմնական գործառույթն է այն տեղեկույթի միաբերումը և միաձուլումը, որն ստացվում է **մարտի կառավարման, հրամանատվության, վերահսկման, կապի և հետախուզության** աղբյուրներից՝ ԱՀԿ Ռազմադաշտիճում ժամանակի ռեալ մասշտաբում միաժամանակյա հավաստի տեղեկույթի ապահովմամբ: Հակամարտությունների ընթացքում դա կենսականորեն կարևոր կլինի, որպեսզի մի քանի համընթաց մարտեր հաջողությամբ ղեկավարվեն: Դեռ ավելին. ժամանակի ռեալ մասշտաբում այդ քարմացված տեղեկույթը ԱՀԿ-ում պետք է նաև ռեալ ժամանակում ցանցային բաշխման միջոցով բաժանվի ռազմադաշտի հատվածների հրամանատարների միջև: Ինչպես ցույց են տալիս վերջին 12 տարիների պատերազմները, ռազմական գործողությունների վարման վերաբերյալ մանրամասն թվային տեղեկույթը՝ հաղորդված վարընթաց՝ մինչև դասակի մակարդակը, մարտի թեժ պահին դառնում է հաղթանակի հասնելու վճռորոշ գրավական: Ամբողջ մուտքային և ելքային տեղեկույթը պետք է թվային եղանակով ավտոմատ կերպով գաղտնագրվի և ապագաղտնագրվի անվտանգության ամենաբարձր մակարդակով՝ հակամարտային գործողությունների ընթացքում վերծանումը կանխելու համար: Պատերազմական շրջանի տեղեկույթի տվյալների հենց այս տեսակի վարընթաց միաձուլումը և նրա տվյալների բաշխումը ՀՀ ԶՈՒ-ին կտան մի քանի ճակատով՝ լիովին միասնականացված օդավրագետնյա մարտ վարելու հնարավորություն: Դա նաև նշանակում է, որ ՀՀ ԶՈՒ-ն ընդհուպ մինչև դասակի մակարդակը որպես կապի և տեղեկույթի

փոխանակման գլխավոր կայանք կօգտագործեն խանգարումապաշտպանված և ամրակայված հազարավոր կրովի համակարգիչներ: Այդ պաշտպանված ռազմական կրովի համակարգիչները կարող են ոչնչացվել հեռակառավարմամբ:

**Օդավրագետնյա մարտի մոդելավորումները,** որոնք օգտագործում են ԳՀՀ կլաստերի հզոր հաշվողական հնարավորությունները, ֆինանսապես շատ մատչելի գործիք կլինեն հայ ռազմավարների և մարտավարների ձեռքում: Օդավրագետնյա մարտերի իրականամետ և մանրամասն մոդելավորումները կարող են հավանական հակառակորդների և սեփական կարողությունների մուտքագրմամբ անընդհատ փոփոխակվել՝ ՌՀ նոր տեղեկույթի ստացման համեմատ: Այդ մոդելավորումները նաև հնարավորություն կտան խաղաղ ժամանակ պլանավորելու և ղեկավարելու առավել իրականամետ զորավարժություններ:

Գաղտնի մոդելավորումները նաև յուրային ուժերի և ռազմագույքի թերությունների բացահայտման, նրանց գործողությունների շտկման և կատարելագործման հիանալի միջոց են: Այն բանի համատեքստում, որ Հայաստանի ԶՈՒ-ն լիովին թափանցիկ են և ենթակա են երկրի ազգային քաղաքական ղեկավարությանը, այդ մոդելավորումները նաև հանդես կգան որպես համոզելու գործիք այնպիսի ռազմական նպատակային հատկացումներ կատարելու համար, որոնցով ձեռք բերվեն նոր զենքերի համակարգեր, որոնք ՀՀ ԶՈՒ-ին անհրաժեշտ են տարածաշրջանում տեխնոլոգիական գերազանցության անընդհատ պահպանման համար:

**Կիբեռպատերազմը** դառնում է 21-րդ դարի ռազմական հակամարտությունների անկապտելի բաղադրիչ մաս: Հենց այստեղ հայկական մտավոր կորովը կարող է կարևոր ռազմական դեր խաղալ: Ըստ անհրաժեշտության ակտիվացող գաղտնի «նիրհող» թվային (համակարգչային) վիրուսների ու «որդերի» և այլ նմանատիպ վարակների ներմուծման միջոցով հակառակորդի համակարգչային ենթակառույցը շարքից հանող կիբեռպատերազմը դառնում է հզոր ռազմական ձեռնարկում: Նմանապես հակառակորդի կիբեռպատերազմից յուրային համակարգչային սարքերի և ենթակառույցների պաշտպանությունը դառնում է կարևոր նախազգուշական միջոց: ԳՀՀ կլաստերը դառնում է հզոր գործիք՝ հակառակորդի դեմ կիբեռպատերազմի բարդ գրոհների կազմակերպման, ինչպես նաև նրա գրոհներից պաշտպանվելու համար:

Էլեկտրոնային տեղեկույթի անվտանգ հաղորդման և ընդունման համար **ազդանշանների գաղտնագրումն ու ապագաղտնագրումը** ազգային անվտանգության գլխավոր ռազմական պահանջներից են, ընդսմին դա ԳՀՀ հզոր կլաստերը արտակարգ լավ է կատարում: Մասնավորապես, հավանական և իրական հակառակորդների բռնված ծածկագրված ազդանշանների ապագաղտնագրումը ազգային անվտանգության և պաշտպանության ծայրաստիճան անհրաժեշտ պահանջ է: Քողածածուկ ձայնային, թվային, ռադիոտեղորոշումային և այլ ալիքային հաղորդումների բռնված ազդանշանների ապակոդավորումը և ապագաղտնագրումը դառնում են ԳՀՀ կլաստերի գլխավոր խնդիրներից մեկը, որը նա կարող է կատարել կարճ ժամանակում: Այսպիսով՝ ժամանակի նկատմամբ խիստ զգայուն տեղեկույթի արագ ապակոդավորումը դառնում է իրագործելի, ինչը թույլ է տալիս արագ և օպերատիվ կերպով արձագանքել դեպքերի զարգացմանը:

* * *

Երկու հազարամյակ՝ մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջից մինչև մ. թ. ա. առաջին հազարամյակի վերջը, Հայաստանի Զինված ուժերը ի վիճակի էին հաջողությամբ պահպանելու Հայկական լեռնաշխարհի խաղաղությունն ու անվտանգությունը խեթական, եգիպտական, ասորեստանյան և պարսկական հզոր ուժերի ներխուժումներից: Դա հեշտ էր, քանի որ հայերին հայտնի էր ուժային բազմապատկության բացառիկ զենքերի գաղտնիքը, հատկապես այն զենքերի, որոնք պատրաստված էին երկաթից և պողպատից: Միայն հայերենում է, որ «երկաթ» բառի արմատն ունի *երկնային մետաղ* իմաստը: Դա այն բանի վկայությունն է, որ հայ մետաղագործները այն ժամանակ բացառապես առաջինն էին, ովքեր հայտնաբերեցին ասուպներում պարունակվող երկաթի հատկությունները, իսկ հետո այն փնտրում էին հայկական հանքաքարերի մեջ: Հայ տեխնոլոգները զենք ու զրահը սարքում էին երկաթից և պատրաստված ամրակուռ վահաններն ու մարտակառքերը հիմնականում երեսպատում էին երկաթով: Գրեթե երկու հազարամյակ հակառակորդները չունեին հայկական զենքերին և մարտակայանքներին հավասար զենք ու զրահ, որոնք պատրաստվում էին ավելի փափուկ մետաղից՝ բրոնզից: Երկաթը հզոր զենք էր բրոնզի համեմատությամբ, և հայերը այդ հազարամյակներում պահպանում էին տվյալ ռազմական գաղտնիքը: Երկու հայտնի ռազմարշավները՝ մեկը դեպի Եգիպտոս, որը 110 տարի շարունակ հայերի (հիքսոսների) կողմից գրավված էր, և որտեղ հայերը տարան իրենց քաղաքակրթությունը, իսկ մյուսը՝ հարավային Միջագետք, ինչի հետևանքով վերելք ապրեց շումերական քաղաքակրթությունը, այն հազարամյակներում հայկական զենքի գլխավոր նվաճումներն են:

Եվս երկու հազարամյակ անց՝ 21-րդ դարի արշալույսին, ՀՀ ԶՈՒ-ի առաքելությունն այսօր ոչ միայն Հայաստանի խաղաղության և անվտանգության պահպանումն է, այլև այդ առաքելությունը կատարելու համար տարածաշրջանի խաղաղության և անվտանգության պաշտպանությունն է, առանց որի Հայաստանը չի ունենա ո՛չ խաղաղություն, ո՛չ անվտանգություն և ո՛չ էլ բարգավաճում: Այս դարի կարևոր պարտավորությունները հաջողությամբ կատարելու համար ՀՀ ԶՈՒ-ն պետք է նորից ունենան ուժային բազմապատկության զենքերի և ռազմական կայանքների ժամանակակից լրակազմ, հատկապես՝ այն զենքերի և կայանքների, որոնք պատրաստված կլինեն հենց Հայաստանում՝ հայ տեխնոլոգների և արդյունաբերողների կողմից, և որոնց մեծ մասը համառոտակի նկարագրվեց սույն հոդվածում:

Սակայն զենքերն ընդամենը ռազմական դոկտրինի իրագործման միջոց են, մինչդեռ ռազմական դոկտրինը կարող է բխել միայն ազգային դոկտրինից: Հայաստանի Ազգային անվտանգության խորհուրդը (ՀԱԱԽ) հենց կլինի այն ղեկավար մարմինը, որը նախ կսահմանի Ազգային դոկտրինի պահանջները, որոնց հիման վրա կզարգացվի նաև Ռազմական դոկտրինը: Սույն հոդվածում առաջ քաշված գաղափարի իրագործման ուղղությամբ առաջին քայլը, ըստ մեզ, պետք է լինի գաղտնիացված՝ Ռազմական տեխնոլոգիաների գիտաարդյունաբերական կենտրոնի (ՌՏԳԿ)՝ որպես հետազոտությունների, կատարելագործումների, փորձարկումների և նախագծումների կենտրոնի ստեղծու-

մը, մի կենտրոն, որը կգործի անկախ՝ ըստ ՀԱԱԽ-ի ղեկավար հրահանգների և ՀՀ ՊՆ վերահսկողությամբ: Ընդսմին Ռ-ՏԳԿ-ն պետք է ստեղծվի որպես ոչ պետական կառույց, որն ինքնուրույն կերպով ձևավորի և ծախսի իր ֆինանսական միջոցները, և որը հնարավորություն ունի հարաբերվելու պետական կառույցների հետ:

Ընդ որում, Հայաստանի Ռ-ՏԳԿ-ն նաև կդառնա բազմաթիվ համատեղ և շատ դեպքերում փակ պաշտպանական ծրագրերի կատարման առաջատար շարժիչ, որոնք կծավալվեն Հայաստանի դաշնակից և բարեկամ պետությունների ռազմաարդյունաբերական կենտրոնների հետ: Այս հոդվածում ներկայացված արդիական տեխնոլոգիաների ուղղություններն այնպիսին են, որ ընտրված սպառազինությունների արտադրությունը կարելի է Հայաստանում կազմակերպել ինքնուրույն կամ համատեղ ջանքերով առաջիկա տասնամյակի ընթացքում՝ ներառյալ նմուշների ստեղծումը, ցուցադրումը, փորձարկումը և սերիական արտադրությունը:

Ի վերջո, կարևոր է նշել այն հանգամանքը, որ գրեթե երկու տասնամյակ առաջ Խորհրդային Հայաստանի տնտեսության 35 %-ը, որն իրագործվում էր նախկին ԽՍՀՄ ՌԱՀ-ի շրջանակներում, առաջավոր տեխնոլոգիաներով արտադրել է ռազմական *լրամասեր*, բայց երբեք իրավունք չի ունեցել արտադրելու ամբողջական ռազմական *համակարգեր*: Իսկ սույն հոդվածում քննարկվող նախագծի իրագործմամբ ոչ միայն Հայաստանի պաշտպանության համար կստեղծվի առաջավոր դարբնոց, ինչի հիմքը կլինի ուժային բազմապատկության արդիական ռազմագույքի արտադրությունը, այլև Հայաստանում արտադրության այդ ոլորտի վերելքը ավելի քան կիամակշռի էկոնոմիկայի նորածին պաշտպանական ճյուղի մեջ երկրի կատարած ներդրումը: Դա ոչ միայն կվերականգնի 1980-ականների Հայաստանի ծաղկուն տնտեսական կառույցը, այլև արտասահմանյան երկրներին ռազմական տեխնիկայի ընտրողական վաճառքի միջոցով Հայաստանի քաղաքականության համար կստեղծի հզոր լծակներ, ինչը պետք է համապատասխանի Հայաստանի որոշակի շահերին և նրա բոլոր միջազգային պայմանագրային պարտավորություններին:

Հայաստանի 3-րդ Հանրապետության առաջին տասնամյակում ՀՀ ԶՈՒ-ն մեծ հաջողությամբ և ի զին հայ զինվորին առաջադրված դժվար պայմանների ամրապնդեց ու պահպանեց երկրի սահմանները: Սակայն, դժվար չէ կանխատեսել, որ պաշտպանական առումով առաջիկա տասնամյակները համեմատաբար այդքան «պարզ» և «հեշտ» չեն լինի: Հազարավոր հայ զինվորների՝ սահմանային խրամատներում ձյան տակ կանգնած պարտաճանաչ սահմանապահությանը գալիս են փոխարինելու հոդվածում ներկայացված տեխնիկական հետախուզության միջոցները, որպեսզի նրանք համախմբվեն սահմանամերձ մասնագիտացված լեռնագնաց զրահային գումարտակներում և գնդերում, ինչը ՀՀ ԶՈՒ-ին կտա շատ ավելի ազդեցիկ ուժականություն: Դեռ ավելին. ՀՀ ԶՈՒ-ն, ունենալով այս հոդվածում բերված տեխնոլոգիական գերակշռության և ուժային բազմապատկության հատկանիշները, լինելով երկրի անկախության վերջնական երաշխավորը, հնարավորություն կունենա նաև ստանձնելու և մասնակցելու տարածաշրջանի խաղաղապահության առաքելությանը, որը կպահանջի

դիմագրավել այն հակամարտություններին, որոնք կարող են ծավալվել մի քանի ճակատներով:

Սույն հոդվածում նկարագրված ուղիների այլընտրանքները շատ մռայլ են: Լավագույն դեպքում Հայաստանը կարող է դիտվել որպես «տարածաշրջանի այն անհարմար և անարժեք խաղաքուղքը», որին կարելի է մեծ կարևորություն ունեցող միջոցառումներում հեշտությամբ շրջանցել կամ անտեսել՝ որպես տարածաշրջանային այս կամ այն տերության խնամարկյալի (տես «2015 Global Trends»-ի ոչ գաղտնի համարում, որը վերջերս հրապարակվել է Ամերիկայի Հետախուզության ազգային խորհրդի և Կենտրոնական հատուկ ծառայության կողմից): Հայաստանը և նրա 7000-ամյա քաղաքակրթության ժառանգությունը արժանի են շատ ավելիին, քան նման ընկալմամբ են: Այժմ Հայաստանի համար եկել է անկախ և պատասխանատու պետության դեր ստանձնելու ժամանակը:

## ТЕХНОЛОГИИ СИЛОВОГО УМНОЖЕНИЯ ДЛЯ ОБОРОНЫ АРМЕНИИ

*З. Т. КИРАКОСЯН, доктор физико-математических наук, профессор (США)*

РЕЗЮМЕ

Наиболее оптимальным путем повышения боеспособности ВС Армении является обеспечение силового умножения, т. е. обеспечение ВС такими высокотехнологичными видами оружия, которые существенно повышают боевую мощь каждой боевой единицы. К оружиям силового умножения относятся: оружие направленной энергии (основанное на лазерном, мощном микроволновом и радиочастотном излучениях), сверхточное оружие, различные виды боеприпасов (бронебойные, куммулятивные, кассетные (с суббоеприпасами), системы объемного взрыва, проникающее термобарическое оружие), беспилотные летательные аппараты, «невидимые» ЛА, средства разведки, наблюдения и распознавания цели, быстродействующие компьютерные системы с огромной памятью и т. д. В статье представлены принципы действия тех видов оружия силового умножения, разработка и производство которых в сотрудничестве с Россией, США, Францией, Китаем и другими дружественными странами могло бы быть осуществлено в Армении в соответствии с ее международными договорными обязательствами.

# THE TECHNOLOGIES OF FORCE MULTIPLIERS FOR THE DEFENSE OF ARMENIA

*Z. G. T. GUIRAGOSSIAN, Ph. D., Professor (USA)*

SUMMARY

The most optimal way of increasing the fighting efficiency of Armenia's Armed Forces in the modern battlefield is to provide the best possible Force Mutipliers, i. e. to provide the Armed Forces with such high-technology types of weapons, that essentially increase the combat power of each combat unit. Force Multiplier weapons include: directed energy weapons (based on laser, high-power microwave and radiofrequency radiation), precision guided weapons, various types of munitions (anti-armor, hollow-charge with submunition cassettes, fuel air explosives, penetrating thermobaric weapons), unmanned aerial vehicles, stealth aircraft, target acquisition, pointing and tracking means, high-power cluster computers of enormous memory, etc. The principles of the functioning and development of these types of Force Multiplier weapons are presented in this article, the deployment and manufacturing of which, in cooperative initiatives with Russia, the USA, France, China and other friendly countries would be conducted in Armenia, consistent with Armenia's international treaty obligations.

# «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՀԱՆԴԵՍԻ՝
# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
# «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ»
# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

# «РАБОЧИЕ ТЕТРАДИ»
# ПРИЛОЖЕНИЕ К ЖУРНАЛУ
# «АЙКАКАН БАНАК»
# ПО СТРАТЕГИЧЕСКИМ ИССЛЕДОВАНИЯМ

## ИЗБРАННЫЕ ПУБЛИКАЦИИ

# «WORKING NOTEBOOKS»
# SUPPLEMENT ON STRATEGIC STUDIES
# TO THE DEFENSE-ACADEMIC JOURNAL
# «HAIKAKAN BANAK»

## SELECTED PUBLICATIONS

# ПРОБЛЕМНЫЙ РЕГИОН: ВАРИАНТЫ ДЛЯ НАГОРНОГО КАРАБАХА*

*В. Л. ШЕЙНИС, Главный научный сотрудник Института мировой экономики и международных отношений РАН, доктор экономических наук*



Попытки исправить волевое решение Кавбюро ЦК РСДРП(б) о включении Нагорного Карабаха в состав Азербайджана, принятое 5 июля 1921 г.,–решение партийного (даже не государственного) органа третьей страны, незаконное и неправовое, исходившее из соображений политической конъюнктуры момента, предпринимались на протяжении всей советской истории. В последний раз принять такое решение на конституционном уровне было предложено при обсуждении Конституции СССР 1977 г. Но соответствующая поправка на сессии ВС СССР, утверждавшей новую Конституцию, не была доложена депутатам и вообще не стала предметом публичного обсуждения. В реально существовавшей в то время системе власти передача НКАО, населенной преимущественно армянами и подвергавшейся дискриминации в распределении ресурсов, в социальной, культурной, языковой политике бакинского руководства, Армении могла быть осуществлена решением Политбюро ЦК КПСС (или даже Генсека) с последующим оформлением в Конституциях СССР, Армении и Азербайджана. Операция носила бы технический характер. Прецеденты подобного порядка были. Наиболее известный, хотя и не единственный из них – передача Крыма Украине в 1954 г., решение значительно более проблемное. Можно предположить, что аналогичное решение по Карабаху не было принято и потому, что союзное руководство тогда предпочитало сохранять *status quo* в национально-государственном устройстве, и потому, что влияние азербайджанского клана партийно-государственной номенклатуры превалировало над армянским. Существовавшее разграничение опиралось на квазилегитимное основание: норма, в соответствии с которой территория республики не может быть изменена без ее согласия, присутствовала во всех советских Конституциях: 1924, 1936, 1977 гг.

*Перестройка, объявленная в 1985 г., создала новую ситуацию, открыла новые возможности и воздвигла новые препятствия.* Главное изменение заключалось в том, что вопрос о статусе Нагорного Карабаха из кабинетов власти перешел в сферу публичной политики. Решения властных госу-

---

* Опубликовано в № 1–2, 2011 г. по теме «Организация договора о коллективной безопасности и Южный Кавказ: перспективы мира и безопасности в регионе» (материалы международной конференции, Ереван, 19–20 мая 2011 г.).

дарственных органов становились предметом заинтересованного общественного обсуждения. Самостоятельное значение приобретал фактор площади (улицы) – на политическую сцену выходит народ. Воля армянского народа Карабаха, отчетливо заявленная на многолюдных демонстрациях и митингах, получила юридическое оформление в решении Областного совета НКАО, обратившегося 20 февраля 1988 г. к Верховным Советам Армении и Азербайджана с корректным предложением об изменении государственного статуса НКАО.

Мог ли тогда осуществиться мирный и сравнительно безболезненный переход Нагорного Карабаха в состав Армении, отвечавший воле подавляющего большинства его населения и получивший немедленный отклик в самой Армении? Дать категорический ответ на этот вопрос непросто. Во всяком случае, такое решение уже не могло быть проведено так, как при непоколебленном советском режиме,–беспрекословным голосованием депутатов в республиканских и союзном Верховных Советах. Обострение ситуации и споры были бы неизбежны: это предопределяла сама сущность процессов, развязанных перестройкой. Можно предположить, что более или менее консенсусное решение могло быть принято в начале перестройки, хотя и тогда оно едва ли прошло бы без серьезных обострений. Однако с июня-июля 1988 г., когда Президиум ВС СССР принял одностороннее решение в пользу сохранения существующего положения, началась эскалация конфликта. Кризис с короткими паузами относительного затишья все более обострялся.

Позиции сторон определились и теперь могли только ужесточаться. Согласие заинтересованных сторон по статусу Карабаха, будь то сохранение существующего положения, передача его в состав Армении или выведение его из подчинения Баку, стало невозможным. *Политические силы Нагорного Карабаха,* опиравшиеся на единодушную поддержку армянского большинства его населения, вполне отдавали себе отчет в том, что отход от принятых решений означал бы не просто консервацию неудовлетворительного положения, но его существенное ухудшение. Если в том и могли быть какие-то сомнения, то они были сняты сумгаитским погромом.

*В Армении* борьба за «армянский Нагорный Карабах» стала главным фактором национального сплочения. Сформировался общенациональный фронт борьбы за Карабах, в который оказались вовлечены также и организации КПСС, и депутаты, «избранные» еще по разнарядке в советский период. Однако инициатива и массовая поддержка стали скоро переходить к силам антибюрократической оппозиции, находившей инициативные формы организации общества: от комитета «Карабах» – к АОД. Мне довелось быть гостем на съездах АОД и наблюдать все это вживую.

В *Азербайджане* фигуры лидеров быстро менялись (от Везирова к Муталибову и Поляничко, а чуть позже – к Эльчибею), но антиармянскую,

антикарабахскую позицию занимали все. Эта позиция получала почти всеобщую поддержку *в азербайджанском обществе.* Более того, она становилась едва ли не главным политическим ресурсом республиканских властей. Популистская ориентация избранного курса разнуздывала страсти, плодила погромные инициативы на местах. На настроения, доминировавшие в республике, серьезное влияние оказывал исход азербайджанского меньшинства из Армении (хотя здесь лидеры и активисты АОД противодействовали эксцессам). Митинги под националистическими лозунгами в Баку собирали до полумиллиона человек. Националистическая, мини-имперская по характеру волна подхватила и демократические элементы в азербайджанском перестроечном движении. Дистанцироваться от нараставшей в республике антиармянской агрессии они не смогли (или не решились).

Главные (хотя и не столь безотказные как прежде) рычаги воздействия на ситуацию в первые годы перестройки оставались в руках *союзного руководства.* Здесь существовали разные подходы. Но изначально возобладала линия на сохранение советского национально-территориального устройства. Поскольку сохранение СССР в прежних границах для М. Горбачева, болезненно воспринимавшего центробежные процессы, чем дальше, тем больше становилось главным политическим приоритетом, любое покушение на пересмотр внутрисоюзных границ также рассматривалось как шаг к распаду государства. Вообще-то так это и было: отказ поддержать ту или иную позицию, притом в крайнем выражении, развязывал антисоюзные устремления в республиках, которые могли счесть себя ущемленными. Ошибочным было убеждение: «Союз можно сохранить» – слова, которые Михаил Сергеевич повторяет поныне. И вытекавшее из этого представление, будто бы самым правильным является поиск промежуточных решений, сохраняющих существующее государственно-территориальное разграничение. Но тем самым в жертву приносились главные цели и идеи перестройки и подрывались политические позиции Союзного центра. Так было в Прибалтике. Так было и на Южном Кавказе, где позиции сошедшихся в клинче сторон отвердевали: одни требовали независимости от искусственно навязанного подчинения властям чужой республики, а другие–безусловного подчинения мятежной территории. Следует отметить, что устремления народного большинства Карабаха не нашли поддержки не только у «архитектора перестройки» («Реакция Горбачева была слишком раздраженной, я бы сказал–инфантильно обидчивой и недостаточно тактичной»,–свидетельствовал А. Сахаров), но и у занимавшего более последовательную перестроечную позицию А. Яковлева: «Сейчас территориальные изменения невозможны», говорил он.

Как это нередко бывает в критических ситуациях, *отсутствие четкого выбора – наихудший выбор.* Союзное руководство дважды упустило возможность сделать такой выбор. В первый раз – после Сумгаита, когда можно

было мобилизовать общественное мнение в стране, приняв жесткие меры против погромщиков и тех, кто попустительствовал и стоял за ними. Вторично – в январе 1990 г., когда по Азербайджану прокатилась новая волна армянских погромов, вызвавшая исход нескольких сотен тысяч этнических армян с территории республики. Как известно, войска, хотя и с запозданием, были введены в Баку, но не для защиты терроризированных граждан, а для того, чтобы предотвратить (как выяснилось – отсрочить) крушение советской власти в Азербайджане и восстановить заграждения на иранской границе.

А затем события покатились по наклонной плоскости. В январе 1989 г. была приостановлена деятельность законных органов власти в Карабахе и введен не предусмотренный Конституцией режим особого управления. Во главе Комитета особого управления был поставлен А. Вольский, который представлял союзную власть и, по крайней мере, пытался демпфировать самые острые проявления конфликта. А год спустя был введен режим чрезвычайного положения и власть передана так называемому Оргкомитету, который возглавил второй секретарь ЦК Азербайджана В. Поляничко, оставивший по себе в Карабахе и прилегающем к нему армянонаселенном Шаумяновском районе недобрую память. В марте–июле 1991 г. азербайджанские власти, получившие поддержку дислоцированных здесь частей Советской армии, развернули операцию «Кольцо», включавшую блокаду Карабаха и этнические чистки на сопредельных пограничных территориях, заселение армянских селений неприкаянными турками-месхетинцами, дважды пережившими трагедию депортации. Все это осуществлялось зверским образом – мне довелось быть тому свидетелем. «В 1988 г. еще существовал сильный Центр, – говорил позднее Р. Кочарян. – Но чем ниже опускался Центр, тем труднее становилось в Карабахе».

В 1991 г. союзное руководство уже мало что могло сделать. Но оно – вплоть до путча, – по крайней мере, могло бы следовать мудрому правилу: не навреди! Однако и это оказалось вне его власти и намерений: были изданы указы, легализовавшие действия Оргкомитета, и военачальники, номинально подчинявшиеся Москве, смогли распоряжаться вверенными им частями по собственному усмотрению и по договоренности с местной властью. Как бы то ни было, *конституционный путь решения Карабахской проблемы в рамках СССР теперь был перекрыт.*

Реалистический курс союзной власти мог сводиться теперь лишь к признанию законно избранных в Карабахе и Шаумяне органов власти и выводу оттуда воинских частей (численностью порядка 6 тыс. чел.), подчиняющихся союзному командованию, к недопущению передачи их вооружения армии Азербайджана, к созданию которой приступило руководство республики. Но и эта задача не была решена. *Поражение путча и распад СССР перевели ситуацию в иную плоскость.* 2 сентября 1991 г. совместная сессия депутатов Нагорного Карабаха и Шаумяновского района утвердила

Декларацию о независимости[1], а 10 декабря это решение было утверждено на референдуме голосованием 99,9 % армянского населения. Теперь Карабах мог рассчитывать только на собственные силы, поддержку Армении и тех сил в России, которые были убеждены в справедливости его дела.

Наиболее последовательной и активной из таких сил были *российские демократы.* Их участие на стороне армянского народа Карабаха не нашло еще адекватного отражения в имеющихся публикациях. Здесь можно сказать лишь о некоторых моментах. Проблема Нагорного Карабаха оказалась в центре внимания клуба демократической интеллигенции «Московская трибуна», сыгравшего заметную роль в консолидации интеллектуального актива перестройки. Клуб был создан в октябре 1988 г., и тогда же по инициативе А. Сахарова было *утверждено заявление «К миру в нашем доме»,* в котором были сформулированы наши основные подходы. Надо осознать, что события в Сумгаите – важный рубеж, говорилось в этом документе. Теперь должны последовать дела. Выход может быть найден только на пути компромисса, но принятые на высшем уровне Союза решения – не компромисс. Путь к нему долог и труден, но главное политическое решение – вывод НКАО из административного подчинения Азербайджану должен быть осуществлен немедленно.

Вслед за тем была предпринята *поездка группы А. Сахарова* (в которую входили также Е. Боннэр, Г. Старовойтова, Л. Баткин и др.) в Армению, Азербайджан и Карабах. Группа везла с собой план урегулирования конфликта на основе размена территориями с преимущественно азербайджанским и армянским населением соответственно, после проведения на них референдума. План был с интересом принят в Ереване и скептически – в Баку, но главное, подчеркивал Сахаров, – была сделана попытка осуществить поворот к диалогу, к публичному обсуждению деталей. Поездка Сахарова и его коллег вызвала заметный резонанс в Армении и России. Одним из ее результатов было освобождение из тюрем и снятие обвинений с незаконно арестованных активистов комитета «Карабах». Тема Карабаха оставалась в поле зрения регулярно собиравшейся «Московской трибуны». Она заняла видное место в центральной и российской печати (в частности, на страницах передового в те годы издания «Век XX и мир»).

Еще один памятный эпизод в мобилизации российского общественного мнения в защиту справедливого дела – принятое 21 января 1990 г. *Заявление учредительной конференции кандидатов в народные депутаты РСФСР «О трагических событиях в Закавказье».* Заявление стало составной частью политической платформы этого влиятельного избирательного блока (а впоследствии – парламентского объединения) *«Демократическая*

[1] См. «Декларации «О государственной независимости Нагорно-Карабахской Республики»», 2 сентября 1991 г. «Нагорный Карабах» (http://nagorno-karabakh.ru/nkr/decalration/).

*Россия»*. Российские демократы требовали от союзного руководства объявить общегосударственный траур по жертвам погромов и актов насилия; дать четкую политическую оценку актам геноцида, действиям их организаторов и ответственных лиц, повинных в создании погромной ситуации; принять срочные и эффективные меры по деблокированию Армении и Нагорного Карабаха, в случае необходимости – организовать воздушный мост; решать конфликтную ситуацию в соответствии с конституционным принципом национального самоопределения; в случае неуспеха собственных действий – обратиться к посредничеству ООН.

Вслед за тем российские демократы, избранные народными депутатами РСФСР, продолжали усилия по разрешению конфликта. По их инициативе IV Съезд народных депутатов России в мае 1991 г. утвердил заявление, предлагавшее Президенту СССР принять меры, исключающие использование союзных вооруженных сил и внутренних войск в Закавказье (кроме необходимости разделения враждующих сторон), а также немедленно прекратить депортации населения, освободить заложников, передать находящихся под следствием арестованных в ведение Генеральной прокуратуры СССР.

Российские депутаты наладили постоянную связь с комитетом «Крунк», возглавлявшимся З. Балаяном, неоднократно выезжали в Ереван, Баку, Гянджу и Шаумян, пытались добиться замирения на линии огня. В эту группу входили российские депутаты В. Комчатов, В. Линькова, Л. Пономарев, А. Шабад, В. Шейнис, С. Юшенков, союзный депутат В. Смирнов, ученый-геолог К. Алексеевский и др. И в Азербайджане мы искали и подчас находили людей, заинтересованных в том, чтобы остановить эскалацию насилия. Запомнился эпизод, когда нашими усилиями было подготовлено и подписано в августе 1991 г. на разделявшем стороны шоссе руководителями Шаумяновского района Шагеном Мегряном и азербайджанской администрации Геранбойского района Алиевым соглашение, в соответствии с которым стороны обязались не препятствовать уборке урожая в зоне разграничения. К сожалению, после нашего отъезда и коллапса союзной власти это соглашение было сорвано и наступил новый виток насилия.

Последняя попытка воздействовать на карабахскую ситуацию через союзное руководство была предпринята нами в дни августовской сессии ВС СССР (после поражения ГКЧП). М. Горбачеву были переданы наши предложения по урегулированию конфликта. Мы настаивали, в частности, на отводе частей советской армии из зоны конфликта, причем тяжелое вооружение должно было быть выведено вместе с армией, а не передано азербайджанскому ОМОН-у. Возможно, мы тогда не вполне отдавали себе отчет в том, что Президент СССР сделать уже ничего не мог. Но еще до того, предложения, подписанные Пономаревым, Шабадом и мною, были

направлены Б. Ельцину, к которому переходила реальная власть в государстве.

*Наш план предусматривал пять этапов урегулирования. На первом* – прекращение огня с обеих сторон (за исключением самообороны в случае прямого нападения); отказ азербайджанского руководства от заселения тех армянских сел, жители которых были депортированы в ходе операции «Кольцо»; освобождение заложников. *На втором* – разделение враждующих сторон профессионально подготовленными внутренними войсками МВД СССР, а для контроля за ходом операции – создание групп наблюдателей из числа депутатов различных уровней и приданных им экспертов. *На третьем* – восстановление конституционных органов власти и создание местной милиции, формируемой из жителей – азербайджанцев в азербайджанских селах и армян – в армянских. *На четвертом* – изъятие силами местной милиции незаконно хранимого оружия и вывод азербайджанских военизированных формирований из Карабаха и Шаумяна. *На пятом* – возвращение жителей, подвергшихся депортации в ходе операции «Кольцо», в родные села, которое должны обеспечить силы внутренних войск.

Как видно, этот план закладывал лишь предпосылки урегулирования конфликта и мог открыть путь к решению вопроса при наличии доброй воли с обеих сторон. К несчастью, доброй воли как раз и не было. Азербайджанская сторона, обладавшая тогда материальным и военным перевесом, рассчитывала решить вопрос силой. Поэтому и совместная поездка Б. Ельцина и Н. Назарбаева, в известной мере стимулированная российскими депутатами, встреча в Железноводске 23 сентября 1991 г., в которой приняли участие также президенты Азербайджана и Армении, завершилась всего лишь публикацией коммюнике, содержавшим декларацию о намерении урегулировать конфликт. Как известно, события стали развиваться в противоположном направлении. Горбачев был удален с политической арены, союзная государственность вступила в полосу распада – положительным здесь было лишь то, что из зоны конфликта ушли части советской армии (за исключением тех, личный состав которых в ходе последних призывов подвергся «азербайджанизации»). Заявившие было себя в посреднической миссии президенты России и Казахстана занялись решением собственных проблем, и начатый при их участии переговорный процесс был прерван. Российское государство фактически самоустранилось, и на стороне отстаивавших свои права армян осталась лишь моральная поддержка части общественного мнения России.

Это означало, что отстаивать свою свободу и независимость Карабаху придется, сражаясь один на один, опираясь на поддержку Армении. Вскоре боевые действия возобновились в еще более широком масштабе. Через два дня после железноводской встречи начались обстрелы Степанакерта с возвышавшейся над ним крепости Шуша. Война шла с переменным

успехом до мая 1994 г., когда армии обороны Карабаха при активной поддержке Армении удалось завладеть «поясом безопасности» вокруг республики, выйти к иранской границе и, прорвав блокаду республики, сомкнуть территорию Карабаха с Арменией. Тогда с помощью международных посредников было достигнуто бессрочное соглашение о прекращении огня. *Так состоялось не конечное, но промежуточное решение для Карабаха, действующее скоро уже два десятилетия.* Решение, не удовлетворяющее ни одну из сторон конфликта, поскольку мирный договор не подписан, НКР не получила международного признания, Армения страдает от территориальной изоляции, статус семи азербайджанских районов, образовавших «пояс безопасности» вокруг непризнанной республики, не определен, а их земли пустынны.

Вместе с тем, НКР существует. Ее экономика развивается (правда, наталкиваясь на серьезные трудности), хотя страна, в особенности ее глубинка, остается бедной. Столица и некоторые города отстраиваются. Выстраивается и национальное государство: с 1991 г. до нынешнего дня прошли два референдума и 13 всеобщих выборов – 4 президентских, 5 парламентских и 4 местных, причем выборы – не в пример иным постсоветским странам – проводятся честно, их результаты признаются и карабахским политическим классом (в том числе партиями оппозиции), и международными наблюдателями (в том числе российскими, придерживающимися разной политической ориентации). Тому, кто регулярно бывает в Степанакерте, бросаются в глаза разительные перемены. Люди обрели уверенность в завтрашнем дне. Столица – типичный южный город с сетью магазинов, в которых можно найти все, с многочисленными пунктами современных услуг. На улицах и на стадионе – молодежь, которая ведет себя так, как ее сверстники в Москве, Нью-Йорке, Шанхае, и множество маленьких детей. Даже к маленьким, порой неказистым домикам в Степанакерте и провинции приткнулись автомобили разных марок – новые и подержанные. Мирный покой оберегает карабахская армия, как говорят, не знающая «дедовщины» и пользующаяся уважением,– посещение воинских частей и погранзастав производит сильное впечатление.

Эту атмосферу нарушают лишь воинственные заявления бакинских властей, что их терпение не безгранично и когда оно иссякнет, вопрос будет решаться силой. Я все-таки думаю, что Азербайджаном правят не безумцы. Они должны отдавать себе отчет в том, что возобновление вооруженного конфликта чревато катастрофическими последствиями, в том числе и для их собственной страны. По-видимому, *наращивание вооружений и воинственная риторика в Азербайджане преследуют главным образом внутриполитические цели.* Раздувая интервенционистские настроения и возбуждая страсти, азербайджанский президент и его окружение таким, исторически многократно и повсеместно испытанным способом доби-

ваются консолидации собственной власти. И все же было бы опасно недооценивать вероятность перехода от слов к делу: заряженное ружье нередко стреляет непреднамеренно. Достаточно сказать, что линия соприкосновения между сторонами конфликта в Нагорном Карабахе и на армяно-азербайджанской границе – около 1000 км. Простой пограничный инцидент может повлечь за собой обвал. Поэтому стремление международного сообщества развязать карабахский узел имеет веские основания: новая война за Карабах, будь она развязана, может привести к катастрофе отнюдь не регионального масштаба.

С 1992 г. решение пытается найти так называемая Минская группа в составе трех Сопредседателей – представителей России, Франции и США. Нельзя сказать, что ее деятельность заметно продвинула процесс урегулирования. В настоящее время на стол переговоров между Арменией и Азербайджаном (при выведении из них главной заинтересованной стороны – НКР) положен пакт из шести «базовых принципов». Теоретически они могли бы стать отправной точкой в поиске решения Карабахской проблемы – пусть решения, растянутого во времени и требующего уступок с обеих сторон для достижения компромисса. Создается, однако, впечатление, что Сопредседатели для достижения видимости сближения позиций сторон конфликта затягивают фазу переговорного процесса, на которой главные вопросы остаются открытыми. Разве что предлагаемые ими конкретные решения намеренно не предаются гласности. Но это едва ли может послужить успеху переговоров. Чтобы убедиться в этом, достаточно пройти по пунктам Минского документа[2]:

1. *Возвращение районов, занятых армией обороны НКР под контроль Азербайджана.* Казалось бы, это должно быть приемлемо для Карабаха, если только отвод его войск с линии разграничения осуществляется в пакете, а не выдвигается в качестве предварительного условия для остальных шагов. Ибо «пояс безопасности» сейчас – важнейшая гарантия существования республики. Необходимо поэтому определить, что такое контроль. Будут ли возвращаемые районы демилитаризованы или заняты азербайджанскими войсками? И даже демилитаризованный статус не является надежной гарантией. Достаточно вспомнить, как поступил Гитлер в 1936 г. с Рейнской областью, куда по условиям Версальского договора он не имел права вводить войска. К тому же общественное мнение в Карабахе непросто будет склонить к полной передаче районов, откуда направлялась агрессия.
2. *Временный статус Нагорного Карабаха* (до окончательного решения) *должен предусматривать гарантии безопасности и само-*

[2] См. «Мадридские принципы». Мадрид, ноябрь 2007 г. «Кавказский Узел» (http://www.kavkaz-uzel.ru/articles/160309/).

*управления.* Что это такое? Должна ли быть признана реально состоявшаяся государственность НКР? Кем: Азербайджаном, Россией, международным сообществом? В чем будут заключаться гарантии?

3. *Транспортный коридор, обеспечивающий сухопутную связь с Арменией.* Такой коридор реально уже существует. Должен ли он, как сейчас, включать не только Лачин, но и Кельбаджар, откуда летом 1992 г. направлялась агрессия против Шаумяновского района? И каким будет статус территории этого коридора? Будет ли она юридически включена в состав НКР в обмен на, скажем, Шаумян?
4. *Окончательный статус Карабаха должен быть определен посредством волеизъявления, результаты которого обязательны для всех.* О чьем волеизъявлении идет речь? Нынешнего населения Карабаха? Плюс покинувших его азербайджанцев, численность и состав которых определит сам Азербайджан? Или все избиратели Азербайджана, ибо Карабах, согласно официальной версии, – лишь его составная часть?
5. *Все перемещенные лица и беженцы получают право на возвращение в прежние места проживания.* Кто эти люди? Куда, как и под какие гарантии они могут быть возвращены? Должна ли параллельно решаться проблема примерно 450 тыс. армян, изгнанных из Азербайджана в 1988–1990 гг.? Ведь еще Сахаров во время своего посещения обеих республик в 1988 г. столкнулся с тем, что беженцы с одной и другой стороны возвращаться не хотят.
6. *Международные гарантии безопасности при помощи миротворческих сил.* За кадром – статус миротворческих сил, предоставленные им права и вмененные обязанности (всем памятно невмешательство «миротворцев», когда солдаты генерала Младича хладнокровно истребляли мужское население Сребреницы в Боснии), их численность и национальная принадлежность.

Как видно, каждый пункт «базовых принципов» нуждается в конкретизации, а их интерпретация неизбежно вызовет несогласия, преодоление которых потребует мучительно трудных переговоров и вообще может оказаться проблематичным.

Можно бесконечно решать задачу квадратуры круга: как совместить заявленные во многих международно-правовых документах принципы территориальной целостности государств и право народов на самоопределение. Совершенно очевидно, что совместить их невозможно. Каждая из сторон конфликта будет отдавать приоритет тому из них, который отвечает ее интересам. Или же станет выстраивать юридическую конструкцию, призванную объяснить, почему применительно к данной ситуации не устраивающий ее принцип неприменим.

В международных отношениях и применительно к Карабахскому

конфликту заявлен еще один принцип: неприменение силы для решения спорных ситуаций. На мой взгляд, этот принцип непреложен. Его соблюдение отвечает коренным, долговременным интересам и сторон, втянутых в спор, и окружающих государств, и всего мирового сообщества. Я самым решительным образом поддерживаю мысль, высказанную В. Казимировым: закрепление режима прекращения огня, отказ от применения силы – и, что очень важно оговорить, *также и от угроз применения силы* – должно быть заявлено Сопредседателями Минской группы в качестве предварительного условия для обсуждения способов реализации Мадридских принципов. Между тем создается впечатление, что будучи слишком озабочены поддержанием позиции «равноудаленности» от сторон конфликта, посредники не сумели достаточно внятно заявить такой подход, позволяя властям одной из сторон наживать политический капитал в собственной стране, дезориентируя свое общество и разжигая страсти худшего толка. Надо ясно сказать, что государства, представленные в Минской группе, не допустят силового решения спора.

Требование занять ясную позицию относится прежде всего к России. К сожалению, значительный сегмент общественного мнения здесь больше подвержен восприятию антиармянской риторики, чем на Западе. Незаслуженным доверием здесь пользуются и псевдоисторические обоснования политики. Между тем именно Россия раньше и больше всех пострадает, если вновь заполыхает Южный – а за ним и весь – Кавказ.

# ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՂՎԱՆՔԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

*Հ. Ս. ԽԱՌԱՏՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,*
*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի*
*մշակութային մարդաբանության և երկրագիտության ամբիոնի վարիչ*



Ադրբեջանի ակադեմիական պատմագիտության զարգացումները վերջին քսանամյակում զգալի չափով թելադրվում են Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հանրապետությունների հետ քաղաքական հակամարտությամբ: Իրենց քաղաքական ուղղվածությամբ Ադրբեջանի պատմագիտության առանցքային գաղափարները կողմնորոշիչ են դառնում հումանիտար գիտության այլ հարակից ոլորտների հետազոտողների համար:

Ադրբեջանական պատմագիտության, իրականում՝ պատմագրության զարգացման կարևորագույն թեմաները երկուսն են՝ ադրբեջանցիների ծագման խնդիրը և Կովկասյան տարածաշրջանում հայերի բացակայության «ապացուցման» ջանքերը: Սրանք թեև ունեն ինքնուրույն զարգացումներ, սակայն փոխկապված են՝ խարսխված լինելով ադրբեջանական էթնիկության ձևակերպման և էթնիկ ինքնության բովանդակության փնտրտուքի վրա, որն ակնհայտորեն կառուցվում է հայոց պատմագրության հակոտնյայի հիմնավորումների վրա: Այդ մոտեցման համաձայն՝ հայ պատմագրությունը և հայ պատմագիտությունը հայերին վերաբերող նյութերում կառուցված են կեղծիքի վրա, ուստի ճշմարտությունը պետք է փնտրել հայկական նյութերը հակառակ իմաստով մեկնաբանելու ճանապարհով: Բոլոր հայ հեղինակներն իբր նպատակ են ունեցել յուրացնելու այլոց մշակույթն ու պատմությունը: Նշված համընդհանուր մոտեցումը անհարմար վիճակ է ստեղծում, քանի որ անհնար է տրամաբանական հիմնավորումներ տալ ակնհայտ անհեթեթություններին ու գիտականի քողի ներքո մատուցվող կեղծարարություններին: Օրինակ՝ ադրբեջանցի հեղինակները, մի կողմից, պնդում են, որ Հարավային Կովկասում մինչև 19-րդ դարը առհասարակ հայեր չեն եղել, որ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը Արևմտյան Ադրբեջանն է, որտեղ, ինչպես նաև Աղվանքում, զարգացել է ադրբեջանցիների նախնիների մշակույթը, մյուս կողմից՝ թե Աղվանքի մատենագրական երկերը մեզ են հասել հայերեն լեզվով՝ «պատմական ճակատագրի բերումով»[1]: Հարավային Կովկասում հայերի պատմա-

---

* Տպագրվել է 2010 թ. «Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության նենգափոխումներին գիտական հակազդեցության ռազմավարական ուղենիշները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում» թեմայով հմ. 4-ում:

[1] *Ф. Мамедова.* Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе. «Caucasian Albania» (http://www.bakililar.az/ca/photos/farida.html).

կան գոյության փաստի ժխտման դեպքում անհեթեթ է դառնում այն հարցի հիմնավորումը, թե ինչպես «չեղած» հայերը ոչնչացրին աղվանական գրավոր ժառանգությունը. «Միանգամայն ակնհայտ է, որ հայ հոգևորականությունը մի որոշ ժամանակ աշխատել է աղվանական վիմագրությունների և ձեռագրերի վրա՝ հանգամանորեն քերծելով դրանց հետքերը: Նրանք նման գործունեության մեջ ռեկորդակիրներ են, քանի որ ադրբեջանական բնակչությունը պահպանել է հայկական արձանագրությունները»[2]:

Ադրբեջանական պատմաշինության գլխավոր ճարտարապետներից մեկի՝ Զ. Բունիաթովի աշակերտուհի Ֆարիդա Մամեդովայի վերոհիշյալ պնդումները դարձել են ադրբեջանցիների կովկասյան ծագման հիմնական դրույթներ, ադրբեջանցի պատմաբանների, մշակութաբանների, լեզվաբանների և այլ մասնագետների համար ուղեցույց:

Ադրբեջանցիների ծագումնաբանության հիմքում դրվում են երեք ուղղություն՝ իրանական, թյուրքական և կովկասյան (աղվանական)[3]: Երեք ուղղություններն էլ առկա էին ադրբեջանական խորհրդային պատմագրությունում, սակայն այսօր զգալիորեն հարստացել է աղվանական և թյուրքական ծագումնաբանական բաղադրիչի որոնումների և հաստատումների ներկապնակը, ինչպես նաև քափ են առել ադրբեջանական էթնոսի ձևավորման վաղեմության ու տարածքի, վերջինիս «տեղաբնիկ» էթնոսի/էթնոսների ցանկի վերանայումն ու ադրբեջանցիների ծագմանը այդ տեղաբնիկների մասնակցության հիմնավորումը:

Ադրբեջանական պատմագրության մեջ Կովկասյան տարածքի հետ առնչվող ծագումնաբանական պնդումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Ադրբեջանի տարածքում թյուրքալեզու բնակչությունն ապրել է վաղնջական ժամանակներից (կան տարբեր մոտեցումներ՝ մ. թ. ա. 1-ին դարից, մ. թ. 5-րդ դարից և այլն, իսկ առավել ծայրահեղականները՝ մ. թ. ա. 2-րդ և առաջին հազարամյակներից), ժամանակի ընթացքում նրանց հարևանությամբ ապրող իրանալեզու ցեղերը և կովկասալեզու աղվանները դարձել են թյուրքախոս, նրանց մեջ ձևավորվել է ադրբեջանական էթնիկ ինքնագիտակցություն[4],

2. այսօրվա ադրբեջանցիներն զգալի չափով Աղվանքի կովկասալեզու բնիկ էթնիկ միավորների մշակույթի անմիջական ժառանգորդներն են, որոնք մահմեդականացել ու թյուրքախոս են դարձել արաբական տիրապետության շրջանում, ինչի հետևանքով և վերաձևավորվել է նրանց ինքնությունը, մյուս մասն ուծացվել է հայերի և վրացիների կողմից, և նրանց միայն մի փոքր հատված այսօր դիմադրում է հայ առաքելականությանը[5],

---

[2] Նույն տեղում:

[3] Տես *Ф. Мамедова.* Кавказская Албания и албанцы. Баку, 2006, с. 615:

[4] «Հնագույն Ադրբեջանը ...Միջագետքի ընդհանուր քաղաքակրթության մաս էր և ղեկավարվում էր թյուրքական դինաստիաների կողմից», «առնվազն մ. թ. ա. առաջին հազարամյակում «Ադրբեջանի տարածքը զբաղեցված էր թյուրքական բնակչության կողմից», «մ. թ. ա. երրորդ դարում... Կովկասյան Աղվանքի բնակչության գերակշիռ մասը խոսում էր թյուրքական լեզուներով...» (տես «Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities», 4 June, 2002. «Refworld» (http://www.unhcr.org/refworld/country,,COESFCPNM,,AZE,,4254e99d4,0.html), հմմտ. *Ильгар Маммадов, Тафик Мусаев.* Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество. Тула, 2006, с. 10):

[5] Տես *Ф. Мамедова.* Кавказская Албания и албанцы, сс. 616–617; *նույնի*՝ Об исто-

3. Աղվանքի կովկասալեզու բնիկներն ուծացվել են հայերի կողմից, հայերը «խլել» են նախ նրանց տարածքները, ապա՝ նրանց էթնիկական ինքնության դրսևորումները (լեզուն, կրոնը և այլն), և դրանով, մի կողմից, սահմանափակել ադրբեջանական էթնոսի հետ ամբողջանալու նրանց հնարավորությունը, մյուս կողմից՝ հայացնելով, հնարավորություն են ստացել ձևավորելու ներկայիս Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Այդ ամենը տեղի է ունեցել 19-րդ դարում, սակայն հայ պատմագրությունը իրեն հատուկ խորամանկությամբ դարեր առաջ կանխատեսել կամ ծրագրել է դեպքերի նման զարգացումը[6],

4. պատմական Աղվանքի բնիկները ևս եղել են թյուրքալեզու[7]:

## ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱՅԱՏԵՅՈՒԹՅՈՒՆԸ) ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հակահայկական և բացարձակ հայատյաց է ինչպես ադրբեջանցիների ծագմանը նվիրված «գիտական» գրականությունը, այնպես էլ ընդհանուր քաղաքական պատմաշինությունը, որում ադրբեջանական պատմագրության հակահայկականությունն ավելի լայն ընդգրկում ունի և կարող է պայմանականորեն բաժանվել երկու խմբի.

ա) հայերն Ասիա են գաղթել Բալկաններից մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերին և «յուրացրել են» Ուրարտական պետության պատմությունը: Հայերը մշտապես մոլորության մեջ են գցել աշխարհը՝ իրենց ներկայացնելով որպես կայուն պետական ավանդույթներ ունեցող ժողովրդի, ուռճացված են ներկայացրել իրենց երբևէ ունեցած պետական և էթնիկական սահմանները,

բ) հայերն առաջավորասիական ժողովուրդ են, մինչև 19-րդ դարը երբևէ Կովկասում չեն ապրել և ոչ մի կապ չունեն Կովկասի պատմության հետ:

Այս երկու դրույթները ադրբեջանական պատմագրության մեջ հիմնավորվում են իրարամերժ «փաստարկումներով» և բոլոր դեպքերում՝ կա՛մ աղբյուրների հատվածային օգտագործմամբ, կամ՝ բացարձակապես առանց աղբյուրների: «Փաստարկ» են ծառայում, օրինակ, հետևյալ պնդումները.

1. հայերը մեծապետական հավակնություններ ունեցող ժողովուրդ են, և նրանց պատմագրությունը ամենավաղ շրջանից՝ առնվազն 5-րդ դարից,

---

рической географии Кавказской Албании, Армении и албанском этносе: Ադրբեջանի շատ հեղինակներ ուղղակի, երբեմն բառացի, կրկնում են Ֆ. Մամեդովայից (տես *Юнис Насибли.* Очерк об этноконфессиональных процессах в исторической Албании и их роли в генезисе азербайджанского народа. «Caucasian Albania» (http://www.bakililar.az/-ca/photos/nasibli.html)):

[6] «С возникновением Османской империи армяне теряют надежду на создание своего государства на исторической родине, территории Малой Азии. Они устремляют свои взоры на Кавказ, на исторический Азербайджан, вынашивают идею очищения Кавказа от азербайджанских тюрков. Творцы «Истории армянского народа» вводят в научный оборот понятие Восточной Армении, переосмыслив его, под которым с XVI в. до XX в. подразумевают только и только азербайджанские земли – Карабах, Ереван, Гянджа, Сюник-Зангезур» (տես *Фарида Мамедова.* Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе): Տես նաև *նույնի*՝ Кавказская Албания и албанцы, сс. 591, 605, 606:

[7] Տես *Т. Мамедов.* Кавказская Албания в IV—VII веках. Баку, 1993, сс. 33, 34:

մոլորության մեջ է պահում աշխարհը[8] (ըստ էության, սա Ադրբեջանի պաշտոնական քաղաքական դիրքորոշումն է),

2. հայերը մինչև 19-րդ դարը Կովկասում չեն ապրել[9], իսկ Հայաստանն ավելի շուտ աշխարհագրական տարածք է, քան՝ պետության անուն, և գտնվում է Փոքր Ասիայում՝ Եփրատի ափերին[10]: Հայերն իրենց պետությունը նույնացնում են Հայկական լեռնաշխարհի հետ, մինչդեռ վերջինս լոկ աշխարհագրական տարածք է, որը նույնիսկ չունի հստակ սահմաններ[11]:
3. Լեռնային Ղարաբաղի ներկայիս հայերը պատմական Աղվանքի այն բնիկ ժողովուրդն է, որը հետագայում հայ առաքելական եկեղեցու ազդեցությամբ հայացել է:
4. Հայերը յուրացրել են Աղվանքի պատմագրությունը՝ երկերը թարգմանելով հայերեն և վերացնելով բուն աղվանական պատմության հուշարձանները:
5. Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը հայերի կողմից հորինված առասպել է[12]:
6. Ադրբեջանի «պատմագիրներին» առավել հուզող խնդիրը պատմական Աղվանքի և խորհրդային շրջանի Ադրբեջանի տարածքների նույնականացումն է, ուստի անհրաժեշտ է համարվում Լեռնային Ղարաբաղը ներկայացնել որպես բուն Աղվանքի մաս[13]:

---

[8] Տես *Ի. Մամմադով, Տ. Մուսաև,* Նշ. աշխ., էջ 10, 11, 13, 14, *Сабир Асадов.* Миф о «Великой Армении». Баку, 1999:

[9] Որոշ հետազոտողներ համաձայն են հայերի գոյությունը տեսնել Փոքր Ասիայում, միայն թե այն չլինի Կովկասում. «...о нахождении Армении далеко за пределами Кавказа, а именно в Малой Азии, на двух берегах р. Евфрат свидетельствует много фактов, среди которых крещение армянского народа во главе с царем Трдатом в 314 г. в р. Евфрат» (տես *Ф. Мамедова.* Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе): Տես նաև *Х. Ю. Вердиева.* Переселенческая политика Российской Империи в Северном Азербайджане (19–начало 20 вв.). Баку, 1999, *Ի. Մամմադով, Տ. Մուսաև,* Նշ. աշխ., էջ 18–22:

[10] «Հարավային Կովկասում հայերը հայտնվել են միայն 1828–1830-ական թվականներին. 40 հազար մարդ՝ Իրանից, 84 հազար մարդ՝ Թուրքիայից... և բնակեցվել են Ելիզավետպոլի և Էրիվանի նահանգներում՝ այդ տարածքներում ապրող մահմեդականների հողերի վրա...» (տես «Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities», 4 June, 2002. «Refworld» (http://www.unhcr.org/refworld/-country,,COESFCPNM,,AZE,,4254e99d4,0.html): Սույն հարցադրումով Ադրբեջանը պետական մակարդակով վիճարկում է Արևելյան Հայաստանի տարածքում հայերի գոյության պատմականության և պետականության ունենալու իրավունքը: Այս դրույթների փաստարկմանը լծվում է Ադրբեջանի պատմագրությունը՝ ի դեմս Ադրբեջանի գիտական կենտրոնների երաշխավորությամբ հրատարակվող հսկայական գրականության (օրինակ՝ *А. С. Сумбатзаде.* Азербайджанцы – этногенез и формирование народа. Баку, 1990; *Տ. Մամեդով,* Նշ. աշխ., *Ս. Ասադով,* Նշ. աշխ., *Խ. Յու. Վերդիևա,* Նշ. աշխ., *Ф. Мамедова.* Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе):

[11] Տես *Ф. Мамедова.* Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе; *Ս. Ասադով,* Նշ. աշխ., էջ 54 – 75:

[12] Տես *Ս. Ասադով,* Նշ. աշխ., էջ 210 – 224:

[13] Տես *И. Бабаев.* Некоторые особенности Материальной культуры Кавказской Албании. «Caucasian Albania» (http://www.bakililar.az/ca/photos/babaev.html):

Ընդհուպ մինչև տասնինններորդ դարը Արցախի տարածքի «աղվանականությունը» ներկայացնելու ծրագրի մաս է Լեռնային Ղարաբաղի հայ մելիքների աղվանական ծագման «ապացուցումը»[14]:

Ադրբեջանական պատմաշինության համար կարևոր խութերից մեկը մեծ քանակությամբ քրիստոնեական հուշարձանների առկայության բացատրության անհրաժեշտությունն է, քանի որ, եթե Աղվանքի բնակչությունը մահմեդականացել է առաջին հազարամյակում, իսկ այս տարածքում հայեր չեն եղել, ապա հարց է ծագում, թե ինչու է շարունակվել քրիստոնեական հուշարձանների շինարարությունը: Մինչդեռ ադրբեջանական պատմագրությունը հայերին մեղադրում է «աղվանական» հուշարձաններն իրենց վերագրելում[15]:

Ադրբեջանական պատմագրությանը խորապես հուզող հարցերից է Կովկասում քրիստոնեության ընդունման առաջնության և եկեղեցական աստիճանակարգության հարցը[16]: Քննարկման հիմնական թեմաներից են՝

ա) հայերը մոլորեցնում են աշխարհը՝ հայտարարելով, թե իրենք են առաջինն ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն,

բ) Աղվանքում քրիստոնեությունը տարածվել է հայերից անկախ, և Աղվանքն ունի իր առաքյալը,

գ) Աղվանքի քրիստոնեությունը տարբերվում է հայ դավանաբանությունից. աղվաններից պահպանված միակ բեկոր ուղիները ամեն կերպ խուսափել են հայ առաքելականությունից, և հենց շնորհիվ դրա էլ կարողացել են պահպանել իրենց ինքնությունը:

Այդ պնդումների նպատակն է բացառել աղվանից եկեղեցու նկատմամբ հայկական հավակնությունները և Հայոց եկեղեցու իրավասությունը Գանձասարի թեմի նկատմամբ:

## ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Իրական փաստարկներ չլինելու պայմաններում հիմնական ճանապարհը աղբյուրների և տեղեկությունների շրջանցումն է կամ հատվածային օգտագործումն ու «տրամաբանական վերականգնումը»:

Ադրբեջանական «աղվանագիտական պատմագրության» կառուցողները կա՛մ շրջանցում, կա՛մ շատ հպանցիկ են խոսում այնպիսի «անկարևոր» հարցերի մասին, թե ինչպես և ինչու են աղվաններեն լեզվի այբուբենը կազմել Կովկասում չեղած հայերը, ինչպես է պատահել, որ, չնայած Կովկասում «հայերի բացակայությանը», «Աղվանքի տարածքի» գրավոր ժառանգությունը հայերեն

[14] *Н. А. Джаваншир.* О происхождении рода Мелик-Аслановых (http://www.bakililar.az/ca/photos/nurlana.html).

[15] «....жемчужинами албанского зодчества Гандзасарским и Хотаванкским монастырями, а также множествами подобным им памятниками, расположенными на исконно азербайджанской земле, которые именуются фальсификаторами величайшими памятниками армянского зодчества….» (տես *С. Гаджиева.* Неповторимость культовой архитектуры Кавказской Албании (http://www.bakililar.az/ca/photos/sabina.html)).

[16] Տես *Р. Геюшев.* Христианство в Кавказской Албании. Баку, 1984 (տես նաև գրախոսականը *Ш. В. Смбатян.* Замечания по поводу книги Р. Геюшева «Христианство в Кавказской Албании». «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении». Е., 1991, сс. 406–429):

լեզվով է, սահմանափակվելով «պատմական ճակատագրի առանձնահատկություն» և այլ անորոշ ձևակերպումներով:

Նյութերի մի մասը պարուրված է ակադեմիական շարադրանքի շղարշով և կարող է թողնել լուրջ հետազոտության տպավորություն: Նյութի մատուցման ձևը և ահռելի քանակով հրատարակումը ազդում են գիտական շրջանների վրա: Նման օրինակներից է Սինայ լեռան վրա հայտնաբերված «աղվաներեն» ձեռագիրը[17]: Այն վերծանող հեղինակներից երկուսի՝ Զազա Ալեքսիձեի և Ժան-Պիեր Մահեի կողմից հրատարակության համար գրված նախաբանում փորձ է արվում պարզելու Աղվանքում քրիստոնեության տարածման ժամանակաշրջանը[18], ինչպես նաև այն հարցը, «թե ինչպես հայերը չեն մասնակցել Աղվանքում քրիստոնեության տարածմանը»: Ակնհայտ է, որ այս գիտնականների հեշտ հերքելի փաստարկները, աղբյուրները և նույնիսկ ձևակերպումները վերցված են ադրբեջանական պատմաշինության զինանոցից: Մասնավորապես՝ Զազա Ալեքսիձեն և Ժան-Պիեր Մահեն գրում են. «8-րդ դարում Աղվանքի եկեղեցու ժամասացության լեզուն դարձավ հայերենը: Սա տեղի ունեցավ արաբական խալիֆայության օրոք. երկրի հարավային մասը, որը մոտ էր Հայաստանին, քրիստոնյա էր և հայալեզու, մինչդեռ հյուսիսայինը՝ Կուրի ձախ ափում, որը Կասպից ծովով դեպի Պարսկաստան ելք ուներ, ի վերջո իսլամացավ»[19]: Այս միտքը ուղղակիորեն ադրբեջանական աղվանագիտության չափավոր թևի մոտեցումների պատճենն է, մինչդեռ հենց վրացական աղբյուրների համաձայն՝ 10-րդ դարում Շաքիում իշխող Ատրներսեհ Բագրատունու որդի և հաջորդ Իշխանիկի օրոք միմյանց դեմ շարունակում էին պայքարել քաղկեդոնիկ և հակաքաղկեդոնիկ քրիստոնյաները[20]:

---

[17] 2001 թ. մայիսի 21–24-ը Բաքվում տեղի ունեցած «Կովկասյան Աղվանքի էթնոմշակութային ժառանգությունը» գիտաժողովի մասին հաղորդման համաձայն (http://www.caucasian history.org), Զ. Ալեքսիձեն հայտարարություն է արել 4-րդ դարով թվագրվող աղվաներեն ձեռագրի մասին և «գիտաժողովի մասնակիցներին ցուցադրել է Սինայի թերակղզում հայտնաբերված 4-րդ դարով թվագրվող աղվաներեն գրերը (հայերեն գրերից մեկ հարյուրամյակ առաջ): Այս հայտնագործությունն արմատապես հերքում է իբրև թե 5-րդ դ. Մեսրոպ Մաշտոցի կողմից աղվանական գրերի գյուտը՝ շատ հայ գիտնականների ընդունած պնդումը: Զ. Ալեքսիձեի ելույթից հետո արտասահմանյան շատ հետազոտողներ ստիպված էին վերանայել աղվանական գրերի վերաբերյալ իրենց զեկուցումները և ընդունել այս ոլորտում իրենց նախկին հայացքների սխալը»: Դատելով Զ. Ալեքսիձեի ելույթի տեքստից՝ նա իսկապես ասել է, որ Սինայ լեռան վրա հայտնաբերված ձեռագիրը կարող է թվագրվել 4–5-րդ դդ. սահմանագծով, որով, ըստ Զ. Ալեքսիձեի, կարելի է սահմանել նմանատիպ ձեռագրերի ժամանակագրական նոր ցանկ՝ հունական-վրացական-աղվանական-հայկական-ասորական (տես *Заза Алексидзе.* Предварительное сообщение об идентификации и дешифровке албанского текста, обнаруженного на Синайской горе. «Caucasian Albania» (http://www.bakililar.az/ca/photos/zaza.html)): Ձեռագրի վերծանության հրատարակության՝ Զ. Ալեքսիձեի հեղինակակցությամբ գրված նախաբանում աղվաներեն այբուբենի ստեղծման հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է:

[18] Տես «The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai» (Monumenta Polaegraphica Medii Aevi: Series Ibero-Caucasica), 2 vol., ed. by Jost Gippert, Wolfgang Shulze, Zaza Aleksidze, Jean-Pierre Mahe. Turnhout, 2008:

[19] Նույն տեղում:

[20] Տես *Լ. Մելիքսեթ-Բեկ,* Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա: Ե., 1934, էջ 203, *նույնի*՝ Նշ. աշխ., հ. Գ: Ե., 1955, էջ 39–40, 67:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ*

*Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան, Վ. Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ–հրավարաբան, Պ. Ա. ՉՈԲԱՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան, Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի տեղակալ–գիտավերլուծական կենտրոնի պետ, Վ. Հ. ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի խորհրդական*

**1. Ադրբեջանական կեղծարարությունների հիմնական պատճառները և զարգացումը:** Ադրբեջանի կողմից պատմության նենգափոխումը, որը լայնորեն օգտագործվում է նաև հայության դեմ մղվող տեղեկատվական պատերազմում, կատարվում է երկակի ուղղվածության նպատակներով՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Առաջին հայացքից կարող է թվալ, որ ներքին նպատակն է ադրբեջանական հասարակությունում արտաքին թշնամու կերպարի ստեղծմամբ նպաստել այդ գաղափարի շուրջ նրա համախմբմանը և դրանով իսկ լուծել պետության առջև ծառացած հիմնախնդիրները: Դրա խորքային պատճառն այն է, որ Ադրբեջանում դեռևս ավարտված չեն ազգային ինքնության միասնական գիտակցության ձևավորումը և միատարր ազգի կազմավորումը, որոնք Ադրբեջանում կրում են ոչ թե բնականոն, այլ արհեստականորեն պարտադրվող բնույթ[1]:

Ադրբեջանում դեռ շարունակվում է «Ադրբեջան» վարչաքաղաքական միավորը ազգ պետության վերածելու, այսինքն՝ մշակութապատեղծ պատմական ինքնուրույն սուբյեկտ ստեղծելու, 1918 թ. սկզբնավորված և խորհրդային տարիներին լայն թափ ստացած գործընթացը: Ադրբեջանական Ժողովրդավարական Հանրապետության ստեղծման նախօրեին «կովկասյան թաթարներ» անվանվող բնակչությունը պահպանում էր ցեղային պատկանելության գիտակցումը (այրում, թարաքյամա, շահսևան, կենգեռլու, ջևանշիր) և միավորվում էր զուտ մահմեդականության հենքի վրա[2], քանի որ նույնիսկ 20-րդ դարի սկզբի կովկասյան թաթարների գաղափարախոսութ-

---

* Տպագրվել է 2010 թ. «Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության նենգափոխումներին գիտական հակազդեցության ռազմավարական ուղենիշները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում» թեմայով հմ. 4-ում:

[1] Տես *В. А. Шнирельман.* Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003, сс. 202–203; *Г. А. Абдурагимов*. Кавказская Албания-Лезгистан: история и современность. СПб., 1995, с. 499.

[2] Թուրքիայի էթնիկական պատկերն ուսումնասիրած Փիտեր Էնդրյուսը նշում է, որ երկրի արևելյան շրջաններում ապրող ադրբեջանցիներից «ազերի» անվանումն օգտագործում են հիմնականում Իրանից գաղթած ադրբեջանցիները (տես *Peter Alford Andrews*. Turkiye’de Etnik Gruplar. Istanbul, 1992, SS. 96–97):

յունը կրում էր ոչ այնքան ազգայնականության, որքան պանիսլամականության և պանթյուրքականության բնույթ[3]:

Ադրբեջանական առաջին քաղաքական կուսակցությունը՝ «Մուսավաթը», իր ծրագրում ներառել էր միայն մշակութային ինքնավարության դրույթը[4]: «Մուսավաթ» կուսակցությունը ազգայնական գաղափարախոսություն որդեգրեց 1912 թ. կուսակցության ղեկավար Մ. Է. Ռասուլզադեի Ստամբուլ կատարած այցից հետո՝ երիտթուրքերի հորդորներով[5], որոնք Հարավային Կովկասում համառորեն հրահրում էին ազգամիջյան զինված ընդհարումներ[6]: 1917 թ. ապրիլի 15–20-ը Կովկասի մահմեդականների՝ Բաքվում գումարված համաժողովում ինքնավարության կողմնակիցների անունից ելույթ ունեցած Մ. Ռասուլզադեն հայտարարեց, որ շատ մահմեդական ժողովուրդներ արդեն գիտակցում են, որ իրենք առաջին հերթին «թյուրքեր են և նոր միայն՝ մահմեդականներ»[7], սակայն մեծահարուստ Գ. Թաղիևը և մի շարք այլ պատվիրակներ դեմ արտահայտվեցին «Ադրբեջան» անվանմանը, համաժողովի փաստաթղթերից հանվեց «Ադրբեջան» բառն ու հավանություն չտրվեց Ռուսաստանի կազմում Կովկասյան թաթարների կողմից ինքնավար միավոր ստեղծելու գաղափարին[8]:

1918 թ. Նուրի փաշայի ղեկավարությամբ Կովկաս ներխուժած «Իսլամական բանակի» հրամանատարներից մեկը՝ Իսմայիլ Բերքոքը, որը մասնակցել էր ադրբեջանական կառավարության կազմավորմանը, հետագայում նշել է. «Ադրբեջան անվանումը ընդունվել է 1918 թվականին:... Այդ անվանումը, իրանական Ադրբեջանի հետ միասնության գաղափար արտահայտելուց բացի, այլ պատմական իմաստ չէր կրում: Նախկին անվանումը Աղվանք է, որն Արաբները հիշատակում են Առան անվանմամբ: Դրանից հետո որևէ հատուկ անվանում չի ունեցել: Որոշ հարգված անձինք առաջարկեցին Ազեր անվանումը, և այն ընդունվեց»[9]:

---

[3] Տես *Э. Ю. Гасанова.* Идеология буржуазного национализма в Турции в период правления младотурок (1908–1914 гг.). Баку, 1966, сс. 57–58:

[4] Տես *М. Гусейнов.* Партия Мусават в прошлом и настоящем. Вып. I. Тифлис, 1927, сс. 10–13:

[5] Տես *М. Волхонский, В. Муханов.* По следам Азербайджанской Демократической Республики. М., 2007, сс. 25–27:

[6] Տես նույն տեղում, էջ 59:

[7] Նույն տեղում, էջ 10: «Советский переворот в Азербайджане,–когда народ из «татарина» и «мусульманина» превратился в «тюрка», получив истинное свое название,–послужил громадным толчком для развития исторической литературы» («Первый всесоюзный тюркологический съезд». 26 февраля–5 марта 1926 г. Стенографический отчет. Баку, 1926, с. 50): Համագումարում ելույթ ունեցած Սաքաշկինը ուղղակի հայտարարեց, թե «Многие товарищи, присутствующие здесь на съезде, не знают своей нации. В числе последних нахожусь и я, представитель ойратов.... Лишь недавно я, учась в ВУЗ-е и имея некоторое общение с научными силами тюркологии, узнал, что я тюрок. Нас так титуловали достопочтенные ученые: Радлов, Вербицкий, Харузин и др.» (էջ 84):

[8] Տես *Դավիթ Կնյազյան,* Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918–1920 թթ.: Ե., 2008, էջ 9:

[9] *Ismail Berkok.* Tarihte Kafkasya. Istanbul, 1958, S. 327.

Ադրբեջանական կեղծարարությունը գերազանցապես հիմնվում է պատմության նենգափոխման թուրքական մեթոդաբանության վրա[10]: Այսպես. թե՛ թուրքերը, թե՛ ադրբեջանցիները ֆիզիկապես ոչնչացրել կամ փորձել են իրենց վերագրել այն ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունը, որոնց տարածքներում նրանք բնակություն են հաստատել: Այդ ծրագիրը հիմնված է երկու գերակա սկզբունքի վրա.

1. հպատակված ժողովրդի լիակատար արտաքսում կամ ձուլմամբ վերածում չնչին փոքրամասնության, որը չի կարող սպառնալ պետության գոյությանը,

2. պետական վերահսկողության ներքո պաշտոնական պատմագրության ձևավորում ըստ այն թեզի, թե իրենք ավելի մեծ իրավունք ունեն տվյալ տարածքի և այնտեղ առկա պատմամշակութային ժառանգության նկատմամբ, քան այդ տարածքում բնակվող այլ ժողովուրդներ:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո այդ երկրի պատմության գիտական հայեցակարգի հորինման գործում ներգրավվեցին ականավոր խորհրդային արևելագետներ Վ. Բարտոլդը, Ի. Մեշչանինովը, Վ. Սիսոևը, Ե. Զևակինը, Ե. Բերտելսը, Ե. Պախոմովը, Ի. Պետրուշևսկին, Վ. Լևիատովը և ուրիշներ: Լույս ընծայվեցին Ադրբեջանի պատմության նախնական տարբերակները՝ Ռ. Իզմայիլովի (Բաքու, 1923), Ե. Պախոմովի (Բաքու, 1923), Վ. Սիսոևի (Բաքու, 1925) հեղինակությամբ, պատրաստվեցին Ադրբեջանի «ամբողջական» պատմությունը ներկայացնող նոր աշխատություններ[11]:

Թյուրքերենում արաբատառից լատինատառի անցումը և թյուրքական ժողովուրդների պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունը համակարգելու համար Բաքվում հրավիրվեց Խորհրդային Միության թյուրքագիտական առաջին համագումարը (1926թ.), ստեղծվեց Ադրբեջանի գիտական ուսումնասիրության ընկերությունը, կազմակերպվեցին բազմաթիվ գիտաժողովներ[12]: Նման հզոր գիտակազմակերպական շարժման պայմաններում ստեղծվող հայեցակարգով ոչ միայն ամբողջ Խորհրդային Ադրբեջանի տարածքի, այլև Հայաստանի մի զգալի մասի ու Իրանական Ադրբեջանի պատմությունն ու մշակութային ժառանգությունը վերագրվեցին թյուրքախոսության հենքի վրա ձևավորվող «ադրբեջանական» ժողովրդին, թեև 1926 թ. համագումարում նշվում էր, որ «առաջին թուրք նվաճողները՝ սելջուկները, 11-րդ դարում… բնակություն են հաստատում մեծ մասամբ Հայաստանում, Կապադովկիայում և Լիկիայում»[13]:

Ադրբեջանի պատմության նշված հայեցակարգը պայմանավորեց ինչպես հայ, այնպես էլ տարածաշրջանի մի շարք այլ տեղաբնակ ժողովուրդների պատմության ադրբեջանական «գիտական» նենգափոխման տրամաչափը:

---

[10] Տես, օրինակ, ԱՄՆ-ի թուրքական ընկերակցության կողմից ԱՄՆ-ում 1987 թ. անգլերեն հրատարակված ««Հայոց ցեղասպանություն». առասպել և իրականություն» գիրքը, որն ադրբեջանցիները թարգմանեցին ռուսերեն և հրատարակեցին Բաքվում (««Армянский геноцид»: миф и реальность». Баку, 1992):

[11] Տես, օրինակ, *В. М. Сысоев*. Начальный очерк истории Азербайджана. Баку, 1925:

[12] Տես «Первый всесоюзный тюркологический съезд». 26 февраля–5 марта 1926 г. Стенографический отчет. Баку, 1926, с. 51:

[13] Նույն տեղում:

Այսպես, օրինակ, Ռ. Իզմայիլովը Ադրբեջանի պատմության իր շարադրանքում ներառել էր հնագույն շրջանը, արաբական, թյուրքական, մոնղոլական արշավանքները, Շիրվանշահների պետությունը, օսմանյան արշավանքերն ու Սեֆյան տիրապետությունը, Նադիր շահի և Աղա Մահմեդ խանի արշավանքները, Ռուսաստանի տիրապետության հաստատումն ու Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Բաքվի խանությունների վերացումը, Ադրբեջանի Հանրապետության ստեղծումը[14]:

1920–1930-ական թվականներին «պատմագիտական» նոր տեսությունների հորինման գործում ներառվեց «Ադրբեջանական գրականության պատմության» ստեղծումը և այդ նպատակով «ադրբեջանական» հայտարարվեցին իրանական գրական մի շարք հուշարձաններ[15], ինչպես նաև պատմական Աղվանք մարզպանության կազմում ընդգրկված հայկական (Արցախ և Ուտիք) տարածքներում ստեղծված հայ մատենագրական երկերը[16]: Նույն մոտեցումը տարածվեց նաև տարածաշրջանի հայկական պատմամշակութային ամբողջ ժառանգության վրա (ճարտարապետություն, երաժշտություն, կիրառական արվեստ և այլն): Ձևավորվեց «ադրբեջանական» ժողովրդի բնիկության և նրա ծագումնաբանությունում «թյուրքական», «աղվանական» և «ազերիական» բաղադրիչների համադրման տեսություն[17]:

Ներկայումս Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների ձուլումը արագացնելու համար Գիտությունների ազգային ակադեմիայի Տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտում 2010 թ. վերջին մշակվել է «Էթնիկական փոքրամասնությունների ազգանունների վերջավորության փոփոխության մասին» օրենքի նախագիծ, որը միտված է Ադրբեջանում դեռ գոյատևող ազգային փոքրամասնությունների (լեզգիներ, ավարներ, ծախուրներ, թալիշներ, թաթեր, ուդիներ, քրդեր և այլն) ինքնագիտակցության ջնջմանը և նրանց ձուլմանը[18]:

Ազգանունների թյուրքականացումը միտված է կասեցնելու կովկասյան ու իրանական ժողովուրդների էթնիկ ինքնագիտակցության վերազարթոնքի գործընթացը և ազգանունների վերափոխման միջոցով արագացնելու նրանց ձուլումը:

Ադրբեջանի քաղաքական վերնախավի կողմից ուղղորդվող պատմական կեղծարարությունների առանցքային խնդիրը Հարավային Կովկասում հայ ժողովրդի պատմության արմատական աղավաղումն է, ինչը հետապնդում է երկու հիմնական նպատակ.

---

[14] Տես *Р. Измаилов*. История Азербайджана. Баку, 1923:

[15] Տես *А. Е. Крымский*. Низами и его современники. Баку, 1981; *Мамед Ариф*. История Азербайджанской литературы (краткий очерк). Баку, 1971, *նույնի*՝ Азербайджанская литература. М., 1979:

[16] Տես *З. М. Буниятов*. Азербайджан в VII–IX вв. Баку, 1965:

[17] Տես *И. Алиев*. Очерки истории Атропатены. Баку, 1989; *К. Алиев*. Античные источники по истории Азербайджана. Баку, 1987:

[18] Տես *Рамелла Ибрагимхалилова*. Что станет с фамилиями этнических меньшинств Азербайджана (http://www.vesti.az/news.php?id=61188):

1. Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքի նկատմամբ ադրբեջանական հավակնությունների հիմնավորում[19],

2. աղվանների ներկայացում որպես ադրբեջանցիների և արևելահայության որոշ հատվածի նախահայրերի և ըստ այդմ՝ Աղվանքի նկատմամբ իրավաժառանգորդության իրավունքի հիմնավորում[20]:

Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության նենգափոխումը կատարվում է պատմական փաստերի կեղծմամբ, աղճատմամբ և խեղաթյուրված մեկնաբանությամբ, ինչպես նաև Ադրբեջանի պատմական դերի ուռճացմամբ: Այդ նպատակով օգտագործվում են հետևյալ միջոցները.

1. Ադրբեջանի պատմության արհեստական հնացմամբ ադրբեջանցիների ներկայացումը որպես Հարավային Կովկասի բնիկ ժողովրդի[21],

2. ակադեմիական միջավայրում այս կամ այն պատմական իրադարձության վերաբերյալ խեղաթյուրված «այլընտրանքային կարծիքի» ներկայացումը, որով բարձրացվում է առաջ քաշվող «վարկածի» հավաստիության աստիճանը,

3. պատմության ընթացքում այս տարածաշրջանում տարբեր ժամանակներում գոյություն ունեցած պետությունների առանձին կառավարողների թյուրքական ծագման շահարկումը՝ ամբողջ պետությունը «ադրբեջանական» անվանելու նպատակով (օրինակ՝ թուրքմենական Ակկոյունլու և Կարակոյունլու (15-րդ դ.) և իրանական Սեֆյան (15–18-րդ դդ.) պետությունների[22], ինչպես նաև 17–18-րդ դարերում իրանական պետության առանձին վարչատարածքային միավորների (խանությունների) դեպքում)[23],

4. անկախ էթնիկական ծագումից՝ «ադրբեջանցի» հայտարարումը յուրաքանչյուր բանաստեղծի, գրողի և մշակութային գործչի, որն ապրել և ստեղծագործել է ներկայիս «Հյուսիսային կամ Հարավային» Ադրբեջանում (օրինակ՝ Նիզամին)[24],

---

[19] Տես օրինակ, *Ազիզ Ալաքբերլի*, Թուրք-օղուզական հնագույն բնօրրանը՝ «Էրմենիստան», Բաքու, 1994 (ադր.): Այլ հրապարակումների մասին տես *Վ. Ա. Շնիրելման*, Նշ. աշխ.:

[20] Տես *Ա. Շ. Մնացականյան*, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջը: Ե., 1966:

[21] Տես «История Азербайджана», в трех томах, т. I. Баку, 1958; *Г. А. Гейбуллаев*. Топонимия Азербайджана. Баку, 1986, *Վ. Ալիև*, Նշ. աշխ.:

[22] Տես *Фарах Гусейн*. Османо-Сефевидская война 1578–1590 гг. Баку, 2005; *Назим Джафарли*. Азербайджанское государство Сефевидов (Государственный строй). СПб., 2009:

[23] Տես *Н. Гезалова*. Вопросы истории Азербайджана XVIII века. Баку–Москва, 2010:

[24] Արձանագրելով, որ Նիզամիի հայրը Կոմից Գանձակ եկած օտարական էր, իսկ մայրը՝ քրդական անվանի տոհմի զավակ, Ա. Կրիմսկին ստիպված էր Նիզամիի 800-ամյակը նշելու միջոցառումների նախապատրաստման առիթով 1938–1939 թթ. լույս տեսած գրքերի տեսության մեջ այնուամենայնիվ զգուշացնել, թե «азербайджанец Низами, конечно, есть родной азербайджанский поэт, которым Азербайджан может по праву гордиться, но он же есть и украшение также иранской литературы, которая ни в коем случае не может исключить его из своих рядов, из числа своих святил, несмотря на его «азербайджанизм» и «тюркообразность», իսկ «Ադրբեջանի» վերաբերյալ առարկել, թե «Неудобно, например, частенько называть шахство Ширван XII в. термином «Азербайджан»; это особенно неудобно в тех случаях, когда приходится оперировать политическими отношениями между Ширваном и враждебно настроенным к нему атабекским Азербайджаном» (*А. Е. Крымский*. Низами и его современники. Баку, 1981, сс. 93–94):

5. Կովկասյան տարածաշրջանում ապրող ժողովուրդների պատմամշակութային ժառանգության յուրացումը՝ այն որպես ինքնատիպ ադրբեջանական ներկայացմամբ (այդ թվում՝ ճարտարապետության, երաժշտության, գորգագործության, ազգային տարազի, կերակրատեսակների, և այլ ոլորտներում)*,

6. ժամանակակից ինտերնետ տեխնոլոգիաների ցանցապետական կիրառումը[25],

7. կառավարության կողմից հաստատված կեղծված պատմության տարբերակի առաջմղումը և «համընդհանուր գիտելիքի» *(conventional wisdom)* տարածմամբ[26] հասարակության ինքնագիտակցման ու պատմական հիշողության խեղաքյուրումը, որը կարող է առաջացնել էթնոհոգեբանության մեջ հայտնի «խեղված հիշողության» բարդույթ:

Հայաստանի պատմության նենգափոխումներին համակարգային բնույթ և միջազգային հնչեղություն հաղորդելու գործում Ադրբեջանը հասել է որոշակի հաջողությունների՝ ստեղծելով տարբեր պետություններում բնակվող ադրբեջանցիների համագործակցության ցանցային համակարգ: Այդ համակարգն սկսել է ձևավորվել 1990-ական թվականներին և ներկայումս իր գործունեության մեջ ներառում է ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսը, տարբեր պետություններում ադրբեջանական համայնքային տեղական կազմակերպությունները, արտերկրում գործող դեսպանությունները ու այլ ներկայացուցչություններ՝ համացանցային կազմակերպական համալիրում:

**2. Հայաստանի մոտեցումը ադրբեջանական կեղծարարությունների նկատմամբ՝ որպես գիտության համակարգի դեմ ուղղված սպառնալիքի. հակազդեցության ռազմավարական ուղենիշներ:** Ադրբեջանը գիտական հետազոտությունների քողի ներքո միջազգային գիտական աշխարհին մատակարարում է Հայաստանի, Աղվանքի, Ադրբեջանի և Իրանի պատմական անցյալի վերաբերյալ միտումնավոր կեղծված փաստեր, գիտական ապատեղեկատվություն, ինչը սպառնալիք է միջազգային գիտական միտքը ապակողմնորոշելու առումով: Այդ նպատակով Ադրբեջանը օգտագործում է միջազգային ակադեմիական ամբիոնները, որոնք իրենց բնույթով սկզբունքորեն բաց են և հնարավորություն են տալիս բոլոր ազգերի գիտնականներին տեսակետների փոխանակման համար:

«Գիտական» մենագրությունների տեսքով խեղաքյուրումների և կեղծարարության վրա խարսխված ադրբեջանական «գիտության» ներխուժումը համաշխարհային գիտության ասպարեզ, հեղինակավոր գիտական կենտրոնների

* 2010 թ. դեկտեմբերի 2-ին Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարանում կազմակերպված Ադրբեջանի մշակութային ժառանգությանը նվիրված ցուցահանդեսում, Տաթևի, Գանձասարի, Խութավանքի և այլ հուշարձանների լուսանկարները ներկայացված են որպես ադրբեջանական մշակութային ժառանգություն:

[25] Համացանցում ադրբեջանական հակահայկական քարոզչության առանձնահատկությունների մասին մանրամասն տես՝ *Ա. Աբանեսյան,* «Ղարաբաղյան հակամարտության պայմաններում համացանցում տեղեկատվական պատերազմի և քարոզչության ադրբեջանական ռազմավարությունների առանձնահատկությունները»: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» (միջազգային գիտաժողովի նյութեր): Ե., 2007, էջ 509 – 530:

[26] Տես, օրինակ, «Azerbaijan: 100 questions answered», ed. 3. UK, 2008:

կողմից կեղծ գիտելիքի շահախնդիր օգտագործումը կարող են մեծացնել էթնիկական բախումների, միջկրոնական առճակատման, քաղաքակրթությունների միջև հակամարտությունների հավանականությունը:

Թեև Ադրբեջանի կողմից իրականացվող պատմագիտական կեղծարարությունները ուղղված են նաև հարևան այլ պետությունների (Իրան, Վրաստան) և իր տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների (թալիշներ, թաթեր, լեզգիներ, ուդիներ և այլն) պատմամշակութային ժառանգության յուրացմանն ու կեղծմանը[27], սակայն դրա հիմնական թիրախը հայ ժողովուրդն ու Հայաստանի պատմամշակութային ժառանգությունն են:

Հայ ժողովրդի պատմության տասնամյակներ շարունակ իրականացվող ննեգափոխումների սպառնալիքները Հայաստանում ընդունված էր թերագնահատել: Հայ գիտնականների մոտեցումներում գերակշռում էին գիտական նեղ շրջանների հասցեագրված գնահատականներ ու հակադարձումներ[28]: Եթե խորհրդային համակարգում դրանք կարող էին որոշակի ազդեցություն գործել զարգացումների վրա, ապա անկախության շրջանում կեղծարարություններին հակազդեցությունը պահանջում է նոր մոտեցումներ՝ համաշխարհային պատմագիտության զարգացման և տեղեկատվական տեխնոլոգիաների ցանցային հնարավորությունների ներկա մակարդակի հաշվառմամբ: Մինչ այժմ հայկական պատմագրությունը շատ դեպքերում ընդունել է թուրք-ադրբեջանական խաղի կանոնները՝ հակափաստարկներով արձագանքելով կեղծ փաստարկումներին, հերքելով առաջ քաշվող վարկածները և այդ ամենը ներկայացնելով երրորդ կողմի դատին: Համաշխարհային գիտական հանրությունը դա ընկալում էր ոչ այնքան որպես գիտական բանավեճ, որին հարկ էր մասնակցել, որքան երկկողմ առճակատում, երբ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է ապացուցել կոնկրետ աշխարհագրական պատմամշակութային տարածքի նկատմամբ իր իրավունքների հիմնավորվածությունը:

Նոր ռազմավարության հիմքում պետք է դրվի հակազդեցությունը համաշխարհային գիտական կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ՝ հիմնված համաշխարհային պատմագիտության մեջ հայ ժողովրդի պատ-

---

[27] Տես *В. Худадов.* Современный Азербайджан. «Новый Восток». Всероссийская научная ассоциация востоковедения при народном комиссариате по делам национальностей. Книга 3. М., 1923, с. 171: «Повсюду на Востоке тюрки обладают удивительной способностью ассимилировать туземные народы, среди которых завоевание тюркского языка имеет не меньший успех, чем тюркское оружие. Тюркская ассимиляция происходит на наших глазах, и близок день, когда от ряда национальностей, населяющих Закавказский Азербайджан, останется лишь воспоминание. Последняя перепись, произведенная в 1921 г. Азцесу, равно как и все предыдущие, указывает на систематическое уменьшение жителей Азербайджана, говорящих на татском, талышском, удинском и т. д., языках и, наоборот, на возрастание, во всяком случае, процентное, населения, говорящего по-тюркски.... Ассимиляция эта может лишь выиграть с созданием независимой Азербайджанской Республики, с тюркским государственным языком»:

[28] Տես *К. А. Мелик-Оганджанян.* Историко-литературная концепция З. Буниятова. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, հմ. 2, *Ս. Մնացականյան,* Նշ. աշխ.; *А. Мнацаканян, П. Севак.* По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII–IX вв.». «Պատմա-բանասիրական հանդես», 1967, հմ. 1; «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении», т. 1. Е., 1991:

մամշակութային ժառանգության առավել լուսաբանված և ընկալելի կողմերի վրա:

Տվյալ համատեքստում հարկավոր է խնդիրը դուրս բերել փաստարկների և հակափաստարկների հակադրման նեղ ձևաչափից:

Ուստի կարևոր է ընդլայնել Հայաստանում և Սփյուռքում իրականացվող պատմագիտական ուսումնասիրությունների թեմատիկ շրջանակը, հայագիտության հետ մեկտեղ զարգացնել կովկասագիտության, թուրքագիտության, բյուզանդագիտության, իրանագիտության, արաբագիտության, ասորագիտության, ուրարտագիտության գիտական դպրոցները:

Այդ տեսակետից առավել արդյունավետ են թվում գիտական ուսումնասիրությունները հետևյալ ուղղություններով.

1. հայ ժողովրդի ծագումնաբանություն, նախարարական ցեղերի ծագումնաբանություն և լեզվածագման կենսատարածքի ուսումնասիրություններ, Հայկական լեռնաշխարհի քաղաքակրթությունների պատմություն, այդ թվում՝ ուրարտագիտություն, որպես սեպագիր քաղաքակրթությունների ուսումնասիրության առանձին ճյուղ[29]:

2. Հայաստանն անտիկ շրջանում: Հայ ժողովրդի և Հայաստանի կապը հունահռոմեական, պարսկական և մերձավորարևելյան քաղաքակրթությունների հետ[30]:

3. Հայերի դերը քրիստոնեության համակարգի զարգացման, տարաբնույթ գիտակրոնական ուսմունքների տարածման գործում[31]:

4. Հայերի դերը Արաբական խալիֆայության պետական-քաղաքական, տնտեսական, հասարակական և հոգևոր-մշակութային համակարգերում[32] (Արմինիա վարչատարածք, հայազգի վեզիրներ Ֆաթիմյանների Եգիպտոսում՝ 11–12-րդ դդ., Լիբանանում՝ 19-րդ դարի կես, Մուհամմադ Ալիի շրջանում, Արաբական նահդայում (վերածնունդ) և այլն):

5. Կիլիկյան Հայաստանի պատմությունը, Արևմտաեվրոպական ասպետական իշխանությունների և եղբայրությունների հետ ռազմաքաղաքականանվտանգային դաշինքը[33], հայության դերը Արևելք–Արևմուտք առևտրական և դիվանագիտական կապերում[34]:

6. Հայերի դերը Բյուզանդական կայսրությունում և Ռուսական պետությունում[35]:

---

[29] Տես, մասնավորապես, *I. M. Diakonoff.* The Pre-History of the Armenian People. New York, 1984; *Т. В. Гамкрелидзе*, *В. В. Иванов.* Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, նաև՝ *J. De Morgan.* La pre-histoire orientale. Paris, 1927:

[30] Տես *Anne Elizabeth Redgate.* The Armenians, ed. 1. Oxford, 1999:

[31] Տես *James Harvey Robinson and Janves Henry Breasted.* A General History of Europe. From the Origins of Civilization to the Present Times. Boston, 1926; *Mario Apostolov.* The Cristian-Muslim Frontier. Routledge, 2004:

[32] Տես *J. Spencer Trimingham.* The Sufi Orders in Islam. Oxford, 1971, նաև՝ *Նիկոլայ Հովհաննիսյան,* Արաբական երկրների պատմություն, հ. I–IV: Ե., 2003–2007:

[33] Տես *Rene Grousset.* Histoire de l'Armenie. Paris, 1947:

[34] Տես *Фернан Бродел.* Игры обмена, т. 2. М., 1988, сс. 143–145:

[35] Տես *Л. Н. Гумилев.* Древняя Русь и Великая степь. М. 1992:

7. Հայ ճարտարապետության ներդրումը համաշխարհային ճարտարապետության զարգացման գործում[36]:

Աղբբեջանական կեղծարարություններին համակարգված և արդյունավետ հակազդեցության, նշված, ինչպես նաև հնարավոր այլ ուղղություններով միջազգային առաջատար կենտրոնների հետ փոխշահավետ համագործակցության նախապայմանը Հայաստանում հումանիտար գիտության համակարգային զարգացումն է և միջազգային գիտական միջավայրին ինտեգրումը: Հումանիտար գիտությունների ինտեգրման խնդիրը, սակայն, հնարավոր չէ լուծել միայն հասարակագիտության ենթահամակարգի շրջանակներում:

Արդյունավետ ինտեգրման համար անհրաժեշտ է ապահովել Հայաստանում գիտության կազմակերպվածքի և ժամանակակից արևմտյան գիտակազմակերպական մշակույթի համատեղելիությունը: Դա հնարավորություն կտա միջազգային համակարգի հետ արդյունավետ ինտեգրվածությամբ հայկական ցանցապետական համակարգի շրջանակում օգտագործելու միջազգային գիտական ընտրանու ներուժը՝ ադրբեջանական գիտական կեղծարարությունների դեմ գիտական պայքարի արդյունավետությունն ապահովելու համար: Որպես դինամիկ ակադեմիական ինքնազարգացմամբ ճանաչված հետազոտական համալսարանի արդյունավետ նմուշ կարելի է դիտել Հարվարդի և Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարանների մոդելները:

Տվյալ համակարգային բարեփոխման ռազմավարության մշակումն ու իրագործումը կարող է ստանձնել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան՝ իր գիտահետազոտական ու գիտակրթական ներուժի նպատակասլաց գործադրման միջոցով և համապատասխան պետական ու հանրային ֆինանսավորմամբ:

---

[36] Տես «Armenian Architecture: IV–XVIII centuries». Catalogue by A. Alpago-Novello and A. Manoukian. New York, 1981; *J. M. Thierry.* La Cathédrale des Saints-Apôtres de Kars (930–943). Paris, 1978; *P. Cuneo.* Architettura Armena dal quarto al diciannovesimo secolo. Vol. 1–2. Roma, 1988; *J. Strzygowski.* Die Baukunst der Armenier und Europa, Bd. 1–2. Wien, 1918:

# ՀԱՅԱՍՏԱՆ–ՍՓՅՈՒՌՔ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ*

*Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի գիտությունների վաստակավոր գործիչ*



## I. Ընդհանուր բնույթի դիտարկումներ

Հայաստանի Երրորդ Հանրապետությունն այսօր ստիպված է դիմագրավել բազում մարտահրավերների, որոնք հետևանք են աշխարհում տիրող քաղաքական ընդհանուր անկայունության, միջպետական հարաբերությունների լարվածության, համընդհանրացման գործընթացների, որոնք չի կարող հաշվի չառնել Հայաստանի ղեկավարությունը:

Մեծացել և ավելի սպառնալի են դարձել աշխարհասփյուռ հայության էթնիկական ինքնության պահպանման համար վտանգները:

Առավել վտանգավոր են Հայաստանի անմիջական հարևանների, առաջին հերթին թուրքական երկու պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի մարտահրավերները: Օրեցօր ավելի վտանգավոր են դառնում Ադրբեջանի սպառնալիքները՝ կապված Ղարաբաղյան հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու նրա մտադրությունների հետ: Ադրբեջանի ռազմական բյուջետային հատկացումներն այսօր կազմում են մոտ 2,5 մլրդ ԱՄՆ-ի դոլար: Դա նշանակալիորեն գերազանցում է Հայաստանի ռազմական բյուջեն: Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ, որ Ադրբեջանի պետական բյուջեով կատարվող ռազմական հատկացումները տարեցտարի մեծանալու միտում ունեն, և վերոնշյալ թիվը բնավ էլ վերջին սահմանագիծը չէ: Հայտնի է նաև, որ Ադրբեջանը հետևողականորեն կիրառում է ադրբեջանական բանակը արդիական զենքով վերազինելու քաղաքականություն:

Ադրբեջանն ունի մի այնպիսի հուսալի և հավատարիմ դաշնակից, ինչպիսին Թուրքիան է: Թուրքիան առաջնակարգ դեր է խաղում ադրբեջանական երբեմնի թույլ, անկազմակերպ և քափքփված բանակը ժամանակակից բանակի վերածելու խնդրում: Դրա համար նրանց առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծել համապատասխան սպայական կազմ: Թուրքիայի ռազմական դպրոցներն իրենց դռները լայնորեն բացել են ադրբեջանցիների առջև՝ նրանցից ժամանակակից գրագետ սպա պատրաստելու համար: Վերադառնալով Ադրբեջան՝ նրանք համապատասխան զինվորական պաշտոններ են զբաղեցնում բանակում: Ուստի սխալ կլիներ հաշվի չառնել կամ թերագնահատել այդ հանգամանքները, որովհետև նոր պատերազմի դեպքում հայկական բանակն ամենայն

* Տպագրվել է «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տետրեր» հավելվածի 2010 թ. հմ. 1–2-ում:

հավանականությամբ իր դեմ կունենա նոր և ավելի, քան առաջներում էր, պատրաստված ադրբեջանական բանակ:

Թուրքիան, Ադրբեջանի համար համապատասխան սպայական կազմ պատրաստելու հետ մեկտեղ, մեծ դեր է խաղում նաև ադրբեջանական բանակը նոր զենքով համալրելու գործում և, որ ամենագլխավորն է, մեծապես օգնում է, որ ադրբեջանցի զինվորը կարողանա տիրապետել այդ զենքին: Իսկ դա կարող է բոլորովին նոր որակ հաղորդել ԱդրՀ ԶՈՒ-ին:

Կարծում ենք, որ Ադրբեջանի կողմից պատերազմ սանձազերծելու դեպքում պետք չէ բացառել պատերազմին Թուրքիայի անմիջական մասնակցության հնարավորությունը՝ Հայաստան ուղղակի ներխուժման ձևով: Դա Հայաստանին կկանգնեցնի երկու ճակատով պատերազմելու մռայլ հեռանկարի առջև: Ժամանակակից միջազգային հարաբերություններում առկա բարոյական, ավելի ճիշտ՝ անբարոյական, նորմերի ու երկակի սկզբունքների տիրապետության պայմաններում նման արագընթաց ռազմական գործողություն միանգամայն հնարավոր է:

Երբ այս տեսանկյունից ենք մոտենում խնդրին, ապա տեսնում ենք, որ որոշ իմաստով և որոշ հարցերում Հայաստանը գտնվում է համեմատաբար անբարենպաստ վիճակում:

Մասնավորապես՝ նկատի պետք է առնել հետևյալ հանգամանքները:

*Առաջին,* Հայաստանի ռազմական բյուջեն զիջում է ադրբեջանականին: Իսկ դա նշանակում է, որ սպառազինությունների մրցավազքում հայկական բանակը անընդհատ արդիական զենքի տեսակներով զինելու և վերազինելու հարցում Հայաստանը կարող է ունենալ լուրջ պրոբլեմներ:

*Երկրորդ,* Հայաստանի համար անբարենպաստ իրավիճակ է ստեղծվում հայկական բանակը համալրելու հարցում հիմնականում երկու գործոնի պատճառով: Առաջինը՝ շարունակվող, թեև ավելի դանդաղ տեմպերով, արտագաղթն է, երկրորդը՝ ծնելիության անկումն ու մահացության համեմատաբար բարձր տոկոսը:

*Երրորդ,* Հայաստանը, ի տարբերություն Ադրբեջանից, չունի մի այնպիսի հուսալի հենարան և դաշնակից, ինչպիսին Թուրքիան է Ադրբեջանի համար: Այս տեսանկյունից արդարացված չէր լինի գերագնահատել Ռուսաստանի և ՀԱՊԿ-ի դերը, առավել ևս՝ նրանց պատրաստակամությունն ու վճռականությունը պաշտպան կանգնելու Հայաստանին՝ Թուրքիայի լիակատար աջակցությունը վայելող Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ պատերազմ սկսելու պարագայում: Նրանց՝ որպես ռազմավարական դաշնակցի հուսալիությունը, խիստ կասկածելի է, համենայն դեպս՝ համարժեք չէ Ադրբեջանի համար Թուրքիայի խաղացած դերին:

Անշուշտ, այդ ամենը քաջ հայտնի է նաև Բաքվին, որտեղ վերլուծաբանները համոզված են, որ ժամանակն աշխատում է Ադրբեջանի օգտին և, ելնելով դրանից, Ադրբեջանը շեշտված կերպով վարում է լայնածավալ սպառազինման քաղաքականություն՝ այն հույսով, որ դա ուժասպառ կանի Հայաստանին:

*Չորրորդ,* Հայաստանը պետք է ելնի այն իրողությունից, որ ապագա պատերազմի ժամանակ մենք գործ ենք ունենալու այլ տիպի ադրբեջանական բանակի հետ, և ամեն ինչ չէ, որ կընթանա նախկին սցենարով, ինչպես 1990–1994 թթ. պատերազմի ժամանակ:

## II. Հայաստանը լրացուցիչ ռեսուրսներով ապահովելու հիմնախնդիրը, Հայոց Սփյուռքի գործոնը և Հրեական սփյուռքի դասերը

Ստեղծված պայմաններում Հայաստանի համար առանձնակի սուր բնույթ է ստանում և կենսական անհրաժեշտություն դառնում լրացուցիչ ռեսուրսների հարցը: Խոսքը քաղաքական, տնտեսական, ռազմական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների մասին է: Եվ պետք է ելնել այն իրողությունից, որ հավելյալ ռեսուրսներ գտնելու Հայաստանի հնարավորությունները այնքան էլ մեծ չեն, և իրականում նրա ընտրությունը խիստ սահմանափակ է:

Այդ ոչ դյուրին խնդրի լուծման մեջ իր որոշակի դերակատարումը կարող է ունենալ Հայոց Սփյուռքը, քանի որ նա կլինի Հայաստանի միակ հուսալի գործընկերը, եթե մշակվի համապատասխան իրատեսական քաղաքականություն, ձեռնարկվեն երկուստեք համաձայնեցված վճռական քայլեր՝ հայության գոյության համար կենսականորեն անհրաժեշտ և իրատեսական ծրագրեր մշակելու ուղղությամբ:

Սակայն հարց է ծագում. ի վիճակի՞ է արդյոք Սփյուռքը լուծելու նման բարդ խնդիրներ, քանի որ սփյուռքահայը այլ երկրի քաղաքացի է: Դա կարող է որոշակի քաղաքական և իրավական բնույթի եթե ոչ խոչընդոտներ, ապա անպայման դժվարություններ առաջացնել: Այդ հարցին դրական պատասխան է տալիս Հրեական սփյուռքը, որի պատմական փորձը կարելի է համարել դասական: Կարծում ենք, որ հրեական փորձի համեմատական (կոմպարատիվ) ուսումնասիրությունը, որոշ վերապահումներով, կարող է օգտակար լինել նաև Հայոց Սփյուռքի՝ որպես գործոնի ներուժն օգտագործելու համար՝ հայության ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

19-րդ դարի երկրորդ կեսին հրեական առանձին, ցաքուցրիվ համայնքների միջև կապերն այն աստիճան էին սերտացել, որ կարելի էր խոսել Հրեական սփյուռքի ձևավորման մասին, որի կենտրոնը գտնվում էր Եվրոպայում: Հրեաների առջև արդեն ծառացել էր մեկ համահրեական կենտրոն, կառույց ստեղծելու հարցը: Մեկ միասնական համահրեական կազմակերպություն ստեղծելու գաղափարը և դրա իրագործումը կարելի է համարել հրեաների շարժման առաջին պատմական մեծ նվաճումը:

Հրեաները, չնայած տարաձայնություններին և առկա տարբեր հոսանքներին, փայլուն կերպով լուծեցին համահրեական կազմակերպության ստեղծման խնդիրը, հասկանալով, որ իրենց ուժը միասնական և համախմբված լինելու մեջ է: Հրեական առանձին կենտրոնների ներկայացուցիչների կոնգրեսը, որը տեղի ունեցավ 1897 թ. Բազելում, վեր կանգնելով հրեական առանձին համայնքների միջև առկա տարաձայնություններից ու հակասություններից, հռչակեց Սիոնիզմի համաշխարհային կազմակերպության (ՍՀԿ) ստեղծումը, որի ակունքների մոտ կանգնած էր հրեա լրագրող Թեոդոր Հերցլը: Նրա հեղինակած «Հրեական պետությունը» դարձավ սիոնիստական շարժման Սբ. Գիրքը, որը հաջորդ տասնամյակների ընթացքում ուղենիշ եղավ աշխարհի բոլոր հրեաների համար:

ՍՀԿ-ն կուռ կառույց էր, ուներ իր գերագույն մարմինը, քաղաքական, տնտեսական, ֆինանսական, քարոզչական, ապա նաև ռազմական, այդ թվում և հիաբեկչական, բաժիններ, տեղական բաժանմունքներ և այլն:

Հրեական սփյուռքի կազմավորումը և ՍՀԿ-ն նախորդել են հրեական պետության ստեղծմանը: Դա Հրեական սփյուռքի կարևոր առանձնահատկություններից է: Հրեական սփյուռքի և ՍՀԿ գլխավոր խնդիրը դարձավ հրեական պետության ստեղծումը և այնտեղ հրեաներին հավաքելը, ինչը նույնպես հաջողությամբ իրագործվեց: Նրանց հավաքավայր ընտրվեց Պաղեստինը: Հրեական սփյուռքը և նրա ղեկավարող մարմինը՝ ՍՀԿ-ն, շուրջ 50 տարվա ընթացքում կարողացան հասնել իրենց նպատակին, և 1948 թ. մայիսի 15-ին հռչակվեց Իսրայելի Պետությունը: Դրանով ավարտվեց Հրեական սփյուռքի պատմական առաքելության առաջին փուլը:

Իսրայելի Պետության հռչակումից հետո սկսվեց Հրեական սփյուռքի պատմական առաքելության երկրորդ փուլը, որի հիմնական նպատակն էր քաղաքական, ֆինանսական, նյութական և ռազմական ամենալայն աջակցությամբ օգնել Իսրայելին պահպանելու իր գոյությունը, հաղթահարելու բազմապիսի դժվարություններ, ոտքի կանգնելու ու դառնալու ամուր և զարգացած պետություն: Հրեական սփյուռքի այդ առաքելությունը մինչև օրս շարունակվում է:

Ինչպես առաջին փուլում՝ մինչև հրեական պետության ստեղծումը, այնպես էլ երկրորդ փուլում ՍՀԿ կարևոր խնդիրն է համարվում հրեաներին հավաքելը և կենտրոնացնելը Իսրայելում: Հրեական սփյուռքը և նրա զանազան կազմակերպությունները երբեք չեն խրախուսում հրեաների արտագաղթը Իսրայելից: Ավելին. ՍՀԿ-ն և նրա շուրջը համախմբված հրեական ուժերը շարունակում են իրենց գլխավոր նպատակը համարել արտագաղթը կանխելը և Իսրայելում հրեահավաք գործունեությանը ավելի լայն թափ հաղորդելը:

Իսրայելի Պետության ստեղծումից հետո փոխվեցին հարաբերությունները Իսրայելի Պետության և ՍՀԿ-ի միջև: ՍՀԿ-ն այլևս հրեաների առաջատար և գերագույն կառավարող մարմին չէ: Պետության կազմավորումից հետո նա այլևս նման դեր չէր կարող կատարել և առաջնության դափնին զիջեց պետությանը: Համահրեական կառավարման կենտրոնը տեղափոխվեց Իսրայել: Այդ պահից սկսած՝ վճռական խոսքը պատկանում է իր հողն ունեցող և այդ հողի վրա բնակվող ժողովրդին ու նրա շահերն արտահայտող պետությանը:

Դա, իհարկե, չի նշանակում, թե Հրեական սփյուռքը կամ ՍՀԿ-ն կորցրել են իրենց դերն ու նշանակությունը և այլևս պետք չեն Իսրայելին: Խոսքն այն մասին է, որ Հրեական սփյուռքն այժմ կատարում է օժանդակ դեր և իր գործունեությունը համաձայնեցնում է Իսրայելի ղեկավարության հետ՝ ելնելով պետականություն ունեցող հրեաների ազգային, քաղաքական, տնտեսական և միջազգային շահերից:

Հրեական փորձը ցույց է տալիս, որ սկզբունքորեն հնարավոր է աշխարհի տարբեր երկրներում ցրված, տարբեր պետական կառուցվածք ունեցող երկրներում, տարբեր ռեժիմների պայմաններում և տարբեր կրոնական միջավայրներում բնակվող էթնիկական խմբերին, որոնք կազմում են տվյալ սփյուռքը, իրագործել մի այնպիսի բարդ, անգամ՝ անհավանական թվացող խնդիր, ինչպիսին է իր պետությունն ստեղծելը կամ արդեն գոյություն ունեցող իր պետությունը պահպանելը և հզորացնելը:

## III. Հայոց Սփյուռքի՝ կուռ կառույցի վերածմանը խոչընդոտող գործոնները

Յուրաքանչյուր սփյուռք ունի իր յուրահատկությունները, խնդիրները, գործելու եղանակները, մեթոդները, ավանդույթները և այլն, որոնք անխուսափելիորեն իրենց կնիքն են դնում տվյալ սփյուռքի գործելակերպի, կազմակերպական կառուցվածքների և դերակատարման վրա:

Դա վերաբերում է նաև Հայոց Սփյուռքին:

Հայոց և Հրեական սփյուռքների առաքելության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս նրանց միջև թե՛ նմանությունների, թե՛ տարբերությունների առկայությունը: Այդ համեմատությունից պարզ է դառնում հետևյալը:

*Առաջին*. Հայոց Սփյուռքը, ի տարբերություն հրեականից, երբեք իր առջև հայկական պետություն ստեղծելու խնդիր չի դրել ու չէր էլ կարող դնել, որի պարագայում նա Հայաստան–Սփյուռք շղթայում ճեռք կբերեր գերակա դերակատարում: Նա երբեք չի ունեցել և չէր էլ կարող ունենալ հրեաների համար կիրառելի այնպիսի մի նախագիծ, ինչպիսին է՝ «Հող չունեցող ժողովրդին (այսինքն՝ հայերին,–Ն. Հ.) տալ հող՝ առանց ժողովրդի», մի նախագիծ, որը բոլորովին էլ պիտանի չէր հայերի համար: Հայերը դարեր շարունակ գտնվել են, այսինքն՝ տիրապետել, ապրել, աշխատել, ստեղծագործել և բազմացել, իրենց իսկ հողի վրա, իրենց իսկ երկրում՝ Հայաստանում, որը նրանց բնօրրանն է: Անգամ բաժանված լինելով Արևելյան և Արևմտյան հատվածների ու գտնվելով համապատասխանաբար Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում, միևնույն է, Հայաստանը գտնվել է իր հողում:

Այս իրավիճակը հայերի արևմտյան հատվածի համար իր հիմնական գծերով պահպանվել է ընդհուպ մինչև 1915 թ. Ցեղասպանությունը և դրան հաջորդած մի քանի տարիները:

*Երկրորդ*. ժամանակակից Հայոց Սփյուռքը ձևավորվել է 1915–1920 թթ., երբ Արևմտյան Հայաստանը դատարկվեց երիտթուրքական ջարդարարների ցեղասպան քաղաքականության հետևանքով: Նրա բեկորները հաստատվեցին հիմնականում Արաբական Արևելքում, որտեղից այնուհետև տարածվեցին ի սփյուռս աշխարհի:

Ժամանակագրական առումով դա համարյա համընկավ Արևելյան Հայաստանում հայոց պետականության վերականգնման հետ՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության, որը գոյատևեց 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. դեկտեմբերը: Հետևաբար, իր առաջին դողդոջուն քայլերը կատարող Հայոց Սփյուռքը, որը նույնիսկ չի կարելի համարել ձևավորված սփյուռք, չէր կարող առաջադրել հայկական պետություն ստեղծելու հարցը, քանի որ այդ պետությունն արդեն կար: Այն կերտել էր իր տարածքում բնակվող հայությունը, և Հայոց Սփյուռքը, ի տարբերություն հրեականից, դրանում մասնակցություն չի ունեցել:

Դա Հայոց Սփյուռքի տարբերակիչ գծերից մեկն է:

Այդ հանգամանքի շնորհիվ Հայոց Սփյուռք–Հայոց Պետություն շղթայում վերջինս սկզբից ևեթ իր վրա վերցրեց առաջատարի դերակատարումը՝ ի տար-

բերություն Հրեական սփյուռքից, որին պատկանում է առաջատար դերակատարում հրեական պետության ստեղծման գործում:

Այդ պատճառով էլ Հայոց Պետությունն Սփյուռքի հետ իր հարաբերություններում ավելի անկախ է և կարող է գործել ավելի անկաշկանդ ու ազատ: Դրան նպաստում է նաև այն ընդունված տեսակետը, որ իրավունքը իր հողում ապրողինն է:

Հայոց Սփյուռքի ձևավորումն ընթացել է տանջալից ուղիով: Սկզբնական շրջանում նա առաջին հերթին մտահոգ էր իր գոյությունը և ինքնությունը պահպանելու խնդրով: Նրա համար այդ շրջանում մնացած բոլոր հարցերը, այդ թվում և Մայր հայրենիքին օգնելու խնդիրը, մղված էին երկրորդական պլան: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ Սփյուռքը դա չէր ցանկանում կամ պակաս հայրենասեր ու հայասեր էր, այլ պարզապես դրա հնարավորությունը չուներ: Բայց աստիճանաբար, հաղթահարելով բազում քաղաքական, տնտեսական, լեզվամշակութային խնդիրներ, Հայոց Սփյուռքը կարողացավ ոտքի կանգնել, շտկել մեջքը և, առօրյա հոգսերից բացի, հետաքրքրվել նաև համահայկական հարցերով: Այդ փուլը սփյուռքահայությունն անցավ 1920–1945 թթ., որին հաջորդեց նրա զարգացման, բնակության երկրներում իր դիրքերի ամրապնդման փուլը: Նոր հեռանկարներ էին բացվում նաև Հայաստան–Սփյուռք հարաբերություններում: Հայոց Սփյուռքն ավելի ու ավելի էր իր հայացքն ուղղում դեպի Մայր հայրենիք, ինչի ամենացայտուն արտահայտությունը եղավ հայերի 1946–1948 թթ. զանգվածային ներգաղթը Հայաստան:

Սակայն այդ ներգաղթը պետք չէ դիտել բացառապես որպես Սփյուռքի գործողության արդյունք: Դա ավելի շատ ԽՍՀՄ շահերի շրջանակներում Խորհրդային Հայաստանի՝ Հայկական Երկրորդ Հանրապետության պետական գործունեության շնորհիվ էր և նշանակում էր, որ Հայաստան–Սփյուռք հարաբերությունները թևակոխում են նոր փուլ: Այդ պահից սկսվում է Մայր հայրենիքի կողմից սփյուռքահայության նկատմամբ մտահոգություն, անգամ՝ հոգատարություն ցուցաբերելու քաղաքականությունը, որն ավելի է շեշտում Հայաստան – Սփյուռք շղթայում Հայաստանի առաջնայնության հանգամանքը: Սակայն դա հետագայում չունեցավ իր ամբողջական զարգացումը, ինչն ունի իր պատճառները:

Հայոց Սփյուռքին, ի տարբերություն Հրեական սփյուռքից, այդպես էլ չհաջողվեց վերածվել համախմբված կուռ կառույցի՝ իր համասփյուռքյան հաստատություններով: Նրան չհաջողվեց, ինչպես հրեաներին, ստեղծել իր Համահայկական համաշխարհային կազմակերպությունը (ՀՀԿ)՝ որպես Սփյուռքը ղեկավարող, նրա աշխատանքները համադրող կառույց՝ իր քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ենթակառույցներով: Սիոնիստական համաշխարհային կազմակերպության և դրա թիկունքում կանգնած հրեության ուժը նախ և առաջ իրենց կազմակերպվածության և իրենց պայքարին համապատասխան համազգային բնույթ հաղորդելու մեջ է: Այդ շարժումից համարյա ոչ մի հրեա դուրս չմնաց: Մինչդեռ հայերի պարագայում իրադրությունն այլ կերպ ձևավորվեց:

Հայոց Սփյուռքի ներսում, հարկավ, հասկանում են միասնության անհրաժեշտությունը: Այդ մասին քիչ չի գրվել սփյուռքահայ մամուլում և քիչ բան չի

ավել սփյուռքահայ զանազան գործիչների կողմից: Այդուհանդերձ, Հայոց Սփյուռքն ընթացավ այլ ուղիով: Սփյուռքում իրենց գործունեությունը ծավալեցին Սառը պատերազմի մեջ ներգրավված ավանդական քաղաքական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար ազատական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, ապա ասպարեզում հայտնվեցին նաև հայ համայնավարները: Դրանցից յուրաքանչյուրը հետապնդում էր իր նեղ կուսակցական շահերն ու նպատակները և դրանով իսկ սփյուռքահայ իրականության մեջ ներդրում ու պահպանում բաժանվածության սկզբունքը, խոչընդոտում Սփյուռքը մեկ ամբողջական կուռ կառույցի վերածվելուն, թեև հայերն իրենց առջև ունեին հրեաների օրինակը: Այդ իրավիճակն ըստ էության պահպանվում է մինչև օրս:

Սփյուռքի պառակտվածությունն է՛լ ավելի խորացավ, երբ այդ կուսակցությունները և դրանց հարող քաղաքական ուժերն ստեղծեցին իրենց համապատասխան կրթական, դպրոցական, մշակութային, հասարակական, հայրենակցական, անգամ՝ մարզական միությունները ու մարմինները, որոնց նպատակը ներգրավված հայությանը տվյալ կուսակցությանը նվիրվածության ոգով սնելն ու կրթելն էր: Դա էլ իր հերթին հանգեցնում էր «հակառակ» կուսակցության արժեքների ժխտմանը, այսինքն՝ նպաստում էր Հայոց Սփյուռքի բաժանվածությանը:

Սփյուռքի միասնականությանը և համախմբման գաղափարին ու գործին ծանր հարված հասցրեց Հայ Առաքելական եկեղեցու պառակտումը, որն իրագործվեց 1956 թ. ՀՀԴ այն ժամանակվա ղեկավարության անմիջական նախաձեռնությամբ ու մասնակցությամբ: Դա իր հերթին ավելի խորացրեց Սփյուռքի պառակտումը:

Վերոնշյալ հանգամանքների բերումով Հայոց Սփյուռքը՝

ա) իր մեջ ուժ չգտավ վեր կանգնելու կուսակցական, անձնական և հատվածային նեղ շահերից,

բ) ի վիճակի չեղավ ձևավորելու սփյուռքի մասշտաբներին համապատասխան համահայկական համազգային մտածողություն և գիտակցություն,

գ) չկարողացավ ստեղծել համասփյուռքյան ամբողջական, համապարփակ և հեղինակավոր կազմակերպություն,

դ) զրկվեց իր քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ներուժն ամբողջությամբ դրսևորելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն պաշտպանական-դիմադրողական ուժի վերածելու հնարավորությունից:

Այդ ամենի հետևանքով Հայաստանը զրկվեց ի դեմս Սփյուռքի կազմակերպված, համախմբված և զորեղ գործընկեր ունենալու հնարավորությունից, ինչը կարող էր զգալիորեն բարելավել ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի միջազգային կարգավիճակը և մեծացնել հայկական քաղաքական ու ռազմական գործոնի «արժեքղեքերի գինը» միջազգային, հատկապես՝ տարածաշրջանային, հարաբերությունների քաղաքական բորսայում:

Այդ նույն պատճառներով չձևավորվեց Հայոց Սփյուռքը ներկայացնող մեկ համահայկական մարմին, որը հանդես գար նրա անունից և դառնար Հայաստանի գործընկերը, որի հետ նա կարողանար քննարկել Հայաստանին և Սփյուռքին, համայն հայությանը հետաքրքրող հարցերը, ընդունել համապա-

տասխան որոշումներ, ապահովել դրանց կենսագործումը և սփյուռքահայության և նրա խնդիրները ի հարկին ներկայացնել միջազգային ատյաններում: Այդ ֆունկցիան չեն կարող կատարել ո՛չ «Հայաստան» հիմնադրամը, ո՛չ էլ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, քանի որ դրանց խնդիրներն այլ են, և դրանք բոլորովին այլ նպատակներ են հետապնդում:

Հայաստանի և Սփյուռքի միջև կապերի ամրապնդման ու նրանց համագործակցության ճանապարհին լուրջ խոչընդոտ դարձան նաև Սառը պատերազմը և այդ պայմաններում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերած գաղափարական հակամարտությունը: Սառը պատերազմի հետևանքով ԽՍՀՄ մաս կազմող Խորհրդային Հայաստանը և սփյուռքահայ մի շարք կուսակցություններ, քաղաքական, հասարակական ու մշակութային կազմակերպություններ հայտնվեցին բարիկադների տարբեր կողմերում: Ուխտի խոսել Հայաստան–Սփյուռք համակարգված հարաբերությունների, առավել ևս՝ համագործակցության մասին, կարծում ենք, ավելորդ է: Մինչդեռ Հրեական սփյուռքի և Իսրայելի Պետության պարագայում Սառը պատերազմի դարաշրջանում նման երկփեղկվածություն չառաջացավ, քանի որ նրանք պատկանում են միևնույն՝ արևմտյան ճամբարին:

Այս հարցում Հայաստան – Հայոց Սփյուռք շղթան ակնհայտորեն զիջում է Իսրայել – Հրեական սփյուռք շղթային:

Երկար ժամանակ Հայաստանի և Սփյուռքի միջև կապերն իրագործվել են գլխավորապես կրթական և մշակութային համագործակցության ձևով, ինչը թեև արժանի է բարձր գնահատականի, սակայն չի կարող բավարար համարվել, հատկապես՝ այժմ, մեր օրերում:

Հայաստանի և Սփյուռքի միջև կապերի զարգացման և ամրապնդման առումով մեծ հեռանկարներ ու հնարավորություններ բացվեցին 1991 թ. Հայաստանի անկախության նվաճումից հետո: Ստեղծվեցին նոր պայմաններ և առաջացան նոր խնդիրներ, որոնք պահանջում են նոր մոտեցումներ: Ահա այստեղ է, որ կարող է օգտակար լինել հրեաների պատմական փորձը, ի մասնավորին՝ Հրեական սփյուռքի դերակատարումը Իսրայելի Պետության ստեղծումից հետո, երբ Հրեական սփյուռքը գերագույն ճիգերով օգնեց և սատարեց Իսրայելի Պետությանը՝ պահպանելու և պաշտպանելու իր անկախությունն ու անվտանգությունը, թիկունք կանգնեց հինգ անգամ արաբների հետ պատերազմի մեջ հայտնված Իսրայելին՝ զարգացնելու երկրի տնտեսությունը, գիտությունը, մշակույթը և, ընդհանրապես՝ ամրապնդելու Իսրայելի՝ որպես համայն հրեության պետության դիրքերը:

Հանուն արդարության պետք է արձանագրել, որ Սառը պատերազմի դարաշրջանի ավարտից և Հայաստանի անկախության հռչակումից հետո զգալի տեղաշարժեր կատարվեցին Հայաստան–Սփյուռք հարաբերություններում: Ակտիվացավ Սփյուռքի առանձին համայնքների լոբբինգային գործունեությունը, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում՝ հօգուտ նորանկախ հայկական պետության: Դա ընդհանրապես նորություն էր Սփյուռքի որոշ համայնքների համար, քանի որ մինչ այդ անկախ Հայաստան պետություն չկար, որի շահերի համար նրանք պայքարեին: Այդ բնագավառում բոլորի համար դասական օրինակ կարող է ծառայել Հրեական սփյուռքը, որը որոշ

երկրներում, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, դարձել է պետություն պետության ներսում: Աշխուժություն է նկատվում Հայաստանում սփյուռքահայ կապիտալի ներդրման գործում, թեև դա դեռևս շատ հեռու է բավարար համարվելուց:

Սփյուռքը լիակատար քաղաքական և բարոյական համերաշխություն դրսևորեց Ղարաբաղյան հակամարտության տարիներին, և, թեկուզ չափավոր սահմաններում, այդուհանդերձ, չմեկուսացավ այդ հակամարտությունից, և այլն:

Սակայն այդ ամենը շատ հեռու է բավարար համարվելուց, եթե հաշվի առնենք Սփյուռքի ներուժը: Բացի այդ, ինչ որ կատարվում է, դա համակարգված աշխատանքի արդյունք չէ, այլ շատ հաճախ՝ անհատական ձեռներեցության, նախաձեռնության, ցանկության, կամեցողության և պատրաստակամության դրսևորում:

## IV. Նոր մոտեցումներ Հայաստան–Սփյուռք ռազմավարության հարցում: Կազմակերպական նոր ձևեր, անցում առօրյա կապերից ինտեգրման:

### Երկխոսությունը՝ համագործակցության մայրուղի: Հայաստանի հռչակումն Ամենայն Հայոց Պետություն

Նոր սպառնալիքները և մարտահրավերները, Հայաստանի Հանրապետության առջև ներկա փուլում ծառացած քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու ռազմական խնդիրները պահանջում են նոր մոտեցումներ և նոր ռազմավարություն Հայաստան–Սփյուռք հարաբերությունների հարցում՝ նրա ներուժը լիակատար կերպով օգտագործելու համար, որից զգալիորեն կախված են հայության, այդ թվում և սփյուռքահայության, անվտանգությունն ու ապագան:

Սակայն դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է գտնել կազմակերպական նոր ձևեր:

1. Մենք հեռու ենք այն մտքից, թե մոտ ապագայում, անգամ՝ հեռանկարում, հնարավոր է Սփյուռքում ստեղծել մեկ միասնական համահայկական կառույց, ինչպիսին ժամանակին հրեաների ստեղծած ՍՀԿ-ն էր, մի կազմակերպություն կամ մարմին, որն իրավազոր լիներ հանդես գալու համայն սփյուռքահայության անունից, նրա անունից ընդունելու որոշումներ, որոնք պարտադիր լինեն ամբողջ սփյուռքահայության համար և իրագործվեն նրա կողմից, և որի հետ կարողանար համագործակցել Հայաստանի ղեկավարությունը:

2. Մենք թերահավատությամբ ենք վերաբերվում նաև վերջերս Հայաստանում (բայց ոչ՝ Սփյուռքում) ներգաղթի վերաբերյալ ավելի ու ավելի հաճախ և բարձրաձայն հնչող կոչերին: Կարծում ենք, որ դրանք ավելի շատ պոպուլիստական մոտեցումներ են, քանի որ ներգաղթի իրական հնարավորություն չկա: Դրան պատրաստ չեն ո՛չ Սփյուռքը, ո՛չ էլ Հայաստանը: Պետք է հաշվի առնել նաև 1946–1948 թթ. ներգաղթի դառը փորձը, որը հիմնովին վարկաբեկեց ներգաղթի սկզբունքորեն ընդունելի գաղափարը: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ նոր ներգաղթը չի կարող լուծել մեր առջև ծառացած խնդիրները:

Այս պայմաններում առաջին պլան են մղվում կազմակերպական հարցերը, որոնց ճիշտ լուծումը շատ կարևոր է Հայաստան–Սփյուռք հարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու, դրանք գործնական դարձնելու և նրանց ինտեգրման առջև դուռ բացելու առումով:

Այդ հարցերի լուծումը պետք է փնտրել Հայաստան–Սփյուռք երկխոսության շրջանակներում և փոխադարձ համաձայնության հիմքի վրա:

Ամեն մի երկխոսության համար առնվազն պահանջվում է երկու կողմ՝ օժտված համապատասխան լիազորություններով:

Առաջին կողմը, բնականաբար, Հայոց պետությունն է՝ Հայաստանի Հանրապետությունը՝ իր Նախագահով: Այն կայացած է, ունի իր խորհրդարանը, կառավարությունը, բանակը, իրավական, քաղաքական, ֆինանսական, մշակութային և այլ համապատասխան մարմիններ: Այդ կողմը Սփյուռքի հետ բանակցություններում կարող է ներկայացված լինել հանրապետության նախագահի կամ նրա լիազոր ներկայացուցչի միջոցով:

Խնդիրն ավելի բարդ է Սփյուռքի պարագայում: Ո՞վ, կամ ի՞նչ կազմակերպություն կարող է ներկայացնել Հայոց Սփյուռքը: Տարաբախտաբար չկա մի այնպիսի անվիճելի հեղինակավոր անձնավորություն կամ կազմակերպություն, որը բարոյական իրավունք ունենար հանդես գալու համայն Սփյուռքի անունից և ընդունվեր նրա կողմից, ներկայացներ նրա պահանջները, խնդիրները, կարիքները, լիազորված լիներ Հայաստանի ներկայացուցիչների հետ ստորագրելու համապատասխան փաստաթղթեր, համաձայնագրեր, պայմանագրեր, պարտավորագրեր: Ուրեմն այս պարագայում հայաստանյան կողմը, կամա թե ակամա, պետք է գործ ունենա բազմաթիվ անձանց և տարաբնույթ կազմակերպությունների հետ, որոնց հետ երկխոսությունը կարող է խլել շատ ժամանակ և երբեմն անգամ ընդհատվել կամ փակուղի մտնել:

Մեր կարծիքով՝ փոխադարձ համաձայնությամբ պետք է սահմանվեն այն համասփյուռքյան շրջանակները և դրանց մեջ մտնող անձինք ու կազմակերպությունները, որոնք ազդեցություն և հեղինակություն ունեն Սփյուռքում:

Դրանք, մեր կարծիքով, կարող են լինել՝

1. Սփյուռքում գործող Հայկական բոլոր քաղաքական կուսակցությունները (Հայ հեղափոխական դաշնակցություն, Ռամկավար ազատական կուսակցություն, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, հայ համայնավարներ և այլն),

2. Հայ Առաքելական եկեղեցու Էջմիածնի և Անթիլիասի բոլոր թեմերի լիազոր-ներկայացուցիչները,

3. հյուրընկալող երկրների խորհրդարանների հայ անդամները (ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Իրան, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Վրաստան, Կիպրոս և այլ երկրներ),

4. Հայկական բարեգործական ընդհանուր միությունը,

5. հայ գիտնականները և նրանց ընկերությունները,

6. հեղինակություն և հարգանք վայելող հասարակական կազմակերպությունները,

7. կրթական հաստատությունները (Բեյրութի Հայկազյան համալսարան, ԱՄՆ-ի, արաբական երկրների, ՌԴ, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների համալսարանների հայագիտական ամբիոններ, հայ պրոֆեսոր-դասախոսներ, Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչներ, մանկավարժներ և այլն),

8. մշակութային միությունները (այդ թվում՝ նաև գրական, թատերական և

նման այլ միություններ, ականավոր երաժիշտներ, երաժշտագետներ, նկարիչներ, քանդակագործներ, թատերական գործիչներ, կինոգործիչներ և այլն),

9. զանգվածային լրատվության միջոցները (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն և այլ լեզուներով հրատարակվող օրաթերթերի, շաբաթաթերթերի և ամսագրերի խմբագրությունների ներկայացուցիչներ),

10. հայրենակցական միությունները,

11. մարզական միությունները և այլ կազմակերպություններ, ընկերություններ ու միություններ,

12. տարաբնույթ երիտասարդական կառույցներ:

Պետք է ընդգրկել լայնորեն և երկխոսության մեջ ներգրավել ականավոր, հեղինակավոր, վաստակաշատ անհատների՝ գրողների, արտիստների, լրագրողների, գիտնականների, հասարակական, քաղաքական գործիչների, տնտեսագետների, ֆինանսիստների, տարբեր բնագավառների խոշոր ու ճանաչված մասնագետների և ուրիշների: Նրանք պետք է ընտրեն (կամ նշանակեն) իրենց ներկայացուցիչներին, որոնք իրավունք ունենան մասնակցելու հայաստանյան կողմի հետ բանակցություններին, իրավասու լինեն համաձայնագրեր ստորագրելու, պայմանավորվածություններ ձեռք բերելու Հայաստանին և Հայոց Սփյուռքին վերաբերող անկյունաքարային հիմնախնդիրների վերաբերյալ:

Իսկ որո՞նք են այն հարցերը, որոնց վրա պետք է կենտրոնանա Հայաստան – Սփյուռք երկխոսությունը:

Երկու կողմերի միջև տեղի ունենալիք երկխոսության ժամանակ առաջին հերթին պետք է քննարկել սփյուռքահայ կառույցների ստեղծման հարցը՝ փուլ առ փուլ: Սկզբնական շրջանում թերևս ընդունելի և հեշտ լինի ստեղծել կառույցներ ըստ երկրների, ապա՝ ըստ աշխարհամասերի և, ի վերջո, ստեղծել համահայկական-համասփյուռքյան կառույցներ:

Դրա համար պետք է գումարել Սփյուռքի վերոնշյալ կազմակերպությունների ղեկավարների համաժողով և այդ հարցերը դարձնել համաժողովի քննարկմանն ու լուծմանը ենթակա հիմնական խնդիրներ: Համաժողովը կարող է իրավասու լինել և համապատասխան որոշում ընդունել հարցերը համաձայնության և ներկայացուցչության սկզբունքի հիման վրա լուծելու վերաբերյալ:

Երկխոսության ամենակարևոր հարցերից պետք է լինեն՝

*առաջին.* Հայաստանը հայտարարել Ամենայն Հայոց Պետություն: Դա կարող է տեղի ունենալ միայն Սփյուռքի համաձայնությամբ,

*երկրորդ.* ստեղծել Հայաստան – Սփյուռք համատեղ մարմին, որը, պայմանականորեն կարելի է կոչել «Հայաստանի և Սփյուռքի հարաբերությունները համադրող համատեղ մարմին» (ՀՍՀՀՄ) կամ «Հայաստան – Սփյուռք խորհրդատու մարմին» (ՀՍԽՄ), որի նախագահը լինի Հայաստանի Հանրապետության նախագահը: Դա կարելի է դիտել որպես անցումային շրջանին համապատասխանող մարմին, մինչև համապատասխան նախադրյալներ ստեղծվեն Հայաստան – Սփյուռք համահայկական համապարփակ մշտական մարմնի (կազմակերպության) կազմավորման համար:

ՀՍՀՀՄ-ն իր կազմում որպես ենթակառույցներ կարող է ունենալ քաղաքական, ռազմական, տնտեսական, ֆինանսական, գիտական, մշակութային և այլ հանձնաժողովներ կամ ենթաբաժիններ:

ՀՍՀՀՄ-ն համալրվում է Հայաստանին վերաբերող մասով՝ Հայաստանի, իսկ Սփյուռքին վերաբերող մասով՝ Սփյուռքի ականավոր պետական, քաղաքական, հասարակական, կրոնական, մշակութային գործիչներից, գործարարներից՝ հավասար ներկայացուցչության (պարիտետի) սկզբունքի հիման վրա:

Որոշումները ընդունվում են համաձայնության սկզբունքով:

ՀՍՀՀՄ-ն քննարկում և համապատասխան որոշումներ է ընդունում բոլոր առանցքային հարցերի վերաբերյալ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն հայության ազգային անվտանգության ապահովմանը, Հայաստանի անկախության ամրապնդմանը, տնտեսական բարգավաճմանը, կրթության և մշակույթի զարգացմանը, սփյուռքահայության ինքնության պահպանմանը:

ՀՍՀՀՄ-ն քննարկում և հաստատում է հայության համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող հարցերի լուծման առաջնահերթությունները, նշում դրանց իրագործման ուղիները և լուծում դրանց ֆինանսավորման հարցերը:

Հայաստանի Կառավարությունը յուրաքանչյուր տարվա վերջին հաշվետվություն է ներկայացնում ՀՍՀՀՄ-ին՝ իր աշխատանքների, ի մասնավորին՝ ՀՍՀՀՄ-ի հանձնարարականների, կատարման մասին:

Հաշվի առնելով Հայաստանի դեմ ուղղված ուժեղացող արտաքին, մասնավորապես՝ թուրք-ադրբեջանական, սպառնալիքները ներկա փուլում առաջնահերթ և անմիջական խնդիր համարել Հայոց Սփյուռքի ավելի ակտիվ մասնակցությունը Հայաստանի պաշտպանունակության ամրապնդմանը:

Դրա իրականացման ուղիներ համարել.

1. Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի և Ղարաբաղի բանակները արդիական զինատեսակներով սպառազինելու գործին:

2. Սփյուռքի օգնության մեծացումը Հայաստանի ռազմական արդյունաբերությունը վերականգնելու և զարգացնելու գործում:

3. «Հայաստան» հիմնադրամի՝ Քաղաքացիական կառույցներին հատկացվող ծախսերի կրճատում և ավելացած ֆինանսական միջոցների ուղղում Հայաստանի ու Ղարաբաղի պաշտպանության ամրապնդմանը:

4. Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և Սփյուռքում մտցնել ազգային տուրք՝ սահմանելով դրա տարեկան չափաբաժինները (չշփոթել «Հայաստան» հիմնադրամի ամենամյա մարաթոնի հետ), իսկ ստացվող գումարները ծախսել բացառապես հայկական բանակի և հայ ժողովրդի՝ որպես էթնիկական մեկ ամբողջության ռազմական հզորության ամրապնդման նպատակներով: Պատմության մեջ եղել են դեպքեր, երբ այս կամ այն էթնիկական ամբողջությունը դիմել է նման քայլի և սահմանել ու գանձել ազգային տուրք, ինչպես, օրինակ, պաղեստինցիները և Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ):

5. Մշակել սփյուռքահայ երիտասարդությանը ռազմական գործին հաղորդակից դարձնելու համապատասխան ուղիներ և ձևեր՝ ելնելով այն իրողությունից, որ Հայաստանին և Ղարաբաղին ռազմական սպառնալիքների կամ ագրեսիայի պարագայում հնարավոր լինի նրանց արագորեն տեղափոխել Հայաստան, օգտագործել նրանց ներուժը և անմիջականորեն մասնակից դարձնել ռազմական գործողություններին:

Թերևս նպատակահարմար կլիներ՝

ա) օգտագործել սփյուռքահայ երիտասարդների ամառային արձակուրդները և հանգիստը Հայաստանում անցկացնելու հնարավորությունը,

բ) կազմակերպել ամառային ճամբարներ՝ հատուկ, ռազմականացված ծրագրերով,

գ) կտրուկ կերպով ավելացնել սփյուռքահայ ուսանողներին Հայաստանի ուսումնական հաստատություններում հատկացվող տեղերը, ինչը հնարավորություն կտա նրանց հաղորդակից դարձնելու ռազմական ուսուցմանը, և այլն:

Կարծում ենք՝ ժամանակն է ՀԱՀՀՄ, այսինքն՝ Հայաստանի և Սփյուռքի համատեղ հատուկ հայտարարությամբ միջազգային հանրությանը տեղյակ պահել, որ Հայաստանի վրա արտաքին հարձակման դեպքում հնարավոր ագրեսորն իր դեմ կունենա ոչ թե միայն Հայաստանը և Ղարաբաղը՝ իրենց 3,5 մլն բնակչությամբ և ռեսուրսներով, այլև աշխարհի համայն հայությունը (10 մլն)՝ իր ամեն տեսակի ռազմական, տնտեսական և քաղաքական ներուժով ու կարողություններով:

Տեղին կլիներ, եթե Սփյուռքի մեծահարուստները (առանց անունները նշելու) հանդես գան հատուկ հայտարարությամբ առ այն, որ նրանք պատրաստ են յուրաքանչյուր տարի ավելացնելու Հայաստանի պետական բյուջեով հատկացվող ռազմական ծախսերը՝ ոչ միայն հասցնելով 1 մլրդ դոլարի, այլև անցնելով այդ սահմանը:

Հայրենիք – Սփյուռք համագործակցության նոր մոտեցումների համակարգում, հասկանալի է, հարկ է ներառել և ավելի մեծ տեղ հատկացնել նաև գիտական, կրթական ու մշակութային ոլորտներին՝ առանձին դեպքերում հրաժարվելով հին և իրենց դարն ապրած համագործակցության ձևերից, շեշտը դնելով բարձր տեխնոլոգիաների, նորարարական ուղղությունների ու մեթոդների վրա:

Սրանք են ընդհանուր գծերով մեր կողմից առաջարկվող նոր մոտեցումները՝ Հայաստանին և ամբողջ հայությանն սպառնացող նոր վտանգների ու մարտահրավերների, հայության ազգային անվտանգության ապահովման հրատապ խնդիրների հաշվառմամբ:

Մենք, իհարկե, պատկերացնում ենք այն բոլոր դժվարությունները, որ կան համասփյուռքյան կառույցներ, Հայաստան–Սփյուռք համադրող մարմին ստեղծելու և Հայաստան–Սփյուռք ինտեգրման ճանապարհին: Բայց այդ դժվարությունները չեն կարող նման գաղափարից հրաժարվելու պատճառ դառնալ: Հայությունն իր բազմադարյան պատմության ընթացքում կարողացել է լուծել ավելի բարդ խնդիրներ, նրա արքայից արքա Տիգրան Մեծը դեռ մ.թ.ա. 1-ին դարում ստեղծել է կայսրություն: Դրա համար անհրաժեշտ է ցանկություն, քաղաքական կամքի դրսևորում, նեղ հատվածական շահերից վեր կանգնելու և դրանք համահայկական, համազգային շահերին ենթարկելու ունակություն:

Հայաստան – Սփյուռք հարաբերությունները ինտեգրման ռելսերի վրա տեղափոխելը համապատասխանում է Ամենայն Հայոց Պետության հզորացման և համայն Հայոց Սփյուռքի ինքնության պահպանման շահերին:

Նոր սկզբունքների վրա խարսխված Հայաստան – Սփյուռք հարաբերությունները պետք է նպատակաուղղված լինեն Հայաստան – Ղարաբաղ – Հայոց Սփյուռք յուրատեսակ և ատիճանական քաղաքական, տնտեսական, ռազմա-

կան և հոգևոր-մշակութային ինտեգրմանը: Դրա շնորհիվ մենք կունենանք, ինչպես այժմ է, Հայաստան՝ 30 հազ. կմ$^2$ տարածքով, սակայն բոլորովին այլ ներուժով և հնարավորություններով օժտված հայություն, որը կարող է աշխարհին ներկայանալ որպես 10 մլն բնակչություն ունեցող և բոլորովին նոր որակի քաղաքական, ռազմական, տնտեսական ազգային միակուռ կառույց: Դա կստիպի մեր անմիջական հարևաններին և միջազգային հանրությանն ավելի լրջորեն հաշվի նստել հայկական գործոնի հետ և այլ լեզվով խոսել նրա հետ:

Դա ժամանակի հրամայականն է:

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասատրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարեթյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարեթյանի*
Անգլերեն տեքստերի թարգմանությունը և խմբագրումը՝ *Մ. Ս. Ավետիսյանի, Ա. Հ. Հակոբյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Ն. Ջ. Ծատուրյանի*
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարուխանյան*

Լուսանկարչական ապահովումը՝
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության
և «Հայ Զինվոր» պաշտոնաթերթի մասնակցությամբ

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakan_banak@mail.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2012 թ.

Ստորագրվել է տպագրության 02.05.2012: Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70×100 1/16:
Տեքստը՝ 132 էջ+ 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակները՝ «Արիալ», «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում



Հայաստանի Հանրապետության 20-ամյակին նվիրված զորահանդես.
տրիբունայում (ձախից աջ)՝
ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյան, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան,
ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ,
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա,
ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյան

Երևան, 2011 թ. սեպտեմբերի 21




# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 1–2 (71–72). 2012